
28/.6.

ԷՋՄԻԱԾԻՆ



2009



ԿԵ ՏԱՐԻ

ԼՈՒՍԱՆՕՐԴ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

Էջմիածին

2009

Ս. Էջմիածին

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ԱԴԱՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ 100-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՑ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սէր եւ օրհնութիւն ենք բերում համայն Մեր ժողովրդին ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս:

Այս տարի նշում ենք 100-ամեայ տարելիցը Ադանայում եւ Կիլիկիայի տարբեր բնակավայրերում իրագործուած հայոց կոտորածների՝ յիշելով մեր բիւրաւոր նահատակներին, անցեալ դարասկզբի դժուարին ու ողբերգական ժամանակաշրջանում մեր պատմութեան: Ոգեկոչում ենք անմահ յիշատակը մեր նախնեաց, ովքեր ջարդերի ու Ցեղասպանութեան դժնդակ ժամանակներում ելան հերոսական պայքարի, «ըստ հաւատոց քաջութիւնս կատարեցին, գովեցան ի մարդկանէ եւ արդարացան յԱստուծոյ» (Եղիշէ):

Կիլիկիայի ջարդերը շարունակութիւնն էին հայերին բնաջնջելու միջոցով Հայկական հարցը վերացնելու սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի ծրագրի: 1890-ականներին Օսմանեան

Թուրքիայում արիւնալի կոտորածներով ոչնչացուել էր շուրջ երեք հարիւր հազար հայ: Թուրքիայում իշխանութեան գլուխ անցած երիտթուրքերը, ովքեր երաշխաւորել էին ազգերի հաւասարութիւն, մարդկանց իրաւունքների պաշտպանութիւն, անձի եւ գոյքի ապահովութիւն, առաւել սաստկացրեցին հալածանքները պատմական իր Հայրենիքում եւ Թուրքիայի այլ հատուածներում ապրող հայ ժողովրդի հանդէպ: 1909 թ. ապրիլին Ադանայում նոր կազմակերպուած ջարդեր սկսուեցին: Կոտորածներին զոհ գնացին եւս երեսուն հազար հայորդիներ: Ապրելու իր իրաւունքը եւ ազատ կեանքը պաշտպանելու համար հայութիւնը դիմեց զէնքի եւ ինքնապաշտպանութեան, հոգում՝ հաւատքն ու ապաւինութիւնն առ Աստուած, սրտում՝ սէրն առ Հայրենին եւ Մայր Եկեղեցին:

Ադանայի արիասիրտ հայորդիք, խիզախ զէյթունցիները, վանեցիները, մշեցիները, մուսալեռցիները, պատմական Հայաստանի տարբեր վայրերում բնակուող հայերը մաքառեցին կեանքի իրաւունքի պաշտպանութեան, ազատութեան, արդարութեան, խաղաղութեան յաղթանակի հաւատով ու քաջարի ոգով: Այս հաւատով եւ զօրեղ կամքով են մարտնչել մեր ժողովրդի արիասիրտ զաւակները 1918 թ. Մայիսեան ազատամարտերում, Երկրորդ աշխարհամարտի ռազմադաշտերում, Արցախի ազատագրութեան հերոսամարտերում: Աւելի քան ինը տասնամեակներ են անցել Հայոց եղեռնից: Սակայն թուրքական իշխանութիւնների կողմից ծրագրուած ցեղասպանութեամբ մէկ եւ կէս միլիոնից աւելի հայորդիներ կորցրած, եղեռնահար մեր ժողովուրդը չդադարեց յուսալ համընդհանուր դատապարտումը մեր նախնեաց դէմ գործուած եղեռնագործութեան՝ վասն արդարութեան բողոքի իր ձայնը միշտ հնչեցնելով ի լուր աշխարհի, որպէսզի նման ողբերգութիւններն այլեւս երբէք չմթագնեն մարդկութեան կեանքը:

Հայոց եղեռնը արիւնալի եւ անլուր ողբերգութեան մռայլ էջ բացեց ոչ միայն մեր ժողովրդի, այլեւ ազգերի պատմութեան մէջ: Հայոց ցեղասպանութեան դատապարտութեան յապաղումը խրախոյս դարձաւ նմանօրինակ ոճրագործութիւնների, աշխարհը վկայ դարձաւ նոր ցեղասպանութիւնների: Մարդկային կեանքում ազգայնահալած քաղաքականութեան եւ ազգայնամոլ դրսեւորումներն այսօր մտահոգութեան լուրջ խնդիր են եւ պահանջում են միջազգային հանրութեան միասնական, համընդհանուր ու անյապաղ դատապարտութիւնը: Ազգային խտրականութիւնը, ազգերի իրաւունքների ոտնահարումներն ու բռնութիւնները, ազգամիջեան անհանդուրժողականութիւնը, ժողովուրդների դէմ գործուող յանցանքները բացառելու կամքի եւ ձգտումի արտայայտութիւնը պիտի լինեն Հայոց ցեղասպանութեան համընդհանուր ճանաչումն ու դատապարտումը: Ազգս հայոց այս յոյսով ու հաւատով, սակայն Եղեռնի չապաքինուած ցաւը եւ Հայ դատի արդար պահանջը սրտում, իր նոր կեանքն է կերտում ազատ ու անկախ իր Հայրենիքում եւ ի սփիւռս աշխարհի:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, Ադանայի ու Կիլիկիայի հայոց ջարդերի 100-ամեայ տարելիցը նշելով վերստին հնչեցնում ենք կոչը Ցեղասպանութեան ճանաչման՝ յանուն բռնութիւններից ազատ, խաղաղ ու բարօր աշխարհի: Ամենակալ Տիրոջ զօրակցութեամբ ու օրհնութեամբ եւ մեր ժողովրդի աննկուն ջանքերով արդարութեան արշալոյսը պիտի բացուի մեր կեանքում եւ իրաւադատութիւնը պիտի կատարուի ազգիս հանդէպ: Հաստատուն մնանք հաւատի մէջ՝ աստուածսիրութեան, մարդասիրութեան, մեր արդար դատի: Հաստատուն մնանք հայրենի յիշատակները եւ ազգային աւանդները գնահատել նախանձախնդրութեամբ պահպա-

նելու կամքի ու ձգտումի մէջ եւ միշտ ապրենք սիրով առ Աստուած, առ մեր Սուրբ Եկեղեցին եւ Հայրենիքը: Աղօթենք առ Տէրն Ամենակալ, որ ազգային-եկեղեցական մեր անդաստանում արգասաւորուեն եւ առատ պտուղներ բերեն մեր ժողովրդի համապեղուած ջանքերը՝ ի սէր մեր Հայրենիքի եւ աշխարհասփիւռ հայ կեանքի, մեր լուսավառ գալիքի եւ ազգային մեր բոլոր իղձերի մարմնաւորման:

«Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ» (Հռոմ. Ա7):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 15-ն Ապրիլի
յամի Տեառն 2009 եւ ի թուին հայոց ՌՆԾԸ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 513

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

«Այժմ աւադիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ Իւրոյ ի ձեռն մահուան Իւրոյ՝ յանդիման կացուցանել զձեզ սուրբս եւ անբիծս եւ անարատս առաջի Նորա, եթէ կայցէք ի հաւատսն արմատացեալք եւ հաստատեալք, եւ անշարժք ի յուսոյ Աւետարանին, զոր լուարուք, քարոզելոյ ընդ ամենայն արարածս ի ներքոյ երկնից» (Կող. Ա 22 - 23):

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Մեր եկեղեցիների խորաններից այսօր կրում է մեզ մեր Տիրոջ եւ Փրկչի հրաշափառ Սուրբ Յարութեան աւետիսը: Հաւատաւոր մեր հոգիներին վերստին հնչում է մարդկութեան փրկութեան շնորհի անզուգական լուրը, թէ մեր Տէրը՝ Քրիստոս, հաշտեցրեց մեզ Աստուծոյ հետ Իր մարմնով եւ Իր մահուամբ, որպէսզի ներկայացնի մեզ Նրա առաջ սուրբ, անբիծ եւ անարատ, եթէ ամուր ու անսասան մնանք հաւատի մէջ եւ անխախտ յոյսի մէջ Աւետարանի, որ լսեցինք, եւ որ քարոզուեց երկնքի տակ բոլոր արարածներին:

Արդարեւ, ո՛վ կարող էր մարդկանց կանգնեցնել Աստուծոյ առաջ սուրբ եւ անարատ, եթէ ոչ միայն Աստուծոյ Որդին, Ով քաւեց մարդկութեան մեղքը Իր արդար ու պատուական Արիւնով եւ Իր յարութեամբ փրկեց մարդկանց մահից ու շնորհեց ուղին յաւիտենական կեանքի: Այսօր վերստին խնդութեամբ օրհնաբանում ենք Քրիստոսին, նորոգւում ենք հաւատքով եւ յոյսով, որ քարոզութիւնն է Աւետարանի, քանզի յարուցեալ է Փրկիչն աշխարհի, եւ մենք յուսացեալ ենք Նրա պարգեւած փրկութեան շնորհին:

Աստծուն հաւատալը Նրա գոյութեան մասին սոսկ իմացութիւնը չէ, այլ Աստծուն սիրելը, Աստուծոյ Խօսքն ընդունել այնպես, ինչպէս ուսուցանել են մեզ մեր հայրերը, եւ կենարար այդ Խօսքով առաջնորդուելը: Հաւատքը թանկագին աւանդ է, հոգու կենդանութիւնն ու լոյսն է, որը պիտի պահպանել, խնամել, սնուցել ու աճեցնել, որ այն որեւէ մտածութեամբ, խօսքով կամ գործով չվնասուի ու չաւերուի մեր հոգում:

Հաւատքը Քրիստոսով, որ «ճշմարիտ պատկերն է աներեւոյթ Աստուծոյ», մարդկանց հանդէպ աստուածային սիրոյ ու ողորմութեան ճանաչումն ու փառաւորումն է եւ այդ սիրով ապրելը: Իր առաքելութեան ընթացքում մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, յաճախ էր խօսում հաւատքի կարեւորութեան մասին: Նա ուսուցանեց եւ հրաշագործեց առաւելաբար այնտեղ, ուր հաւատք գտաւ եւ տրտմեց ու վշտացաւ, երբ չգտնուեց յուսացեալ հոգի, հաւատք Աստուծոյ հանդէպ, այլ միայն՝ արտաքին ձեւ աստուածպաշտութեան: Տէրը միշտ մեզ հետ է, եթէ մենք աներկմիտ հոգով Նրա հետ ենք: Իսկ ուր Տէրն է՝ ազատութիւն է, ճշմարտութիւն է, արդարութիւն է, սէր ու խաղաղութիւն է: Ուր Տէրն է՝ փրկութեան շնորհ է, բժշկութիւն, մխիթարութիւն, յարուցեալ հոգի է, յոյս է եւ հաւատք:

Հաւատքի հրաշքն է պատմում մեզ Սուրբ Գիրքը. կոյրերը տեսնում են, կաղերը՝ քայ-

լում, բորոտները՝ մաքրում, մահացածները յարութիւն են առնում: Այս ամենը տեսնելով եւ Տիրոջ կենարար խօսքը լսելով՝ մարդիկ հեպեւում էին Նրան՝ հաւատալով, որ իրականացել են մարգարէութիւնները Փրկչի մասին: Հաւատքը սասանուեց, եւ յուսալքութիւնը համակեց մարդկանց Քրիստոսի խաչելութիւնից յետոյ: Երկիւղը համակեց անգամ Տիրոջ աշակերտներին, որ շփոթուած ու տարակուսած էին, երբ յարուցեալ Քրիստոս յայտնուեց նրանց մէջ եւ խօսեց նրանց հետ: Նոյն Տէրն էր առաքեալների աչքերի առջեւ՝ Նա, Ով խաչուեց եւ գերեզման դրուեց եւ Ում տեսնում էին յարուցեալ: Այդժամ լուսաւորուած մտքով՝ առաքեալները հասկացան, որ մարդկութեան համար բացուել է փրկութեան՝ մահուանից կեանք առաջնորդելու ճանապարհը: Ու մինչ այդ եթէ վախեցած եւ յուսաբեկ էին, այլեւս մահից աներկիւղ տարածեցին Աւետարանը, թէ յարուցեալ է Քրիստոս՝ Փրկիչն աշխարհի:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, այսօր եւ միշտ յարուցեալ Քրիստոս մարդկանց հետ է՝ նորոգելու համար կեանքը, վերափոխելու աշխարհը: Յարուցեալ Քրիստոս մարդկանց հետ է՝ հաստատելու աստուածսիրութեան եւ մարդասիրութեան ընթացքներում, որպէսզի մերժուեն սուտը, անարդարը, նախանձն ու ատելութիւնը, վերանան արհաւիրքն ու պատերազմը, ցաւը, հոգսը, կարիքը, եւ Աստուծոյ շնորհն ու ողորմութիւնը մարդկային կեանքում առատանան այնպէս, ինչպէս երկիրն է սրանում երկնքից լոյս, ցօղ, անձրեւ եւ կանաչում է, ծաղկում ու պտղաբերում: Սակայն ի՞նչ կարելի է սպասել, ի՞նչ հեռանկար յուսալ, եթէ արարչաստեղծ կեանքը հաստատուի աստուածային ճշմարիտ սիրուց, աստուածային լոյսից հեռացող, Աստծուն ուրացող հոգու մէջ, ի՞նչ հեռանկար, եթէ ոչ այն, որ «չար ու խաբեբայ մարդիկ չարից այն կողմ էլ պիտի գնան» (Բ Տիմ. Գ 13): Գալիքի յոյսն Աստուած է՝ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, որ պարգեւում է մարդկանց զօրութիւնը՝ յարուցեալ կեանքով ապրելու, միշտ դէպի բարին ընթանալու, դէպի խաղաղ, բարօր, ապահով ու արդար աշխարհի:

Քրիստոսով իր փրկութեանը, կեանքի նորոգութեանը հաւատաց եւ մեր ժողովուրդը՝ հաստատուելով անշարժ վէմին Աւետարանի քարոզած յոյսի եւ հաւատքի: Առաքեալների, առաքելապատիւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի ու բազում սրբերի հաւատքով յարուցեալ Քրիստոս քայլեց մեր երկրում, լուսաւորեց մեր ժողովրդի կեանքը, օրհնեց մտքի եւ հոգու արգասիքներով, զօրացրեց եւ յոյսով պահպանեց փորձութիւնների ու նեղութիւնների մէջ: Փրկչին ապաւինած՝ մեր ժողովուրդը վեր յառնեց մահուան խորխորատներից եւ յարուցեալ իր նոր կեանքը վերընձիւղեց, իր տունը կառուցեց, հայրենի ծուխը ծխեցրեց եւ թէեւ պարագիր ու աշխարհասփիւռ, մնաց համախումբ ու միասնական, հաւատաց արդարութեան յաղթանակին, ազատութեան իրաւունքին, բարիով ու բարիքով կեանքի վերափոխմանը, խաղաղ աշխարհի տեսիլքին:

Այս հաւատով ու ձգտումներով, սիրելի հաւատաւոր զաւակներ, այսօր ջանում ենք բարգաւաճ դարձնել Հայաստան եւ Արցախ մեր հայրենի ազատ երկիրը, զօրացնել եկեղեցական եւ ազգային մեր կեանքն ի սփիւռս աշխարհի: Մեր յոյսերի ու նպատակների իրագործման եւ մեր օրերի դժուարութիւնների յաղթահարման համար ուղեկից դարձնենք մեզ միմեանց հանդէպ տէրունապատուէր սէրը, յարգանքը, ազնուութիւնն ու վստահութիւնը, հոգածութիւնն ու աջակցութիւնը, որ հիմքն ու ամրութիւնն են եկեղեցական եւ ազգային մեր կեանքի, ընտանիքների, ընկերութեան, բարեկամութեան ու արդիւնաւոր գործակցութեան: Այդ արժէքներով են խնամում եւ բարգաւաճում պետական ու հասարակական կեանքի կառոյց-

ները եւ ծառայում ընդհանուրի բարիքին: Այդ արժէքները պիտի օգնեն մեզ յատկապէս այսօր, փնտեսական անհաստատ իրավիճակներում, առկայ խնդիրների ու մտահոգութիւնների պայմաններում գտնելու հասպատուն եւ բարեյոյս ուղիները, Հայրենիքում եւ Սփիւռքում կեանքի կոչելու բարեբեր գործեր: Այո՛, աներկիւղ, «բարձրագլուխ պարծենում են» ու պիտի պարծենան ճշմարիտ հաւատքն ու հաւատի գործերը: Հաւատաւոր հոգու ազնիւ արգասիքներն ամեն ասպարէզում, ամեն քայլափոխին իրական տեսնելով է, որ մեր զաւակները պիտի սովորեն դրանցով ապրել, ընտանիք սիրել, ընկեր սիրել, Հայրենիք եւ Աստուած սիրել:

Արդ, սիրելի հաւատաւոր ժողովուրդ, հանդերձաւորուած Տիրոջ փրկութեան պարգեւներով, հաւատքով ու յոյսով միշտ նորոգելով մեր հոգիները՝ սիրով, միաբան, միասիրտ ու միակամ ծառայենք ազգային մեր բոլոր իղձերի ու նպատակների իրագործմանը: Եւ Տէրը, որ միշտ մեզ հետ է, տեսնելով մեր բարի գործերը, պիտի վարձատրի մեզ յարուցեալ կեանքով:

Քրիստոսի հրաշափառ Յարութեան բերկրալի աւետիսով եւ եղբայրական սիրով ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանին, Քոյր Եկեղեցիների հոգեւոր Պետերին՝ հայցելով Տիրոջ շնորհով լեցուն բազում արգասիք իրենց հոգեւոր առաքելութեան մէջ: Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու բարեջան բոլոր սպասաւորներին եւ հաւատաւոր Մեր զաւակներին ի սփիւռս աշխարհի եւ մաղթում բարօր կեանք, բարի ծառայութիւն ու առատ արդիւնք:

Մեր օրհնութիւնն ու ողջոյնն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Սերժ Սարգսեանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Բակո Սահակեանին, հայոց պետական ողջ աւագանուն եւ Տիրոջ շնորհների հայցով մաղթում նոր յաջողութիւններ՝ ի սէր մեր Հայրենիքի եւ հանուր հայ կեանքի:

Ամենայն բարեաց մաղթանքով ողջունում ենք Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին: Թող Բարձրեալի հզօր Աջը հովանի լինի Ձեզ, Ձեր ժողովուրդներին ու երկրներին, պետական այրերին՝ ժողովուրդների բարեկամութեան զօրացման աստուածահաճոյ առաքելութեան մէջ:

Փրկչի Յարութեան հոգենորոգ այս օրը, սիրելի բարեպաշտ ժողովուրդ ի սփիւռս աշխարհի, միասնական մեր աղօթքը բարձրացնենք երկինք, որ Տիրոջ պարգեւած փրկութեան հաւատն ու յոյսը բոլոր մարդկանց հետ լինեն, մխիթարեն նեղութիւնների մէջ, զօրացնեն դժուարութիւնների մէջ ու պահպանեն հասպատուն աստուածասէր ճանապարհներին: Թող Տէրն օրհնի մեր ժողովրդին՝ ընթանալու դէպի խաղաղ ու բարեբեր հանգրուաններ՝ օրհնութեամբ, շնորհով ու ողորմութեամբ լեցուն: Ամուր ու անսասան մնանք հաւատքի մէջ եւ անխախտ՝ յոյսի մէջ Աւետարանի, որպէսզի յարուցեալ մեր Տէրը՝ Փրկիչը, ներկայացնի մեզ Բարձրեալ մեր Հօր առաջ անբիծ ու անարատ՝ Աստծուն յուսացեալ բոլոր հոգիների հետ:

Փա՛ռք ամենազօր Յարութեան Քո, Տէր, այսօր եւ յաւիտեան. ամէն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՒԵՏՄԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում աշխարհասփիւռ մեր ժողովրդին Աւետման տօնի առիթով եւ շնորհաւորում կանանց ու մայրերին՝ Մայրութեան եւ գեղեցկութեան օրուայ կապակցութեամբ:

Փրկչի ծննդեան աւետումը Սուրբ Աստուածածնին աշխարհի փրկութեան աստուածային խոստումի բարի լուրն էր, վկայութիւնը Բարձրեալի անսահման սիրոյ ու խնամքի մարդկութեան հանդէպ:

Սուրբ Աստուածածինն օրինակ է առաքինութեան, բարեպաշտութեան, առ մարդիկ սիրոյ ու նուիրումի: Թող Աստուածամօր լուսաւոր կերպարը այսօր եւ միշտ ոգեշնչի եւ առաջնորդի կանանց՝ ապրելու առ Աստուած հաւատքով, ծառայելու մեր երկրի առաջընթացին, ընտանիքների բարօրութեանն ու ամրութեանը, մայրական հոգածութեամբ արժանաւոր զաւակներ դաստիարակելու հաւատաւոր մեր ժողովրդի, Հայրենիքի եւ Սուրբ Եկեղեցու համար:

Աղօթում ենք, որ մեր՝ Տէրը շնորհազարդի փիկնանց եւ օրիորդաց՝ Ամենախնամ Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ պարգեւելով երջանկութիւն եւ բիւր բարիքներ, եւ Սուրբ Աստուածածնի բարեխօսութեամբ Տիրոջ օրհնութիւնն առատ արգասիքներ բերի մեր կեանքում, համայն աշխարհում:

ՊԱՏՇԱՕՆԱԿԱՆՔ

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 5-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին փոնախմբեց Ծաղկազարդը՝ Հիսուս Քրիստոսի՝ Երուսաղեմ հաղթական մուտքի հիշատակը: Ծաղկազարդի օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր պնօրհնությամբ նաեւ հռչակված է Մանուկների օրհնության օր:

Տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում առավոտյան կատարվեց հանդիսավոր ժամերգություն, հավարտ որի Մայր Տաճարի առջեւ, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Անդաստանի արարողություն: Օրհնվեցին աշխարհի չորս կողմերը, ապա նաեւ՝ ուռենու ճյուղեր, որոնք արարողությունից հետո բաժանվեցին հավատացյալներին: Անդաստանի արարողության վերջում Վեհափառ Հայրապետը կատարեց Մանուկների օրհնության հատուկ կարգ, որին մասնակցեցին Հայորդյաց փոների սաներ եւ բազում մանուկներ:

Ապա Մայր Տաճարում, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը: Գերաշնորհ Սրբազանն իր քարոզում անդրադարձավ Ծաղկազարդի փոնի խորհրդին եւ կոչ արեց հավատացյալ հայորդիներին չնմանվելու մարդկանց այն բազմությանը, որ թեպետ ցնծությամբ եւ մեծ շուքով ընդունեցին Հիսուս Քրիստոսի մուտքը Երուսաղեմ, սակայն մի քանի օր անց աղաղակում էին, որ Տերը խաչը հանվի:


Հավարտ Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետը վերստին կատարեց Մանուկների օրհնության կարգ, որից հետո Նորին Սրբությունը, շնորհավորելով ու իր օրհնությունը բաշխելով ամենքին, փոքրիկներին փոնի առիթով նվերներ հանձնեց:

Այնուհետեւ բազմաթիվ մանուկներ մասնակցեցին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կամարի առջեւ Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ հովանավորությամբ գործող Հայորդյաց փոների ջանքերով կազմակերպված կավճանկարի՝ ավանդական դարձած մրցույթին: Օրվա ընթացքին Մայր Աթոռում ազգային մեղեդիների բազում կատարումներով հանդես եկավ Մալաթիայի հայորդյաց փան փողային նվագախումբը:

ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ Տ. ԽՈՐԵՆ ԱԲԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Ապրիլի 5-ին՝ Ծաղկազարդի փոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ կատարվեց Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանի վեղարի փվչությունը՝ ձեռամբ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի:

2002թ. օգոստոսի 7-ին Հայրապետական պնօրհնությամբ Տ. Խորեն աբղ. Հովհաննիս-



Ծաղկազարդ

Կավճանկար

յանը կարգալույծ էր հռչակվել՝ հոգեւոր ծառայությունն ինքնակամ լքելու համար: Նկատի ունենալով Նշան (Տ. Խորեն աբեղա) Հովհաննիսյանի ներկայացրած գոջման գիրը՝ Ամենայն Հայոց Հայրապետն ընդառաջեց նրա խնդրանքին եւ սահմանեց մեկամյա ապաշխարության շրջան Ս. Գեղարդավանքում, որի բոլորումից հետո արտոնեց նրա վերականգնումը կուսակրոն քահանայության կարգի մեջ:

Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանն իր ծառայությունը պիտի բերի՝ իբրեւ հնդկահայոց հոգեւոր հովիվ եւ Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի կառավարիչ:

ՅԱՎԱԿՑԱԳԻՐ ՀՌՈՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ

Ապրիլի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գիր է հղել Հռոմի Սրբազան Քահանայապետ Բենեդիկտոս ԺՋ Պապին՝ Կենտրոնական Իտալիայում տեղի ունեցած սոսկալի երկրաշարժից զոհվածների համար:

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեր սրտակցությունն ու աջակցությունն ենք բերում Ձեզ դժվարին այս պահին՝ հայցելով Տիրոջ զորակցությունը բոլոր տուժածներին՝ շուտափույթ հաղթահարելու փորձություններն ու դժվարությունները, ինչպես նաեւ Ս. Հոգու մխիթարությունը զոհվածների հարազատներին», - ասվում է Նորին Սրբության ցավակցագրում:

ՈՏՆԼՎԱՅԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՌԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ապրիլի 9-ին՝ Ավագ հինգշաբթի օրը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ՝ ի հիշատակ մեր Տիրոջ՝ Վերջին ընթրիքի եւ Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատման: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը:

Նույն օրը ժամը 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հանդիսավոր թափորով առաջնորդվելով Մայր Տաճար, կատարեց Ոտնլվայի արարողություն: Արարողության ժամանակ ընթերցվածքներին, աղոթքներին եւ շարականների երգեցողությանը հաջորդեց յուղի եւ ջրի օրհնությունը:

Այնուհետեւ Փրկչի օրինակով Ամենայն Հայոց Կաթողիկոսը ծնրադիր լվաց եւ յուղով օծեց վեց եկեղեցականների, չորս գինվորականների եւ երկու ուսանողների ոտքերը:

Վերջում օրհնված յուղը բաշխվեց արարողությանը ներկա բարեպաշտ ժողովրդին:

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեծ հանդիսավորությամբ փոնախմբվեց մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունը:

Առավոտյան Սուրբ Հռիփսիմե վանքի մոտ հավաքված Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ-ի հովանու ներքո գործող Հայորդյաց փների հարյուրավոր սաներ ավանդական քայլերթով շարժվեցին դեպի համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Թմբուկների ձայների եւ փողային նվագախմբի կատարումների ներքո մանուկները, ավետելով քաղաքի բնակիչներին Տիրոջ Սուրբ Հարության ավետիսը, հասան Մայր Աթոռ եւ հավաքվեցին Միածնաէջ պատարի առջեւ՝ դիմավորելու Հայրապետական շքեղ թափորը:

Ժամը 10^{30}-ին Մայր Տաճարի զանգերի հոգեպարար ղողանջների ներքո Վեհարանից շարժվեց խաչերով ու խաչվառներով պսակված թափորը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանին ամպհովանիով առաջնորդելով դեպի Սուրբ Տաճար: Հայրապետական ամպհովանակիրներն էին «Իպար-Տասսի» թղթակից Տիգրան Լիլոյանը, ՀՀ ԱԱ գրականության ինստիտուտի փնօրեն Ավետիք Իսահակյանը, երգահան Արա Գեւորգյանը եւ բռնցքամարտիկ Վախթանգ Դարչինյանը:

Սուրբ եւ Անմահ Պատարագի Սրբազան արարողության ընթացքին Նորին Սրբության առընթերականներն էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի փեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը եւ Հայոց բանակի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց» ավետիսով եւ Հայրապետական սիրով Վեհափառ Հայրապետն իր ողջույնները հղեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին, Քույր Եկեղեցիների հոգեւոր պետերին, Հայաստանյայց Եկեղեցու բարեջան բոլոր սպասավորներին եւ հավատավոր ժողովրդին:

Նորին Սրբությունն իր օրհնությունն ու ողջույնը բերեց Ս. Պատարագին ներկա ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանին եւ պետական ավագանուն՝ մաղթելով նոր հաջողություններ՝ ի սեր մեր Հայրենիքի եւ հանուր հայ կյանքի:

Սուրբ Պատարագի արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ Նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը, ԱԺ պատգամավորներ, ՀՀ կառավարության անդամներ, Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտության, կրթության եւ մշակույթի գործիչներ:

Հավարտ Սուրբ Պատարագի Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն ամենքին վերստին փոխանցեց Տիրոջ հրաշափառ Հարության հոգենորոգ ավետիսը:



Ոտնլվա

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՊԿ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ

Ապրիլի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների ներքին գործերի նախարարներին՝ գլխավորությամբ ՀԱՊԿ Գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժայի եւ ՀՀ ոստիկանապետ Ալիկ Սարգսյանի:

Հանդիպմանը ՀՀ ոստիկանապետը Նորին Սրբությանը ներկայացրեց ՀԱՊԿ անդամ պետությունների ներքին գործերի նախարարների երեւանյան հավաքի նպատակը եւ մանրամասները:

Ողջունելով հյուրերին՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունը բերեց հավաքի մասնակիցներին՝ հաջողություններ մաղթելով ժողովի աշխատանքներին: Նորին Սրբությունը կարեւորեց համագործակցությունը ՀԱՊԿ անդամ երկրների առջեւ ծառացած խնդիրների հաղթահարման գործում:

Անդրադարձ կատարվեց հասարակության մեջ բարոյական արժեքների ամրապնդման անհրաժեշտությանը, ինչում մեծապես կարեւորվեց Եկեղեցու առաքելությունը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԵԼԱՌՈՒՍԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Ապրիլի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ստեփան Սուխորեննկոյին:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու ժողովուրդների միջեւ առկա բարեկամական կապերի, երկրների սերտ գործակցության եւ Եկեղեցիների եղբայրական հարաբերությունների մասին: Անդրադարձ կատարվեց նաեւ երկու ժողովուրդների հոգեւոր կյանքին, եկեղեցիների կարեւոր դերակատարությանը հասարակության մեջ բարոյական-հոգեւոր արժեքների ամրապնդման գործում:Կարեւորվեց Մայր Աթոռի եւ ՀՀ-ում Բելառուսի դեսպանատան միջեւ ձեւավորված ջերմ կապերի առավել զորացումը:

ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԼՅՈՒԹԵՐԱԿԱՆ ԵՒ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Ապրիլի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆինլանդիայի Լյութերական եւ Ուղղափառ Եկեղեցիներից Հայաստան ժամանած շուրջ 25 եկեղեցական եւ աշխարհական ուխտավորների:

Ողջունելով նրանց համայն հայության նվիրական սրբավայրում՝ Հայոց Հայրապետն անդրադարձավ Հայոց Եկեղեցու ներկայիս գործունեությանը եւ նրա առաքելությանը մեր ժողովրդի կյանքում: Նորին Սրբությունն ընդգծեց, որ խորհրդային անաստվածության տարիներից հետո այսօր Եկեղեցին ամեն ջանք գործադրում է՝ վերանորոգելու եւ վերականգնելու դարեր շարունակ բազում հարվածներ կրած մեր ժողովրդի հոգեւոր կյանքն ու հավատքը:

Նորին Սրբությունն ուրախությամբ արձանագրեց, որ ջերմ եւ եղբայրական հարաբերություններ են ձեւավորվել Հայոց Եկեղեցու եւ Ֆինլանդիայի Լյութերական եւ Ուղղափառ Եկեղեցիների միջեւ, որի վկայությունն այս երկրորդ ուխտագնացությունն է Հայաստան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համագործակցությամբ: Վեհափառ Հայրապետը սիրով վերհիշեց Ֆինլանդիայի Լյութերական Եկեղեցու առաջնորդ Ջուկկա Պաարմայի եւ Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Լեո արքեպիսկոպոսի այցերը Հայաստան, ինչպես նաեւ իր եղբայրական այցը Ֆինլանդիա:

Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ ուխտագնացության այս օրերին, երբ աշխարհասփյուռ հայությունը ոգեկոչում է Մեծ եղեռնի բյուրավոր նահատակների հիշատակը, ֆինն ժողովրդի զավակներն աղոթակից ու զորակից պիտի լինեն հայ ժողովրդին: Նորին Սրբությունը մասնավորապես ընդգծեց, որ արդարությունը պիտի հաղթանակի, Հայոց ցեղասպանությունը դատապարտվի, որպեսզի նման ոճրագործություն երբեւէ տեղ չգտնի որեւէ այլ ժողովրդի կյանքում:

Վերջում Հայոց Հայրապետը պատասխանեց ներկաների հարցերին:

Ծիծեռնակաբերդ, 24 Ապրիլ

ԱՊՐԻԼԻ 24՝ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ ՋՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

Ապրիլի 24-ին՝ Մեծ Եղեռնի զոհերի հիշատակության օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պապրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը թեմակալ առաջնորդների, Մայր Աթոռի միաբանների եւ բարերար հայորդիների ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի փունջ մատուցելու բյուրավոր հայ նահատակների անմահ հիշատակին:

Հուշահամալիրում Ամենայն Հայոց Հայրապետը եւ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը ծաղկեպսակներ զետեղեցին, ապա անմար կրակի մոտ Նորին Սրբության նախագահությամբ եւ ներկայությամբ ՀՀ Նախագահի եւ հայոց պետական ավագանիի կատարվեց հոգեհանգստյան արարողություն Հայոց ցեղասպանության զոհերի լույս հոգիների հանգստության համար:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, որ սրբազան արարողության ընթացքում անդրադարձավ օրվա խորհրդին:

Այնուհետեւ Մայր Տաճարի հարեւանությամբ գտնվող Նահապատկաց հուշարձանի՝ Աղոթքի եւ ուխտի խաչքարի մոտ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Սրբազան արարողություններին մասնակցեցին նաեւ Անդրկովկասում պապական նվիրակ Կլաուդիո արքեպիսկոպոս Գուջերոտտիին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերներ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Սիրիայից եւ Քուվեյթից:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵԻ ՍԻՐՈ ԿԱՆԹԵՂ ՀԱՆՁՆՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ապրիլի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Սպիտակ աղավնի» միջազգային հիմնադրամի հիմնադիր Ջանի Ռիջեւիթսին: Նորին Սրբությանը հանձնվեց խաղաղության եւ սիրո վառվող կանթեղը՝ խաղաղության ջատագովման մեջ իր մեծ ավանդի եւ վաստակի համար:

Շնորհակալություն հայտնելով պարգեւի համար՝ Նորին Սրբությունը նշեց, որ խաղաղության կանթեղի լույսը պետք է ճառագի յուրաքանչյուր մարդու կյանքում, որպեսզի ամեն մարդ ապրի եւ առաջնորդվի Աստծո պատվիրաններով ու պատգամներով, եւ մարդկությունն ապրի համերաշխության ու խաղաղության մեջ:

«Մեր ժողովուրդը գիտե բարձրորեն գնահատել խաղաղությունը՝ որպես հիմնարար արժեք»,-նշեց Հայոց Հայրապետը՝ ավելացնելով, որ այս լապտերը գալիս է վառվելու Հայաստան երկրում՝ զորացնելու մեր ժողովրդի հոգուց ճառագող խաղաղության եւ սիրո ջահը:

Այնուհետեւ «Սպիտակ աղավնի» միջազգային հիմնադրամի գործադիր տնօրենը ներկայացրեց հիմնադրամի գործունեությունը:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:

ՔԱՐՈԶԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Տ. ԱՐԱՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼԹԱԳՃՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(5 ապրիլի 2009 թ.)

«Ուրախացի՛ր խնդութեամբ, դո՛ւստրդ Սիոնի,
կանչի՛ր ցնծութեամբ, դո՛ւստրդ Երուսաղէմի, ահա
գալիս է քո թագաւորը քեզ մօտ, քո արդար, փրկագործ
եւ խոնարհ թագաւորը՝ հեծած էշի, էշի քուռակի վրայ:
(Զաքարիա Թ 9)

Սիրելի՛ հավատացյալներ, այս խոսքերը վերցված են Զաքարիա մարգարեից, երբ մարգարեն շուրջ երկու հազար հինգ հարյուր տարիներ եւ ավելի առաջ ճշմարիտ մարգարեությամբ ողջ մարդկությանն իրազեկ է դարձնում մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հաղթական մուտքին Երուսաղեմ: Այսօր քրիստոնյա աշխարհն ամենուրեք մեծ ցնծությամբ տոնախմբում է Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ, մի քաղաք, որտեղ Սողոմոնի կողմից կառուցվել էր Ասպծո տաճարը: Այստեղ է, որ բազում մարգարեներ տարբեր առիթներով եւ ժամանակահատվածներում մարգարեացել էին Ասպվածորդու մարդեղացման, աշխարհի գալստյան, Նրա միջոցով մարդու փրկվելու եւ կործանումից դեպի հավիտենական կյանք առաջնորդվելու մասին:

Այսօր Քրիստոս մեծ թափորով մուտք է գործում Երուսաղեմ եւ հաստատում այն բոլոր մարգարեությունները, որոնք հնչել են անցյալում մարդկության Փրկչի գալստի եւ այդ գալստյան նպատակների մասին:

Երբ կարդում ենք Ասպվածաշնչյան այն հատվածը, որտեղ չորս ավետարանիչները նկարագրում են Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ, նկատում ենք, որ այն ամփոփված է մի կարճ պատումի մեջ եւ պարզագույն նկարագրականով ծանուցվում է այդչափ կարեւոր եւ եզակի մի իրադարձության մասին, որը կոչում ենք Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ: Մաթփեոս ավետարանիչը հետեւյալ կերպ է ներկայացնում այս պատմությունը. Քրիստոս իր եռամյա առաքելության ընթացքում, վերջին հանգրվաններից մեկում՝ Երիքով քաղաքում, Ասպծո խոսքը փարածելիս ճանապարհին հանդիպում է երկու կույրերի, որոնք խնդրում են Նրան հրաշագործելով վերադարձնել իրենց տեսողությունը: Խնդրանքն ի կատար է ածվում ըստ իրենց հավատքի, եւ Հիսուս շարունակում է իր ճանապարհը: Մոտենալով Երուսաղեմին՝ հրամայում է իր աշակերտներին, որ նրանք գնան հանդիպակաց գյուղ, որտեղ կապված կգտնեն մի ավանակ իր քուռակի հետ եւ բերեն իրեն: Նրանք կատարում են պատվերը եւ Հիսուս, նստելով ավանակի վրա, մոտենում է Երուսաղեմին՝ ժողովրդի հոծ բազմությամբ շրջապատված: Ժողովուրդը բարձրաձայն աղաղակում էր եւ վկայում

Քրիստոսի՝ Դավթի եւ Աստծու Որդի լինելու հանգամանքը, որպես սովորություն էր դիմավորել հաղթանակած մի թագավորի, որը վերադառնում է իր քաղաքը:

Սիրելի՛ հավատացյալներ, ինչպես նկատեցինք՝ փոքր, պարզ մի պատմություն, սակայն լի մարգարեությունների լրումով եւ ճշմարտության բացահայտմամբ: Այսօր այս պատմության փոնակատարությունն է, որ նշում ենք: Ինչպես ասում են, պատմությունը կրկնվում է այսօր այստեղ՝ այս սրբազան տաճարի կամարների ներքո: Շուրջ երկու հազար տարիներ առաջ տարեցներ, երիտասարդներ, պապանիներ ու մանուկներ ուղեկցում էին Քրիստոսին եւ հատկապես երեխաներ, որոնք իրենց անմեղությամբ աղաղակում էին եւ ուրախանում ի տես իրենց մարդեղացած Արարչի, Ով այդ պահին տեսանելի էր դարձել:

Ծաղկազարդ է, հաղթանակի, ուրախության եւ փոնախմբության օր է այսօր: Ուրախանում ենք բոլորս՝ անկախ տարիքից, սեռից: Այո՛, եւ ինչո՞ւ չպետք է ուրախանանք. ուրախանանք, որովհետեւ այսօր, երբ պահեցողությամբ եւ աղոթքով իր ավարտին հասցրեցինք պահոց մեծ շրջանը, դիմեցինք բոլոր միջոցներին ազնվացնելու եւ լուսավորելու մեր հոգիները, պատրաստվեցինք այսօրվան՝ լինելու վկան ու ականատեսը մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հաղթական մուտքին Երուսաղեմ: Նրանք, ովքեր որպես քրիստոնյաներ ճանապարհորդեցին Մեծի պահոց քառասնօրյա շրջանը, իրենց առջեւ նպատակ եւ իղձ էին դրել մասնակցելու հոգեւոր այն ճանապարհորդությանը, որ նման է Քրիստոսի հաղթական մուտքին Երուսաղեմ: Եւ քառասուն օրեր շարունակ մեր անձնական խոկումներով փորձեցինք մեր մեղքերի զգեստները հանել եւ դնել Հիսուսի՝ մեր Տիրոջ ոտքերի առջեւ՝ ի քավություն եւ ի թողություն մեղաց: Այսօր ծաղկազարդ է, «Ծառազարդար» ժողովրդական լեզվով, եւ իրավ է ժողովուրդը՝ ծառերը զարդարված են, գարուն է, եւ բնությունը վերստին զարթոնք է ապրում ձմեռային սառնամանիքից: Բնությունը զարթոնք է ապրում, եւ այդ զարթոնքին զուգահեռ ամեն մի հավատացյալ ու ճշմարիտ քրիստոնյա, իր հոգեւոր զարթոնքի, հոգեւոր վերակենդանացման, հոգեւոր բնության ծաղկազարդումի հույսն իր սրտում, գնում է ընդառաջ այն հեզ ու խոնարհ անձին, որին Երուսաղեմում ամբոխն ընդունում էր որպես նոր թագավորի եւ ամենափրկչի, Ով իր եռամյա վարդապետությամբ, հայրական խնամքով լի, որպես դեպի Աստված առաջնորդող ճշմարիտ եւ անկաշառ նավապետ իր նավն է հրավիրում բոլոր նրանց, ովքեր երկար ժամանակ սրտի տրոփյունով ու անհամբեր սպասում էին այդ նավը բարձրանալուն, եւ հանգրվանելու նավահանգիստը այն խաղաղության, որտեղից առաջին մարդը հեռացավ Աստծո հանդեպ ցուցաբերած իր անհավատարմության եւ անհնազանդության պատճառով: Նշված հրավերին ընդառաջ գնալու ցանկությունն է, որ այսօր Քրիստոսի բոլոր եկեղեցիներում Ծաղկազարդի այս օրը մենք մեր ձեռքին բռնած նորաբողբոջ ճյուղեր, բարձրաձայն աղաղակում ենք եւ ասում. «Օրհնյալ է Նա, որ գալիս է Տիրոջ անունով» (Մատթ. ԻԱ 9):

Սիրելի՛ հավատացյալներ, Ծաղկազարդի տոնն է այսօր՝ Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ: Հիշում ու նշում ենք այս մեկը, սակայն այսքանը բավարար չէ, որպեսզի մեր հոգիները ծաղկազարդվեն՝ լուսավորվեն: Ծաղկազարդի նախօրեին մեր հոգիները պետք է արդեն պատրաստ հող լինեն այն սերմերի համար, որոնք բարի սերմնացանը ցանելու է եկել այսօր այստեղ, այլապես մենք կնմանվենք Երուսաղեմում հավաքված ամբոխին, ովքեր այդ օրը մեծ պատվով դիմավորեցին Քրիստոսին, սակայն օրեր հետո նույն վայրում մեծապես

անարգեցին ու մահվան դատապարտեցին: Նրանք այդ օրը Երուսաղեմի մուտքին իրենց զգեստները հանեցին, փարաձեցին Ճանապարհին, սակայն մի քանի օրեր հետո Նրան մերկացրեցին եւ փանջանքի ենթարկեցին, ովքեր այդ օրն օրհնեցին Նրան ասելով.«Օրհնյալ է նա, որ գալիս է Տիրոջ անունով» (Մատթ. ԻԱ 9), իսկ մի քանի օր հետո Պոնտացի Պիղատոսի առաջ բացականչեցին՝ ասելով. «Խաչ բարձրացրեք դրան», ովքեր թագավոր էին անվանում Նրան ասելով. «Ովսաննա, օրհնյալ լինես դու, ո՛վ թագավոր Իսրայէլի» (Յովհ. ԺԲ 13), իսկ օրեր անց նույն ամբոխը բացականչում էր՝ ասելով՝ «Չունենք մենք այլ թագաւոր, բացի կայսրից» (Յովհ. ԺԹ 15):

Սիրելի՛ հավատացյալներ, այսօր Ծաղկազարդի այս օրը՛ պահը եւ առիթը վերստին հրամցվում է մեզ, հրավեր է կարդացվում մեզ բոլորիս՝ գնալու ընդառաջ արդար, հեզ ու խոնարհ Փրկչին, Ով Երուսաղեմում դարձավ Պապարագի զոհը մեր բոլորի մեղքերի քավության եւ թողության համար:

Սիրելինե՛ր, թող ծաղկազարդվեն մեր հոգիները, նոր կյանքով զարթոնք ապրեն, առավել ազնվական գալիք օրերի արարողությունների քուրայի մեջ եւ արդարացած ու մաքրված վկա լինեն մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հաղթական մուտքին Վերին Երուսաղեմում:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսին եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն

Տ. ԱՐԾԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ
(11 ապրիլի 2009 թ.)

Ձեզանից ո՞վ չի բախվել մահվան ահռելի իրողության հետ: Ձեզանից ո՞վ չի ունեցել կորուստներ, ո՞ւմ սիրտը չի մղկտացել եւ չի ճմլվել հարազատի կորստից: Ո՞վ չի կորցրել հայր կամ մայր, զավակ, եղբայր կամ քույր:

Արդյոք ո՞վ հարյուր, հազար անգամ չի աղոթել Աստծուն եւ ասել՝ «Տեր Աստված, երանի մեկ անգամ մահվան սրվերը, մահվան խավարը պատռվեր, եւ մեր կորսված սիրելին, հարազատը, մեր հայրը, մայրը եւ վերադառնային եւ վերստին այցելեին մեզ ու ասեին մեզ, որ մահ կոչված այս մեծ անորոշությունն ընդամենը մեկ հանգրվանն է մեր կյանքի»: Եւ ահա այսօր մեր աղոթքները պատասխան են գտել, եւ ահա այսօր մեր երազները կատարվել են, մեր իղձերը մարմին առել: Հիսուս Հարություն է առել, վերադարձել է այն մեկը մահվան խորխորատներից, վերադարձել է այդ մեկը, որպեսզի մեզ ասի՝ «Ո՛վ մարդիկ, ձեր հարազատները, ձեր ննջեցյալները կորսված չեն եւ երեւի թե այդ ննջեցյալներն ավելի կենդանի են, քան շատ ու շատ ողջեր: Հիրավի, այդ պատճառով է ասվում սաղմոսում. «Յարիցէ Աստուած եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա» (Սղմ. ԿԷ 2): Յրվեցին մեր հոգին մաշող թշնամիները՝ տառապանքը, կասկածը, տրտմությունը: Տխրեցին եւ ցրվեցին բոլոր նրանք, ովքեր Քրիստոսի Հարության առաջին իսկ օրվանից կասկածով վերաբերվեցին Նրա Հարության անսուտ ճշմարտությանը: Նրա Հարության առաջին իսկ օրից ասեկոսեներ, զրույցներ տարածվեցին, թե աշակերտները գողացան Տիրոջ մարմինը, եւ այն լուրը, թե Քրիստոս հարություն է առել, ընդամենը մի սրահող առասպել է: Բայց պատմությունը վկա, բյուրավոր հավատացյալ հոգիների վկայությունները վկա, որ Քրիստոս իրապես եւ վավերական հարություն է առել: Քրիստոսի Հարությունից ընդամենը երկու օր առաջ Պիղատոս անունով հռոմեական կուսակալը հարց ուղղեց Նրան՝ նկատելով որպես շարքային քարոզիչներից մեկը: Պիղատոսը հարցրեց, թե ի՛նչ է նշանակում ճշմարտությունը, քանի որ Քրիստոս Իրեն կոչում էր ճշմարտության քարոզիչ: Հավիտենական մի հարց, որը հուզել է բազմաթիվ մտքեր, հարց, որը հեղաբրբրություն է շարժել բազմաթիվ իմաստունների եւ իմաստասերների, հարց, որի պատասխանը, սակայն, մինչեւ Քրիստոս մարդկությունը, եւ այսօր էլ նրանք, ովքեր Քրիստոսի լույսից հեռու են ապրում, չեն կարողանում գտնել:

Հավիտենական հարցին Քրիստոս պատասխանեց հավիտենական մի պատասխանով, որը սակայն խոսքերով չէր արտահայտվում, պատասխան, որը կյանքի վկայություն էր, պատասխան, որը շարունակում է հուզել բյուրավոր մտքեր, փոխակերպել բյուրավոր հոգիներ, եւ այդ պատասխանը Քրիստոսի հարության վավերական ճշմարտությունն էր: Ավետարանն ասում է. «Ծանիջիք զճշմարտութիւնն եւ ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ»(Յովհ. Ը 32): Ըստ երեւույթին մենք յուրաքանչյուրս մեզ համար ունենք դավանած ճշմարտություններ, բայց հաճախ մենք հուսահաբ ենք լինում, երբ տեսնում ենք, որ այսպես կոչված, ճանաչված ճշմարտությունները հաճախ չեն ազատում մեզ, չեն փրկում մեզ մեր մտապան-

ջություններից, չեն փրկում մեզ մեր թշնամիների լարած որոգայթներից, չեն փրկում մեզ այն բոլոր պատուհասներից ու փորձություններից, որոնք օրեցօր ավելի ահագնացող թափով ծառանում են մեր առջեւ: Եւ սակայն այն ճշմարտությունը, որ Ավետարանը կոչում է մեզ ճանաչելու, ահա այդ ճշմարտությունն է, որ այսօր բացահայտվում է մեզ՝ Քրիստոսի անսուտ Հարությունը: Ճանաչեցեք Հարությունը, ճանաչեցեք ճշմարտությունը եւ դուք կհասկանաք, որ այս երկրավոր կյանքն ընդամենը մի խղճուկ եւ ճղճիմ հապճեպ է հավիտենական մեր կյանքի, որին կոչված ենք ամենքս: Ճանաչենք այդ ճշմարտությունը եւ կհասկանանք, որ առօրյա դավադրություններն ու խարդավանքները, առօրյա մեր մտահոգություններն ու մտահուզումները, առօրյա մեր ամեն տեսակի զգայություններն ընդամենը խղճուկ արտացոլանքն են հավիտենական այն կյանքի, որը պիտի ժառանգենք: Ահա այս ճշմարտության մասին է վկայություն տալիս Ավետարանը, եւ որը բացահայտում է Քրիստոսի անսուտ եւ ճշմարիտ Հարությունը:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, մենք անցանք քառասնօրյա պահքի նավարկության մի երկար շրջան, հասանք լուսավոր եւ խաղաղ այն նավահանգիստը, ուր պիտի հանգչեն մեր հոգիները՝ Քրիստոսի սուրբ հարության լույսերի մեջ: Եւ այսօր, ինչպես Ոսկեբերան հայրապետն է պատգամում, «Ժամանակը չէ միմյանց մեղադրելու պաս պահելու կամ չպահելու մեջ, ժամանակը չէ միմյանց նկատմամբ կշտամբանքներ փոխանակելու, ժամանակը չէ միմյանց նկատմամբ ունեցած անհանդուրժողականությունը դրսեւորելու, այլ բոլորովին հակառակը՝ ժամանակն է թոթափվելու միմյանց նկատմամբ խոչընդոտներ հարուցող զգայություններից, ժամանակն է եղբայրական եւ մերձավորական սիրով փայփայելու միմյանց, որովհետեւ իրապես հարյավ Քրիստոս, իրապես Քրիստոսի հարությունն այսօր միացնում է մեզ ամենքիս: Միացնում է եւ ներշնչում վերսկին այն միակ եւ բացարձակ ճշմարտությունը, որ ոչինչ չարժե երկրավոր այս կյանքում մեր թշնամությունը շարժելու, ոչինչ չարժե այս կյանքում, որպեսզի մենք միմյանց նկատմամբ անհաշտ եւ ոխերիմ պրամադրություններով լցվենք, այլ բոլորովին հակառակը՝ հարկ է, որ սիրենք միմյանց, լցվենք միմյանց նկատմամբ հանդուրժողականությամբ, հաշտությամբ, համբերատարության ոգով ու սիրով: Այս է Տիրոջ Սուրբ Հարության օրը՝ Ջատկական այս նախատոնակին, մեր Եկեղեցու պատգամը, այս է Քրիստոսի ակնկալությունը եւ սպասումը մեզանից, եւ այս է, որ մեզ վերսկին ու վերսկին ասել է տալիս. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մեզ եւ ձեզ մեծ աւետիս»:

Եւ այս աղոթքով նաեւ մեր մաղթանքը եւ խնդրվածքը բարձրացնենք առ Աստված, որպեսզի վաղը Հայրապետական Սուրբ եւ Անմահ Պատարագին Տերը զորացնի Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետին՝ իր մխիթարական խոսքը բերելու, իր աղոթքը բարձրացնելու առ Աստված՝ վերսկին ու վերսկին հայցելու մեր երկրին խաղաղություն, մեր ժողովրդին՝ հաշտություն եւ համերաշխություն, մեր Եկեղեցուն՝ պայծառություն: Թող Տիրոջ Սուրբ Աջը լինի մեզ ամենքիս վրա, այժմ եւ հավիտյանս հավիտենից. Ամեն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Տ. ՄԱՂԱՔԻԱ ԱԲԵՂԱ ԱՄԻՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ ՆՈՐ ԿԻՐԱԿԻԻՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ
(19 ապրիլի 2009 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ամէն.

Նորոգեալ կըղզիք առ Ասպուած, եկեղեցիք հեթանոսաց,
Ի գլխոց լերանց գոչմամբ ձայնի, պուք ըզփառս Ասպուծոյ,
Եւ պատմեցէք զքաջութիւն Յարուցելոյն ի մեռելոց:
Շարականոց
(Կանոն Նոր Կիւրակէի)

Սիրելի՛ հավապացյալ քույրեր եւ եղբայրներ, այսօր առաքելական մեր սուրբ եկեղեցում Կրկնազատիկ է, ուր վերսկին հնչում է Հարության ավետաբեր պատգամը. «Չէ՛ ասպ, այլ յարեաւ» (Մատթ. ԻԸ 6): Հրաշափառ Հարությունից հետո, երբ մեր Տերը, իր խոստման համաձայն, Գալիլիայում հանդիպեց աշակերտներին, նրանց հետեւյալը պատգամեց. «Գնացէք ուրեմն աշակերտ դարձրէք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով: Ուսուցանեցէ՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատուիրեցի: Եւ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչեւ աշխարհի վախճանը» (Մատթ. ԻԸ 19-20):

Իրավամբ, առաքյալները, իբրեւ Հարության ականատես վկաներ, եղան նաեւ այդ մեծ եւ ասպվածային լուսեղեն իրականության քարոզիչները՝ իրենց անսասան հավատքով եւ անծախելի զոհողությամբ, առ Ասպված ցուցաբերած՝ մահվան ընդառաջ գնալու կամավոր հանձնառությամբ, միշտ հույսի աչքերով հավիտենական կյանքին նայող իրենց առաքելությամբ:

Այո՛, սիրելիներ, «Եւ ահաւասիկ ես ընդ ձե՛զ եմ» (Մատթ. ԻԸ 20) փիրավանդ պատգամն այսօր նույնպես ուղեկից է մեզ մեր կյանքի բոլոր օրերում:

Հարության հիսնօրյա հիշատակության այս կիրակին կոչվում է Կրկնազատիկ, որը երբեմն անվանվում է նաեւ «Նոր կիրակի», քանի որ նոր է այս տոնը, իսկ նրա խորհուրդը միանգամայն հուսադրող եւ չքնաղ ամենքիս համար: Նոր է կոչվում, որովհետեւ սկիզբ է դառնում մի նոր կյանքի, որը, անցյալը հնացնելով, ինքը պատճառ է դառնում նոր գալիքի, քանզի Քրիստոսի հարությամբ ամեն ինչ վերսկին նորոգվեց, հինն անցավ, եւ ամեն ինչ նոր եղավ: Իր այս անվանման համար պարտական ենք թերեւս մեր Եկեղեցու հայրերին, որոնք իմաստուն կերպով դասակարգել են Հարության հիսնօրյա հիշատակության այս յոթ կիրակիները՝ իբրեւ հիշատակություն եւ իբրեւ հիմք ընդունելով Գործք Առաքելոցի հետեւյալ խոսքերը. «Նա իր չարչարանքներից յետոյ իրեն կենդանի ներկայացրեց նրանց առաջ շատ ապացոյցներով՝ քառասուն օրերի ընթացքում երեւալով նրանց եւ խոսելով Աստծու արքայութեան մասին» (Գործք Ա 3):

Այո՛, սիրելի՛ հավապացյալներ, այժմ՝ գարնանային հիասքանչ ու արեւաշող օրերին,

Եկեղեցու այս ըմբռնման համաձայն Քրիստոս քայլում է մեզ հետ: Ամեն թուփ ու ցողուն, բնության ամեն մի մասնիկ զգում է Քրիստոսի ոգեփոխիչ շունչը, որովհետեւ մեր ընկալման համաձայն, ինչպես որ երկու հազար տարիներ առաջ Քրիստոս Գալիլիայի ծովեզերքին շրջում էր Իր Հարությունից հետո աշակերտների հետ, նույնպես եւ հիմա խորհրդաբանորեն ներկա է այստեղ՝ այս աշխարհի վրա, այս սրբազան վայրում եւ ամենքիս ինքնամաքրման ու ինքնազոջումի հրավեր է տալիս:

Աստվածորդին, Նա, ում մենք աներկբա պաշտում ու հավատում ենք նաեւ այսօր, Ով Իր աստվածային բարձրությունից խոնարհվեց դեպի երկրավոր արարածներս, մարմնացավ ու մարդացավ, չարչարվեց, խաչվեց, թաղվեց եւ Իր Հրաշափառ Հարությամբ մեզ ազատեց մեղքի ու մահվան կապանքներից, հավիտենական կյանքի հույսը որպես լույս վառեց մարդկային մեր հոգիներում, քանի որ մահը ոչ թե կյանքի վախճանն է, այլ անմահության սկզբնակետը: Սակայն պիտի նշենք, որ միանգամայն հուսադրող չէ մեզ համար լոկ այն փաստը, որ Հիսուս միայն հարություն է առել մեռյալներից: Մեր Տերն իր Հրաշափառ Հարությամբ հոգեկան նավաբեկումի, հուսահատության եւ կամալքության խավարի միջից դուրս հանեց ոչ միայն իր առաքյալներին եւ իրեն հետեւողներին, այլեւ նորոգեց նորաստեղծ Իր Եկեղեցու կյանքը:

Հարկ է տեսնել Փրկչին մեր հոգու աչքերը լայն բացած, գնալ նրան ընդառաջ, հասնել մինչեւ Գալիլիա՝ այսինքն մեր ներքին աշխարհ եւ այնտեղ տեսնել Հարուցյալ Փրկչին, որ Իր առաքյալների միջոցով մեզ նոր կյանքի հույս է պարգեւում, այս անգամ անմահության հույսը, որի միջոցով «խաւարն անգիպութեան հալածեցաւ» եւ «ծագեաց լոյս գիպութեան»:

Նոր կիրակին, սիրելինե՛ր, իր խորհուրդով նաեւ Աստծո բարեգութ կամքի եւ Նրա իրական ներկայության խորհուրդն ունի մեր կյանքից ներս: Մենք ենք, որ պիտի Աստծո շնչով եւ ներկայությամբ արժեւորենք Նրա Հարությունը: Գողգոթայի վրա թափված փրկչական արյունն էր, որ գծեց մեր պարտականության ճամփան՝նրանով ապրելու եւ նրանով գործելու պատգամով: Թաւիւր գերեզմանից լսվող հրեշտակաձայն ավետիսն էր, որ այսօր Քրիստոսի մշտամնա ներկայությունն է այս երկրի վրա, եւ ինչքան ամրապնդված լինի այն մեզանում՝ այնքան Մեր Տիրոջ անձի առկայությունը ցայտուն կերպով կզգանք մեր էության մեջ, մեր սրտի ու մեր հոգու մեջ:

Հարության մեծ ավետիսն էր, որ հնչելով պատգամ դարձավ՝ մեղավոր մարդկությանը մեղքի անքակտելի կապանքներից ազատելու համար: Սա այլ բան չէ, եթե ոչ այն հզոր ուժը, որն այլակերպում է մեր հոգիները, որպեսզի մեր կյանքի ընթացքը չլինի պատահական մի իրողություն, այլ՝ գիտակցորեն Աստծուն ամբողջապես ծառայելու հստակ ճանապարհ:

Կրկնազատիկ է այսօր, սիրելինե՛ր, հինանց շրջանի երկրորդ կիրակին, այն մեծ տոնը, որ պատահեց առաքյալներին Հարությունից հետո, եւ շուրջ երկու հազար տարիներ շարունակվում է եւ ավելիով պատահում է նաեւ մեզ հետ: Եւ ինչպես այն ժամանակ, երբ առաքյալներն էին վերնատան մեջ հավաքված ուրախանում մեր Տիրոջ ներկայությամբ, մենք նույնպես այսօր նույն ուրախությունն ենք ապրում եւ խորհրդաբար այն կոչում Նոր Կիրակի, Նոր կյանքի Կիրակի, քանզի այսօրվա Կիրակին իր իմաստով նաեւ Քրիստոսի Հարությամբ նոր մարդ դառնալու խորհուրդն ունի իր մեջ, որի համար Պողոս առաքյալը հետեւյալն է պատգամում. «Հեռո՛ւ վանեցէք ձեզանից հին մարդուն իր նախկին կենցաղով, այն, որ ապակա-

նուած է խաբեպատիր ցանկութիւններով. նորոգուեցէ՛ք ձեր մտքով եւ հոգով ու հագէ՛ք նոր մարդը, որ սղեղծուած է ըստ Աստծու՝ արդարութեամբ եւ ճշմարիտ սրբութեամբ» (Եփես.Դ 22-25):

Սիրելինե՛ր, մարդկային կյանքն այսօր ավելի քան երբեւէ կարիքն ունի Քրիստոսով վերանորոգման, ինքնամաքրման, քանզի կյանքը երկրի վրա իր գոյությունը շարունակում է ոչ միայն պղղաբերելով եւ սերնդագործելով, այլ նաեւ ու առավելաբար վերանորոգվելով: Եկեք, ուրեմն, սիրելի՛ հավատացյալներ, լայն բանանք մեր հոգու աչքերը եւ տեսնենք Քրիստոսի հարուցյալ մարմնից ճաճանչող ու ցոլացող փրկարար լույսը, որը պատրաստ է մեզ դեպի երկինք եւ հավիտենականություն առաջնորդելու:

Արդ, սիրելինե՛ր, հինանց այս շրջանին մենք՝ իբրեւ ազգ եւ ժողովուրդ, պարտավոր ենք միասնական կամքով, ինչպես նաեւ ամուր եւ անծախելի հավատքով ընդառաջ գնալ մեր Տիրոջը, խնդրել Նրանից որ խաղաղության ու անխռովության մեջ պահի ամենքիս: Ինչպես նաեւ այս Սուրբ պաճարում միասնաբար աղոթք վերառաքենք Նրան՝ մեր հոգու եւ մտքի ամբողջ զորությամբ հայցելով, որպեսզի մաքրապես արժանի լինենք Նրա Սուրբ Մարմնին ու Արյանը:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս. Ամէն:

Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(24 ապրիլի 2009 թ.)

Մարդկանց՝ Աստծո մյուս արարչագործություններից զանազանող կարեւոր առանձնահատկություններից մեկը հիշողությունն է: Եւ վերսին մենք այդ հիշողությամբ վերապրում ենք ապրիլյան նահատակների դառն ու դժվարին ճակատագիրը: Մենք պատմությանն այսօր նայում ենք խորը ցավով, բայց իբրեւ քրիստոնյաներ գիտենք փարանջապել մեղքը մեղավորից: Մեղավորի նկատմամբ մենք ատելություն չենք տածում, մենք դատապարտում ենք մե՛ղքը, մենք դատապարտում ենք ցեղասպանությո՛ւնը: Ցեղասպանություն կատարողների նկատմամբ մեր հոգիներն ատելություն չեն շնչում, պարզապես մեր մեջ հաղթանակում է լավատեսությունը, որ մի օր ցեղասպանության, ոճրագործության հեղինակները կհրաժարվեն, կդարբերակեն, կառանձնացնեն իրենք իրենց մեղքից: Այդ լավատեսությունն է այսօր վերսին հավաքել մեր ողջ ժողովրդին:

Մեր ժողովուրդը, մեկ հոգի, մեկ սիրտ, մեկ բռունցք դարձած, որպես մշտամրմունջ աղոթք, հարահոս ընթանում է դեպի Ծիծեռնակաբերդի բարձունքը՝ իր հարգանքի փուրքը, իր խոնարհումը եւ իր աղոթքը մատուցելու Ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին: Այսօր Ցեղասպանության զոհերի հիշատակին հարգանքի փուրք, խոնարհում եւ աղոթք մատուցելու համար ազգիս Վեհափառ Հայրապետ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ եւ գլխավորությամբ, եւ հանրապետության բարձրաստիճան պաշտոնեությունը՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի գլխավորությամբ, այցելեցին Ծիծեռնակաբերդի բարձունք՝ առաջնորդելով հոտը բանավոր՝ վերսին իրենց խոնարհումը, իրենց հարգանքը մատուցելու Ցեղասպանության զոհերի հիշատակին:

Եւ այս պահին կրկին ցանկանում եմ հիշել երջանկահիշատակ Վազգեն Հայրապետի խոսքը. խոսք, որ որպես ժայռացած եւ արարատացած երդում պետք է դրոշմվի յուրաքանչյուրիս մտքի ու մտածողության մեջ: 1915թ. ապրիլ 24-ից՝ այդ եղեռնագործությունից եւ ցեղասպանությունից հետո, հայությունն այլեւս իրավունք չունի սխալվելու: Իրավունք չուներ սխալվելու ճակատագրական այնպիսի պահերի, ինչպիսին էր 1988 թ., իրավունք չունի սխալվելու նաեւ այսօր: Չափազանց դժվարին, չափազանց ճակատագրական, դրամատիզմով լեցուն մի ժամանակաշրջան ենք ապրում: Ապրում ենք մի երկրում, որտեղ խամաճիկների են վերածվում տարբեր երկրների շահերը, տարբեր ներգործությունները: Ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ տարբեր օտարամուտ հոսանքներ ներխուժում են հայկական օջախներ, հայրենական բնօրրան՝ պղտորելու մեր անդորրը, օտարացնելու, շփոթեցնելու մեր մտքերը, եւ այսօր ապրիլյան նահատակների հիշատակի նկատմամբ մեր ակնածանքը, սերը եւ զգացումները պիտի օգնեն ու աջակցեն մեզ, որպեսզի հավատարիմ մնանք նրանց փեսիլքին, հավատարիմ մնանք նրանց իղձերին, հավատարիմ մնանք մանավանդ նրանց հավատքին եւ նրանց լեզվին:

Թող Տիրոջ օրհնությունը, թող Տիրոջ աջը մշտապես հովանի լինեն մեր ժողովրդին, թող Ս. Հոգու մխիթարությունները վերսփին ու վերսփին գան հայության հավաքական հոգին սփոփելու՝ կրած դառն կորուստներից: Եւ թող հանգստություն, խունկ եւ օրհնություն, մշտամրմունջ աղոթք լինի ապրիլյան զոհերի հիշատակին:

Շնորհք, սէր, խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ, ընդ մեզ եւ ընդ ամենեսեանս. Ամէն:

ԻՐԱՔԱՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԱՒԱԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ՝

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐՈՒԱՅ ԱՌԹԻՒ

(24 ապրիլի 2009 թ. Պաղպաք)

Բաժակ փրկութեան ընկալայց,
եւ զանուն Տեառն կարդացից:
Փրկութեան բաժակը պիտի առնեմ
ու Տիրոջ անունը պիտի կանչեմ:
(Սաղմ. ՃԺԲ 13)

Գարնանային ապրիլեան այս պայծառ առաւօտուն, մէկտեղուած մեր հարազատ ու մայրենի եկեղեցւոյ կամարներուն ներքոյ, որպէս հայու զաւակունք ահաւասիկ ժամադրուած ենք իրարու հետ՝ մասնակցելու Սուրբ եւ Անմահ Պատարագին, խոնարհելու անթառամ յիշատակին մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն, որոնք մարտիրոսացան վասն հաւատոյ, վասն ազգութեան եւ վասն հայրենեաց՝ անցնելով ցեղասպանութեան, ջարդի եւ աքսորի ճամբաներէն՝ արիւնալից ճամբայ, որն սկիզբ առաւ 1915-ի ապրիլի 24-ին՝ շարունակուելով համաշխարհային Առաջին պատերազմի տեւողութեան եւ անդին մինչեւ 1923 թուականը:

94 տարիներ առաջ Օսմանեան Թուրքիոյ Իթթիհատական կառավարութեան ծրագրումով եւ ճիւաղային վայրագութեամբ սկիզբ առաւ 20-րդ դարուն հրեշաւոր Եղեռնը Արեւմտեան Հայաստանի ամբողջ տարածքին վրայ: Ու այդ ոճիրը պատահեցաւ այսպէս կոչուած քաղաքակիրթ երկիրներու հայեացքին տակ, երկիրներ, որոնք ժամանակէ մը ի վեր պարզած են մարդկային իրաւունքներու պիտակը: Բայց ինչո՞ւ լռեցին այդպիսիներ, երբ բարձր մշակոյթի տէր ժողովուրդ մը, որպիսին էր եւ է հայ ազգը, կ'ենթարկուէր սրբապղծումի ու սպանդի: Մեր դարաւոր ոսոխը կործանեց մեր տունն ու տեղը, քանդեց հայու աղօթքի տուները, աւերակի վերածեց ճարտարապետական մեր կոթողները ու եաթաղանէ անցուց ամէն տարիքի պատկանող բիւր բիւրաւոր հայ զաւակունք: Վստահաբար, այդ փմարդի արարքներուն ի տես աչք փակելը ինքնին անարգանք է ու յանդիմանութիւն, մեղադրանք է ու խարան մարդկութեան ճակտին վրայ գծուած:

Թէեւ ապրիլ ամիսը արեւոտ է ու բնութիւնը հագած կանաչ զգեստ, սակայն հայերս երբէք պիտի չմոռնանք, որ այդ գեղեցիկ եղանակին մենք ապրեցանք ձիւնախառն գարուն՝ «Գարուն ա, ձիւն ա արել» հայ երգի մարգարէաշունչ վկայութեամբ:

Այս ապրիլի 24-ին եկէք միասնաբար թերթենք աշխարհի երեսին ապրող ազգութեանց գիրքը՝ կեդրոնանալով թուրանական ցեղին եւ հայ ազգին վարքագրութեանց վրայ:

Թուրանական ցեղախումբերու գիրքը 11-րդ դարէն սկսեալ եղած է արիւնահեղ՝ բաղկացած ոճրաբոյր պատմութեան դէպքերէ: Սելճուք, Մոնկոլ եւ Թուրք հորդաներ 1048-1072 թուականներու կարճ ժամանակահատուածին, 24 տարիներու ընթացքին տասն անգամ Հայաստան կը խուժեն՝ աւերելով մեր հայրենիքը, կողոպտելով մեր ժողովուրդը ու գերելով հազարներ՝ մեր զաւակներէն շատերուն հալածանքի ու ջարդի ենթարկելով:

Ապա աշխարհի թափերաբեմին վրայ երեւեցան օսմանեան թուրքերը 1453 թուականին՝ տապալելով Բիւզանդիոնի քրիստոնեայ կայսրութիւնը: ԺԶ դարուն օսմանցիները 50 տարիներ շարունակաբար Հայաստանը իրարայաջորդ պատերազմներու եւ կռիւներու դաշտի վերածեցին: Եւ այսպէս յաճախակի մասսայական կոտորած մինչեւ վրայ կը հասնեն համիտեան ջարդերը ու 1915-ի հայաջինջ Եղեռնը:

Իսկ մեր ժողովուրդի պատմութեան գիրքը ինչպի՞սի վկայութիւն կ՛արձանագրէ մեր մասին: Այստեղ պիտի կարդանք հրաշքի համազօր սխրագործութիւններու վերաբերեալ ոսկեղենիկ էջեր, որոնք կը կազմեն մեր փառքն ու պատիւը: Այո՛, հայ ժողովուրդը եղած է փնտրուած ազգութիւն, այնքանով որ մեր զանազան կարողութիւններու հետեւանքով այլազգի տիրակալներ հայերու թիւը բռնի ուժով աւելցուցած են իրենց երկրի սահմաններէն ներս վերականգնելու դիտաւորութեամբ իրենց քաղաքներն ու կարեւոր կեդրոնները: Ուր որ գտնուեցանք, բարգաւաճեցուցինք ու շէնցուցինք այդ վայրերը, զի եղանք չարքաշ երկրագործներ, ուշիմ առեւտրականներ, բանիմաց տնտեսագէտներ, յաջող վաճառականներ, կառուցանող արհեստաւորներ, փայլուն արուեստագէտներ արուեստի զանազան բնագաւառներու մէջ:

Մեր ձեռքերը եղած են ու կը մնան ճարպար, մեր հոգիները՝ բարի, մեր սրտերը՝ ազնիւ, մեր ոգեկանութիւնը՝ ստեղծագործ, ու մեր ազգային նկարագիրը եղած է ու կը շարունակէ ըլլալ հանճարեղ՝ որպէս եռանդուն, անձնուէր ու հայրենասէր հայու գաւակունք: Սիրած ենք գիրն ու գրականութիւնը եւ ուր ալ գտնուեցանք, ծաւալեցինք կրթական ու մշակութասփեղծ աշխատանք: Ուր որ կայք հաստատեցինք, մեր իսկ ջանասիրութեամբ եղանք ոսկեհանք՝ շէնցնելով ու զարգացնելով այն ամէնը, որոնց հպան մեր շինարար բազուկները:

Ու մենք Իրաքահայերս գաւակներն ենք նոյն հմուտ, հնարագէտ ու ստեղծագործ արմենական ցեղին: Նման մեր արիւնակիցներուն, որոնք աշխարհով մէկ այսօր հաւաքուած են իրենց ապրած երկիրներու Հայ եկեղեցիներու կամարներուն ներքոյ կամ միութենական կեդրոններու մէջ: Ահաւասիկ մենք եւս մէկտեղուած ենք յայսմ առաւօտուս ըսելու աշխարհին թէ՝

Մեր դէմ սանձազերծուեցաւ ահաւոր ոճիր
Որուն առ ի հետեւանք մենք վերածուեցանք տարտղնուած ու ցանուցրիւ ժողովուրդի
Եւ ակամայ սփիւռքանալով կ՛ապրինք տարբեր երկիրներու մէջ՝ ամէն օր ու ամէն պահ ենթակայ սպիտակ ջարդի:

Բայց անցնող 94 տարիներու տեւողութեան մենք կամքը ունեցանք ՛պրկելու մեր հայեցի ինքնութեան լարերը, ուղղեցինք մեր մէջքը ու սերունդ առ սերունդ դուրս եկանք զոհ ըլլալու հոգեբանութենէն եւ թօթափեցինք մեր վրայէն ողբացողի ու լալկանութեան ցնցոտիները: Այժմ մենք ազգովին վերածուած ենք պահանջատէրի՝ այն խոր գիտակցութեամբ, թէ դժուար է սպիացնել եղեռնի եւ ցեղասպանութեան թողած վէրքը, բայց հնարաւոր է զայն մասամբ ամոքել արդարութեան վերահաստատումով անպայմանօրէն իրականանալի այն պահուն, երբ վերափրկանանք մեր պատմական հողերուն եւ արդար հատուցում սպանանք:

Առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյս բակը կանգնած է Մայր Աթոռ Ս. էջմիածնէն բերուած Ապրիլ 24-ի նահատակաց նուիրուած խաչքար-յուշարձանը: Հայրենի վարպետի մը (Մաքսիմ անունով) ձեռքով փորագրուած խաչքարը խորհրդաւոր կամուրջ մըն է Մայր Հայրենիքի եւ մեր միջեւ, Սփիւռքի հայութեան եւ Իրաքահայութեան միջեւ: Ու

մենք քիչ վերջ թափօր կազմած պիտի ուղեւորուինք դէպի յուշարձանը, ուր զեպեղուած կան մասունքներէն Տէր-Ջօրի անշիրմաքար աւազներուն մէջ թաղուած հայ նահապետներու: Իրաքահայերուն կանգնեցուցած յուշարձանին ընդերքը կը հանգչին Վանի ճակատամարտին մասնակից երկու հերոսներու՝ Լեւոն Փաշա Շաղոյեանի եւ Ազատ Սիմոնեանի աճիւնները, ուր տեղադրուած է նաեւ փոքրիկ փուֆքար մը՝ բերուած մեր իսկ ձեռքով Հայաստանի Սպիտակ քաղաքէն, շրջան, որն աւելի քան քսան տարիներ առաջ դժբախտութիւնը ունեցաւ կորսնցնելու տասնեակ հազարաւոր հայերի՝ որպէս զոհ 1988-ի երկրաշարժին:

Սա պահուն Ձեր հետ միասնաբար մեր ներկայութիւնը կը բիւրեղացնէ յիշատակը մէկ եւ կէս միլիոն նահապետներուն, որոնք եղան խունկ ու պատարագ՝ մատուցուած ազգիս զոհասեղանին վրայ այն հաւատամքով, որ մեր Տիրոջ աշխարհասասան յարութիւնը երաշխիքն է նաեւ հայազգի բոլոր ժամանակներու նահապետաց կամաւոր զոհապատութեան յաղթանակին:

Մենք այլեւս ո՛չ յուսաբեկ ենք, ո՛չ ալ ընկճուած: Ունինք վերապրելու յամառ կամք, ստեղծագործելու վառ ոգի եւ պատրաստակամ ենք ցուցաբերելու յառնելու հզոր ճիգ ու մաքառում, զի այսօր կանգնած ենք մեր հարազատ եկեղեցւոյ կամարներուն ներքոյ՝ ընդունելու անմեղ հայ մարտիրոսներու անմեռ յիշատակը՝ որպես ուղեցոյց մեր անշէջ լինելութեան՝ այսօր եւ վաղը եւ միշտ:

Այս ժամը Ապրիլ 24 անունով յատկանշուած նահապետաց պահն է: Ազգովին կապրինք սուգ, սակայն անոնց իմացեալ զոհաբերութիւնը ու վերապրող հայ սերունդներու դատապարտող եւ պահանջատէր ըլլալու անզիջող վճռականութիւնը տասնեակ տարիներու տեւողութեան արդէն սկսած է իր արդիւնքը տալ աշխարհի զանազան պետութիւններու թատերաբեմերու վրայ: Շատ մը երկիրներու խորհրդարաններն ու կառավարութիւնները սկսած են ճանչնալ Ապրիլ 24-ով ծանօթ տխուր եղելութիւնը եւ զայն սահմանել որպէս «Ցեղասպանութիւն»: Նոյնիսկ ժամանակակից Թուրքիայէն այսօր ձայներ կը բարձրանան վասն ճշմարտութեան ճանաչման եւ ի խնդիր արդարութեան հատուցման հայ ժողովուրդի նկատմամբ իրագործուած եղեռնին համար:

Այո՛, Հայոց Եղեռնի ահաւոր ողբերգութեան ընթացքին զոհուեցան մէկ ու կէս միլիոն մերազն զաւակունք այսօրուաններուս վերածնունդի տեսլականով, Հայաստան աշխարհի վերականգնումի երազանքով եւ հայրենի պետութեան վերահաստատման սրոյգ հեռանկարով: Այսպէս է, որ պարտուած, հիւծուած, ընչազուրկ, թալանուած, ցանուցրիւ եւ սպանդի ենթարկուած մեր ժողովուրդը, կրկնելով մարգարէի խօսքը թէ՝ «Փրկութեան բաժակը պիտի առնեմ եւ Տիրոջ անունը պիտի կանչեմ» եւ ի ձեռին պահելով իր իսկ արիւնով լի սկիհը, ցեղասպանութենէն քիչ ժամանակ անց կերտեց Սարդարապատի, Ղարաքիլիսայի եւ Պաշ-Ապարանի յաղթանակները 1918-ի Մայիսին, որով բացուեցան յուսոյ դռները, եւ վերածնաւ Հայոց Հայրենիքը՝ յաւերժական Արարատի հայացքին ներքոյ:

Հայ ժողովուրդին մղած ազատագրական պայքարի ճանապարհին աւելի քան դար մը առաջ «Ձայն մը հնչեց Էրզրումի Հայոց լեռներէն» եւ անցնելով զանազան ճակատամարտերէ գոչեց՝ «Զարթի՛ր, լաւ, մըռնիմ քըզի»: Ու այդ նուիրական ձայնը արձագանգ գտաւ ամենուր՝ մեր պատմական հողերուն վրայ: Այսօր մենք եւս կոչուած ենք հնչեղ պահելու հայ ժողովուրդին դափին ձայնը մինչեւ այն օրը, երբ ձեռք բերենք մեր արդար իրաւունքները:

Բացառապէս արժէքաւոր ազգօգուտ այս կեցուածքը յաջողցնելու դիպաւորութեամբ կարիք ունինք միասնական աշխատանքի եւ Հայաստանեայց Առաքելական մայրենի Եկեղեցւոյ հարազատ զաւակները ըլլալու եւ մնալու հրամայականին՝ ընդ հովանեաւ Ս. էջմիածնի:

Մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի Հարութեան ոգեկանութեամբ փոգորուն՝ եկէք այս սուրբ պահուն աղօթենք, որ Արարիչն Աստուած երանաւէտ լոյսերու մէջ պահէ ազգիս մարտիրոսներուն հոգիները արդարներուն համար վերապահուած Եդեմին մէջ: Թող Սուրբ Հոգին մխիթարէ հայ ժողովուրդը, ու յարուցեալ Տէրը զօրացնէ մեր սրտերը՝ հաւատարիմ մնալու նահապետաց ուխտին եւ յաւերժական կրակին:

Թող ամենակարողն Աստուած օրհնէ մեր Մայր Հայրենիքը, Մայր Աթոռ Ս. էջմիածինը, Արցախը ու հայ Սփիւռքը՝ բոլորին պահելով անվտանգ ու անփորձանք, միշտ բարգաւաճ ու ծաղկուն, միշտ լաւատես դէպի աւելի լուսազարդ ապագան:

«Խունկ եւ աղօթք ապրիլեան հերոսներու անմեռ յիշատակին այժմ եւ միշտ». Ամէն:

Տ. ՎԱՐԴԱՆ ԱՔԵՂԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՄՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԱՄԱՏԱՐԱՆ ԿԻՐԱԿԻԻՆ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ
(26 ապրիլի 2009 թ.)

«Ո՞չ գիտէք, եթէ տաճար էք Աստուծոյ,
եւ Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ»:
(Ա Կորնթ. Գ 16)

Մեր Տիրոջ՝ եւ Փրկչի Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության փոնին հաջորդող երկրորդ կիրակին է, որ իր խորհուրդով Հարության լույսի մեջ մեզ ավետում է՝ ավանդելով Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակիի պատգամը:

Քրիստոնեական առաջին մատուռի, որտեղ մեր Տեր Հիսուս հավաքեց իր առաքյալներին սիրո սեղանի շուրջ, վերջին ընթրիքի ժամանակ հաստատեց Իր Մարմնի եւ Արյան՝ Սուրբ Հաղորդության խորհուրդը, խոնարհումով, սիրո պատգամով ոտնլվա կատարեց եւ Իր Հարությունից հետո բազմիցս հայտնվեց այդ նույն վայրում, որ Ավետարանը կոչում է Վերնատուն: Այդ Վերնատան, իբրեւ Տիրոջ առաջին մատռան, հիմնադրության հիշատակությունն է այսօր:

Եթե ուշադիր ընթերցենք, կտեսնենք, որ ամենակալ Աստված հրահանգում է ընտրել մի առանձին վայր՝ կառուցելու իր աղոթքի տունը: Տերը պատգամեց Վկայության խորան շինել, Ուխտի տապանակ պատրաստել եւ այդ տաճարի մեջ Աստուծո հաղորդակցության համար աղոթք մատուցել Ամենազորին: Սակայն Նոր Կտակարանի մեջ մեր Տերը՝ Հիսուս, մի խորհրդավոր եւ դժվարըմբռնելի արտահայտություն է անում Սողոմոնի այս նույն տաճարի առնչությամբ: Հրեաներին դիմելով ասում է՝ «Կարող եմ երեք օրվա մեջ այս տաճարը քանդել եւ վերստին կառուցել» (Յովհ. Բ 19): Նրանք հույժ զարմացած էին. հակառակվելով ասացին՝ «Մեր հայրերը քառասունվեց տարվա ընթացքում շինեցին այս տաճարը: Ինչպե՞ս եւս դու երեք օրում այն վերակառուցելու» (Յովհ. Բ 20): Եւ Ավետարանը շարունակում է՝ ասելով, թե Հիսուս խոսում էր մարմնի տաճարի մասին, բայց նա իր մարմնի տաճարի մասին էր խոսում, որ պետք է մատնվեր, չարչարվեր, խաչվեր եւ երեք օր վիմափոր գերեզմանի մեջ մնար եւ այնուհետեւ պետք է վերստին կենդանանար եւ հարություն առներ (Յովհ. Բ 21):

Հիսուսի մարմինը, սիրելինե՛ր, երկար չմնաց այս աշխարհի վրա: Երեսուն եւ երեք տարիներ. այնուհետեւ հարությունից հետո քառասուն օր եւս Մեր Տերը շրջեց, իր աշակերտներին հավատը վերահաստատեց՝ փաստելով, որ իրենց Տերը կենդանի է, որպեսզի այդ կենդանության ավետիսը տարածեին ի ծագս աշխարհի: Եւ համբարձվելուց հետո Իր մարմինը՝ տաճարը, բարձրացավ երկինք՝ ավանդելով, թե այն անձինք, ովքեր կհիշեն, կաղոթեն, կբա-

խեն եւ կլսեն ու կառաջանան դեպի Տերը, Նա միշտ նրանց հետ է, Նա միշտ նրանց կողքին է, Նա միշտ նրանց մեջ է եւ նրանց առաջնորդում է դեպի հավիտենություն եւ կյանք:

Փրկչի մարմնի պաճարի դեպի երկինք համբարձումից հետո առաքյալներին պարզվեր-ված էր, որ այդ նույն աշխարհում ստեղծած առաջին մարդուռի մեջ հավաքվեին եւ սպասեին Ասրծո Հոգու հայտնությանը: Եւ փառաւոր հայտնությամբ Ասրծո Հոգին հանգրվանեց ու իջավ առաքյալների վրա, եւ Քրիստոսի Ասրվածային ներկայությունը ներթափանցեց նաեւ քրիստոնյաների կյանք: Եւ հզորացած Պենտեկոստեի մեծ տոնի օրն այդ Եկեղեցին՝ Վեր-նապատը, լցվեց Ասրվածային զորությամբ ու շնորհներով: Առաքյալները կյանքի այս վար-դապետությունը պարան՝ պարածելու ամբողջ աշխարհին, թե՝ դուք եք կենդանի Ասրծո պաճարը եւ մի՛ պղծեք ձեր մեղքերով այդ պաճարը, այլ մաքրեցեք եւ պատրաստեցեք Ասր-ծո համար. ահա գալիս է Տերը:

Ասրված, սիրելինե՛ր, մեր մեջ է, Ասրված հանապազ խոսում է մեզ հետ, Ասրված մեր կողքին է, Ասրված բնակվում է այնրեղ, որրեղ պաճարը պատրաստ է ընդունելու եւ ընկա-լելու Ասրծուն: Եւ առաքյալը հարցնում է. «Մի՞թե կարող ենք մկրտությամբ սրբված, վերս-րին ծննդյան կոչված, կենդանացած եւ կանաչազգեստ մեր ներքին պաճարը աղրոտել եւ պղծել» (համմր. Ա Կորնթ. Գ 16-17):

Սիրելինե՛ր, եթե ուշադիր եղաք, մրածումներս կառուցեցի երեք պարբեր պաճարների հասկացության շուրջ: Այն վայրը, որրեղ հավաքվում են քրիստոնյաները հաղորդակցվելու եւ զգալու Տիրոջ ներկայությունը, Ասրծո րունը, որ աղոթքի րուն է: Քրիստոսի մարմինը, որ եւս պաճար էր իր իսկ վկայությամբ, եւ երրորդ՝ մեր հոգեւոր կյանքի պաճարը, որ հանապազ նորոգության եւ վերսրին կյանքի դառնալու կարիք ունի: Այսօր, սիրելինե՛ր, որ հավաքված ենք այս սուրբ պաճարի մեջ՝ հայության մեր առաջին աշխարհամարդուռի մեջ, քրիստոնեա-կան փիեզերալույս Եկեղեցու մեջ, որը հասրարվեց Տիրոջ Հարությունից հետո Իր իսկ իջ-մամբ այս սուրբ վայրում եւ հասրարումով այն սրբարեղիի, որրեղ դարերի ընթացքում մենք պիրի հավաքվեինք՝ զգալու Ասրծո ներկայությունը:

Գոհաբանենք եւ փառաբանենք Ասրծուն, որ մեզ առիթ է րվել ամեն անգամ գալու այսրեղ, հաղորդակցվելու Նրա զորությանը, վայելելու Տիրոջ շնորհները եւ ապրելու այդ լիացնող եւ երջանկացնող ներկայության մեջ: Հավարքով եւ աղոթքով, սիրելինե՛ր, ամեն պաճար կարող է նույնչափ սրբություն կրել, որքան որ մեր յուրաքանչյուրի աղոթքով այս անշնչացած պաճարը շունչ է սրանում, կենդանանում է, եւ Ասրված շնչում է այս պաճա-րում: Մենք պերք ունենք, որպեսզի արդարության, սրբության, Ասրծո իմասրությամբ, ներշնչման ճանապարհով մեր պաճարները մաքրենք եւ հավարքով Տիրոջ հարությամբ եւ կենդանությամբ վերակենդանացնենք՝ Ասրծո ներկայությունը մեր կյանքում առարացնե-լով: Եկեք, ուրեմն, ունկնդիր լինենք Պեարրոս առաքյալի հորդորին, որ ասում է. «Ուրեմն, դե՛ն գցելով ամէն չարութիւն, ամէն պեսակի նենգութիւն, կեղծաւորութիւններ, նախանձ եւ ամէն չարախօսութիւն, որպէս նորածին երեխաներ, մի՛շտ փափագող եղէք բանական եւ անխար-դախ կաթին, որպէսզի նրա միջոցով աճէք փրկութեան համար, քանի որ արդէն ճաշակել էք, որ քաղցր է Տէրը» (Ա Պեարրոս Բ 1-3):

Աշխարհամարդոան այս կիրակի վերարժեւորենք մեր ֆիզիկական եւ հոգեւոր քրիստո-

նեական հավատքի պաճարները եւ մեր հոգու խորքում ծնրադրենք Աստծո առջեւ, դիմավորենք երկնքի ու երկրի հաղթական Թագավորին եւ մեր գործոց արդյունքով մտնենք ու բնակվենք Տիրոջ Երկնքի արքայության պաճարի մեջ: Եւ Աստված թող մեզ ամենքիս Իր շնորհներով, Իր իմաստությամբ եւ Իր սիրո ճանապարհի առաջնորդությամբ արժանացնի պաճարանալու եւ Աստուծո հետ միավորվելու, միաբանվելու այդ երջանկության մեջ հարատեւելու սիրո մեջ, այժմ եւ հավիտյանս ամէն:

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՌՈՒԲԵՆ ԱԲԵՂԱ ՋԱՐԳԱՐՅԱՆ

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ «ԽԱՉԻ ՃԱՌԸ»

Պողոս առաքյալի աստվածաբանության երկու հիմնական հոսանքները, որոնք աստիճանաբար ուրվագծվել են Սուրբ Գրքի մեկնողական գրականության մեջ, չնայած տարբերվում են իրարից, այնուհանդերձ իրենց խաչման կետը կամ հանգույցը գտնում են Քրիստոսի խաչի իրականության մեջ: Նրանցից առաջինը՝ որպես առաքյալի մտածողության հիմնական ուղղություն, դիտարկում է Քրիստոսի հավատքի միջոցով արդարացման վերաբերյալ բազմիցս արծարծված հարցը[1], իսկ մյուսը շեշտը տեղափոխում է Քրիստոսի հետ հաղորդութենական հարաբերության վրա[2]:

Ի դեպ, «Խաչի ճառը»[3] Պողոս առաքյալի թե՛ սկզբնական (հմմտ. Գաղ. Գ 1) եւ թե՛ հետագա ավետարանման (հմմտ. Գաղ. Ե 11) առանցքում է եւ կենսական կարեւորություն է ձեռք բերում՝ առ ի համեմատություն նրա աստվածաբանական բազմաթիվ այլ ուղղությունների[4]: Այդպես՝ խաչի աստվածաբանությունից են բխում ոչ միայն նրա գործունեությունը, այլեւ եկեղեցաբանությունը, Սուրբ Հոգու վարդապետությունը, բարոյագիտությունը եւ մարդաբանությունը[5]:

Քրիստոսի խաչը քրիստոնեության նախնական քարոզչության մեջ արդեն իսկ ինքնատիպ նորություն էր, այն աստիճան, որ գայթակղություն էր դարձել հրեաների եւ հիմարություն՝ հույների համար (հմմտ. Ա Կորնթ. Ա 23):

---

1 Այս հոսանքին են պատկանում հատկապես ավանդական լութերական միջավայրին պատկանող գիտնականները՝ **R. Bultmann, H. Käsemann, H. Hübner**:

2 Այս ուղղության էլ պատկանում են՝ A. Schweitzer, **K. Stendhal** եւ հատկապես **E.P. Sanders**:

3 «Խաչի ճառ» արտահայտությունը հանդիպում ենք բացառապես Ա Կորնթ. Ա 18-ում, որտեղ «խաչ» բառը՝ գործածված սեռական հոլովով, ընկալվում է առարկայական իմաստով, այսինքն՝ խաչն է այն առարկան, նյութը, թեման, որի շուրջ կառուցվում է ճառը կամ քարոզը:

4 «Մեք քարոզեսցուք զխաչելեալն Քրիստոս» (Ա Կորնթ. Ա 23): Այս ուշագրավ արտահայտությամբ արդեն իսկ ի հայտ է գալիս խաչի առանցքայնությունը Պողոսի Ավետարանի քարոզչության մեջ: Ա Կորնթ. Ա 18-ի մեջ ասվում է, թե «ճառ խաչին .. զօրութիւն Աստուծոյ»: Եթե զուգահեռ ենք անցկացնում Հռոմ. Ա 16-ի հետ, որտեղ «զօրութիւն Աստուծոյ» արտահայտությունն ասվում է այս անգամ արդեն Ավետարանի կապակցությամբ, ապա բացահայտ տեսնում ենք, որ խաչն Ավետարանի առանցքային մասերից է, առանց որի Ավետարանը կլիներ միայն «իբրեւ զպղինձ որ հնչէ կամ իբրեւ զձնձղայս որ ղօղանջեն» (Ա Կորնթ. ԺԳ 1), տե՛ս **R. Penna**, Vangelo e inculturazione, San Paolo, Cinisello B. 2001, էջ 464: Ի դեպ, հունարեն «Ὁ λόγος τοῦ σταυροῦ»-ի «λόγος» բազմիմաստ եզրը գրաբարում հրաշալիորեն թարգմանվել է «ճառ», որովհետեւ «λόγος» այս բնագրում չէր կարող նշանակել պարզապես «բառ» բառարանային իմաստով, ոչ էլ «պատմություն, շարադրանք», քանի որ Պողոսը երբեք չի պատմում Հիսուսի չարչարանքների մասին: Հետեւաբար այդ եզրի համարժեքն է «խոսք» (ներգործական իմաստով), այսինքն՝ «ճառ»:

5 Հմմտ. **McGrath**, , Teologia della Croce, in **G.F. Hawthorne – R.P. Martin – D.G. Reid**, Dizionario di Paolo e delle sue lettere, San Paolo, Cinisello B. 1999, էջ 398: Ի դեպ, խաչի աստվածաբանությունը խաչը դիտարկում է որպես փրկության բացառիկ միջոց: Փրկագործության պատմության բոլոր մյուս իրադարձությունները, ինչպիսիք են Քրիստոսի հարությունը կամ փառավոր վերադարձը, փրկագործության նույն շրջանակում են տեղադրվում խաչի միջոցով: Խաչն աստվածաբանության ոչ թե մի առանձին դրսեւորում է, այլ հենց աստվածաբանության հիմքը:

Այդ պարագայում ի՞նչ նկատի ուներ Պողոս առաքյալը, երբ խաչի «գայթակղությունն» ու «հիմարությունը» վերսկին առաջարկում էր կորնթացիներին, ովքեր մի կողմից՝ նշան կամ հրաշք եւ մյուս կողմից՝ իմաստասիրական փեսություն էին պահանջում: Ինչո՞ւ նրա խաչի ասպվածաբանությունը, ներծծված չլինելով հարության ասպվածաբանությամբ, սակայն քրիստոնեական ինքնության փեսանկյունից շարունակում է վճռական դերակապարություն ունենալ նաեւ հարության հավապքի մեջ: Ո՞րն է այն հեռանկարը, ըստ որի առաքյալը «խաչյալ Քրիստոսին» ներկայացնում է գաղապացիներին, ինչպես նաեւ իր՝ բոլոր ժամանակների ընթերցողներին:

ՏԱՌԱՊԱՆՔԻՑ ԱՆԴԻՆ

Պապմության ընթացքում խաչի իրականությունը փառապանքի ընկալումից՝ հոռեփեսության ու խավարամպության ողջ դրսեւորումներով անցում է կապարել գեղագիպական ճանաչողության՝ խաչն առանց Խաչյալի իբրեւ զարդ գործածելու ասպիճան:

Շապերին զարմանալի կարող է թվալ այն միպքը, թե Պողոս առաքյալի համար Քրիսպոսի խաչը փառապանքի խորհրդանիշ չէ, ոչ էլ ընկալելի է առանց նրա, «որ կախեալ կայցէ զփայպէ» (հմմպ. Գաղ. Գ 13-14): Անհերքելի է այն փասպը, որ նա, Ով գամվում էր խաչին, պակավին չէր ճաշակել նմանօրինակ փառապանք, ինչպիսին խաչինն էր: Ֆիզիկական փառապանքին գումարվում էր նաեւ բարոյականը, քանի որ մահվան այդօրինակ պապժին հռոմեական դարաշրջանում (հապկապես Ա դարում) արժանանում էին նրանք, ովքեր ապսպամբում էին պեպության կամ պեպական կրոնի դեմ: Հռոմեացիների համար, հեպեւաբար, խաչելությունը բարձրագույն պապիժն էր[6]: Հրեաների համար, մյուս կողմից, հապապուն էր մնում այն ճշմարպությունը, ըստ որի «Անիծեալ յԱստուծոյ է ամենայն՝ որ կախիցէ զփայպէ» (Բ Օր. ԻԱ 23), պապիժ, որ կիրառվում էր պակավին հելլենիսպական շրջանից: Հովսեփիոս Ֆլավիոսը պապմում է, որ Մաքերոնպի՝ հռոմեացիների կողմից պաշարման ժամանակ զորավար Բասը հրամայում է խաչ կանգնեցնել՝ ցույց պալով, թե ցանկանում է Եղիազար քահանայապետին անմիջապես խաչ բարձրացնել: Նման փեսարանի առջեւ ամրոցի բնակիչներն ուժեղ պագնապով են համակվում՝ ողբաձայն աղաղակելով այդ անպանելի դժբախպության առ ի փեսություն[7]: Թվում է, թե այդ սպառնալիքը բավական է եղել, որպեսզի պաշարվածներն անձնապուր լինեին հռոմեացիներին[8]:

Այսուհանդերձ, խաչյալ Քրիսպոսին փեսնում ենք վաղ քրիսպոնեական քարոզչության առանցքում եւ, ինչպես վերը նշեցինք, Պողոս առաքյալի ավեպարանման կիզակեպում: Ավելին, առաքյալի մպածողության մեջ Խաչյալը ոչ թե նա է, ով համակերպվեց՝ կրելով փառապանքի նման փորձառությունը, այլ նա է, «...որ սիրեացն զիս, եւ մապնեաց զանձն վասն իմ» (Գաղ. Բ 20) եւ «Ջի սէրն Քրիսպոսի սպիպէ զմեզ» (Բ Կորնթ. Ե 14) փոխելու մեր գոյութենակերպն ու կենսաձեւը:

---

6 Հմմպ. **Ա. Տեր-Միքելյան**, Հայասպանյայց Սուրբ Եկեղեցու Քրիսպոնեականը, Ս. Էջմիածին 2007, էջ 203: Ցիցերոնն այն համարում էր «ամենից դաժան ու սոսկալի փառապանքը», Սենեկայի համար խաչը «ամուլ փայպ» էր, իսկ Տակիպոսը խաչելությամբ մահը որակում էր ամենաանարգը: Հմմպ. **G. Barbaglio**, La prima lettera ai Corinzi, Bologna 1996, էջ 134:

7 Հմմպ. **И. Флавий**, Иудейская война, Минск, 1999, VII 6,4, էջ 642:

8 Նույն փեղում:

Եթե քննության առնենք միայն «խաչ» եւ «խաչել» բառերի գործածությունը Նոր Կտակարանում, ապա կարող ենք վստահությամբ պնդել, որ հազվադեպ են Պողոս առաքյալի կողմից խաչի բացորոշ վկայակոչումները[9]: «Խաչ» գոյականը Նոր Կտակարանում հանդիպում է 27 անգամ, որից 10-ը՝ Պողոսի թղթերում[10]: Համապատասխան բայը Նոր Կտակարանում հանդես է գալիս 46 անգամ, որից 8-ը՝ Պողոսի թղթերում[11]: «Խաչակից լինել» բաղադրյալ բայը Նոր Կտակարանում հայտնվում է 5 անգամ, որից 2-ը՝ Պողոսի թղթերում[12]: «Խաչ» եզրը Նոր Կտակարանում կիրառություն է գտել միայն Ավետարաններում ու Պողոս առաքյալի թղթերում, սակայն որոշակի տարբերությամբ: Համատես Ավետարաններում, օրինակ, փոխանցվում է Քրիստոսի խոսքերից մեկը, ըստ որի՝ «Որ ոչ առնու զխաչ իւր եւ գայ զկնի իմ, չէ ինձ արժանի» (Մատթ. Ժ 38, հմմտ. Մարկ. Ը 34, Ղուկ. Թ 23): Քրիստոսի՝ խաչը կրելու այս հրավերն առանձնանում է երկու ինքնատիպ կողմերով. «խաչը» գործածվում է՝ 1) փոխաբերական իմաստով, այսինքն՝ խորհրդանշում է փորձություններն ու տարատեսակ դժվարությունները եւ 2) իր բարոյական ընդգրկունությամբ, որով դառնում է ինքնաուրացման խորհրդանիշ: Սակայն Պողոսի թղթերում իմաստաբանական այս պարողությունն ամբողջությամբ անհայտանում է. Պողոսի համար խաչը փոխաբերություն չէ, այլ մշտապես եւ միայն ու միայն Հիսուս Քրիստոսի խաչն է եւ ոչ թե նաեւ քրիստոնյայի:

Հետեւաբար, Պողոսի՝ խաչի աստվածաբանական հիմնադրույթն սպիպում է վերանայելու գոնե քրիստոնյա աշխարհում տարածված այն թյուր պատկերացումը, որը խաչն ընկալվում է առանց Քրիստոսի կամ միայն ցավի ու տառապանքի դիտակետից, քանի որ պողոսյան քարոզչության մեջ ոչ թե ինչ-որ խաչապարտ, այլ հենց Քրիստոս Ինքն է հանդես գալիս (հմմտ. Գաղ. Ջ 12, Փիլիպ. Գ 18):

ԱՐԴԱՐԱՑՈՒՄ ԵՒ ԽԱՉԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Պողոսի քրիստոսաբանության ինքնատիպ դրույթներից մեկը գտնում ենք «Խաչի ճառին» նվիրված պարբերության (Ա Կորնթ. Ա 18-31) մեջ. «Զի ի նմանէ դուք էք ի Քրիստոս Յիսուս, որ եղեւ մեզ իմաստութիւն յԱստուծոյ, արդարութիւն եւ սրբութիւն եւ փրկութիւն» (Ա Կորնթ. Ա 30): Աստծո՝ հավատացյալների հանդեպ արդարություն-արդարացում թեմատիկան կազմում է պողոսյան աստվածաբանության ամենաէական հարցերից մեկը: Ինչ նկատի ունի առաքյալն «արդարութիւն յԱստուծոյ» արտահայտությունն անելիս. ե՞րբ եւ ինչպե՞ս է Աստված արդարացնելու:

Փրկագործության պատմության ընթացքում դրսեւորված աստվածային արդարության ու հայտնության ճշմարտությունն ընկալելի է միայն խաչի իրադարձության միջից, երբ Քրիստոս հանդես է գալիս որպես «արդարութիւն յԱստուծոյ»:Հետեւաբար Քրիստոսի խա-

---

9 Այնուհանդերձ, Պողոսի նամակաշարում հաճախադեպ են այն գոյականներն ու բայերը, որոնք շարունակաբար հիշեցնում են խաչի իրադարձությունը. «արեամբն նորա» (Հռոմ. Գ 25, Ե 9), «մահուամբ Որդւոյ նորա» (Հռոմ. Ե 10), «մատնեաց զանձն» (Գաղ. Բ 20), «մատնեցաւ» (Հռոմ. Դ 25), «ազատեցոյց» (Գաղ. Դ 31), «հաշտեցոյցն» (Բ Կորնթ. Ե 18), «արդարացեալք ի հավատոց անտի» (Հռոմ. Ե 1):

10 Հմմտ. Ա Կորնթ. Ա 17-18 Գաղ. Ե 11, Ջ 12-14, Եփ. Բ 16, Փիլ. Բ 8, Գ 18, Կող. Ա 20, Բ 14:

11 Հմմտ. Ա Կորնթ. Ա 13-23, Բ 2-8, Բ Կորնթ. ԺԳ 4, Գաղ. Գ 1, Ե 24, Ջ 14:

12 Հմմտ. Հռոմ. Ջ 6, Գաղ. Բ 19:

չով եւ միայն խաչի վրա տեղի ունեցավ արդարացումը հավատքի միջոցով՝ առանց օրենքի գործադրության. շնորհի միջոցով հավատացյալները հասնում են արդարացման եւ ի զորու դառնում մտնելու «ի շնորհս յայսոսիկ յորում կամք եւ պարծիմք յուսով փառացն Աստուծոյ» (Հռոմ. Ե 2): Եթե մի կողմից՝ ոչ ոք, մինչեւ իսկ հրեան, պարծենալ չի կարող Տիրոջ առջեւ, որովհետեւ «ամենեքեան մեղան, եւ նուազեալ են ի փառաց անտի Աստուծոյ» (Հռոմ. Գ 23), ապա մյուս կողմից՝ խաչի իրադարձությունն է, որ դառնում է պարծանքի միակ կետը Քրիստոսին հետեւողների համար: Այսպես՝ Պողոս առաքյալը գրում է. «Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է, եւ ես՝ աշխարհի» (Գաղ. Զ 14):

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է ընդգծել, որ գտնվում ենք մի պարադոքսալ պարծանքի առջեւ, որովհետեւ Պողոսից առաջ ոչ մեկը չէր համարձակվել պարծենալ Քրիստոսի խաչով: Ինչպե՞ս կարող է Հին աշխարհի համար ծանրագույն պատիժը դրոշակ դառնալ հավատացյալների համար: Երբեմն փորձ է արվում մեղմացնելու Պողոսի այս գաղափարի բովանդակային պարողությունը՝ պաշտպանելով այն տեսակետը, թե իրավամբ կարելի է պարծենալ խաչով, քանի որ ի վերջո Խաչյալը նախասահմանյալ Որդին էր Աստծո՝ հենց մարդեղացման սկզբից մինչեւ մեռելներից հարություն առնելը: Իրականում, սակայն, սա չէ խաչի պարադոքսի լուծման ճշմարիտ ճանապարհը, երբ մեծ է սայթաքելու վտանգը գնոստիկյան, ասել է թե՝ Քրիստոսի երեւութական մահվան թյուր վարդապետության մեջ: Խնդրի լուծման բանալին հենց առաքյալն ինքն է տալիս՝ շեշտը դնելով խաչի մահվան նպատակի վրա. «վասն իմ» (Գաղ. Բ 20) «վասն մեր» (հմմտ. Գաղ. Գ 13), «վասն նորա», այն է՝ եկեղեցու (հմմտ. Եփես. Ե 25), «վասն ամենեցուն» (Բ Կորնթ. Ե 14), ձեւակերպումների մեջ, որտեղ ὑπὲρ հունարեն կամ թարգմանաբար «վասն» գրաբար նախդիրն ունի ոչ թե փոխարինման արժեք (ինչ-որ մեկի փոխարեն), այլ նշանակում է «ի նպաստ», «հօգուտ»:

Պողոս առաքյալին հետաքրքրում են ոչ այնքան Քրիստոսին խաչելու շարժառիթները, որքան հավատացյալներին առաջնորդելը՝ ներթափանցելու նույն խաչելությամբ բացված հորիզոնները, որպեսզի «մեք զորդեգրութիւն ընկալցուք» (Գաղ. Դ 5), «Մեք աւետիս Հոգւոյն Սրբոյ ընկալցուք հաւատովք» (Գաղ. Գ 14), որով նոր արարածներ լինենք (հմմտ. Բ Կորնթ. Ե 17), եւ «Ներքին մարդն մեր նորոգի օր ըստ օրէ» (Բ Կորնթ. Դ 16):

Արդարացման վարդապետության մեջ երեւան է գալիս նաեւ Պողոս առաքյալի հակաճառությունն Օրենքի ու Օրենքից բխող գործերի դեմ (տե՛ս Գաղ. Բ 16-17, Հռոմ. Գ 21-26, Է 7-25, Փիլիպ. Գ 2-9). Օրենքը, որպես այդպիսին, չպետք է դիտարկվի բացասական լույսի ներքո այն պատճառաբանությամբ, թե ոչ ոք ի վիճակի չէ լիարժեք այն կատարելու կամ այն, որ Քրիստոսին մատնել է մահվան՝ համաձայն հետեւյալ դրույթի, թե «Անիծեալ յԱստուծոյ է ամենայն՝ որ կախիցէ զփայտէ» (Բ Օր. ԻԱ 23): Բանն այն է, որ խաչյալ Քրիստոս կամ Քրիստոսի խաչն է այն միակ ճանապարհը, որով Աստված արդարացնում է շնորհում[13]:

Հետեւաբար անօգուտ են փորձերը բարելավելու արդեն իսկ արդարացվածի կացութ-

---

13 Նույն ինքը՝ Պողոս առաքյալը, հաստատում է այն փաստը, որ խաչն իր հայրենակիցների կողմից ընկալվում էր աստվածային անեծքի նշան, եւ գրելով գաղատացիներին՝ նա տապալում է հրեաների՝ Խաչյալի նկատմամբ ունեցած արհամարհական մոտեցումը՝ նշելով, թե Աստծուց անիծվածը հավատացյալների համար դարձել է օրհնության աղբյուր (հմմտ. Գաղ. Գ 13-14):

յունը թլփատության եւ օրենքի գործերի օգնությամբ, ինչին որ հավակնում էին Գաղատիայի քրիստոնյաներին մոլորեցնողները: Այդպիսի պահանջ-հավակնություններն անիմաստ են այն առումով, որ կապարելագործման փարաձք են առաջացնում արդարացման գործընթացի մեջ՝ ունայնացնելով Քրիստոսի խաչի պարողությունը. «Եւ ես ոչ անարգեմ զշնորհսն Աստուծոյ. զի եթէ յօրինաց անտի էր արդարութիւն, ապա Քրիստոս զուր մեռաւ» (Գաղ. Բ 21):

Քրիստոսի խաչը միեւնույն ժամանակ այն հանգրվանն է, որտեղ թանձրանում է աստվածային արդարության ու արդարացման հայտնությունը: Եւս մեկ անգամ ի հայտ է գալիս Պողոս առաքյալի պարադոքսալ մտածողությունը. Աստծո արդարությունն ամբողջապես հայտնվում է «ի նմանութիւն մարմնոյ մեղաց» (Հռոմ. Ը 3): Ջարմանալիորեն Քրիստոսի խաչի վրա միաժամանակ ներկայացվում են մեղքն ու արդարությունը, նույնիսկ եթե Խաչյալը զերծ էր որեւէ մեղքից: Եւ աստվածային արդարացման հասնել նշանակում է լինել խաչի խորհուրդի առջեւ:

ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԽԱՉԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Քրիստոսի խաչի եւ հավատացյալների միջեւ հարաբերությունը ներկայացնում է պողոսյան աստվածաբանության երկրորդ կարեւոր հարթությունը՝ մասնակցության կամ հաղորդության իրողությամբ: Այսպես է դիմում Պողոս առաքյալը փիլիպեցիներին. «Ճանաչել զնա եւ զզօրութիւն յարութեան նորա եւ զհաղորդութիւն չարչարանաց նորա, կերպարանակից լինել մահու նորա. Թէ որպէս հասից ի մեռելոցն յարութիւն» (Փիլիպ. Գ 10-11):

Ինչպե՞ս է հնարավոր մասնակցել կամ հաղորդվել մի իրադարձության, որը տեղի է ունեցել առնվազն պասնիինգ տարի առաջ՝ հաշվի առնելով Պողոսի թղթերի շարադրանքի թվականները (48-60 թթ. Ք. հ.): Դեռ ավելին, երկհազարամյա հեռավորության վրա մենք ինչպե՞ս կարող ենք հաղորդ դառնալ Քրիստոսի չարչարանքներին: Առաքյալի համար սա մի խորհրդապաշտպական պարզ փորձառություն չէ՝ վերապահված սոսկ մի քանի հավատացյալների, այլ ընդգրկում է բոլոր նրանց, որոնց սրտերի մեջ «առաքեաց Աստուած զՀոգի Որդւոյն իւրոյ. որ աղաղակէ Աբբա, Հայր» (Գաղ. Դ 6): Սուրբ Հոգու ազատ ու ինքնատիպ զորությամբ իրականանում է Պողոսի եւ օրինակելի եղանակով նաեւ բոլոր մյուս հավատացյալների համար այն դրույթը, թե՝ «Եւ ընդ Քրիստոսի ի խաչ ելից. եւ կենդանի եմ այսուհետեւ, ոչ ես՝ այլ կենդանի է յիս Քրիստոս: Այլ որ այժմս կեամ մարմնով, հավատովք Որդւոյն Աստուծոյ կեամ, որ սիրեացն զիս, եւ մատնեաց զանձն վասն իմ» (Գաղ. Բ 20):

Սուրբ Հոգու զորությամբ Քրիստոսի խաչին հաղորդվելն իրագործվում է երկու հիմնական ուղեգծով: Մի կողմից՝ «կենդանի է յիս Քրիստոս», եւ նրա զորությունը հավատացյալի կյանքում անխուսափելի է այն աստիճան, որ «յամենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմինս մեր կրեսցուք, զի եւ կեանքն Յիսուսի ի մարմինս մեր յայտնեսցին» (Բ Կորնթ. Դ 10), մյուս կողմից՝ նա, ով հավատում է Քրիստոսին, նրան խաչակից է դառնում՝ Սուրբ Հոգու զորությամբ հասնելով խաչի հանգրվանին ու իրադարձությանը. «Եթէ ո՞չ գիտէք զի որ միանգամ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս՝ ի մահ անդր նորա մկրտեցաք. զի հին մարդն մեր խաչակից եղեւ նորա» (Հռոմ. Զ 3-6): Այլ խոսքով՝ Քրիստոսի մահվան ու հարության իրադար-

ձությունը կենսունակ եւ կենսական է դառնում՝ անցնելով պատմական անցյալից մինչեւ մեր ներկան[14], եւ մենք մասնակից-հաղորդակից ենք այդ իրադարձությանը, քանի որ առաքյալի հափկանշական ձեւակերպմամբ՝ «կենդանի է յիս Քրիստոս»:

Ի դեպ «խաչակից» բառը գործածված է նաեւ Ավետարանների մեջ՝ նշելով, որ խաչելության ժամանակ նրա հետ խաչ էին բարձրացել երկու չարագործներ (տե՛ս Մատթ. ԻԷ 44, Մարկ. ԺԵ 32, Հովհ. ԺԹ 32): Պողոս առաքյալը, անձնականացնելով Քրիստոսի խաչի իրողությունը, շեշտում է, որ ոչ միայն երկու չարագործները, այլեւ ինքն իսկ եւ բոլոր մյուս հավատացյալները խաչակից են եղել Քրիստոսին. մեղքի ու մահվան հին մարդը խաչվել է նրա հետ, որպեսզի ծնվի նորը՝ առաջնորդված Սուրբ Հոգու կողմից:

Ավելին, ի տարբերություն երկու չարագործների, ովքեր իրենց մեղքին արժանի՝ հարկադրված էին ենթարկվելու մահվան նույնպիսի պատժին, հավատացյալները գործուն կերպով են մասնակցում-հաղորդակցվում Քրիստոսի մահվանը՝ համաձայն իրենց բարոյական ընտրության. «Իսկ որ Քրիստոսեանքն՝ զմարմինս իւրեանց ի խաչ հանին կարեօքն եւ ցանկութեամբք հանդերձ» (Գաղ. Ե 24): Մեր մասնակցությունը Քրիստոսի խաչին ոչ թե անգործությամբ, այլ հոգեւոր պտղաբերությամբ է իրագործվում. «Իսկ պտուղ Հոգւոյն այս է. սէր, խնդութիւն, խաղաղութիւն..» (տե՛ս Գաղ. Ե 22): Այլ կերպ՝ մեր հաղորդությունը Քրիստոսի խաչին ոչ թե համակերպությամբ կամ կրավորական կեցվածքով է իրական դառնում, այլ նրա փառապանքներին գործուն մասնակցությամբ (տե՛ս Բ Կորնթ. Ա 5) «Վասն մարմնոյ նորա, որ է եկեղեցի» (Կող. Ա 24):

Այս իմաստով խաչին հաղորդվելը չի սահմանափակվում լոկ Քրիստոսի հետ մեր անձնական հարաբերությամբ, այլ ընդգրկում է այն փոխհարաբերությունը, որ յուրաքանչյուր ոք կոչված է ունենալու եկեղեցու մեջ եւ եկեղեցուն ի նպաստ: Հիսուս Քրիստոս ինքնին մեր՝ իրեն չարչարակից լինելու կարիքը կամ պակասությունը չունի: Նրա՝ խաչի վրա կատարված զոհաբերությունը կատարյալ է եւ մշտապես մնում է այդպիսին, ինչպես լավագույնս ընդգծում է Եբրայեցիներին ուղղված թղթի հեղինակը (տե՛ս Եբր. Թ 1-28): Եւ եթե կոչված ենք հաղորդվելու խաչի խորհրդին, ապա այն պատճառով, որ հաղորդվենք նաեւ եկեղեցու խորհրդին, որ Քրիստոսի մարմինն է ժամանակի ու տարածության մեջ:

Այսպես՝ Պողոս առաքյալի կողմից խաչի վարդապետության երկու հորիզոն է մատնանշվում՝ փրկաբանական եւ եկեղեցաբանական: «Յամենայնի նեղեալք՝ այլ ոչ նուաղեալք. կարօտեալք՝ այլ ոչ տարակուսեալք. հալածեալք՝ այլ ոչ լքեալք. չարչարեալք՝ այլ ոչ սպառակեալք... Քանզի միշտ մեք որ կենդանիքս եմք՝ ի մահ մատնիմք վասն Յիսուսի, զի եւ կեանքն Յիսուսի յայտնի լիցին ի մահկանացու մարմինս մեր. այսուհետեւ մահ ի մեզ զօրանայ, եւ կեանք՝ ի ձեզ» (Բ Կորնթ. Դ 8-12): Առաքյալի կողմից թվարկվող դժվարությունների ու խոչընդոտների իմաստը ոչ թե անհոգության կամ անտարբերության գաղափարի մեջ հարատեւելն է, ինչպես կինիկյան ու ստոիկյան փիլիսոփաների մոտ էր, այլ նպատակ է հետապնդում մասնակցելու Քրիստոսի մահվան-կյանքի ճշմարտությանը եւ աճելու-զարգանալու համայնքային հավատքի կյանքի մեջ. այն պարագայում միայն, երբ որեւէ մեկը հոժարությամբ հանձնառու է լինում տրվելու եւ սպառվելու իր համայնքի ու իր եկեղեցու համար (տե՛ս Բ Կորնթ. ԺԲ 15), նպաստում է առաջընթացին ու զարգացմանն այն եկեղեցական իրականության, որին պատկանում է:

---

14 Տե՛ս **R. Penna**, էջ 466

***

Վերջին տարիներին ամբողջ աշխարհով մեկ մեծ աղմուկ հանեց Մել Գիբսոնի «The Passion» ֆիլմը՝ նվիրված Հիսուս Քրիստոսի չարչարանքներին: Քրիստոսի խաչելությունն ու վայրագ չարչարանքները պատկերող բռնություններով լի տեսարաններից զատ՝ ֆիլմը ներկայանում է իր աղքատիկ գաղափարաբանությամբ՝ համեմատած այն ընդգրկունությանը, որով Նոր Կտակարանի հեղինակները եւ, ի մասնավորի Պողոս առաքյալը, ներկայացնում են խաչի վարդապետությունը:

Լսարանի մեջ խղճահարություն ու կարեկցանք հարուցելուց ավելին Քրիստոսի խաչի իրականությունը պետք է մղի մեզ վերամտորելու, վերարժեւորելու մեր քրիստոնեական լինելիության իմաստը: Խնդրո առարկա է ոչ միայն եւ ոչ այնքան Աստվածորդու տառապանքը, որքան մեղքից ու մահից մեր արդարացման ակունքը եւ մեր անձնական ու համայնական մասնակցությունը Քրիստոսի մահվանն ու հարությանը:

Կարող ենք մտազմայլվել Խաչյալով հատկապես այն դեպքում, երբ զերծ ենք Աստծո եւ Քրիստոսի սիրո նկատմամբ կասկածանքի փորձությունից, որովհետեւ սիրո համար Աստված խաչին հանձնեց Իր Որդուն՝ ի խնդիր մեր փրկության (Հռոմ. Ը 31-39), վերջինս էլ իր ներթին ազատորեն հանձնվեց մահվան: Աստծո եւ Քրիստոսի սերը մեր նկատմամբ վերացական կամ չափման սանդղակի վրա չէ, ինչպես մարդկային սերը, այլ պատմականորեն տեսանելի է խաչով ու խաչի վրա:

Խաչելության պահին դրամատիկ կերպով «ժամադրվեցին» Հայրը, «որ յիւր Որդին ոչ խնայեաց» (Հռոմ. Ը 32), Որդին, որ Ինքն Իրեն տվեց մեզ համար, եւ Սուրբ Հոգին, որ նախօրոք հաստատում է «զառհաւատչեայն» մեր սրտերում (համմտ. Բ Կորնթ. Ա 22): Ահավասիկ, Երրորդության խորհրդավոր ներկայությունը Քրիստոսի խաչելության մեջ, Երրորդություն, որ ի հայտ է գալիս ոչ թե երեք թվի ծածկագիտական տեսությունից՝ բնորոշված որպես կատարելության սիմվոլ, այլ Քրիստոսի խաչելության պահին Աստծո ամբողջական հայտնությունից:

Մեր օրերում առավել քան երբեւէ խաչի արժեքը մի տեսակ չարչարանապաշտության կամ գեղագիտության (խաչը որպես զարդ առանց Խաչյալի) մեջ սահմանափակելու միտում է նկատվում, եւ անհրաժեշտություն է առաջանում խոկումով վերընթերցելու այն էջերը, որոնք նվիրված են Քրիստոսի խաչին, Նրա, «Որ ի կերպարանս Աստուծոյ էր, ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ. այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ, եւ կերպարանօք գտեալ իբրեւ զմարդ, խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ եւ մահու խաչի: Վասն որոյ եւ Աստուած զնա առաւել բարձրացոյց, եւ շնորհեաց նմա անուն որ ի վեր է քան զամենայն անուն. զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետականաց, Եւ ամենայն լեզու խոստովան լիցի թէ՝ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր» (Փիլիպ. Բ 6-11):

ՏԻՐԱՏՈՒՐ ՔՀՆ. ՍԱՐԴԱՐՅԱՆ
Ասպվածաբանության դոկտոր

ՈՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՆՔ ԽՈՍՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմից հետո քրիստոնեական եկեղեցիների եւ եկեղեցաձեւ համայնքների[1] համար սկսվեց մի նոր շրջան: 1910թ. Շոտլանդիայի Էդինբուրգ քաղաքում միսիոներական միությունների կազմակերպած կոնֆերանսը եւ 1920թ. Կ. Պոլսի հույն ուղղափառ Տիեզերական Պատրիարքի նամակը՝ ուղղված բոլոր քրիստոնյաներին, հիմք դրեցին միջեկեղեցական հարաբերությունների մի նոր փուլի, որն այսօր հայտնի է էկումենիկ շարժում անունով[2]:

20-րդ դարի սկզբից տեղի ունեցան բազմաթիվ միջեկեղեցական հանդիպումներ եւ երկխոսություններ: Ստեղծվեցին Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը եւ Եւրոպական Եկեղեցիների Կոնֆերանսը, ինչպես նաեւ մի շարք այլ կարեւոր կազմակերպություններ, որոնց մասին, սակայն, այստեղ չենք կարող մանրամասն խոսել[3]: Հարկ է միայն նշել, որ Հայ Առաքելական Եկեղեցին սկսած 1962 թվականից ակտիվորեն մասնակցում է էկումենիկ շարժմանը (մանավանդ Հայաստանի անկախացումից հետո):

Ակնհայտ է, որ միջեկեղեցական հարաբերությունների զարգացման ամենակարեւոր նպատակներից մեկն է եկեղեցիների եւ եկեղեցաձեւ համայնքների միության հարցը: Այստեղ ծագում է աստվածաբանական մի հարց, որի լուծումը կարեւոր եւ հիմնական է ոչ միայն մեր եկեղեցու, այլեւ ընդհանուր միջեկեղեցական հարաբերությունների համար:

Այդ հարցը հետեւյալն է. ինչպիսի՞ միություն ենք կամենում: Ո՞ր միությունը պատվիրեց մեզ Քրիստոս (Յովհ. ԺԷ 21): Երկկողմանի եւ բազմակողմանի բանակցությունները ցույց են տալիս, որ գրեթե յուրաքանչյուր եկեղեցի եկեղեցանման համայն միության իր պատկերացումն ունի: Դրանից է կախված բանակցությունների ուղղությունը: Եւ եթե բանակցության մասնակիցների պատկերացումը միության մասին տարբեր է, ապա դեպի միություն տանող բանակցությունները կարելի է համարել անիրականանալի, քանի որ բանակցության յուրաքանչյուր մասնակից իր նպատակն է հետապնդում: Այս հանգամանքից ելնելով՝ անհրաժեշտ է ներկա միության մոդելները համառոտ կերպով ներկայացնել եւ վերլուծել՝ քննության առնելով նրանց դրական եւ բացասական կողմերը՝ պարզելու համար նրանց ընդունելիությունը Հայ Առաքելական Եկեղեցու համար:

Ա. Օրգանական միության մոդելը

---

1 Նկատի ունենք բողոքականներին եւ քրիստոնեական ոչ ուղղափառ շարժումներին:

2 Տե՛ս Georgios Tsetsis, Orthodoxe Kirche und ökumenische Bewegung, S. 167-176, in: Evnemios von Lefka u.a. (Hg.), Die Orthodoxe Kirche. Eine Standortbestimmung an der Jahrtausendwende, Frankfurt, 1999:

3 Միջեկեղեցական հարաբերությունների պատմությունը տե՛ս Peter Neuner, Ökumenische Theologie. Die Suche nach der Einheit der christlichen Kirchen, Darmstadt, 1997; Hansfried Krüger u.a. (Hg.), Ökumene-Lexikon, Frankfurt, 2. Aufl.; Միջեկեղեցական համագործակցության ընթացքում առաջացած փաստաթղթերը տե՛ս Dokumente wachsender Übereinstimmung. Sämtliche Berichte und Konsenstexte interkonfessioneller Gespräche auf Weltebene, hg. und eingeleitet von Harding Meyer, Damaskinos Papandreou, Hans Jörg Urban, Lukas Vischer, Bd. 1-3, Frankfurt a. Mein, 1991-2004:

1. Առանձնահատկությունը

«Օրգանական» կամ «Կորպորատիվ» միության մոդելը համարվում է ամենահին եկեղեցական միության մոդելը: Այսպիսի միության գաղափարը առաջացել է Անգլիկան Եկեղեցու ծոցում: Կարելի է ասել, որ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը մինչեւ 20-րդ դարի 70-ական թվականները նախընտրում էր այս մոդելը[4]: Ըստ Անգլիկան Եկեղեցու՝ գոյություն ունի միայն մի Եկեղեցի, որը սակայն, տարածքայնորեն բաժանված է: Մի տարածքում զանազան եկեղեցիների կամ եկեղեցանման համայնքների փոխարեն պետք է գոյություն ունենա միայն մի Եկեղեցի: Այսինքն՝ տարբեր դավանանքներ ունեցող եկեղեցիները պետք է միավորվեն՝ թողնելով իրենց դավանաբանական առանձնահատկությունները: Նրանք, ձուլվելով իրար, կստանան նոր անուն եւ նոր դեմք:

1970 թ. Քենիայի Լիմուռու քաղաքում կայացած Եկեղեցիների համաշխարհային Խորհրդի «Հավատք եւ կարգ» հանձնախմբի կողմից կազմակերպված խորհրդակցության ընթացքում օրգանական միություն կազմելու համար անհրաժեշտ պայմանները շարադրվում են հետեւյալ կերպ.

«Օրգանական միություն ստեղծելու համար պետք է իրականացվեն հետեւյալ պայմանները. մեկ ընդհանուր հավատքի հիմք, մեկ ընդհանուր անուն, ամբողջական կապվածություն միմյանց հետ, ինչպես նաեւ սեփական ինքնությունը կորցնելու պատրաստակամություն եւ, ի վերջո, միասնաբար որոշում կայացնելու հնարավորություն, իսկ առաքելության պատգամը պետք է պայմաններին համապատասխան միասնաբար կատարել»[5]:

2. Բաղադրիչներ

Վերլուծենք վերոնշյալ բաղադրիչները

ա. Դավանաբանական միություն - նոր եկեղեցու անդամների համար պարտադիր հավատքի հանգանակի առկայությունն է, որը պետք է գրված լինի նոր եւ հասկանալի լեզվով: Լիմուռուի փաստաթղթում նշվում է, որ նորակազմ եկեղեցին պետք է փորձի Ավետարանը մեկնաբանել ասրվածաբանական նոր վերլուծությամբ, որը կողմնորոշվում է միջեկեղեցական շարժումով եւ աշխարհի ներկա վիճակով[6]:

բ. Միասնական ղեկավարություն - Օրգանական միության անհրաժեշտ մասերից է: Այն ապահովում է միավորված եկեղեցիների կայացրած որոշումների միասնականությունը, օրինակ՝ Գերագույն Սինոդի միջոցով: Սրան կից կարող են լինել տարածքային կամ տեղական սինոդներ:

գ. Միօրինակ նվիրապետություն - անհրաժեշտ է այնպիսի մի նվիրապետական ասպիճան ունենալ, որը ճանաչված լինի որպես ամբողջ եկեղեցու հեղինակությունը վայելող

---

4 *Lothar Lies*, Grundkurs ökumenische Theologie. Von der Spaltung zur Versehnung. Modelle kirchlicher Einheit. Innsbruck / Wien, 2005, էջ 205:

5 Georg Hintzen / Wolfgang Thönissen, Kirchengemeinschaft möglich. Einheitsverständnis und Einheitskonzepte in der Diskussion, Paderborn, 2001, էջ 21:

6 Տե՛ս Georg Hintzen / Wolfgang Thönissen, Kirchengemeinschaft möglich. Einheitsverständnis und Einheitskonzepte in der Diskussion, Paderborn, 2001, էջ 22:

օղակ: Նվիրապետական ասպիճանը ամբողջ մարմնի մի մասն է, որտեղ ներկայացված են միացյալ եկեղեցիները: Այսպիսով՝ մի եկեղեցում գոյություն ունի միայն մեկ նվիրապետական ասպիճան, եւ այդ ասպիճանը միայն մի տեսք ունի: Միացյալ եկեղեցիները կարող են ինքնուրույն որոշել, թե նվիրապետության ո՛ր տեսակն են նախընտրում՝ եպիսկոպոսակա՞ն, թե՞ երիցական:

դ. Միություն վկայության եւ ծառայության մեջ - միացյալ եկեղեցիների ցանկություններից մեկն է: Սրանից ելնելով միացյալ եկեղեցիները պարտադրված են միասնաբար կատարել իրենց առաքելությունը:

ե. Միասնական մեկ կառուցվածք - քանի որ միացյալ եկեղեցիներն իրենց վկայությունը միասնական ծառայությամբ են կատարելու, ապա հարկավոր է նոր եկեղեցու միասնական մի կառուցվածք: Այսինքն՝ հին կառուցվածքների փոխարեն պետք է սրեղծվի մի նոր կառույց:

զ. Այլադավանություն - միացյալ նոր եկեղեցու մեջ այլադավանություն չի կարող լինել: Այսպիսով՝ նորակազմ եկեղեցիները վերդավանական (transconfessional) եկեղեցիներ են:

3. Իրական վերդավանական եկեղեցիներ

Անգլիկան եկեղեցու այս գաղափարը միայն գաղափար չմնաց: Ներկայումս գոյություն ունեն հետեւյալ վերդավանական եկեղեցիները.

Կանադայի Միացյալ Եկեղեցի - հիմնադրվել է 1925 թ.: Այս եկեղեցու անդամներ դարձան բարեփոխված կալվինիստները, երիցական կազմակերպությունները եւ մեթոդիստները:

1927 թ. հիմնադրվել է չինական միացյալ եկեղեցին՝ «Քրիստոսի Եկեղեցին Չինաստանում» անունով: Այստեղ համախմբվեցին Ռեֆորմատորները (կալվինական եւ երիցական), մկրտչականները, մեթոդիստները եւ «Եղբայր ունիաթները»:

1941 թ. հիմնադրվել է Քրիստոսի Եկեղեցին Ճապոնիայում: Այստեղ միանում են խմբեր՝ բարեփոխված կալվինականներից եւ երիցականներից, «Քրիստոսի աշակերտներ»-ից եւ մկրտչականներից:

1947 թ. հիմնադրվում է Հարավային Հնդկաստանի Եկեղեցին: Սրա կազմի մեջ են մտնում անգլիկանները, ռեֆորմացվածները (կալվինիստները, երիցականները եւ մեթոդիստները):

1948 թ. հիմնադրվում է Փիլիպինների Քրիստոսի Միացյալ Եկեղեցին, որի կազմի մեջ են մտնում բարեփոխված կալվինիստներն ու երիցականները, մեթոդիստները, «Եղբայր ունիաթները» եւ «Քրիստոսի աշակերտները»:

1970 թ. հիմնադրվում է Պակիստանի Եկեղեցին, որի կազմի մեջ մտնում են այն նույն կրոնական կազմակերպությունները, որոնք միություն էին կազմել Փիլիպիններում:

1970 թ. հիմնադրվում է նաեւ Հյուսիսային Հնդկաստանի Եկեղեցին, որի կազմի մեջ են մտնում Անգլիկանները, Բապտիստները, «Քրիստոսի աշակերտները», մեթոդիստները, բարեփոխված կալվինիստներն ու երիցականները, ինչպես նաեւ «Եղբայր ունիաթները»:

4. Գնահատում[7]

Այսպեղ անհրաժեշտ է նշել, որ այս միություններից հեռու մնացին անգամ լյութերականները: Բացի վերոհիշյալ միացյալ եկեղեցիները երբեւիցե միակը չեղան փվյալ փարածքում: Նրանք անդամակցում են Եկեղեցիների համաշխարհային խորհրդին եւ համագործակցում եկեղեցանման համայնքների հետ: Բավական դժվարանում են նրանց հարաբերություններն իրենց մայր եկեղեցիների հետ՝ անգլիկանների եւ ռեֆորմատորների հետ: Եթե անգամ անտեսենք վերոհիշյալ դժվարությունները, ապա ծագում է հետեյալ հարցը. որքանո՞վ է այսպիսի միության մոդելն իրեն արդարացնում: Այնտեղ, որտեղ անգլիկանները մասնակից էին դառնում միությանը, դժվարություններ էին առաջանում եկեղեցու նվիրապետական աստիճանը որոշելու պարագայում:

Բավական հետաքրքիր որոշում կայացվեց Հարավային Հնդկաստանում: Միության անդամները պայմանավորվեցին ճանաչել առանց ձեռնադրության հոգեւորականի պաշտոն կատարողներին եւ նույնիսկ համաձայնեցին նրանց չձեռնադրել այն պայմանով, որ նոր եկեղեցու հիմնադրումից հետո ձեռնադրությունը նվիրապետական աստիճան սրանալու համար այլեւս անհրաժեշտ պայման լինի: Միեւնույն ժամանակ ոչ մի բացատրություն չկա եպիսկոպոսական աստիճանի վերաբերյալ, յուրաքանչյուրն ազատ է այն ըմբռնելու իրեն հարմար կերպով[8]:

Օրգանական Միության վերդավանական եկեղեցիները վստահ են, որ եկեղեցում գոյություն ունեն Խորհուրդներ (Մկրտություն եւ Հաղորդություն), եւ որ եկեղեցին նվիրապետական աստիճանների կարիք ունի: Սակայն կարեւորագույն հարցերը, թե, ինչպե՛ս են աստվածաբանորեն մեկնաբանվում խորհուրդները կամ ինչպիսին պետք է լինի նվիրապետական աստիճանը (երիցական կամ եպիսկոպոսական), այստեղ գիտակցաբար բաց են թողնվում:

Բ. Պայմանավորվածությամբ հաստատված եկեղեցական միության մոդելը

1. Յուրահատկություն

Բողոքական եկեղեցիներից եկած մեկ այլ մոդել այսօր հայտնի է «Համաձայնեցված Տարբերություն» (գերմ. Versehnte Verschiedenheit) անվան տակ: 1977թ. Թանզանիայի Դար էս Սալամ քաղաքում կայացած Լյութերական դաշինքի համագումարում վերոհիշյալ միության մոդելը հայտարարվեց իբրեւ սույն կազմակերպության նմուշ-մոդելը: Գլխավոր գաղափարն այն է, որ միություն կամեցող եկեղեցիները պահպանում են իրենց յուրահատուկ դավանանքը, որպեսզի հնարավոր լինի սեփական հավատի պատմությունը մեկնաբանել իբրեւ փրկության յուրահատուկ պատմություն: Դավանանքը կամ յուրահատուկ հավատքի հանգանակը վերանորոգման կարիք չունի, ինչպես Օրգանական միության պարագային: Այսպիսով՝ ըստ Լութերական գաղափարախոսության միայն «Համաձայնեցված տարբերությունը» կարող է բերել եկեղեցիների միության:

---

7 Մանրամասնորեն տե՛ս Georg Hintzen / Wolfgang Thönissen, op. cit., էջ 27-29:

8 Տե՛ս անդ, էջ 30:

Այդ տեսանկյունից ելնելով՝ կարելի է նշել, որ.

ա. Միության եկեղեցիները պաշտոնապես ճանաչում են միմյանց՝ իբրեւ եկեղեցիներ: Այստեղ աչքի է ընկնում այն հանգամաքը, որ այլեւս նոր ինքնություն հիմնելու կարիքը չկա:

բ. Միության եկեղեցիները ճանաչում են նվիրապետական աստիճանները: Այստեղ չի ստեղծվում բոլոր եկեղեցիների համար ընդհանուր մի նվիրապետական աստիճան:

գ. Միության եկեղեցիները հաղորդակից են միմյանց աստվածապաշտական արարողություններին (ժամերգություն, պատարագ, ծես եւ այլն) եւ խորհուրդներին (communicatio in sacris): Եւ մեկ ընդհանուր դավանաբանության կարիք չկա:

դ. Միության եկեղեցիները համագործակցում են եկեղեցական կյանքի բոլոր դրվագներում:

«Համաձայնեցված տարբերություններ» - մոդելի գաղափարախոսությունն արտահայտում է «Դիֆերենցիալ փոխհամաձայնության» (գերմ. Differenzierter Konsens) միտքը, որն ասում է, թէ կոնսենսուսը եւ դիֆերենցիան միեւնույն մակարդակի վրա չեն գտնվում: Այսինքն՝ այն, ինչ ընդհանուր կամ միասնական է (համաձայնեցվածը), գտնվում է մի այլ մակարդակի վրա, քան այն, ինչ տարբեր է: Սակայն «դիֆերենցիալ փոխհամաձայնության» պարագային տարբերությունները պետք է վերաբերեն ընդհանուրին, որպեսզի տարբերություններն այլեւս բաժանողի պատավորություն չթողնեն կամ բաժանող լինեն, այսինքն՝ անգամ տարբերության մեջ պետք է ընդհանուր կետեր գտնել:

«Դիֆերենցիալ փոխհամաձայնության» պարագային կարիք չկա նոր դավանանքի: Միության եկեղեցիները պետք է փորձեն առկա յուրահատուկ դավանանքներն աստվածաբանորեն մեկնաբանել այնպես, որ նրանք այլեւս մեկը մյուսին չհակասեն: Միեւնույն ժամանակ յուրաքանչյուր համայնք իր հավատի հանգանակի մեջ պետք է կարողանա ճանաչել իր յուրահատկությունը: Այն եկեղեցանման համայնքները, որոնց համար Հաղորդության խորհուրդը կենտրոնական դեր չի խաղում, կարող են սահմանափակ միություն հաստատել միմյանց միջեւ, որը միմյանց խորհուրդները ճանաչում է, իսկ նվիրապետությունը՝ ոչ:

2. *Եկեղեցիներ, որոնք միություն են հաստատել պայմանավորվածությամբ*

ա. Առաջին այսպիսի միությունը հիմնադրվեց **Լոյենբերգյան համաձայնագրի** միջոցով 1973 թ. եւ կոչվեց Լոյենբերգյան միություն[9]: Նրանում ընդգրկված են ներկայիս Եւրոպայի 105 բողոքական եկեղեցիներ՝ ռեֆորմատորներ, լյութերականներ եւ միացյալ եկեղեցիներ, վալդենեզացիները եւ Բոհեմյան եղբայրները, ինչպես նաեւ 1994-ից՝ մեթոդիստները[10]: ԵԱԵՄ-ի անդամ եկեղեցիները ճանաչում են միմյանց նվիրապետական կառուցվածքը եւ կապարված խորհուրդները:

բ. 1988թ. Մայսեն քաղաքում պայմանագիր է կնքվում (Մայսենյան պայմանագիր)

---

9 Վերջերս այս անունը փոխվեց եւ ներկայումս կոչվում է «Եւրոպական Ավետարանչական Եկեղեցիների միություն»:

10 Համաձայնագրի տեքստը տե՛ս Dokumente wachsender Ubereinstimmung. Sämtliche Berichte und Konsenstexte interkonfessioneller Gespräche auf Weltebene. Band III: 1990-2001. Hg. u. eingel. H. Meyer u.a.. Paderborn 2003 (= DwÜ 3), 724-731:

Գերմանիայի Ավետարանական Եկեղեցու եւ Անգլիայի Եկեղեցու միջեւ: Այս եկեղեցիները ճանաչում են միմյանց իբրեւ եկեղեցիներ, նաեւ ճանաչում են Հաղորդության խորհուրդը, սակայն չեն ընդունում միմյանց նվիրապետական աստիճանները: Քանի որ Անգլիկան Եկեղեցին եպիսկոպոսական աստիճանից չի ցանկանում հրաժարվել, իսկ ավետարանական եկեղեցիներն այն չեն ընդունում, ապա այս եկեղեցիների միջեւ համապաշտամունք (intercelebratio) չի կարող տեղի ունենալ:

գ. Երրորդ միությունը հիմնադրվում է 1992 թ. Ֆինլանդական Փորվու քաղաքում ստորագրված պայմանագրի հիման վրա (Փորվուի պայմանագիր): Պայմանագրի համաձայն միության մեջ են մտնում Բրիտանական կղզու, Բալթիկայի եւ Սկանդինավիայի Անգլիկան ու Լյութերական եկեղեցիները: Նրանք ճանաչում են ինչպես միմյանց խորհուրդները, այնպես էլ նվիրապետական աստիճանները[11]:

դ. 1997 թ. Եւրոպայի Լոյենբերգյան Միությանը համապատասխանող միությունը Հյուսիսային Ամերիկայում կոչվում է Formula of Agreement: Այս համաձայնության միջոցով հաստատվում է լիարժեք միություն Ամերիկայի Ավետարանական-Լյութերական եկեղեցանման համայնքի, ԱՄՆ-ի Երիցականները, Ամերիկայի Ռեֆորմատոր եկեղեցանման համայնքների եւ «Քրիստոսի միացյալ Եկեղեցիներ» եկեղեցանման համայնքի միջեւ: 1999 թ. Ամերիկայի Ավետարանական-Լյութերական միությունը լիարժեք միություն է հաստատում նաեւ Ամերիկայի «Եղբայր Ունիատների» հետ[12]:

ե. Նույն 1997 թ. պայմանագիր է կնքվում նաեւ Կանադայի Անգլիկան Եկեղեցու եւ Կանադայի Ավետարանական-Լյութերական եկեղեցանման համայնքի միջեւ՝ Վաթերլու քաղաքում, որի համաձայն վերոհիշյալ եկեղեցիները լիարժեք միություն են հաստատում միմյանց միջեւ:

3. Գնահատում[13]

Այս մոդելի յուրահատկություններից մեկն այն է, որ սահմանված չէ, թե ինչպե՞ս պետք է հասկանալ եկեղեցու միությունը, հատկապես, երբ նկատի ունենանք Հաղորդության խորհրդի մեկնաբանությունը կամ նվիրապետական աստիճանների կառույցների հարցը: Չնայած այս յուրահատկությունը բողոքական եկեղեցիների կողմից դրական է համարվում, սակայն, այս մոդելը մնում է ինչպես կաթոլիկ, այնպես էլ ուղղափառ եկեղեցիների համար անընդունելի:

Հարց է առաջանում՝ որքանո՞վ են համաձայնեցված տարբերությունները: Ավելի հասկանալի լինելու համար կարելի է կենտրոնանալ Լոյենբերգյան համաձայնագրում՝ Հաղորդության խորհուրդի մեկնաբանության վրա: Այստեղ փորձ է արվում վեճի պատճառ դարձած հարցերը ոչ թե լուծելու, այլ այնպես լուսաբանելու, որ վիճող կողմերի համար տարբեր

---

11 Պայմանագրի տեքստը տե՛ս Dokumente wachsender Übereinstimmung. Sämtliche Berichte und Konsenstexte interkonfessioneller Gespräche auf Weltebene. Band III: 1990-2001. Hg. u. eingel. H. Meyer u.a.. Paderborn 2003 (= DwÜ 3), 774f:

12 Մանրամասները տե՛ս Georg Hintzen / Wolfgang Thönissen, op. Cit., էջ 39-41:

13 Մանրամասն տե՛ս Harding Meyer, Versehnte Verschiedenheit, Aufsatze zur ökumenischen Theologie, Bd. I und II., Frankfurt a. Main, 1998, 2000:

բանաձեւերը դժվարություն չներկայացնեն: Օրինակ՝ ասվում է. «Խորհրդավոր ընթրիքով Հարուցյալ Քրիստոսը նվիրում է ընծաներ՝ վերակոչյալ Հացի եւ Գինու միջոցով՝ բոլորի համար զոհաբերած Իր Մարմինն ու Արյունը: Այսպիսով՝ նա տալիս է Իր անձն առանց խտրականության բոլոր նրանց, ովքեր ընդունում են Հացն ու Գինին: Հավատքը ճաշակում է փրկություն, անհավատությունը՝ դատապարտություն» (Տե՛ս Լոյենբերգյան համաձայնագիր III., Nr. 18 հմմտ. նաեւ II, Nr. 15): Ակնհայտ է, որ այստեղ բացակայում է ինչպե՞ս հարցի պատասխանը, ինչը, սակայն, կարեւոր է, եթե բանակցությունները վարվեն կաթոլիկ կամ ուղղափառ եկեղեցիների հետ:

Գ. Կաթոլիկյան առաջարկներ[14]

Խոսելով կաթոլիկյան առաջարկների մասին՝ անհրաժեշտ է նախ նշել, որ Կաթոլիկ եկեղեցին չի ներկայացնում որեւիցե հատուկ միության մոդել: Իսկ «mortalium animos»-ի առաջարկած ապաշխարության եւ դարձի մոդելը գոնե եւրոպական երկրներում այլեւս արդիական չէ եւ շատ եկեղեցիների ու եկեղեցանման համայնքների համար անընդունելի է: Վատիկանի Բ Ժողովը եւ էկումենիկ Դիրեկտորիաները (ղեկավարությունները) նույնպես ոչ մի մասնավոր առաջարկ չարեցին, սակայն նշեցին եկեղեցական միության համար կարեւոր որոշ կետեր եւ մեթոդական մոտեցման սկզբունքներ: Այդ սկզբունքներից կարեւորագույնն է Հռոմի Պապի դերը, որը ներկայացվում է իբրեւ բոլոր տեղական եկեղեցիների նախագահ[15]:

Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու միության սկզբունքը ներկայացված է ընդհանուր առմամբ «Lumen gentium» (LG) Եկեղեցու մասին Հրամանակարգ սահմանադրության մեջ: Այս սկզբունքը կիրառվեց 1983թ. Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու կանոնադրության մեջ:

1. «Ecclesiae particulares» մոդելը

ա. «Ecclesiae particulares»՝ իբրեւ Տեղական Եկեղեցի (թեմ)

Վերոհիշյալ մոդելը կարելի է ճիշտ հասկանալ՝ ելնելով եպիսկոպոսական այն ըմբռնումից, որը ներկայացվեց եւ ընդունվեց Վատիկանի Բ Ժողովի կողմից: Ըստ այդմ, եպիսկոպոսական ձեռնադրության միջոցով նվիրապետության բոլոր եպիսկոպոս անդամները, որոնք հավաքված են երեւելի մեկ Գլխի ներքո, որը Հռոմի Պապն է, փոխանցում են յուրաքանչյուր եպիսկոպոսին Քրիստոսի ծառայության երեք շնորհները՝ Հովվական, Վարդապետական եւ Քահանայապետական: Եպիսկոպոսական նվիրապետական կարգը (որի միությունը, ինչպես ասացինք, երեւում է Հռոմի Պապի անձում), ցույց է տալիս տարբեր մաս կազմող եկեղեցիների միությունը, քանի որ այդ եկեղեցիների նախագահներն հենց եպիսկոպոսներն են: Այսպիսով տեսանելի է դառնում նաեւ այդ եկեղեցիներին պատկանող հավատացյալների միությունը (LG 23):

---

14 Մանրամասները տե՛ս Wolfgang Thönissen, in Georg Hintzen / Wolfgang Thönissen,op. cit., էջ 73-125:

15 Այստեղ պետք է նշել, որ հանգուցյալ Հովհաննես Պողոս Բ Պապի նման ներկայիս Բենեդիկտոս ԺՋ Պապը պատրաստ է Պապի ասպիճանը եւ նրա նշանակությունը վերանայող բանակցությունների: Այս պարագան բավականին կարեւոր է, եւ այդպիսի մի հնարավորություն չպետք է բաց թողնվի:

բ. «Ecclesiae particulares» եւ «Եկեղեցաման միություններ»

Վատիկանի Բ Ժողովի «Unitatis redintegratio» դեկրետը նշում է, որ Ընդհանրական Եկեղեցին թույլ է տալիս տարբեր կերպ պայմանավորված տեղական եւ կաթոլիկ եկեղեցու մաս կազմող եկեղեցիների գոյությունը[16]: Սակայն «ecclesiae particulares» մոդելը տարբերվում է «եկեղեցաման միություններ» մոդելից նրանով, որ Վատիկանի Բ ժողովը բոլորին, որոնք իրենք իրենց եկեղեցի են կոչում, եկեղեցի չի անվանում: Նա տարբերություն է դնում «եկեղեցի» եւ «եկեղեցաման միություն» հասկացությունների միջեւ: «Եկեղեցիներ» են կոչվում կաթոլիկ եկեղեցու մաս կազմող եւ տեղական եկեղեցիները: Իսկ եկեղեցաման միություն են կոչվում Ռեֆորմացիայից հետո առաջացած կրոնական խմբերն ու միությունները: Կաթոլիկ Եկեղեցին տարբերում է նաեւ Հռոմի հետ միության մեջ գտնվող եւ չգտնվող եկեղեցիները կաթոլիկ եկեղեցու մաս կազմող եկեղեցիներից: Այսպիսով, կաթոլիկ եկեղեցին թույլ է տալիս Պատարագի, աստվածաբանության եւ հոգեւոր կյանքի տարբեր ավանդություններ, որոնք սակայն Հռոմի եկեղեցուց եւ Հռոմի Պապից բաժանված չեն: Այստեղ ամենամեծ դժվարությունը ուղղափառ եկեղեցիների համար ոչ միայն դավանաբանական տարբերություններն են, այլեւ՝ հռոմեական կաթոլիկ եկեղեցաբանությունը:

գ. Հռոմի հետ միության մեջ չգտնվող եկեղեցիներ

Ինչպես նշեցինք, Վատիկանի Բ ժողովը ճանաչում է հռոմեական տեղական եւ մաս կազմող եկեղեցիներին կից նաեւ Պատրիարքությունները՝ իբրեւ եկեղեցիներ: Ճանաչվում է առաքելական հաջորդականությունը (successia), եպիսկոպոսական եւ քահանայական աստիճանները, Հաղորդությունը եւ այլն[17]: Այսպիսով՝ հնարավոր է, որ Կաթոլիկ Եկեղեցին մասնակցի այս եկեղեցիների պաշտամունքին: Ըստ կաթոլիկների՝ այս եկեղեցիները կարող են իրենց կառուցվածքը պահպանել եւ միեւնույն ժամանակ Հռոմի հետ միության մեջ գտնվել, իհարկե, միայն այն պարագային, երբ այդ եկեղեցիները վերոհիշյալ իրավունքն սպանան Հռոմի Պապից: Թյոնիսսենը նշում է՝ «ամբողջական միություն» (plena communio) հաստատելու համար անհրաժեշտ հետեւյալ քայլերը[18].

1. Կաթոլիկ միությունը հնարավոր է իրականացնել բաժանված միությունը վերականգնելով:

2. Միության վերականգման պայմանը սեփական կարգի խնդիրը չէ, այլ նրա հանդեպ ցուցաբերված ուշադրությունը:

3. Միության վերականգման հիմնական կորիզը հավատի, պաշտամունքային կյանքի եւ նվիրապետության հարցերում միասնությունն է:

4. Միության վերականգնումը պետք է կայանա աստիճանաբար: Առանց եկեղեցիների միջեւ որեւէ միություն հաստատելու, պետք է մասնակցել միմյանց խորհուրդներին (Խոսքո-

16 UR 13:

17 UR 15:

18 Տե՛ս Թյոնիսսենի հոդվածը, ինչպես նաեւ. Silvia Hell und Lothar Lies (Hg.), Papstamt. Hoffnung, Chance, Ergernis. ökumenische Diskussion in einer globalisierten Welt. Innsbruck 2000, mit Beitragen von Kard. Kasper, orthodoxen und ev. Bischofen und Theologen zur Papstfrage:

վանություն, Հաղորդություն եւ Կարգ հիվանդաց): Միեւնույն ժամանակ պետք է ունենալ եկեղեցական իշխանության թույլտվությունը:

5. Միությունը վերականգնելու համար անհրաժեշտ է մինչ այժմ չլուծված հարցերի պարզաբանումն ու լուծումը:

դ. Հռոմից բաժանված եկեղեցիներ եւ եկեղեցանման միություններ

Այստեղ խոսքը եկեղեցիների (անգլիկանների) եւ եկեղեցանման միությունների մասին է, որոնք առաջացել են ռեֆորմացիայի հետեւանքով: Դժվար է ասել, թե այս եկեղեցիներն ու եկեղեցանման միությունները Կաթոլիկ եկեղեցուն որքանով են մոտ կամ հեռու, քանի որ Կաթոլիկ եկեղեցին չունի չափորոշիչներ, որոնցով հնարավոր լինի այս կամ այն եկեղեցու մոտիկ կամ հեռու լինելն սպուգել: Նկատարժան է, սակայն, որ վերոհիշյալ եկեղեցիները կամ եկեղեցանման միություններն իրենց աստվածաբանության եւ եկեղեցաբանության մեջ ունեն բացթողումներ, որոնք ուղղափառ եւ կաթոլիկ եկեղեցիների կողմից անընդունելի են: Այդպիսի բացթողումներից են, օրինակ՝ Առաքելական հաջորդականության (successia) բացակայությունը, ձեռնադրության բացակայությունը, Եկեղեցու Խորհուրդների եւ դավանաբանության ուղղափառ ըմբռնման բացակայությունը եւ այլն:

Փորձը ցույց է տալիս, որ նման դժվարությունների պարագային միջեկեղեցական հարաբերությունների համար ամենաօգտակար մարտավարությունը երկխոսությունն է եւ ոչ թե ընդհանուր՝ բոլորին վերաբերող միասնական դիրքորոշումը: Էկումենիկ շարժման սկզբից մինչեւ այսօր բազում են օրինակները, որոնք գալիս են ապացուցելու երկխոսությամբ հաճայնության հասնելու փաստը:

2. Ռահներ – Ֆրիզ ծրագիրը

1983-ին կաթոլիկ հայրնի աստվածաբաններ՝ Կառլ Ռահները եւ Հայնրիխ Ֆրիզը հրապարակում են իրենց «Եկեղեցիների միությունը՝ իրական հնարավորություն» թեզիսները: Նրանք ցանկանում էին պատասխան գտնել այն հարցին, թե արդյոք մոտ ապագայում եկեղեցիների միությունը հնարավոր է: Այդ թեզիսները, որոնք հեղինակները քննարկում են, հետեւյալներն են.

I. Քրիստոնեության հիմնական ճշմարտությունները, այնպես, ինչպես բանաձեւված են Սուրբ Գրքում, Առաքելական եւ Նիկիո Հավատքի Հանգանակում, ապագա մեկ Եկեղեցու բոլոր անդամ եկեղեցիների համար պարտադիր են:

II. Դրանից այն կողմ գործում է իրական հավատի սկզբունքը. ոչ մի անդամ եկեղեցի իրավունք չունի այլադավան (dissidens) եւ հանգանակապիպ մի բանաձ մերժելու, որը մեկ այլ անդամ եկեղեցում պարտադիր դավանաբանություն է համարվում:

III. Հիսուս Քրիստոսի այս մեկ եկեղեցում, որը կազմված է միացյալ եկեղեցիներից (պարածքային անդամ եկեղեցիներ, որոնք կարող են իրենց մինչայժմյան համակարգը պահպանել): Այդ անդամ եկեղեցիները կարող են շարունակել գոյատեւել նույն պարածքում, քանի որ սա, ելնելով կաթոլիկ եկեղեցաբանությունից եւ օրինակ Հռոմեական Եկեղեցու պաղեսփինյան փորձառությունից, անհնար չէ:

IV. ա) Բոլոր անդամ եկեղեցիները ճանաչում են Հռոմի Պապի Պետրոսական ծառայության իմաստն ու իրավունքը իբրեւ ճշմարտության եւ սիրո մեջ եկեղեցու միության երաշխավոր: բ) Իր կողմից Պապին բացահայտորեն պարտադրվում է անդամ եկեղեցիների ինքնուրույնությունը պայմանավորվածության համաձայն ընդունելու եւ հարգելու: Նա հռչակում է (jure humano), որ ինքը, իր բարձրագույն վարդապետական հեղինակությունից (ex cathedra), որը Վատիկանի Ա ժողովից սկսյալ կաթոլիկ սկզբունքների համաձայն իրեն է պատկանում, այնպես պիտի օգտվի, որ այն իրավաբանորեն կամ նյութապես համապատասխանի ամբողջ եկեղեցու ընդհանուր ժողովին: Նա իր այդ իշխանությունից պիտի օգտվի այնպես, ինչպես որ հռչակվել են նրա մինչայժմյան ex cathedra որոշումները, այսինքն, կաթոլիկ եպիսկոպոսաց ամբողջ դասի հետ համաձայնությամբ եւ նրանց հետ անմիջական կապի մեջ գտնվելով:

V. Հին ավանդության համաձայն բոլոր անդամ եկեղեցիների ենթաբաժանման գլուխն են համարվում եպիսկոպոսները: Եպիսկոպոսաց ընտրությունն այդ եկեղեցիներում պարտադիր չէ, որ համապատասխանի ներկայումս Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցում գործող ձեւին (հռոմեական նոր եկեղեցական իրավունքին նույնպես ծանոթ են եպիսկոպոսաց նշանակման այլ կերպեր, քան միայն Պապի կողմից ազատ ընտրությունը. Կան. 377 • 1):

VI. Անդամ եկեղեցիներն իրենց կյանքի բոլոր ոլորտներում ապրում են փոխադարձ եղբայրական սիրո մեջ, այնպես, որ նախկինում բաժանված եկեղեցիների այժմյան պատմությունը եւ փորձառությունը մյուս անդամ եկեղեցիների կյանքում կարողանան գործնական դառնալ:

VII. Առանց նվիրապետության աստվածաբանական վավերականության վերաբերյալ բաժանված եկեղեցիներում մեկը մյուսի նկատմամբ դեռեւս գոյություն ունեցող դատապարտության կանխորոշման (praejudicio) բոլոր անդամ եկեղեցիները պարտավորվում են այսուհետ ձեռնադրության աղոթքով այնպես կատարելու, որ նրա ճանաչումը հռոմեական-կաթոլիկ եկեղեցու համար ոչ մի դժվարություն չառաջացնի:

VIII. Անդամ եկեղեցիների միջեւ փիրում է վարչական եւ պաշտամունքային[19] միություն[20]:

Այս թեզերը կարելի է համարել կաթոլիկյան մի փորձ, որի նպատակն է Լոյենբերգյան միության մոդելը բոլոր եկեղեցիների համար եւ հատկապես Կաթոլիկ Եկեղեցու համար ընդունելի ձեւի բերել: Հռոմի Պապի նոր դերի մասին խոսելիս երկու աստվածաբանները ելնում են Հովհաննես Պողոս Բ Պապի «Ut unum sint» Կոնդակի բովանդակությունից, որը, ինչպես արդեն ասվեց, դիմելով բոլոր եկեղեցիներին, Պետրոսի ծառայությունը կատարելու նոր մեկնման առաջարկներ է պահանջում:

---

19 Ակնկալվում է պաշտամունքային համամիասնություն (հեղ. դիտ.):

20 Տեքստը գերմաներեն լեզվով է, ներկա թարգմանությունը կատարված է հեղինակի կողմից: Տե՛ս Quaestiones Disputatae 100. Freiburg 1983, S. 17f; Heinrich Fries, Karl Rahner; Einigung der Kirchen - reale Möglichkeit; Erweiterte Sonderausgabe; 2. Auflage der Sonderausgabe; Freiburg 1985:

3. Մասնակցության մոդելը

Վոլֆգանգ Թյոնիսսենն իր ակնարկի մեջ ներկայացնում է, իր ասելով, կաթոլիկյան մի մոդել[21]: Նա, հիմնվելով Վատիկանի Բ ժողովի վրա, եզրակացնում է, որ առաջին հերթին եկեղեցին Քրիստոսի խորհրդավոր ու տեսանելի ներկայությունն է, իբրեւ misterium, (խորհուրդ) երկրորդ հերթին, վերածվում է բոլոր մարդկանց Ս. Երրորդության հետ միության sacramentum-ի (խորհրդակատարության) եւ գործիքի: Ապծո եւ մարդկանց հետ միությունը նշանակում է մասնակցություն Քրիստոսի խորհրդին: Հարկ է նշել, որ նման գաղափարներ կարելի է հանդիպել նաեւ ուղղափառ աստվածաբանության մեջ:

Ուղղափառ տպավորություն է թողնում նաեւ նրա հաջորդ գաղափարը, որի համաձայն եկեղեցին իբրեւ Քրիստոսի մարմին եւ նրանում՝ հատկապես Հաղորդությունը, շնորհում են «Communio»-ի՝ հաղորդության խորհրդի միջոցով Քրիստոսի մարմնի անդամ լինելը, այնպես որ եկեղեցին. ա) Հաղորդության միություն է նշանակում: Այդ միությունը բ) երեւում է Քրիստոսի հանդեպ ունեցած միասնական հավատի, Խորհուրդների կատարման եւ այս երկուսին ենթարկված նվիրապետության մեջ: Սրանից ելնելով՝ գ) հետեւում է, որ եկեղեցիների միությունը կայանում է եպիսկոպոսական կազմ ունեցող տեղական եկեղեցիների ընդհանուր միության մեջ: դ) Այն եկեղեցիները, որոնց միջեւ Բանի եւ Խորհրդի միություն է փիրում՝ դրանք միմյանց հանդեպ «մաս եղող եկեղեցիներ» են: ե) Միությունը վերահաստատելու նախապայմանը ներկայումս Հավատի եւ Քարոզչության, Խորհուրդի եւ Նվիրապետության մեջ կայացող վարդապետության տարբերությունների վերացումն է: զ) Ապա աստիճանաբար հաստատվում է վարչական եւ ծիսական միություն, մինչեւ իսկ միասնական նվիրապետություն:

4. Գնահատում

Ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ կաթոլիկ կողմից առաջարկները թեեւ բացահայտորեն ապաշխարության եւ դարձի մոդելը այլեւս չեն գործածում, եւ մի շարք հարցերում պատրաստ են ընդունել այլ եկեղեցիների որոշ տարբերությունները, որոնք սակայն միշտ չէ, որ երկրորդական են, ապա մեկ հարցում, սակայն, կաթոլիկ բոլոր առաջարկները հստակ են Հռոմի Պապի դիրքն ու իրավունքներն ընդհանրական Եկեղեցում:

Կաթոլիկ աստվածաբանության տեսակետից եկեղեցիների ոչ մի միություն չի կարող իբրեւ այդպիսին ընդունվել, եթե այդ միությունը տեսանելիորեն միախմբված չլինի Հռոմի Քահանայապետի շուրջ:

Դ. Ուղղափառ առաջարկներ

Խոսելով ուղղափառ աստուածաբանութեան առաջարկների մասին՝ նախ հարկ է նշել, որ այն վերաբերում է Ուղղափառ Եկեղեցիների մեծ ընտանիքի կողմից արված առաջարկներին:

---

21 Wolfgang Thönissen, Gemeinschaft durch Teilhabe an Jesus Christus. Ein katholisches Modell für die Einheit der Kirchen, Freiburg, 1996:

Ինչպես կաթոլիկ, նույնպես եւ ուղղափառ եկեղեցիները մինչեւ 19-րդ դար պնդում էին, որ Եկեղեցիների միությունը կարող է վերականգնվել այն ժամանակ միայն, երբ Եկեղեցուց բաժանվածները իրենց արարքների համար զղջան եւ վերադառնան Մայր եկեղեցու գիրկը: Եթե այս տեսակետին կաթոլիկների մոտ այսօր դժվար է հանդիպել, ապա կարելի է ասել, որ սա դեռ ուղղափառ եկեղեցիներում գոյություն ունեցող մի կարծիք է:

Վերլուծելով ուղղափառների կողմից միջեկեղեցական բանակցությունների ընթացքում մինչ այժմ հայտնած դիրքորոշումներն ու նրանց առաջարկները՝ կարելի է եզրակացնել, որ ուղղափառ աստվածաբանությունն իր մասնակցությունն էկումենիկ շարժման մեջ հասկանում է հետեւյալ կերպ. նա ցանկանում է ոչ ուղղափառ քրիստոնյաներին ներկայացնել իր ավանդության մեջ պահպանված առաքելական գանձը եւ նրա վկայությամբ բաժանված եկեղեցիներին տանել հավատի մեջ միության, այնպես, ինչպես որ այդ հավատքը վկայել են առաքյալներն ու եկեղեցու Հայրերը, եւ ինչպես որ նա պահպանվել է Ուղղափառ Եկեղեցում:

Այսպիսով՝ Ուղղափառ եկեղեցիների մասնակցությունը միջեկեղեցական բանակցություններում ըմբռնվում է իբրեւ եկեղեցու քարոզչության առաքելության շարունակությունը եւ ոչ թե «դավաճանություն ուղղափառ հավատքի հանդեպ», ինչպես որ պնդում են որոշ ծայրահեղականներ[22]:

Ուղղափառ աստվածաբանության առաջարկը հստակորեն ներկայացված է Մյունխենում՝ 1982թ. «Եկեղեցու եւ Հաղորդության խորհուրդը Սուրբ Երրորդության խորհուրդի լույսի ներքո» փաստաթղթում[23], ուր ասվում է, թե գոյություն ունի միայն մեկ եկեղեցի, քանի որ Քրիստոս միայն մի մարմին ունի: Տարբեր տեղական եկեղեցիների միեւնույն ինքնությունն ունենալը հնարավոր է միմիայն այն պարագային, երբ նրանք միեւնույն հավատով, միեւնույն հիշատակությունն են կատարում, ճաշակում են միեւնույն մարմինն ու արյունը Հիսուս Քրիստոսի եւ դառնում մարմին Քրիստոսի, որին նրանք մաս կկազմեին արդեն իսկ իրենց մկրտությունից հետո: Եւ չնայած այն բազում Պատարագներ են մատուցվում, սակայն կատարվող խորհուրդը, որին մենք մասնակից ենք դառնում, նույնն է: Միեւնույն ժամանակ փաստաթուղթն ընդգծում է, որ հաղորդվելով Քրիստոսի Մարմնին ու Արյանը՝ հաղորդվողը ոչ թե մաս է սրանում Քրիստոսից, այլ ընդունում է Նրան ամբողջությամբ: Նույնպես եւ ցանկացած տեղական Եկեղեցի, որը համախմբված է իր եպիսկոպոսի շուրջ եւ կատարում է Ս. Հաղորդության խորհուրդը, Քրիստոսի մարմնի միայն մեկ մասը չէ: Տեղական եկեղեցիներում կատարված պատարագները չեն բաժանում եկեղեցին փոքր մասերի, այլ խորհրդավոր կերպով ցույց են տալիս Եկեղեցու եւ այնտեղ կատարվող խորհուրդի միությունը: Ամեն մի տեղական եկեղեցի միեւնույն ժամանակ միասնական սուրբ Եկեղեցին է, որովհետեւ Ս. Հաղորդության միջոցով նա միանում է Քրիստոսին եւ բոլոր այն համայնքներին, որոնք կատարում են Ս. Հաղորդության խորհուրդը:

---

22 Մանրամասն տե՛ս Մոսկովյան Պատրիարքության Սինոդի սոցիալական հայեցակարգում՝ Orthodoxie Aktuell 4 (2000) H. 9, 21. Beziehung zu den nichtorthodoxen:

23 Տեքստն ամբողջությամբ տե՛ս Gemischte Internationale Kommission den theologischen Dialog zwischen der Romisch-Katholischen Kirche und der Orthodoxen Kirche, Das Geheimnis der Kirche und der Eucharistie im Licht des Geheimnisses der Heiligsten Dreifaltigkeit, München, 1982, in: Dokumente wachsender Übereinkunft (2. Band), 531-541:

Այս կարեւոր նշումները կապարելուց հետո հիշյալ փաստաթուղթը անդրադառնում է երկու պայմանների, որոնք ապահովում են Ս. Հաղորդության խորհուրդը կատարող համայնքի միությունն Ընդհանրական Եկեղեցու հետ: Դրանք են մի կողմից Եկեղեցու առաքելականությունը մյուս կողմից՝ տեղական եկեղեցու ճանաչումը այլ եկեղեցիների կողմից, որով եւ հաստատվում է եկեղեցիների ընդհանրականությունը: Պատրիարքության սահմանում գտնվող եկեղեցիների միջեւ տիրող միությունը եւ միմիանց ճանաչումը հրապարակայնորեն ցույց են տալիս տեղական հողի վրա եկեղեցիների միջեւ տիրող հոգեւոր միությունը: Սակայն այդ տեղական մեկ եկեղեցու հոգեւոր միությունը պետք է իր սահմաններն անցնի, ընդլայնվի ու իր հոգեւոր միության մեջ ընդգրկի նաեւ այլ քույր եկեղեցիների: Այսպիսի ճանաչումը ճշմարիտ է, սակայն այն պարագային, երբ առկա է միություն հավատքի մեջ, երբ առկա է միության ցանկությունը Սիրո եւ Ծառայության մեջ, ոչ միայն խոսքով, այլ նաեւ գործով:

Ամփոփելով կարելի է ասել, որ ուղղափառ տեսակետի համաձայն Ս. Հաղորդության միջոցով եւ նրա մեջ, որը կատարվում է եւ եպիսկոպոսի նախագահությամբ, հայտնվում է ամբողջ Ընդհանրական Եկեղեցին՝ իր խորհուրդներով: Տարեւան եկեղեցին միեւնույն խորհուրդի միջոցով, Քրիստոսում, Քրիստոսի հետ եւ Նրա միջոցով միեւնույն Ընդհանրական եկեղեցին է: Իրական միությունը եւ փոխճանաչումը այսպիսով հնարավոր է միայն այն պարագայում, երբ առաջին հերթին ամբողջ եկեղեցին եւ նրա խորհուրդը յուրաքանչյուր տեղական, Ս. Հաղորդության խորհուրդը կատարող, եկեղեցում իրապես հայտնվում է, եւ երբ այս միությունն ու նույնականությունը չնայած տարբեր մշակութային կամ ինչ-ինչ երկրորդական տարբերությունների ակնհայտ է դառնում Ս. Հաղորդության խորհուրդը կատարելու ընթացքում:

Ե. Վերջաբան

Վերջաբանի փոխարեն ցանկանում եմ մի քանի առաջարկներով ավարտել այս հոդվածը:

1.Նախ պետք է մեր եկեղեցու աստվածաբանության տեսանկյունից ուսումնասիրել մինչ այսօր մեր եկեղեցու եւ այլ եկեղեցիների միջեւ վարած բանակցությունները, երկխոսություններն ու հանդիպումները: Այստեղ մեր ուշադրությունը կարող ենք կենտրոնացնել երկու ժամանակաշրջանների վրա՝

ա. Նախաէկումենիկ շարժման ժամանակաշրջան (այստեղ պետք է հետազոտվեն միջեկեղեցական բանակցությունները՝ Եկեղեցիների բաժանումից մինչ 20-րդ. դար):

բ. Հետէկումենիկ ժամանակաշրջան (այստեղ պետք է հետազոտվեն միջեկեղեցական բանակցությունները 20-րդ դարից սկսած):

Այս հետազոտությունների նպատակը պետք է լինի Հայ Առաքելական Եկեղեցու վարած միջեկեղեցական բանակցությունների պատմական եւ աստվածաբանական վերլուծությունը: Այսինքն՝ պետք է հստակորեն իմանալ, թե ինչ բանակցություններ եւ երկխոսություններ է վարել մեր եկեղեցին մինչեւ այսօր, ո՛ր հարցերն են քննարկվել այդ բանակցությունների ընթացքում եւ ինչ արդյունքներ են նրանք փվել: Միեւնույն ժամանակ անհրաժեշտ

է ցույց տալ, թե մինչ այսօր ո՛րն է եղել մեր եկեղեցու դիրքը միջեկեղեցական բանակցություններում եւ եկեղեցիների միության ինչ մոդելներ են առաջարկվել մեր կողմից:

2. Նման ուսումնասիրության արդյունքները պետք է վերլուծվեն եւ գնահատվեն հայ աստվածաբանների եւ հոգեւորականների կողմից: Մեծ ուշադրություն պետք է դարձվի այն հարցին, թե մեր եկեղեցու բռնած ուղին կամ ուղիները մեզ հեռաքրքրող հարցի շուրջ, արդյոք այսօր կիրարկելի՞ են, թե՞ անհրաժեշտություն կա մի նոր ուղի մշակելու կամ մեր համաձայնությունը տալու արդեն առկա որեւիցե մի այլ մոդելի:

Երբ պարզ լինի մեր եկեղեցու ընտրած ուղին, անհրաժեշտ է մշակել որոշ սկզբունքներ, որոնցով կարողանան ղեկավարվել մեր եկեղեցու հոգեւորականներն ու աստվածաբանները միջեկեղեցական բանակցությունների ընթացքում: Ուխտավորն իր ստանձնած ուխտավայրը ավելի դյուրին կհասնի, եթե ձեռքին քարտեզ ունենա:

ՊԱՏՏԱՂԱԲԱՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ֆրանսիան Կիպրոսում հայ եւ սիրիացի կամավորներից կազմավորեց Արեւելյան լեգեոնը: Այն կազմված էր գլխավորապես հայերից եւ մասնակցեց թուրքերից Պաղեստինի, Լիբանանի, Սիրիայի ու Կիլիկիայի ազատագրմանը:

Լեգեոնի կազմավորումը սկսվեց 1916թ. վերջերից, սակայն նման զորամիավորում ստեղծելու հարցը քննարկման առարկա էր դեռեւս 1914-ից: Հայ տարբեր քաղաքական ու հասարակական գործիչներ պատերազմը սկսվելուց հետո Ֆրանսիայի, Անգլիայի, Ռուսաստանի ներկայացուցիչների հետ բանակցություններ էին վարում հայկական կամավորական բանակ ստեղծելու հարցի շուրջ, որը պետք է ազատագրեր Կիլիկիան եւ տեղի հայությանը փրկեր կոտորածներից[1]:

1915թ. փետրվար-մարտ ամիսներին Սոֆիայում Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Անգլիայի դեսպանների հետ ՀՅԴ Արեւմտյան բյուրոյի անունից բանակցություններ սկսեց Մ. Վարանդյանը: Նա նշում էր, որ եթե դաշնակիցները ցանկանան ափիհանում կատարել Ալեքսանդրետի ծոցում կամ Ադանայում, ապա հայերը պատրաստ են օժանդակելու նրանց: Նա առաջարկում էր Ամերիկայում, Բալկաններում ու եւրոպական այլ երկրներում հավաքագրել մոտ 20.000 հայ կամավորների եւ կենտրոնացնել Կիպրոսում: Անգլո-ֆրանսիական կողմը պետք է զիներ ու մարզեր նրանց եւ օգտագործեր Կիլիկիայում ափիհանում կատարելու համար: Չնայած դեսպանները հավանություն փվեցին այդ նախագծին ու ներկայացրին իրենց կառավարություններին, բայց Ֆրանսիայի ընդդիմության հետեւանքով այդ ծրագիրը չիրագործվեց[2]:

1915թ. ապրիլին ԱՄՆ-ում անգլիական դեսպան Ս. Ռայսը տեղի ռուսական դեսպանից տեղեկացավ, որ ամերիկահայերը պատրաստ են Կանադայի վրայով 1.000 կամավորներ ուղարկել Կիլիկիայում կռվելու համար: Հայերը նույնիսկ պատրաստ էին վճարել իրենց ռազմական հանդերձանքի եւ մինչեւ Կանադա տեղափոխության ծախսերը՝ հուսալով, որ Անգլիան իր վրա կվերցներ նրանց տեղափոխությունը մինչեւ Կիլիկիա: Ապրիլի 25-ին այս առաջարկն ուղարկվեց Անգլիայի արտգործնախարարություն, սակայն հաջորդ օրը Բանակային խորհրդում մերժվեց[3]:

---

1 ՀԱԱ, Ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 68: Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents, Waltham, 1996, p. 3-5.

2 **Ա. Պեյլերյան,** Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը եւ հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ. I, Երեւան, 2005, էջ 78-80:

3 **Տ. Սարուխանյան**, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում եւ Մեծ Բրիտանիան (1915-1918թթ.),

1915թ. հուլիսին Եգիպտոսի անգլիական զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ջոն Մաքսվելին եգիպտահայերն առաջարկեցին Կիպրոսում կենտրոնացնել հայ կամավորներ եւ այնտեղից ռազմական գործողություններ սկսել Կիլիկիայի ուղղությամբ, որի շնորհիվ տեղի հայությունը կփրկվեր կոտորածներից, իսկ թուրքերի հաղորդակցության ուղիները կխափանվեին[4]:

Ըստ այդմ Կիպրոսում կազմավորվելու էր 10000-ոց հայկական կամավորական զորամաս, որի ծախսերը հոգալու էին հայերը, իսկ անգլիացիները ապահովելու էին սպաներով, ռազմամթերքով, օժանդակելու էին փոքրաթիվ ցամաքային ու ծովային ուժերով: Հայերը ապստամբություն կազմակերպելու նպատակով զենք ու դրամ էին տեղափոխելու Կիլիկիայի ծովափնյա շրջանները: Ապա հայկական այդ բանակը եւ նույնքան էլ անգլիական զինվորներ գրավելու էին Ալեքսանդրետը, Ադանան, Մերսինը: Նախատեսվում էր, որ նրանց կմիանան 25.000 հայ ապստամբներ Կիլիկիայից եւ 10.000՝ շրջակայքից: Այդ մոտ 50.000-անոց բանակը բավարար էր համարվում ոչ միայն Կիլիկիան ազատագրելու, այլեւ շարժվելու նրա սահմաններից դուրս: Անհրաժեշտ էր գործողությունն իրականացնել արագորեն՝ կիլիկիահայությանը կոտորածներից ու տեղահանությունից փրկելու համար:

Եթե անգլիացիները անհրաժեշտ համարեին ավելի փոքրամասշտաբ գործողություն, ապա առաջարկվում էր հավաքագրել միայն 5.000 կամավորների: Այդ զորքը կարող էր մի կողմից գրավել Սուեզիան (Մուսա լեռան շրջակայքը) եւ Քեսապը, ուր կար 25000 հայ, մյուս կողմից՝ Դյորթ Յոլը Ալեքսանդրեթի ծոցում, ուր կհավաքվեին եւ արդյունավետ դիմադրություն կկազմակերպեին շրջակայքի հայերը: Այդ գործողությունների արդյունքում կարող էին գրավել Ալեքսանդրեթն ու Բեյլանի կիրճը: Անհաջողության դեպքում կարող էին ուժերը կենտրոնացնել լեռներում եւ պարտիզանական պայքար մղել: Նրանք կխախտեին թշնամու հաղորդակցությունը՝կտրելով հեռագրալարերը, այրելով կամուրջները եւ այլն:

Հուլիսին Լոնդոնի ռուսական դեսպանությունը ,ւս Անգլիայի արտգործնախարարությանն առաջարկեց դեպի Կիլիկիա հայկական ուժերով արշավանք կազմակերպել[5]: Ռուսաստանն ամեն կերպ խրախուսում էր Անգլիային Կիլիկիայում ռազմական գործողություններ սկսելու հարցում, որպեսզի ինչքան հնարավոր է նրա ուշադրությունը շեղի Կ. Պոլսից ու նեղուցներից, ինչպես նաեւ թուլացնի թուրքական բանակի ճնշումը Կովկասյան ճակատում:

Սակայն այդ ծրագրերն ուշացած էին եւ կիլիկիահայության տեղահանությունից հետո դրանք անիրագործելի դարձան:

Հայկական զորամաս կազմավորելու նոր հեռանկար բացվեց, երբ մուսալեռցիները հետոսական ինքնապաշտպանությունից հետո 1915թ. սեպտեմբերին փրկվեցին ֆրանսիական նավատորմի կողմից եւ ապաստան գտան Պորտ Սայիդում: Նրանք բազմիցս դիմեցին անգլո-ֆրանսիական իշխանություններին, որպեսզի իրենց զենք տան եւ ուղարկեն կռվելու թուրքերի դեմ[6]:

Արդեն սեպտեմբերի 19-ին Կահիրեի ֆրանսիական դեսպան Ա. Դեֆրանսը իր կառա-

---

Երեւան, 2005, էջ 59:

4 "Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918". Documents, 1996, pp. 194-195, 203-204.

5 **Տ. Սարուխանյան,** նշվ. աշխ., էջ 60:

6 **Ս. Պարթեւեան**, Արարա: Հայկական լեգէոնը, Իզմիր, 1919, էջ 59-60:

վարությանը հեռագրեց, որ կարող են մուսալեռցիներից հավաքագրել 500 լավ զինվորներ: Նա տեղեկացրեց նաեւ, որ Ջ. Մաքսվելը նախատեսում է հայկական լեգեոն կազմել եւ այն համալրել ամերիկահայ կամավորներով: Լեգեոնի խնդիրն էր լինելու հարձակումներ կատարել ծովեզերքում, հատկապես Ալեքսանդրեթի շրջանում[7]:

Սեպտեմբերի 23-ին Ա. Դեֆրանսը նոր զեկուցագիր ուղարկեց, ուր նշում էր մուսալեռցիների կռվելու վճռականության մասին: Հայերը պատրաստակամություն էին հայտնել Ֆրանսիայից օժանդակություն սպանալու դեպքում մոտ մեկ ամսվա ընթացքում կազմավորել 4.000-անոց կամավորական բանակ, ափիսանում կատարել Ալեքսանդրեթի ծոցում, գրավել Բեյլանի ու Բաղչեի կիրճերը: Դրանք Ամանոսի լեռներով անցնող միակ ճանապարհներն էին, որոնցով կապվում էին Ադանայի ու Հալեպի նահանգները[8]:

Շուտով Ջ. Մաքսվելը ,ւս ֆրանսիացիներին առաջարկեց հայերին զենք տալ եւ ուղարկել իրենց լեռները, որպեսզի ապստամբություն բարձրացնեն: Նա ցանկություն հայտնեց, որ Ֆրանսիան հայերի հարցը իր վրա վերցնի[9]: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Կիլիկիան գտնվում էր ֆրանսիական շահերի գոտում:

1915 թ. նոյեմբերի 2-ին Միջերկրականի ֆրանսիական 3-րդ նավատորմի հրամանատար փոխծովակալ Մորոն ռազմածովային նախարարին ուղարկած տեղեկագրում հավաստիացնում էր, որ մուսալեռցիները քաջ ու կռվող ժողովուրդ են, առաջարկում էր նրանց զինել եւ փոքր դիվերսիոն արշավանքների ուղարկել թուրքական երկաթուղիների ուղղությամբ[10]: Այդ նպատակով ֆրանսիացի նավաստիները սկսեցին մարզել 250 մուսալեռցի կամավորների: Այդ գործը սրանձնեց ռազմածովային կապիտան, «Ժորեգիբերի» նավի հրամանատար Բենուա դ'Ազին, որի տեղակալ նշանակվեց Շառլ-Տիրան Թեքեյանը[11]: Կարճ ժամանակում այդ վաշտը պատրաստ էր ռազմական գործողությունների: 1916 թ. հունվարի 11-ին Պորտ Սայիդի անգլիական զորքերի հրամանատար փոխգնդապետ Էլգուդին Մորոյի ուղարկած ճեպագրից տեղեկանում ենք, որ մուսալեռցիների մոտ կատարված զինվորագրումները գնահատելի արդյունքներ են ունեցել եւ սպասվում էր մոտ 500 կամավորների ժամանում նաեւ Ալեքսանդրիայից: Նման պայմաններում Մորոն անհրաժեշտ էր համարում այդ ուժերին անհապաղ զենք տրամադրելը եւ իր տրամադրության տակ դնելը[12]:

Այսպիսով՝ մուսալեռցիները դարձան այն հիմնական գործոնը, որի արդյունքում ֆրանսիական իշխանությունները սկսեցին լրջորեն քննարկել հայերի մարտական ուժն օգտագործելու հնարավորությունը: Մեծաքանակ հայկական զորամասի ստեղծման հարցը, այնուամենայնիվ, ռազմական ու քաղաքական նկատառումներով ձգձգվեց: Հայերի տեղահանությունից ու կոտորածից հետո այլեւս անիմաստ էր դարձել Կիլիկիա կատարելիք արշավանքը, եւ հայ գործիչներից շատերը նման պայմաններում դեմ էին հայկական կամավորական բանակի ստեղծմանը, որը, նրանց կարծիքով, թուրքերին առիթ կտար ոչնչացնելու

---

7 **Ա. Պեյլերյան**, նշվ. աշխ., էջ 157-158:

8 Նույն տեղում, էջ 179:

9 **Ա. Գարամանուկեան**, Հայկական լեգէոնը պատմական, իրաւական ու քաղաքական հարցերու լոյսին տակ եւ վաւերագրեր, Բէյրութ, 1974, էջ 63-64:

10 Նույն տեղում, էջ 65-66:

11 **Շ.-Տ. Թեքեյան**, Մուսա լեռան հայերի փրկությունը: Հիշողության էջեր, Երեւան, 2002, էջ 51:

12 **Ա. Պեյլերյան**, նշվ. աշխ., էջ 249:

Սիրիայի անապատներում մնացած պարագրյալ հայերի բեկորները: Սակայն Ֆրանսիան Արեւելքում միայն աննշան ուժեր ուներ, մարդուժի կարիք էր զգում եւ, ի վերջո, որոշեց օգտագործել հայ կամավորներին: 1916 թ. մայիսին կնքված Սայքս-Պիկո-Սազոնով գաղտնի համաձայնագրով Ֆրանսիային էին անցնելու Սեբաստիան, Խարբերդը, Դիարբեքիրը, Կիլիկիան եւ Սիրիան, հետեւաբար, այդ ուղղությամբ գործելու պահին նրան անհրաժեշտ էր ավելի ներկայանալի ուժեր ունենալ պարածաշրջանում:

1916 թ. հունիսի 28-ին Լոնդոնի ֆրանսիական դեսպան Պ. Կամբոնը վարչապետ Ա. Բրիանին հեռագրեց, որ Անգլիայի ԱԳՆ-ում իրեն տեղեկացրել են, որ ամերիկահայերը առաջարկել են Միջագետքում գերված եւ Հնդկաստան տեղափոխված հայ ռազմագերիներին ընդգրկել դաշնակիցների բանակների մեջ: Քանի որ Սայքս-Պիկոյի համաձայնագրով Հայաստանի մի մասը եւ Կիլիկիան անցնելու էին Ֆրանսիային, այդ պատճառով անգլիական կառավարությունը ցանկացել էր իմանալ, թե արդյոք Ֆրանսիան կցանկանար օգտվել այդ հայերի ծառայություններից[13]: 1916թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին Ֆրանսիայի արտաքին գործերի եւ ռազմական նախարարությունները մանրամասնորեն քննարկեցին Կիպրոսում 5000-ով հայկական զորամաս կազմավորելու հարցը: Այդ ժամանակաշրջանում Ֆրանսիան արեւելքում միայն փոքրաթիվ ուժեր ուներ եւ հայ կամավորների օգնության կարիքը շատ էր զգում:

Կիպրոսում հայ կամավորներ մարզելու համար իր համաձայնությունը տվեց նաեւ Անգլիան: Այս ընթացքում Եգիպտոսում կային մոտ 400 մուսալեռցի կամավորներ, որոնք մարզվել էին ֆրանսիացի ծովայինների կողմից[14]: Առաջին գումարտակը կազմվելու էր մուսալեռցի ու եգիպտահայ կամավորներից: Հարցը տեղում պարզելու համար սեպտեմբերին Ալեքսանդրիայում եգիպտահայ համայնքի ղեկավարներից Մ. Տամատյանի եւ Լ. Մկրտիչյանի հետ բանակցությունների մեջ մտավ Մեքքա մեկնող ֆրանսիացի փոխգնդապետ Է. Բրեմոնը: Նա տեղեկացրեց հայկական լեգեոն ստեղծելու Ֆրանսիայի որոշման մասին՝ նշելով, որ այն նախատեսվում է օգտագործել Կիլիկիան ազատագրելու համար: Եգիպտահայերը պատրաստակամություն հայտնեցին մասնակցել կամավորագրությանը, եթե իրենց դիմի Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան եւ խորհուրդ տվեցին, որ ֆրանսիական կառավարությունը բանակցի անմիջականորեն նրա հետ[15]:

Սեպտեմբերի վերջին Ֆրանսիայի ռազմական նախարար Ռոքը Եգիպտոս գործուղեց հետեւակային գումարտակի հրամանատար Ռոմիոյին, որը պետք է տեղում պարզեր հայկական զորամասի ստեղծման նպատակահարմարությունն ու պայմանները, համաձայնության էր գալու անգլիացիների հետ, ուսումնասիրելու էր զինվորագրման ենթակա հայերի թիվը, Կիպրոսում հարմար վայր էր գտնելու զորամասի տեղակայման համար, ապա իր վերջնական առաջարկներն էր ներկայացնելու նախարարին[16]:

Հոկտեմբերի 2-ին Փարիզում, Ֆրանսիայի ԱԳՆ Արեւելյան գործերի բաժնի պետ Ժ. Գուն լեգեոնի հարցով բանակցություններ սկսեց Պ. Նուբարի հետ: Ժ. Գուն տեղեկացրեց Կիպրոսում ֆրանսիացի սպաների հրամանատարության տակ հայկական զորամաս կազ-

---

13 **Ա. Պեյլերյան,** նշվ. աշխ., էջ 308:

14 **Ա. Գարամանուկեան**, նշվ. աշխ., էջ 68-69:

15 **Մ. Տամատեան**, Իմ յուշերէս, Բէյրութ, 1985, էջ 106:

16 **Ա. Պեյլերյան**, նշվ. աշխ., էջ 342-343:

մավորելու Ֆրանսիայի մտադրության մասին, որն օգտագործվելու էր Կիլիկիա կամ Սիրիա ներխուժելու դեպքում: Նա Պողոս Նուբարի աջակցությունը խնդրեց մեծ թվով կամավորներ հավաքագրելու համար, քանի որ մի քանի հարյուր մուսալեռցիները բավարար չէին: Պ. Նուբարը մտավախություն հայտնեց, որ հայերի կամավորագրությունը թուրքերին նոր կոտորածներ կազմակերպելու առիթ կտար եւ պահանջեց դա կապարել խիստ գաղտնի, ինչպես նաեւ անհրաժեշտ համարեց դրա դիմաց Կիլիկիային ինքնավարություն խոստանալ: Գուն պատասխանեց, որ Ֆրանսիան մտադիր է ժողովրդավարական վարչաձեւ պարգեւել Կիլիկիային, իսկ ոստիկանական եւ վարչական պաշտոնները տրվելու են հայ կամավորներին[17]:

Հոկտեմբերի 6-ին Պ. Նուբարը կամավորների խնդրի վերաբերյալ նամակ ուղարկեց եգիպտահայերին՝ զգուշացնելով, որ փեղի թերթերը գաղտնի պահեն հարցը, իսկ կամավորները հավաքագրվեն ոչ թե Եգիպտոսում, այլ Կիպրոսում: Նա դեռ հույս ուներ, որ հայերից առանձին զորամաս չեն կազմի եւ նրանց կընդգրկեն դաշնակիցների զորքերի մեջ: Պ. Նուբարը նաեւ հույս էր հայտնում, որ, ի տարբերություն հայերի հանդեպ իր քաղաքականությունը փոխած Ռուսաստանի, Ֆրանսիան պատերազմից հետո լիբերալ վարչաձեւ է շնորհելու իրեն անցած հայկական տարածքներին եւ հնարավորություն կտա հայերին իրագործելու ազգային երազանքները[18]:

Լեգեոնի կազմավորման վերաբերյալ վերջնական համաձայնություն կայացնելու համար ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ Ժորժ Պիկոն Պ. Նուբարին առաջարկեց հանդիպել Լոնդոնում: Հոկտեմբերի 24-ին Պ. Նուբարը Լոնդոնում հանդիպեց անգլիական կառավարության ներկայացուցիչ Մարկ Սայքսի հետ: Վերջինս տեղեկացրեց գաղտնի համաձայնագրով (Սայքս-Պիկոյի համաձայնագիր-Ս.Պ.) Հայաստանը Ֆրանսիայի եւ Ռուսաստանի միջեւ բաժանելու մասին: Մ. Սայքսը նշեց, որ Ֆրանսիայի հովանու ներքո կստեղծվի ինքնավար Հայաստան, եւ հայերն ավելի մեծ իրավունքներ ապահովելու համար պետք է կազմավորեն բանակ[19]:

Նույն օրը Պ. Նուբարը ֆրանսիական դեսպանատանը հանդիպեց Ժ. Պիկոյի հետ: Վերջինս նշեց, որ Ֆրանսիան ինքնավարություն կտա Կիլիկիային, որին կմիացվեն նաեւ Սեբաստիան, Դիարբեքիրը, Խարբերդը եւ Ալեքսանդրեթի նավահանգիստը: Նա խոստացավ, որ Հայաստանում բոլոր պաշտոնները հանձնվելու են հայերին, բացի նահանգապետից, որը լինելու էր եվրոպացի: Նա հայտնեց, որ ինքնավարություն սրանալու համար հայերը պետք է դիմեն որոշ զոհողությունների՝ կազմավորեն կամավորական բանակ: Թուրքերին չգրգռելու համար Պ. Նուբարն առաջարկեց, որ ֆրանսիական կառավարությունը հայտարարի Արտասահմանյան լեգեոնում հայ կամավորների գերազանց մասնակցության մասին եւ նոր կամավորագրության կոչ անի, որից հետո Հայ ազգային պատվիրակությունը կամավորագրությունը խրախուսելու քայլեր կձեռնարկի: Հայ գործիչը նաեւ պահանջեց, որ Ֆրանսիան քայլեր ձեռնարկի լեգեոնի մեջ մտցնելու Սիբիրում գտնվող մոտ 5000 արեւմտահայ ռազմագերիներին: Ժ. Պիկոն խոստացավ ուսումնասիրել առաջարկները եւ պատասխանել հաջորդ հանդիպման ժամանակ[20]:

---

17 Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918, pp. 368-370.
18 Նույն տեղում, էջ 372-374:
19 Նույն տեղում, էջ 382-383:
20 Նույն տեղում, էջ 384-386:

Հոկտեմբերի 27-ին մինչեւ Ժ. Պիկոյի մոտ գնալը Պ. Նուբարը հանդիպեց Մ. Սայքսին՝ վերջինիս նախաձեռնությամբ: Մ. Սայքսը առաջարկեց պահանջել, որ կամավորներին վճարեն, երաշխիքներ տան, որ նրանք չեն ուղարկվի ֆրանսիական ճակատ եւ կկռվեն միայն հայրենիքում, վիրավորներին ու հիվանդներին բուժեն ամերիկյան Կարմիր խաչի կենտրոններում, քանի որ ֆրանսիացիները լավ չէին բուժում: Մ. Սայքսը կարծիք հայտնեց, որ եթե Ֆրանսիան կարողանա ապահովել հայ քաղաքական ուժերի համագործակցությունը, ապա հնարավոր կլինի մինչեւ 1917թ. հունիս-հուլիս ամիսները հավաքել 30000 հայ կամավորներ: Մ. Սայքսը պարզաբանեց, որ Ժ. Պիկոն չի մերժի այդ պայմանները, քանի որ Ֆրանսիան մարդուժի կարիք ուներ:

Պ. Նուբարը փեղեկացրեց, որ Ժ. Պիկոյից պահանջել է, որ ֆրանսիական կառավարությունը իր պաշտոնաթերթում հայտարարի Արտասահմանյան լեգեոնում հայ կամավորների խրախուսելի մասնակցության եւ նոր կամավորագրության մասին: Մ. Սայքսը խորհուրդ տվեց դրա փոխարեն պահանջել, որ Ազգային ժողովում վարչապետը հայտարարի, որ պատերազմից հետո Ֆրանսիան բավարարելու է հայկական պահանջները եւ դրականորեն արտահայտվի հայ կամավորների մասին[21]:

Ապա Պ. Նուբարը, Հ. Մոսպիչյանը, Ջ. Մալքոլմը[22] եւ Մ. Սայքսը մեկնեցին Ժ. Պիկոյի մոտ: Երկար քննարկումից հետո նրանք համաձայնության եկան հետեւյալ պայմանների շուրջը.

1. Ֆրանսիայի կառավարությունը պետք է հրապարակի կամավորագրության կոչ, իսկ Ժ. Պիկոն ապահովելու է հայտարարություն վարչապետ Ա. Բրիանի կողմից:
2. Ժ. Պիկոն եւ Մ. Սայքսը անհրաժեշտ քայլեր են ձեռնարկելու Ռուսաստանում գտնվող հայ ռազմագերիների եւ արեւմտահայերի կամավորագրությունը ապահովելու համար:
3. Ամերիկայում կամավորների հավաքագրումը կատարվելու է Կանադայում, եւ Ֆրանսիան ապահովելու է նրանց տեղափոխության ծախսերը:
4. Ժ. Պիկոն փորձելու է ապահովել, որ հայ կամավորները սպանան օրական մեկ դոլար:
5. Կամավորները չեն կռվելու եվրոպական որեւէ ճակատում եւ օգտագործվելու են միայն Ասիական Թուրքիայում ափհանում կատարելիս՝ կռվելու իրենց դարավոր թշնամու դեմ եւ ազատագրելու իրենց հայրենիքը:
6. Ֆրանսիան երաշխավորելու է հաղթանակից հետո իր հովանու ներքո ինքնավարություն շնորհել Կիլիկիային, Սեբաստիային, Դիարբեքիրին եւ Խարբերդին:
7. Պ. Նուբարը հեռագիր էր ուղարկելու Եգիպտոս՝ խրախուսելու կամավորագրությունը՝ ըստ որոշված պայմանների[23]:

Հաջորդ օրը Պ. Նուբարը հեռագիրը ուղարկեց Կահիրե՝ տեղեկացնելով, որ անհրաժեշտ է խրախուսել եւ աջակցել կամավորագրությանը, սակայն պահպանելով որոշակի զգուշություններ[24]: Այդ հեռագրից հետո Եգիպտոսում մեծ խանդավառությամբ սկսվեց կա-

---

21 Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918, pp. 391-392:
22 Հ. Մոսպիչյանը Ազգային պատվիրակության անդամ էր 1913-ից, իսկ Մալքոլմը՝ 1917թ. հունվարից:
23 "Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918", pp. 393-397.
24 **Տ. Պոյաճեան**, Հայկական լեգեոնը, Բոստոն, 1965, էջ 8-9:

մավորագրությունը: Իսկ գնդապետ Ռոմիեոն[25] նոյեմբերին եգիպտահայերին տեղեկացրեց Լոնդոնի համաձայնության մասին եւ կարդաց վարչապետ Ա. Բրիանի նամակը, որը հայտնում էր, թե ամբողջովին համաձայն է Պ. Նուբարի պայմաններին[26]:

1916թ. նոյեմբերի 15-ին Ֆրանսիայի ռազմական նախարարը հրամանագիր սպորագրեց Արեւելյան լեգեոն կազմավորելու մասին[27], որի կանոնադրությունը նախարարը հաստատեց նոյեմբերի 26-ին[28]: Նրանում ընդգրկվելու էին հայեր եւ սիրիացիներ: Լեգեոնը Արեւելյան կոչվեց հայկական կողմի պահանջով, որպեսզի շեղի թուրքերի ուշադրությունը, սակայն իրականում այն հայկական էր, քանի որ սիրիացիների թիվը չէր անցնում 20%-ից:

Լեգեոնի կազմավորման եւ կամավորագրության պայմանները Ֆրանսիայի ԱԳՆ կողմից հրապարակվեցին դեկտեմբերի 5-ին: Ըստ դրա՝

1. Արեւելյան լեգեոնին կամավորագրվելու էին օսմանահպատակ հայերն ու սիրիացիները, որոնք առանձին խմբերի մեջ էին դասավորվելու ըստ ցեղի եւ կրոնի:

2. Լեգեոնի ծախսերը հոգալու է Ֆրանսիան, սակայն լեգեոնականները օժանդակ գինվորներ են լինելու եւ մաս չեն կազմելու ֆրանսիական բանակին, իսկ վիրավորվելու դեպքում հափուցում կամ թոշակ չեն սպանալու:

3. Լեգեոնը հասպատվելու է Կիպրոսում եւ ղեկավարվելու է ֆրանսիացի սպաների կողմից:

4. Լեգեոնը նախատեսված է օգտագործելու Ասիական Թուրքիայում եւ դրվում է Սիրիայի Նավային զորաբաժնի ծովակալի հրամանատարության տակ:

5. Արձանագրության համար կամավորները պետք է ներկայանան Մարսելի կամ Բորդոյի գրասենյակները, իսկ Ֆրանսիայում բնակվողները՝ Փարիզի կենտրոնական գրասենյակ: Արեւելքից եկողները պետք է արձանագրվեն Պորտ Սայիդի ֆրանսիական հյուպատոսարանում կամ Կիպրոսում՝ լեգեոնի հրամանատարի գրասենյակում:

6. Հայկական եւ սիրիական կոմիտեները սպանձնելու են կամավորներ հավաքելու գործը՝ առանց ֆրանսիական դիվանագետների միջամտության: Անհրաժեշտ է քարոզչությունն իրականացնել ամենածայրահեղ զգուշությամբ եւ առանց հրապարակային որեւէ արտահայտության, որպեսզի խուսափեն թուրքերի ուշադրությունից եւ վրեժխնդրական արարքներից՝ ընդդեմ հայերի ու սիրիացիների:

7. Կամավորների ճանապարհածախսը հոգալու են կոմիտեները, իսկ Ֆրանսիան պարտավորվում է վերադարձնել կամավորների երրորդ եւ չորրորդ կարգի ճանապարհածախսերը, եթե կոմիտեները պահանջեն:

8. Արձանագրության օրից կամավորի բոլոր ծախսերը հոգալու է պետությունը:

9. Կամավորներն ընդունվելու են պատերազմի ողջ տեւողության համար[29]:

Պ. Նուբարը բողոքեց վերոնշյալ պայմանների դեմ, քանի որ դրանցում ոտնահարված էին Լոնդոնում ձեռք բերված հիմնական սկզբունքները: Ըստ պայմանավորվածության՝

---

25 Ռոմիեոն Հայկական լեգեոնի առաջին հրամանատարն էր, իսկ 1919 թ. մայիսին նրան փոխարինեց գնդապետ Ֆլի-Սեյնթ Մարին:

26 «Յուշամատեան Մեծ Եղեռնի. 1915-1965», Բէյրութ, 1965, էջ 964:

27 **Ա. Գարամանուկեան**, նշվ. աշխ., էջ 42:

28 Նույն տեղում, էջ 46:

29 **Տ. Պոյաճեան**, նշվ. աշխ., էջ 9-15:

ֆրանսիական կառավարությունն ինքը պետք է կամավորագրության կոչ աներ, իսկ հայկական կոմիտեները աջակցելու էին ոչ բացահայտ: Պ. Նուբարը բարձրացրեց նաեւ Հայաստանին ինքնավարություն տալու մասին հայտարարության հարցը: Ֆրանսիայի ԱԳՆ-ում նրան պատասխանեցին, որ Ֆրանսիան չի կարող կամավորագրությանը պաշտոնապես աջակցել, քանի որ 1915թ. օգոստոսի 16-ի օրենքի համաձայն օսմանահպատակներին արգելվում էր ծառայել ֆրանսիական բանակում, ինչպես նաեւ վստահեցրին, որ Հայաստանը Ֆրանսիայի հովանու ներքո կստանա ամենալայն ինքնավարություն եւ Ալժիրի կամ Թունիսի պես չի վերածվի գաղութի, քանի որ հայերը համարվում էին Արեւելքում ֆրանսիական քաղաքակրթության ու մշակույթի տարածման ջահակիրները: Ֆրանսիացիները նաեւ սպառնացին համաձայնության չգալու դեպքում գործել առանց հայկական կողմի կարծիքը հարցնելու[30]: Պ. Նուբարը հանդիպեց նաեւ Ժ. Պիկոյի հետ եւ նշեց, որ հայերն անկայուն խոստումներով չեն բավարարվի եւ կամավորագրությունը խրախուսելու համար անհրաժեշտ է ինքնավարություն խոստանալ: Պիկոն պատասխանեց, որ Հայաստանին ամենալայն ինքնավարություն կտրվի[31]:

Այդպիսով, դեռեւս լեգեոնը չկազմավորած Ֆրանսիան արդեն սկսել էր խախտել ձեռք բերված համաձայնությունները, իսկ Հայ ազգային պատվիրակությունը ստիպված էր համակերպվել եւ բավարարվել միայն խոստումներով:

1916 թ. նոյեմբերի 30-ին Կիպրոս մեկնեց հայ կամավորների առաջին խումբը: Կամավորները կենտրոնացվեցին Ֆամագուստայից մոտ 30 կմ հյուսիս գտնվող Մոնարկա բնակավայրում: Առաջին գումարտակը կազմավորվեց դեկտեմբերին՝ 600 մուսալեռցիներից ու 300 եգիպտահայերից: Մարտին նրանց միացան 236 հայ ռազմագերիներ, որոնք Միջագետքից Հնդկաստան էին տարվել, ինչպես նաեւ Սինայում գերված մի քանի խումբ հայեր[32]: Անգլիայի՝ Հնդկաստանի գործերով նախարարությունը 1916 թ. հոկտեմբերի 24-ին տվել էր իր համաձայնությունը, որպեսզի Հնդկաստանում ներկայված հայ ռազմագերիները միանային Արեւելյան լեգեոնին[33]:

Կամավորագրությանն աջակցելու նպատակով եգիպտահայ բոլոր հասարակական, քաղաքական ու կրոնական կազմակերպությունները միավորվեցին Ազգային միության մեջ՝ ցուցաբերելով ազգային համերաշխության գեղեցիկ օրինակ: Ազգային միությունը որոշեց ԱՄՆ ուղարկել պատվիրակություն, որպեսզի այնտեղ եւս համաձայնություն ստեղծեն հայկական կազմակերպությունների միջեւ ու խրախուսեն ամերիկահայերի կամավորագրությունը:

1917 թ. հունվարին եգիպտահայ պատվիրակներ Միհրան Տամատյանը (ռամկավար), Արտաշես Հանմյանը (դաշնակցական) եւ Ստեփանոս Սապահ-Գուլյանը (հնչակյան) հասան Փարիզ: Պ. Նուբարը նրանց ներկայացրեց Ֆրանսիայի ԱԳՆ Արեւելյան գործերի գրասենյակի պետ Ժ. Գուին, որը խոստացավ հանձնարարագրեր ուղարկել ԱՄՆ-ի ֆրանսիական հյուպատոսներին՝ աջակցելու հայ պատվիրակներին[34]:

---

30 Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918, pp. 411-418.

31 Նույն տեղում, էջ 422-424:

32 **Գ. Լազեան**, Հայաստան եւ Հայ Դատը (վաւերագրեր), Կահիրէ, 1946, էջ 191:

33 **Տ. Սարուխանյան**, նշվ. աշխ., էջ 67:

34 **Մ. Տամատեան**, նշվ. աշխ., էջ 106:

Պատվիրակներին մեծ ընդունելություն ցույց տվեցին Նյու Յորքի հայերը: Նրանք անմիջապես հանդիպման գնացին Նյու Յորքի ֆրանսիական հյուպատոսի մոտ: Վերջինս տեղեկացրեց, որ պատգամավորներին ցանկանում է տեսնել ֆրանսիական դեսպան Ժյուլպտանը: Վաշինգտոնում ֆրանսիական դեսպանը պատգամավորներին հայտնեց, որ տեղյակ է Ֆրանսիայի ԱԳՆ եւ հայերի պայմանավորվածության մասին, որ ԱՄՆ-ում կամավորներ հավաքագրեն: Բայց դեսպանը նշեց, որ ֆրանսիական բանակի համար կամավորներ հավաքագրելը տվյալ պահին սխալ քայլ է, քանի որ կարող է գրգռել ամերիկացիներին: Նա խորհուրդ տվեց դա անել խիստ գաղտնիության պայմաններում, մինչեւ որ ԱՄՆ-ը պատերազմ կհայտարարեր Գերմանիային, որից հետո ազատորեն կկարողանային կամավորներ հավաքել: Դեսպանը խորհուրդ տվեց որոշ ժամանակ սպասել եւ այդ ընթացքում մեկ մարմնի շուրջ համախմբել բոլոր հայերին: Հայ պատվիրակները թեեւ բավական հիասթափվեցին այդ հրահանգներից, բայց խոստացան հետեւել դրանց[35]:

1917 թ. մարտի 16-ին ԱՄՆ-ում եւս ստեղծվեց Ազգային միություն, որը կամավորագրության կոչով դիմեց ամերիկահայությանը: Մի քանի օրում ցուցակագրվեց 5000 երիտասարդ, որոնց թիվը հետագայում կրկնապատկվեց: Սակայն փոխադրամիջոցների պակասի պատճառով 1917 թ. հունիս-նոյեմբեր ամիսներին կարողացան փոխադրել միայն 1200 կամավորների[36] (ըստ Գ. Լազյանի՝ 1600-1700)[37]: Նյու Յորքում հավաքված հազարավոր կամավորներին փոխադրելու համար Ֆրանսիան տրամադրել էր միայն մեկ բեռնատար նավ, որը կարող էր տեղափոխել շաբաթը 70-80 կամավորների: Չնայած Ազգային միությունը եւ Ազգային պատվիրակությունը բազմիցս դիմեցին ԱՄՆ-ում ֆրանսիական դեսպանին եւ Ֆրանսիայի ԱԳՆ-ին, որպեսզի ռազմական փոխադրանավ տրամադրվի, սակայն որեւէ արձագանք չստացան: Նման պայմաններում 4 ամսվա ընթացքում միայն 1200 կամավորների կարողացան ուղարկել Ֆրանսիա[38]:

Ինչպես տեսնում ենք, ֆրանսիական կառավարությունը զլացավ նույնիսկ ռազմական նավեր տրամադրել, որպեսզի հայ կամավորները մեկնեին կռվելու ֆրանսիական դրոշի տակ: Հոգնելով սպասելուց՝ 1918 թ. սկզբներին մոտ 4000 ամերիկահայեր զինվորագրվեցին ԱՄՆ բանակին: 1918 թ. մարտի 15-ին Պ. Նուբարը նամակով խնդրեց Ֆրանսիայի արտգործնախարարի միջնորդությունը, որպեսզի ԱՄՆ բանակի հայ կամավորները միացվեին Արեւելյան լեգեոնին[39]:

Կամավորագրության կոչին արձագանքեցին նաեւ արգենտինահայերը, որոնք մոտ 150 կամավորներ ուղարկեցին Ֆրանսիա՝ լեգեոնին միանալու համար[40]:

Ֆրանսիայի Բորդո նավահանգստից կամավորներին գնացքով տեղափոխում էին Մարսել, այնտեղից՝ նավերով Պորտ Սայիդ, ապա՝ Կիպրոս: Այդ նավարկությունը վտանգներով լեցուն էր, քանի որ գերմանական սուզանավերը Ատլանտյան օվկիանոսում ու Միջերկրական ծովում հարվածում ու խորտակում էին հակառակորդ երկրների նավերը: Հայ

---

35 **Մ. Տամատեան**, նշվ. աշխ., էջ 108-110:
36 **Շ. Թորոսյան,** Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920, Երեւան, 1987, էջ 65:
37 **Գ. Լազեան**, նշվ. աշխ., էջ 191:
38 **Մ. Տամատեան**, նշվ. աշխ., էջ 115:
39 **Ա. Գարամանուկեան**, նշվ. աշխ., էջ 77:
40 **Է. Մելքոնյան**, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն, Երեւան, 2005, էջ 506:

կամավորներին փեղափոխող նավերից «Ադմիրալ Օրլին» 1917թ. օգոստոսի 29-ին հունական Միլա կղզու մոտ ենթարկվեց գերմանական սուզանավի հարձակմանը եւ խորտակվեց: Բարեբախտաբար, օգնության հասած անգլիական նավին հաջողվեց կամավորներին անկորուստ հասցնել Միլա կղզի: Այնտեղից ամերիկահայերը մեծ զրկանքներով փասնօրյա նավարկությունից հետո հասան Պորտ Սայիդ: Նրանց փեղափոխեց ֆրանսիական «Դեսեքս» ռազմանավը, որը մասնակցել էր մուսալեռցիների փրկությանը[41]:

Ամերիկահայ կամավորներից Կիպրոսում կազմավորվեց երկրորդ գումարտակը: Երրորդ գումարտակը եւս կազմավորվեց Կիպրոսում 1917 թ. վերջերին՝ Պաղեստինում անգլիացիներին անձնատուր եղած հայ ռազմագերիներից[42]: 1917 թ. մայիսին Ֆրանսիայի ռազմական նախարարը Արտասահմանյան լեգեոնի հայ եւ սիրիացի կամավորներին թույլ փվեց փեղափոխվել Արեւելյան լեգեոն[43]:

Կիպրոսում մարզվելու ընթացքում հայ լեգեոներները պարեկում էին Հռոդոսից մոտ 40 կմ հեռու գտնվող Քասթելորիզո կղզում: Այն թուրքական ափից հեռու էր 1500 մետր: Այդ փեղի ամրությունները պաշտպանում էին Հայկական լեգեոնի եւ ֆրանսիացի ծովայինների մեկական վաշտ[44]: Այստեղից հայ մարտիկները նաեւ մի շարք հաջող դիվերսիոն գործողություններ իրականացրին թուրքերի ծովափնյա հենակետերի դեմ:

1917 թ. հուլիսին ֆրանսիական գեներալ Բայոն փեսչական այց կատարեց Արեւելյան լեգեոն, որն այդ պահին ուներ 6 հայկական եւ 1 սիրիական վաշտ՝ յուրաքանչյուրը 200 զինվոր: Գեներալը սփոփեց լեգեոնի մարտունակությունն ու կարգապահությունը եւ գոհ մնաց: Բայոն իր փեղեկագրում, սակայն, նշեց այդ փոքրաթիվ կամավորների օգտագործման անհնարինությունը լավ պաշտպանված Կիլիկիայի ու Սիրիայի ուղղությամբ, առաջարկեց մեծացնել կամավորների թիվը եւ օգտագործել Պաղեստինի ուղղությամբ հարձակման ընթացքում:

1917 թ. նոյեմբերի 23-ին Պ. Նուբարը եւ ռամկավար գործիչ, ճանաչված գրող Վ. Թեքեյանը հանդիպեցին Ֆրանսիայի ԱԳՆ քաղաքական փնօրենին, իրենց դժգոհությունը հայտնեցին Բայոի առաջարկի կապակցությամբ եւ պահանջեցին լեգեոնն օգտագործել միայն Կիլիկիայում կամ Սիրիայի հյուսիսում: Նրանք կրկին բարձրացրին պատերազմից հետո Հայաստանին ինքնավարություն շնորհելու վերաբերյալ ֆրանսիական կառավարության կողմից հայտարարություն կատարելու անհրաժեշտությունը: Նախարարին ուղարկած զեկուցագրում քաղաքական փնօրենը եւս նշեց նման հայտարարության անհրաժեշտությունը, որպեսզի խուսափեին Անգլիայի դավերից, որը ձգտում էր չեզոքացնել 1916 թ. Սայքս-Պիկոյի համաձայնագիրը[45]:

Սակայն ֆրանսիական կառավարությունը այդպես էլ պաշտոնապես չհայտարարեց Հայաստանին ինքնավարություն տալու պատրաստակամության մասին, իսկ ռազմական նախարարի 1918 թ. մարտի 23-ի հրամանով Արեւելյան լեգեոնը դուրս բերվեց ծովային ուժերի կազմից եւ դրվեց Պաղեստինի ֆրանսիական զորախմբի տրամադրության տակ[46]:

---

41 **Մ. Թաթարեան,** Կամաւորի մը յուշերը, Անթիլիաս, 1960, էջ 10-12:
42 **Գ. Լազեան,** նշվ. աշխ., էջ 191:
43 **Ա. Գարամանուկեան**, նշվ. աշխ., էջ 81:
44 **Շ.-Տ. Թեքեյան**, նշվ. աշխ., էջ 65:
45 **Ա. Գարամանուկյան**, նշվ. աշխ., էջ 74-76:
46 Նույն փեղում, էջ 77:

1918 թ. ապրիլ-մայիս ամիսներին Կիպրոսից առաջին եւ երկրորդ գումարտակները տեղափոխվեցին Պորտ Սայիդ եւ զորավարժություններ կատարեցին Իսմայիլիեի ու Մեճելեի մեջ՝ Սուեզի ջրանցքի մոտակայքում: Եգիպտոսում անգլո-ֆրանսիական զորքերի ընդհանուր հրամանատար անգլիական գեներալ Ալենբին բարձր գնահատեց լեգեոնի մարտունակությունը[47]:

Պորտ Սայիդից լեգեոնը Քանթարա-Ռամլե-Լյուդ ուղիով մեկնեց Պաղեստինյան ռազմաճակատ: 1918 թ. օգոստոսի 30-ին Արեւելյան լեգեոնը դիրքեր գրավեց Ռաֆաթ-Արարայի բարձունքների մոտ: Նրա դիմաց կանգնած էին գերմանական 701-րդ եւ 702-րդ գումարտակները[48]:

Այս շրջանում անգլո-ֆրանսիական եւ թուրք-գերմանական բանակների շփման գիծն անցնում էր Երուսաղեմ ու Նաբլուս քաղաքների միջեւ ընկած շրջանով եւ ձգվում էր Հորդանան գետից մինչեւ Միջերկրական ծով: Դեռեւս 1918թ. մարտ-ապրիլ ամիսներին անգլիական զորքերը երկու անգամ փորձել էին ճեղքել հակառակորդի պաշտպանությունը եւ շարժվել հյուսիս, բայց անհաջողություն էին կրել: Դրանից հետո կողմերի միջեւ հարաբերական անդորր էր հաստատվել, եւ նրանք զբաղված էին ուժերը վերադասավորելով:

Անգլո-ֆրանսիական կողմը, խոշոր համալրումներ սպանալով, այս ճակատում կենտրոնացրեց 70000 զինվոր, 540 հրանոթ եւ ինքնաթիռներ: Այդ ուժերի դեմ կանգնած էր գերմանական գեներալ Լիման ֆոն Սանդերսի ղեկավարած «Յըլդըրըմ» (կայծակ) 30000-անոց զորամիավորումը, որի մեջ էին թուրքական 7-րդ, 8-րդ բանակները, 2-րդ բանակի մի մասը եւ գերմանական 7000-անոց մի զորամաս: Թուրքերը կրկնակի պակաս հրետանի ունեին: Թուրք-գերմանական հրամանատարությունը հույս ուներ կառչել Սամարիայի լեռնային բնական ու արհեստական ամրություններից եւ կասեցնել հակառակորդին[49]: Թուրքիայի ռազմական նախարար Էնվերը պաշտպանական այդ հզոր գծի հետ մեծ հույսեր էր կապում եւ այն անվանում էր երկրորդ Դարդանել[50]: Նա կարծում էր, որ այդտեղ եւս կկարողանան կասեցնել հակառակորդի մեծաթիվ ուժերին ինչպես Դարդանելի օպերացիայի ժամանակ:

1918 թ. սեպտեմբերի կեսերին որոշվեց ընդհանուր հարձակում սկսել Պաղեստինյան ռազմաճակատում: Հայկական լեգեոնը հանձնարարություն սպացավ գրոհել Ռաֆաթ-Արարայի բարձունքը, որը ռազմաճակատի ամենաուժվար ու գրեթե անառիկ հատվածն էր: Մինչ այդ անգլո-ֆրանսիական զորքերը երեք անգամ փորձել էին գրավել այդ դիրքերը, բայց թշնամին եփ էր շպրտել նրանց[51]: Անգլո-ֆրանսիական հրամանատարությունը մեծ կարեւորություն էր տալիս այդ բարձունքների գրավմանը, քանի որ ցանկանում էր հակառակորդի ուշադրությունը սեւեռել այդ հատվածի վրա, ապա հեծելազորով սրընթաց առաջանալ ծովափնյա Սարոնի դաշտավայրով:

Հայկական լեգեոնի աջ թեւում կանգնած էին ալժիրյան, իսկ ձախ թեւում՝ հնդկական զորամասերը: 1918 թ. սեպտեմբերի 18-ի երեկոյան լեգեոնի երկրորդ գումարտակը հրաման

---

47 **Գ. Լազեան,** նշվ. աշխ., էջ 192:

48 Նույն տեղում:

49 **Շ. Թորոսյան**, նշվ. աշխ., էջ 66-67:

50 Կամաւորը (Արարայի յաղթանակի 10-րդ տարեդարձի առթիւ), հրատարակութիւն Կահիրէի Հայ Լեգէոնական Միութեան, Կահիրէ, 1928, էջ 34:

51 **Խ. Աճեմեան**, Հայկական լեգէոնը, «Համազգային»-ի տարեգիրք, Բէյրութ 1953, էջ 73:

սպացավ նախապատրաստվել հաջորդ օրվա գրոհին, որը փաստորեն առաջին լուրջ մարտական մկրտությունն էր լինելու հայ կամավորների համար: Լեգեոնի առաջին գումարտակը պահեստային ուժերի մեջ էր մնալու[52]:

Հետաքրքիր է, որ թուրքերի վրա հոգեբանական ճնշում գործադրելու նպատակով հարձակման նախօրյակին անգլիական ինքնաթիռը թշնամու թիկունքում թռուցիկներ տարածեց, ուր գրված էր, որ նրանց դեմ կանգնած է հայկական 60000-ոց բանակ[53]:

1918 թ. սեպտեմբերի 18-ին երեկոյան ժամը 9-ից անգլո-ֆրանսիական ուժերը մոտ երկու ժամ հրետակոծեցին հակառակորդի դիրքերը: Իսկ սեպտեմբերի 19-ի արշալույսին սկսվեց ընդհանուր հարձակումը: Հայկական լեգեոնը մի քանի ժամ պետած համառ մարտերից հետո կարողացավ թուրքերին դուրս շպրտել առաջավոր դիրքերից: Շարունակելով հաջող հարձակումը՝ հայ զինվորները գրավեցին նաեւ պաշտպանական երկրորդ եւ երրորդ գծերը: Թուրքերը փորձեցին հակագրոհ կազմակերպել, բայց հայ զինվորները կասեցրին թշնամու համառ գրոհները[54]:

Հայկական լեգեոնի հաջողությունը նպաստեց անգլո-ֆրանսիական ուժերի հաղթանակին: Արաբայի ճակատամարտից հետո թուրքերն այլեւս կազմակերպված դիմադրություն չկարողացան ցույց տալ, եւ նրանց ողջ ռազմաճակատը քայքայվեց:

Արեւելքում անգլո-ֆրանսիական զորքերի գլխավոր հրամանատար Ալենբին բարձր գնահատեց հայ կամավորների սխրանքը: Հոկտեմբերի 12-ին Պ. Նուբարին ուղարկած հեռագրում ֆելդմարշալը նշում էր. «Հպարտ եմ, որ իմ հրամանատարության տակ ունեմ հայկական զորամաս: Հայերը փայլուն կերպով կռվեցին եւ մեծ մասնակցություն ունեցան իմ հաղթանակում»[55]: Իսկ Եգիպտոսի Հայ ազգային միության ուղարկած շնորհավորանքներին Ալենբին պատասխանեց. «...հպարտ եմ այն իրողությամբ, որ Արեւելյան Լեգեոնի ձեր հայրենակիցները գործոն բաժին մը վերցուցին կռվին մեջ եւ մասնակից եղան մեր հաղթանակին»[56]:

Հայ լեգեոնականներն Արաբայի ճակատամարտում տվեցին 23 սպանված եւ 76 վիրավոր: Զոհվածների աճյունները թաղվեցին Ռաֆաթ գյուղի մոտ՝ եղբայրական գերեզմանում: Հետագայում Արաբայում զոհված հերոսների աճյունները Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի գործոն աջակցությամբ տեղափոխվեցին Երուսաղեմ, որտեղ Սիոն լեռան վրա 1927թ. ապրիլի 24-ին ՌԱԿ-ի Կահիրեի շրջանային վարչության նախաձեռնությամբ հուշարձան կանգնեցվեց հայ լեգեոնականների պատվին:

Լեգեոնը Արաբայից շարժվեց հյուսիս եւ 1918 թ. հոկտեմբերի 1-ին մտավ Դամասկոս, 6-ին՝ Բեյրութ, 26-ին՝ Հալեպ: Հոկտեմբերի 6-ին Կիպրոսից Բեյրութ հասավ նաեւ երրորդ գումարտակը: Բեյրութում մեծ թվով դիմումներ եղան կամավորագրվելու Արեւելյան լեգեոնին, եւ այնտեղ 800 հայ կամավորներից կազմավորվեց չորրորդ գումարտակը[57]: 1918 թ. հոկտեմբերից լեգեոնը մտավ Արեւելքի ֆրանսիական զորախմբի կազմի մեջ:

---

52 **Գ. Լազեան**, նշվ. աշխ., էջ 192:
53 **Մ. Թաթարյան**, նշվ. աշխ., էջ 15:
54 Նամատրը, էջ 42-43:
55 ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 131, թ. 14:
56 **Մ. Տամատեան**, նշվ. աշխ., էջ 123:
57 **Գ. Լազեան**, նշվ. աշխ., էջ 192:

Սիրիայում հայ զինվորները հանդիպեցին հայրենիք վերադարձող հազարավոր գաղթական հայերի, որոնք չափազանց թշվառ վիճակում էին: Տարագիրները, մոռանալով իրենց ծանր վիճակը, մեծ ցնծություն ապրեցին հաղթող բանակի շարքում տեսնելով հայ կամավորներին[58]:

Պատերազմում Թուրքիայի պարտությունն ակնհայտ էր, եւ 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում ստորագրված զինադադարով թուրքերը անձնատվության ենթարկվեցին:

Զինադադարից հետո առաջին գումարտակն ուղարկվեց Ալեքսանդրետ: Դեկտեմբերի 16-ին երկրորդ եւ երրորդ գումարտակները Բեյրութից մեկնեցին Մերսին: Մի քանի օրից չորրորդ գումարտակն ուղարկվեց Ալեքսանդրետ, իսկ Առաջինը շարժվեց ավելի հյուսիս[59]:

Ադանայում աքսորից նոր վերադարձած հայ բնակչությունը ցնծությամբ դիմավորեց լեգեոնականների մուտքը քաղաք: Կիլիկիայի ազատագրումը կատարվեց հիմնականում Հայկական լեգեոնի ուժերով: Միայն 1919 թ. փետրվարին Կիլիկիա մտան անգլիական զորքեր, որոնք ֆրանսիականով փոխարինվեցին նոյեմբերին: 1919 թ. մայիսի 28-ին Մերսինում ափ դուրս եկած 250 աֆրիկացի զինվորները առաջին ֆրանսիական զինվորներն էին Կիլիկիայում[60]:

Մուդրոսի զինադադարից հետո թե լեգեոնի հայ սպաների, թե՛ Պ. Նուբարի կողմից դիմումներ եղան լեգեոնը կոչելու «Հայկական» եւ վերանայելու լեգեոնի կանոնադրությունը: Հայաստանի եւ Սիրիայի ֆրանսիական բարձրագույն կոմիսար Ժորժ Պիկոն եւս համաձայնություն տվեց Արեւելյան լեգեոնը բաժանելու հայկական եւ սիրիական մասերի: 1919 թ. հունվարի 18-ին ռազմական նախարարի հրամանով կազմավորվեց Հայկական լեգեոնը[61]: Բաժանումից առաջ Արեւելյան լեգեոնն ուներ հետեւյալ պատկերը. հայկական 4 գումարտակներ՝ 4124 զինվորներով եւ սիրիական մեկ գումարտակ՝ 698 զինվորով[62]:

Հայկական լեգեոնի պաշտպանության ներքո Կիլիկիայի հայերը վերադարձան իրենց քանդված օջախները եւ նոր կյանք սկսեցին: Հետագայում հայ լեգեոներները կարեւոր դերակատարություն ունեցան քեմալական թուրքերի դեմ կիլիկիահայերի մղած ինքնապաշտպանական մարտերում:

Չնայած Հայկական լեգեոնը ի վերջո լուծարվեց, եւ Ֆրանսիան ոչ միայն ինքնավարություն չտվեց Կիլիկիային, այլեւ 1921թ. ուխտադրժորեն այն հանձնեց թուրքերին, սակայն Հայկական լեգեոնի ստեղծումը դրական երեւույթ էր, քանի որ նրա շնորհիվ հազարավոր հայեր փրկվեցին թուրքական յաթաղանից, իսկ հայերը մեկ անգամ եւս աշխարհին ներկայացան որպես կռվող ու գոյատեւելու ընդունակ ժողովուրդ:

---

58 **Մ Թաթարյան**, նշվ. աշխ., էջ 20-21:
59 **Գ. Լազյան,** նշվ. աշխ., էջ 192:
60 Նույն տեղում, էջ 193:
61 **Ա Գարամանուկեան**, նշվ. աշխ., էջ 83:
62 Նույն տեղում, էջ 44:

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Այնքան հայոց արյուն գնաց՝ արյուն մանկանց ու կրծքի,
Որ քիչ մնաց մանուշակն էլ դաշտում փոխվեր ալ կակաչի.
Մանուշակներն այն օրվանից թաքնվում են թփերի տակ,
Կարծում են թե լուսնի մահիկն էլի թուրն է հայոց դահճի:
Հ. Շիրազ

1.

Խորհրդային ժամանակների առաջին բանաստեղծը, որ Չարենցից հետո նպատակասլացորեն արծարծել է հայոց Մեծ եղեռնի թեման եւ գեղարվեստական հզոր պատկերներով կարողացել է հասկանալի դարձնել հայ մարդու հոգուն ու մտքին, անկասկած Հովհաննես Շիրազն է: Նա հայ դասական բանաստեղծության ավանդներով սնված բնաբուխ մեծ բանաստեղծ էր: Բնություն, սեր, հայրենիք, ժողովուրդ, մայր, հայր, ընկեր, համամարդկային խոհ. ավանդական քնարերգական այս թեմաները «ոչ քնարական» ժամանակներում նա արծարծեց նոր մոտեցումով՝ գեղարվեստական պատկերի մեջ ներառելով ժամանակին ու խորհրդային պարտադրանքներին անհարիր հանդուգն հարցադրումներ, ստեղծագործելով ավելի քան կես դար՝ նա դարձավ հայության մեծ ողբերգության, նրա համազգային իղձերի ու ձգտումների արտահայտիչը: Եւ քանի որ նման հանդգնությունն անպատիժ չէր մնում՝ Չարենցի, Բակունցի, Մահարու, Զ. Եսայանի, Վ. Թոթովենցի եւ ստալինյան դարաշրջանի բռնարարքներին զոհ դարձած բազմաթիվ ազնիվ մտավորականների օրինակով, ապա սկզբնական շրջանում պետք էր հայտնաբերել ու կիրառել զգացմունքների ու գաղափարների արտահայտման համեմատաբար «անվտանգ» եղանակներ ու միջոցներ եւ գործել ժամանակի արձագանքին համապատասխան: Սակայն դա քիչ է խանգարել, որ հայության հանդեպ թույլ տրված պատմական անարդարության դեմ Հովհ. Շիրազի ազնիվ բանաստեղծական ընդվզումն ունենար զարգացման բնական ու հետաքրքիր ընթացք՝ մեղմ արտահայտչաձեւերից հասնելով մինչեւ գրական բացահայտ ընդդիմության եւ բուռն ու հախուռն ռոմանտիկական ընդվզման, որը նրա՝ որպես քաղաքացի քնարերգու բանաստեղծի բուն պարերքն էր: Միլիոնավոր զոհերի ու կորցրած հայրենիքի ողբերգության խոր զգացողությամբ, լավագույն ապագայի բուռն մղումով, ազգային երազանքների եւ հույսերի իրականացման տեսլականով նա խորհրդային պետական գաղափարախոսության պայմաններում հանդգնեց մաքառել հանուն հայության ազգային ինքնաճանաչման, նրա ոտնահարված իրավունքների ու արժանապատվության վերականգնման, կարողացավ կազմակերպել ու նպատակամղել հայ սերունդների հոգեբանությունը, մտածողությունն ու մարդկային նկարագիրը:

Առաջին հանդուգն լուրջ քայլը նա իրագործեց 1935 թ.՝ «Գարնանամուտից» անմիջապես հետո՝ Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու Բրոց» գրքում բերված ժողովրդական ավանդազրույցի հիման վրա գրելով եւ նույն տարում հրատարակելով «Սիամանթո եւ Խաջեզարե» պոեմի առաջին տարբերակը: Սա, անշուշտ, պայմանավորված էր նախ՝ Վ. Շիրազի բանաստեղծական մտածողության՝ դեպի ժողովրդական քնարերգություն հակվածությամբ եւ 30-ական թթ. ոչ քնարական մթնոլորտին ու ճառային, «փեխնիցիստական» բանաստեղծությանը հակադրվելու բացահայտ միտումով: Սա մեքենաներից, բետոնից, պողպատից ու անիվից դեպի մարդը վերադարձի, նրա հույզերն ու զգացմունքները պատկերելու՝ դեռ «էպիկական լուսաբացից» եկող չարենցյան պատգամախոսության շիրազյան բանաձեւն էր. ուղենիշ՝ իր եւ բանաստեղծական նոր սերնդի համար:

Երկրորդ՝ այդ ավանդազրույցի դիպաշարը հնարավորություն էր տալիս պոեմի՝ բուռն սեր ապրող հերոսների ներաշխարհի բացահայտման ու նրանց՝ կործանիչ ողբերգության մղող գործողության միջավայրի պատկերումով արծարծելու թշնամու կողմից բռնազավթված Վասպուրական աշխարհի ու նրա հետ միասին ողջ պատմական հարենիքի՝ Արեւմտյան Հայաստանի թեման (Սիփան սարը, Ծովասարը՝ Մասիսի պես դյութական, Վանա ծովի ափին զարկված վրաններն են հայկական)՝ հիշեցնելով Եղեռնից մազապուրծ, իրենց հարազատներին կորցրած, հայրենի բնօրրանը հարկադիր բռնությամբ լքած, փուն-փեղ կորցրած, աշխարհով մեկ ցրված ու սփյուռք դարձած արեւմտահայ գաղթականության, ինչպես նաեւ հայության նոր սերունդների գիտակցության մեջ ամրակայելով պատմական հայրենիքի հիշողությունն ու փայփայելով այն վերադարձնելու հույսը:

Կար եւ երրորդ խնդիրը: Հայտնի է, որ միլիոնավոր հայերի հետ 1915 թ. Մեծ եղեռնի զոհ դարձած բանաստեղծ Ափոմ Յարճանյան–Սիամանթոն, որ նախապես իրեն Ափոմ Միրզա էր կոչում, նույն այդ ավանդազրույցի՝ Սիփան սարի հայ հովիվ Սիամանթոյից է վերցրել իր գրական անունը, որը նույնպես անմիջական առնչություն ուներ Եղեռնի իրողության հետ: Հիմա՝ նորագույն ժամանակներում արգելված, մոռացության դատապարտված Սիամանթոյի եւ նրա հետ միասին Մեծ եղեռնի զոհեր Գր. Զոհրապի, Դ. Վարուժանի, Ռ. Սեւակի եւ ուրիշների անունները հաճախ էին հոլովվում Վ. Շիրազի պոեմի հերոսի շնորհիվ:

Նախնական տարբերակով 1000 տողանոց այդ պոեմը հետագա տասնամյակներում մի քանի լրամշակումներով ընդարձակվել է՝ ծավալվելով ներմուծված նպատակային երգբանաստեղծությունների («Մնաք բարով, իմ հայր Սիփան», «Հիմա ո՞վ է ձեզ համբուրում» եւ այլն) եւ հեղինակային խոսքի նույնքան նպատակային խորացում – խտացումների շնորհիվ[1]:

Արդեն 1938 թ. նա պոեմում հավելել էր Սիամանթոյի հրաժեշտի երգը.

Մնաք բարով, իմ հայր Սիփան
Եւ դու՝ իմ մայր Վանա ծով,
Ուր էլ լինեմ՝ ձեզ հավիտյան
Չեմ մոռանա իմ լացով…
Մնաս բարով եւ դու, իմ սեր,
Բայց թող հայրդ իմանա՝
Ինչ էլ լինի ես կգամ դեռ,-
Քաջն անմուրազ չի մնա…[2]

---

1 Այլ առիթով դա ցույց կտանք՝ երկի ստեղծագործական պատմությունը ներկայացնելով:
2 Տողում ընդգծված ***քաջ*** բառն էլ հետագայում փոխվել է, դարձել ***Հայն անմուրազ չի մնա*** - Ս. Մ.:

Համեմատաբար «անվտանգ» մյուս միջոցը այլաբանությունն էր, որի տարատեսակներից մեկը՝ մետաֆոր-փոխաբերությթը, բանաստեղծը հարկադրված էր հաճախակի գործածել: 1930-ական թթ. «խոսքի ազատության» խորհրդային պայմաններում, երբ արգելվեցին հայ դասական ու Եղեռնի նահատակ գրողների ստեղծագործությունները, եւ գնդակահարվեցին, բանտարկվեցին կամ աքսորվեցին վերը հիշված՝ ազգային ոսկոր ու մտածողություն ունեցող գրողները, իրենց խուզարկու հայացքներով պատրաստ կանգնած էին Չարենցի ու Բակունցի թշնամիներն ու ժամանակի ազնիվ մարդկանց դեմ առանձնահատուկ չարությամբ տրամադրված մարտնչող սեւ ասպետները՝ պետականորեն հովանավորվող, պետությանը «հավատարիմ» գրողի ու քննադատի հանգամանքով, որոնց աչալրջությունից չէր վրիպում ոչինչ: Այս պատճառով էլ որեւէ գրողի ամեն հանդուգն խոսք պիտի ուղեկցվեր խորհրդային կարգերին, Լենինին ու մանավանդ Ստալինին ուղղված պարտադիր փառաբանական ձոներգերով ու հավատարմության երդումներով, առանց որոնց ազգային ու հոգեւոր որեւէ խնդրի վերհուշն անգամ պիտի դատապարտվեր որպես նացիոնալիզմ-ազգայնամոլության արտահայտություն՝ աննկանխատեսելի եւ վտանգավոր հետեւանքներով, հալածանքների պիտի ենթարկվեին մտավորականները, գրողները, հայ առաքելական եկեղեցին ու հոգեւոր գործիչները, ժամանակի քանոնով ու կարկինով գծված շրջանակներից դուրս նայել փորձող բոլոր ազնիվ մարդիկ:

Մյուս բանաստեղծների համեմատությամբ՝ դասական ավանդներով սնված ռոմանտիկ խառնվածքով Հովհ. Շիրազը մի էական առավելություն ուներ. նա իր հույսն էր դարփոում, միամիտ հավատով կարծում էր, թե այնքա~ն է արդարամիտ «ժողովուրդների հայր» հորջորջված «պողպատե առաջնորդը», որ ցանկության դեպքում կարող է լուծել մինչեւ անգամ հայկական հարցը՝ վերադարձնելով իր իսկ ձեռքով Թուրքիային ու Ադրբեջանին նվիրաբերած Արեւմտյան Հայաստանը, Արցախն ու Նախիջեւանը: Չարենցյան սերնդի եւ մյուս գրողների ու մտավորականների գլխապտույտից հետո աշխուժացած, գրական շնորհքից հիմնականում զուրկ, սիրողական մակարդակից մազաչափ անգամ չբարձրացող կույր կամ կիսակույր եւ կիսագրագետ աշուղների, այսպես կոչված բանվոր գրողների ինքնանպատակ ու շինծու ձոներգերում անկարելի է տեսնել ազգային խնդրի, հայության ողբերգության կամ ազգային երազանքի որեւէ արտահայտություն: Քիչ չեն նաեւ Ստալինին նվիրված շիրազյան ձոներգերը, սակայն սրանք նախ առանձնանում են արվեստով. բոլոր դեպքերում հզոր փաղանդով օժտված անհատականության պատկերավոր խոսք էին. սրանց մեջ գրեթե միշտ քաղաքացիական արիությամբ ընդգծվում էր անչափ կարեւոր մի գաղափար, որ բացակայում էր մյուսների համաբնույթ ձոներգերում.

Դու հայրենիք տվիր հային, որ դրախտ է աչքիս թվում,
Դու չես թողնի՝ մեր Արարատ սարն էլ պանդուխտ մնա հեռվում…

Մի հետաքրքիր օրինաչափություն եւս: Այն գաղափարները, որ Հ. Շիրազը 30 - ական թթ. եւ 1940 թ. հրապարակած «Երգ Հայաստանի» գրքի որոշ բանաստեղծություններում նախապես արտահայտել էր կիսաշշուկ, այլաբանությամբ շղարշված կամ հնարագետի խնամքով թաքցրած, հետագա վերամշակումներում դարձրել է բացահայտ, թեեւ այդ վերամշակումներից ոչ միշտ են շահել նախաստեղծ բանաստեղծությունները:

2.

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Վ. Շիրազի գեղարվեստական մտածողության բարձրաթռիչ հասունության համար ստեղծվեցին որոշ նպաստավոր պայմաններ. համընդհանուր վտանգի պայմաններում պետականորեն թույլատրվել էր, որ ֆաշիզմի դեմ համախումբ պայքարի ելած խորհրդային ժողովուրդները վերհիշեն իրենց պատմական անցյալն ու մանավանդ օտար նվաճողների դեմ հայրենիքի պաշտպանության համար մղված հերոսական պայքարի՝ նոր ժամանակների համար ոգեւորիչ հայրենասիրական դրվագները. դա ավելի կարիացներ խորհրդային տարբեր ժողովուրդների զինվորներին եւ նրանց կմղեր իրական սխրանքների հանուն խորհրդային միասնական հայրենիքի: Իսկ պատերազմի ճակատներում հերոսաբար կռվող շուրջ 600 000 հայ մարտիկներին, որոնցից մոտ 400 000-ը չվերադարձան, հավատացնում էին, թե Բեռլինի գրավումից հետո ազատագրվելու են Վանը եւ ողջ Արեւմտյան Հայաստանը:

Հարաբերական այս ազատությունը խելամիտ օգտագործեցին հայ գրողները եւ ստեղծեցին պատմահայրենասիրական թեմայով լավագույն երկեր: Խորհրդային ժամանակներին բնորոշ ուրիշ՝ «անցյալի իդեալականացման» վտանգի պայմաններում Դ. Դեմիրճյանին չէր արտոնվելու գրել «Վարդանանքը», Ն. Զարյանին՝ «Արա Գեղեցիկը», Վ. Շիրազին՝ «Տիգրան Մեծի վիշտը եւ հավերժությունը», Ստ. Զորյանը չէր կարող հրատարակել 1939-ին գրած «Պապ թագավորը», չէին վերահրատարակվելու արգելված «Սամվելն» ու «Գեւորգ Մարզպետունին» եւ այլն: Բայց այդ հարաբերական ազատությունը հնարավորություն փվեց նաեւ, որ արդեն 1941 թվականից, իմանալով Բաբի Յար կոչված տեղավայրում գերմանացիների կողմից անդունդը նետված տասնյակ հազարներով խորհրդային քաղաքացիների՝ կանանց, երեխաների, ծերերի ողբերգությունը, Վ, Շիրազն սկսի գրել եւ մինչեւ իր կյանքի վերջը (14. 03. 1984) տպագրված չտեսնել իր կյանքի գլխավոր գիրքը՝ հայոց եղեռնապատումի ողջ գրականության ամենանշանակալից երկերից մեկը՝ «Հայոց դանթեականը» պոեմը[3]: Այսինքն՝ բոլորի պես Վ. Շիրազն էլ հնարավորություն սպացավ բարձրաձայն խոսելու հեռավոր ու մոտիկ անցյալի ողբերգական ու հերոսական իրադարձությունների մասին, սակայն նա կենտրոնացավ հայ իրականության վրա եւ պատկերեց հայոց Եղեռնը:

Բնականաբար, հենց այդ օրերին պիտի առաջ մղվեին, առանձնակի արժեք ձեռք բերին հայրենիքի եւ հայրենասիրության գաղափարները: Խորհրդային հայրենիքի գաղափարին զուգահեռվում էր նաեւ հայության կորուսյալ հայրենիքի եւ մեր ժողովրդի կրած ծանրագույն ողբերգության՝ Մեծ եղեռնի, ինչպես նաեւ Սփյուռքի հայության ճակատագրի խնդիրը, որին Վ. Շիրազը մոտենում էր ամենասուր բանաստեղծական զգացողությամբ: Ինքը ծնվել էր Մեծ եղեռնի օրերին, վեց տարեկանում կորցրել էր հորը, որին սպանել էին 1920 թ. Գյումրի ներխուժած թուրքերը, ինքն իր սերնդակիցների հետ միասին ճաշակել էր որբութ-

---

3 Այս մասին հանգամանորեն տե՛ս մեր «Պատմական հիշողության ճիչը» (Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմը, «Գրական հանգրվաններ», գիրք Բ, Եր., 2007), եւ «Դանթեականի երկու ընթերցում. Չարենց – Շիրազ» («Չարենցյան ընթերցումներ», գիրք 8, Եր., 2008) ուսումնասիրությունները:

յան ու անապատան մանկության բոլոր դառնությունները, որ նույն Եղեռնի ողբերգական հետեւանքն էին՝ մարդկային հոգեբանության վրա թողած անջնջելի դրոշմով: Ահա 1942 թ. գրված մի բանաստեղծություն.

Մորս աչքերն են լացել
Կոտորածներն հայկական,
Հեփքը սրտում մնացել՝
Կաթն է եղծել մայրական:

Այդ վշտից եմ դեռ գունատ
Ու նրանից, որ կարծես
Մորս կրծքից ոչ թե կաթ,
Այլ արցունք եմ ծծել ես…

Այդ վշտի մեջ էր թրծվել ապագա բանաստեղծը, անձամբ զգացել ու շուրջը տեսել էր հետեղեռնյան սերնդի կրած պառապանքները, որոնք իրենց կնիքն էին դրել նրա հետագա ողջ կյանքի վրա: Վաղ մանկությունից էր նա հասկացել հայ-թուրքական հարաբերությունների բուն էությունը, տեսել հայրենազուրկ հայ գաղթականներին, լսել նրանց պատումները՝ սահմանից այն կողմ թողած ծննդավայրի, բռնազավթված ամբողջ հայրենիքի մասին:

Արդեն նա «Սիամանթո եւ Խաջեզարե» պոեմով ուներ հայրենիքը պատմաաշխարհագրական տեղանուն - խորհրդանիշներով մարմնավորելու փորձը, որի համար էլ քիչ կշտամբանքների չի արժանացել: Այժմ՝ առանձնահատուկ սրված քաղաքական պայմաններում պատմական հիշողությունը ձեռք էր բերել առանձնակի արդիական արժեք, պատերազմի եւ միլիոնավոր զոհերի ողբերգությունը համադրվում էր հայության մոտիկ անցյալի ծանրագույն ողբերգությանը: Ուստի Վ. Շիրազի հիշյալ պոեմում եւ բանաստեղծություններում ներկան ու անցյալը պիտի կամրջվեին ու զուգադրվեին, պատերազմի միլիոնավոր զոհերին պիտի միանար նաեւ Եղեռնի զոհերի կսկիծը, վրանգի մեջ հայտնված խորհրդային միացյալ հայրենիքին պիտի համադրվեր հայոց բռնազավթված հայրենիքը, եւ հայոց Մեծ եղեռնի հիշողությունը պիտի դառնար արդիական սուր հնչողություն ունեցող պարտադրանք գեղարվեստական պատկեր՝

Թող անցյալ վերքը դասագիրք դառնա
Մանուկ ներկայի սեղանի վրա

շիրազյան բանաձեւի տրամաբանությամբ: «Բանաստեղծի ձայնը» (1942) ժողովածուի բանաստեղծություններն արդեն ունեն այդ համադրական պատկերները: Սրանց մեջ թեեւ ուղղակիորեն չեն մատնանշվում, սակայն հստակորեն նկատվում են Եղեռնի հետեւանքների ընդգծումները: Հայրենիքի գիտակցությունը Վ. Շիրազի համար չի ենթադրում միմիայն Խորհրդային Հայաստանի՝ մեզ պարտադրված սահմաններ. այն «մեր հայրենիք» հասկացության՝ Վ. Շիրազի ժամանակակիցներից միանգամայն տարբեր ըմբռնում էր բերում: Ահա ինչու «Ո՞րն է, բաբո՛, մեր հայրենիք» բանաստեղծությունը մի ուրույն կոթող է՝ հայ սերունդներին ու աշխարհին հայ մարդու հայրենիքի մասին լիակատար պատկերացում տալու իմաստով:

Եղեռնի հեպեւանքով է հայության հայրենիքը մասնատվել ու չարի ձեռքով նվիրաբերվել արյունռուշտ թշնամուն: Մինչդեռ հայի պատմական հիշողության ու արդիական գիտակցության մեջ այն դեռեւս ամբողջական է՝ «հավքերն՝ աշուղ, ջրերը՝ սազ» Արագածի, «մազերն արձակ ու գեղանի, նստած հարսի» նմանվող Սեւանի, «աշխարհի թագ, քանց թագավոր ճերմակ Մասիսի», Արաքսի ու Տղմուտի ափերին մեր պապերի «մամոռոտ ու մութ» գերեզմանների տեսքով: Եւ կարեւորն այն է, որ բանաստեղծը համարձակ արտահայտում է ժողովուրդների եղբայրության ուժով հայության հայրենիքի միասնականացման գաղափարը՝ հատկապես ընդգծելով, թե ո՛րն է հայության հայրենիքը, եւ ո՛րն է այդ հայրենիքի միավորման ու ամբողջացման հույսը:

1942-ին, գրեթե նույն ներշնչանքով ու գեղարվեստական միջոցներով է գրվել նաեւ «Երկու Նաիրի» բանաստեղծությունը, որն ունի «Հայոց համայնապատկերը» ենթախորագիրը եւ լույս է տեսել 1981 թ.:

Դիմառնությունը՝ բնության երեւույթների եւ առարկաների անձնավորումը, դեռ միջնադարից եկող պատկերավորման միջոց է: Ներսես Շնորհալու կիրառած այդ հնարանքը հաճախ են գործածել հետագա բանաստեղծները՝ Աբովյանը, Ալիշանը, Պատկանյանը, Թումանյանը, Սիամանթոն, Չարենցը: Վ. Շիրազի բանաստեղծության մեջ տեսնում ենք Հայոց աշխարհի բոլոր շղթայված լեռնագագաթների՝ բանաձեւի արժեք ունեցող նպատակադրված անձնավորում՝ հզոր գեղարվեստական ընդհանրացումներով.

Հայաստանի ամեն մի լեռ
Մի քարացած հայ է անմեռ:

Բայց անձնավորված ամեն լեռ ունի իրեն բնորոշ պատկերավորում. այսպես՝ Առնոս լեռը հովիվ է քաջ՝ Բլուրների հոտն իր առաջ, Աչքն աղոթող՝ ծովն է Վանա՝ Նարեկացին սարն է Սասնա, Վարագա լեռն արծվի պես՝ քարացել է՝ Հայրիկն է, տե՛ս, Արարատը՝ Հայկն է վիմած՝ Երեւանվող հույսի դիմաց, Վար կնայե մեկ Երեւան, Հազար ու մեկ՝ դեպ Մուշ ու Վան… Հանգած հրաբուխ են անձնավորված այս լեռները, որ ծխում ու լռության մեջ ելք են փնտրում.

Այրվում, նայում Արարատին՝
Հուր են ուզում ժայթքել չորս դին
Անդ շղթայված լեռներս վեհ՝
Իմ աշխարհը, որ երբեւէ՝
Գահ չի դառնա ժանտ ոսոխին՝
Ասփված կիջնի՛ դեռ մեր հողին…
Միշտ չենք մնա
Ասպատակված,
Մի՛ պարծենա -
Անզգամված…
Հայաստանի ամեն մի լեռ
Վաղն հրաբուխ է մի անմեռ:

Այս բանաստեղծությունը, ինչպես նաեւ Եղեռնի թեման մարմնավորող այլ քերթվածներ՝ «Իմ հոգեհանգիստը», «Մեծ եղեռնը» եւ այլն, իրենց պատմական առաքելությու-

նը կատարելով, ներառվել են «Հայոց դանթեականը» պոեմում: «Հայոց Դանթեականի» եւ «Անիի» որոշ հատվածներ՝ որպես առանձին բանաստեղծություններ, Վ. Շիրազը, կարծես այդ պոեմներն ամբողջությամբ տպագրելու հնարավորության հույսը կորցրած, հատուկ նպատակով ներառել է իր հրատարակած տարբեր ժողովածուներում, ինչպես օրինակ, «Էլեգիա» հատվածը՝ «Քնար Հայաստանի գրքի հատորներում», «Անի» պոեմի նախերգանքը՝ երկրորդ հատորում, վերջերգանքը եւ ուրիշ հատվածներ՝ հինգհատորյակում եւ այլն:

Հովհ. Շիրազը, կարելի է ասել, հակառակ խորհրդային պատմագիտության պաշտոնական տեսակետի եւ գերազանցապես իրենց ԽՄԿԿ պատմության կամ գիտական կոմունիզմի ու աթեիզմի մասնագետ համարող վայ-գիտնականների, բոլոր մանրամասներով գիտեր Հայաստանի պատմությունն ու աշխարհագրությունը, իսկ Եղեռնի պատմությունը գիտեր ոչ միայն մանկական հիշողություններից, կարդացած վավերագրերից, գիտական ուսումնասիրություններից, հուշագրություններից ու գեղարվեստական երկերից, այլեւ ջարդի ու բռնագաղթի մեծ ողբերգությունն անձամբ տեսած փրկվածների անմիջական պատումներից: Ավելին. միշտ նրա գրասեղանին էին գերմանացի, ռուս սպաների լուսանկարների ալբոմները, որոնք պատկերում էին հայ կոտորածների վավերական դաժան ու սարսափազդու տեսարաններ: Ահա ինչու Եղեռնի ողբերգությունը ներծծվել էր Հովհ. Շիրազի արյան ու էության մեջ, ահա ինչու նրա ստեղծագործություններում Եղեռնը, համազգային ու համաշխարհային վիշտ լինելով, առաջին հերթին անձնական վիշտ ու ողբերգություն էր եւ համակել էր նրա ողջ էությունը.

Հայրս տեսավ ահավոր
Կոտորածներն հայկական,
Եւ աչքերում իր մոլոր՝
Գերեզմաններ կան այնքան,
Որ թարթիչներն իր բոլոր
Ահից ծռված ու մոլոր
Խաչերն էին՝ խրված խեղճ
Հորս եւ իմ սրտի մեջ…

Այստեղից պիտի հասկանալի դառնա այն նպատակասլաց կենտրոնացումն ու մտասեւեռումը, որ Վ. Շիրազը դրսեւորեց Եղեռնի նկատմամբ: Նա այդ մեծ ողբերգությունն զգում, ընկալում էր ամբողջ խորությամբ, իսկ դա չէր կարող էականորեն չազդել նրա գեղարվեստական մտածողության, անգամ մարդկային խառնվածքի ու բնավորության վրա: Ի դեպ, Վ. Շիրազի բանաստեղծական հետեւյալ ինքնախոստովանությունն ասվածի լավագույն հիմնավորումն է.

Ով հայոց վշտով ինձ պես է տարվում՝
Իմաստնանում է կամ խելագարվում:

Եւ իրոք, Վ. Շիրազը Եղեռնի ողբերգությունը գիտակցում, զգում ու ջանում էր պատկերել նրա պատճառահետեւանքային հարաբերությունների ամբողջ համապատկերով: Խորապես գիտակցում էր իր բանաստեղծ եւ մանավանդ հայ բանաստեղծ լինելը, որ պարտք ուներ ժողովրդի եւ սերունդների առջեւ: Այդ պարտքի գիտակցումն էր նրա ուղեցույցը բոլոր

ձեռնարկումներում, գրավոր կամ բանավոր բոլոր ելույթներում, տպագրված կամ անտիպ բոլոր ստեղծագործություններում, որոնցով նա կարողացավ պատռել երկաթե վարագույրը, զգոն ու զգաստ զանգահարի պես արթնացնել քնած ժողովրդին, նրան ու խորհրդային ղեկավարներին հիշեցնել Եղեռնի միլիոնավոր զոհերին եւ լռության ու ամայության դատապարտված Արեւմտյան Հայաստանը.

Հա՛յ ժողովուրդ, դու քնած ես, ես արթուն եմ այս գիշեր,
Եղեռնամեծ քո վշտերով ես անքուն եմ այս գիշեր, -
Ա~խ , այս գիշե՛ր, թե հավիտյան ես արթուն եմ, դու՝ քնած,
Քեզ էլ քնելե ու դարելով՝ իմաստուն եմ այս գիշեր...

3.

Հայ ժողովրդի հերոս զավակները Հայրենական պատերազմի շրջանում եւ նրանից հետո հաճախ էին դառնում Հովհ. Շիրազի ստեղծագործական ոգեւորության առարկա, որովհետեւ առանց կռվելու մեր ժողովուրդը չէր կարող հարատեւել.

Այն ո՞վ է ասում, թե մենք սպիտակ
Երամ ենք եղել աղավնիների՝
Մասյաց լանջերին՝ ամպ ու շանթի տակ,
Հողմերի առջեւ բախվող ազգերի:
Ինչպե՞ս կմնար լեռների միգում,
Չյունե բույնի մեջ քնքուշ աղավնին,
Ուր մեր լեռների բաշերն են պոկում
Շանթն ու կայծակը, հողմերն ու քամին:
Ինչպե՞ս՝ ապավեն դառած Կովկասին՝
Յաթաղանի դեմ դարեր շառաչեր,
Եւ ինչպե՞ս բույնը դրած Մասիսին՝
Կմնար անմահ, թե հայն արծիվ չէր...
... ...
Այնպիսի բնում ինչպես Մասիսն է,
Արծիվ կծնվի՝ արծվից էլ վեհ:

1902 թ. «Մեր նախորդներին» բանաստեղծության հեղինակ Հովհ. Թումանյանը երանի էր տալիս անցյալի «գովված երգիչներին», որոնց թարմ երգերում դեռեւս կար «թեկուզեւ գերի» հայրենիքի ազատագրության հույսը: Բայց Թումանյանի աչքի առաջ հոշոտվեց այդ հայրենիքը՝ բանաստեղծի զգայուն սրտի հետ մեկտեղ, միրաժի նման ցնդեցին հայի փրկության «ոսկի երազները»: Ավ Իսահակյանի «Դու չես հասկանա», «Պատերազմ ահեղ» եւ այլ բանաստեղծություններում, Տերյանի «Երկիր Նաիրի» շարքի նվագներում հնչեց դարի մեծ աղետների հանդեպ անօգնական ազգի անել վշտի, մենակության եւ պառապանքի թեման: Բայց նույնիսկ նրանք չէին կարող կռահել, թե գալու է մի օր, երբ հայն այլեւս չի մտածելու հայրենիքի ազատագրության մասին, որովհետեւ իր բնօրրանից տեղահանվելու, բնաջնջվելու է արեւմտահայությունը, եւ մի մեծ քրիստոնյա տերության ոչ քրիստոնյա ղեկավարների կամքով ու թուրք-բոլշեւիկյան բարեկամության քաղաքական շահերի թելադրանքով այդ հայրենիքը նվիրվելու է դարի առաջին մեծ ցեղասպանությունն իրականաց-

րած թուրք եղեռնագործին: Սրանով հասկանալի կդառնա նաեւ այն իրողությունը, թե ինչու Ռուսաստանում եւ ԱՊՀ երկրներում բացահայտված ու գահընկեցված Վ. Լենինն այսօրվա Թուրքիայում Քեմալ Աթաթուրքին հավասար պաշտամունքի առարկա է: Ցավոք, Բրեսթ - Լիտովսկի խայտառակ հաշտությամբ եւ 1921 թ. թուրք - բոլշեւիկյան բարեկամության՝ Կարսի ու Մոսկվայի ամոթալի պայմանագրերով կատարվել էր այն, ինչ դեռ 1919 թ. Վ. Տերյանն էր կանխատեսում.

Ու կգան օրեր առավել դժնի,
Եւ դժնի~, դժնի~, առավե ~լ դժնի...

Ահա ա՛յս իրողության առջեւ էր հայտնվել Թումանյանի, Իսահակյանի, Տերյանի ու Չարենցի հաջորդը՝ Հովհ. Շիրազը, որին վիճակված էր տեսնել իր նախորդների ժամանակներից անհամեմատ ավելի մեծ ու ծանր անարդարություններ:

Պափկանյանի «Ազատ երգերի», Սիամանթոյի «Դյուցազնորեն» եւ «Հայորդիներ» շարքերի՝ ամեն ինչ Հայաստանին եւ հայությանը գաղափարախոսությունը՝ «Կյանքին համար, Հույսին համար, նվիրական Հայաստանին համար» բանաձեւումով, Հ. Շիրազի ժամանակներում կորցրել էր իր հնչեղությունը, որովհետեւ ոչ միայն այդ Հայաստանն այլեւս հայինը չէր, այլեւ պետականորեն արգելվում էր նրա եւ միլիոնավոր զոհերի, բռնի տեղահանված ու աշխարհի չորս կողմերը ցրված հայության մասին հիշողությունն ագամ: Արգելողն ինքն իր վրանգի պահին լավ էլ հիշեց եւ իր իսկ հալածած հայ եկեղեցու միջոցով կազմակերպեց սփյուռքահայերի՝ այնքա~ն անհրաժեշտ օգնությունը, որով սրեղծվեցին ֆաշիզմի դեմ հերոսաբար կռված եւ խորհրդային երկրի հաղթանակը մոտեցրած «Սասունցի Դավիթ» եւ «Մարշալ Բաղրամյան» պանկային շարասյուները: Պատերազմում հայ հերոսների սխրանքները քաջալերում էին բոլորին. Արեւմտահայաստանի ազատագրության խոսքումներն իրական էին թվում, իսկ կռվի դաշտում ընկածների, անհետ կորածների վիշտը խառնվում էր Մեծ եղեռնի եւ 1937 թ. զոհերի դեռեւս չմարած կսկիծին:

Բանաստեղծի առջեւ ծառանում էին այսօր էլ իրենց արդիականությունը պահպանող եւ դեռեւս լուծում չստացած համաժամանակյա երեք փոխկապակցված հիմնախնդիրներ՝

1. Եղեռնի համաշխարհային ճանաչում եւ միլիոնավոր զոհերի համար ցեղասպանի արդար դատաստան,
2. հպատուցում եւ բռնազավթված հայրենիքի վերադարձ,
3. սփյուռքված հայության ճակատագիր եւ հատկապես Սփյուռքում հայոց լեզվի պահպանության խնդիր:

Իսկ Հովհ. Շիրազի քնարերգության մեջ փոխկապակցված այս երեք հիմնախնդիրները հանդես են եկել երբեմն առանձին, երբեմն էլ՝ միասին ու համադրված: Նրանք դրսեւորվել են տարբեր ժանրերի գործերում՝ պոեմներում, առանձին բանաստեղծություններում ու բանաստեղծական տարաբնույթ շարքերում, քառյակներում, անգամ առակներում:

Բնական է, որ Հ. Շիրազը պիտի գործադրեր բանաստեղծական արվեստի բոլոր միջոցները, նույնիսկ քնարերգու բանաստեղծի իր իսկ նվաճած արվեստի բարձունքներից նահանջելով՝ առաջ մղեր գաղափարական հիմնախնդիրներ՝ երբեմն գիտակցաբար տուրք

պալով հոեպորականության ու պարզունակության՝ այսպեղ էլ ըսպ հնարավորին գործադրելով պապկերավոր մպածողության իր զինանոցը: «Բիբլիականի», «Աստծու գլուխգործոցի», «Ինքներգանք համամարդկայինի» հեղինակն այդ անում էր հայ հանրությանը ամենամատչելի եղանակներով իր ազգային գաղափարները հասկանալի դարձնելու նպատակով: Ինքնարդարացման համար էլ խոսպովանում էր՝ «Բիբլիական բանաստեղծս գուսանվեց», եւ հաճախ էր դիմում ժողովրդագուսանական պաղաչափական ձեւերին ու միջոցներին, հատկապես մուխամմազին ու գազելին՝ Սայաթ-Նովայի, Ջիվանու, Չարենցի «Տաղարանի» եւ մանավանդ «Ես իմ անուշի» (Շիրազն ասաց՝ անաստված չեմ. ես իմ Մասիս սարն եմ պաշտում) ժողովրդականացած ու լայնորեն պարածված բանաստեղծությունների օրինակով: Այդպես է նա գրել «Ղարաբաղի ողբը», «Արձան Անդրանիկին», «Վերջին իղձս» բանաստեղծությունները, «Անի» պոեմի վերջերգը եւ բազմաթիվ այլ գործեր:

Հայրենիքը, ինչպես տեսանք, Հ. Շիրազի քնարերգության մեջ մարմնավորվել է նաեւ խորհրդանիշ-պեղանուններով. մի իրողություն, որ ժամանակին կամ անհասկացողությամբ, կամ հասկանալի միտումնավորությամբ սխալ էր մեկնաբանվում, համարվում ազգամոլության ու սահմանափակության արտահայտություն: Այնքան էր այդ մեղադրանքն առարկայական, որ դեռ 1957 թ. գրած «Հայոց զանգը» բանաստեղծության մեջ հարկադրված էր իր շուրջն սպեղծված մթնոլորտը ներկայացնելու այլաբանական թափանցիկ մի պատկերով.

Մի խամ աքլոր չէր երկնչում՝
Ժամանակից շուտ էր կանչում.
Ազգին շուտ էր հանում քնից,
Որ ծով կարոտն առնի Վանից:
Շատ որ կանչեց՝ շա~տ զայրացան,
Վերի հարկերն իրար անցան,
Թե՝ ի~նչ Մասիս, ի~նչ է ուզում
Չայն է տալիս եւ երազում,
Կտրում մեծաց անուշ քունը.-
Շա~տ է ըմբոստ, քանդե՛ք տունը…

Նկատված մեկ այլ օրինաչափություն մեզ պարտավորեցնում է որոշ պարզաբանումներ տալ այնպիսի աղմկահարույց մի խնդրի կապակցությամբ, ինչպիսին Հ. Շիրազի մասիսերգությունն է: Խորհրդային կերակրամանից սնվող որոշ քննադատներ արդեն վաղուց տապալված կոմունիզմի եւ սուտ ինտերնացիոնալիզմի գաղափարախոսության դիրքերից իրենց խղճուկ մտավարժանքներով Հ. Շիրազին հարձակումների թիրախ էին դարձնում՝ մատնացույց անելով նրա՝ հաճախ եւ տարբեր առիթներով, տարբեր սպեղծագործություններում գործածած պեղանուն-խորհրդանիշները՝ դրանք համարելով նահանջ ճշմարիտ արվեստից, ինքնակրկնության եւ ասելիքի սպառվածության ապացույց:

Արտաքուստ նրանց ասածը ճշմարտանման էր, քանի որ, իրոք, ոչ մի այլ բանաստեղծ այնքան հաճախ չի գործածել Մասիս, Արարատ, Վան, Անի, Արաքս, Եփրատ, Մուշ, Սասուն խորհրդանիշները, որքան Հ. Շիրազը: Սակայն նրանք, իրենց մակերեսային ըմբռնումներով ու միտումնավոր միակողմանի տեսողությամբ չէին էլ նկատում, որ շիրազյան ոչ մի պատկերի մեջ այդ խորհրդանիշներից որեւէ մեկը նույնությամբ չի կրկնվել. այլ ամեն անգամ դրանք նոր նրբերանգով են գեղարվեստական պատկեր կազմել, ինչպես լուսինը «Հայոց

դանթեականում» հանդես է գալիս բազմաթիվ գիշերային փեսարաններում՝ ամեն անգամ մի նոր դերով ու կեցվածքով, «Քառյակներ լուսնապատումի» շարքի վաթսունչորս քառյակներում փեսնում ենք նույնքան տարբեր լուսիններ: Այդպես էլ Արարատն ինքը՝ տարվա տարբեր եղանակներին, անգամ օրվա տարբեր ժամերին: Համոզվելու համար կարելի է մեկ անգամ եւս նայել Մայր աթոռ Սբ. Էջմիածնի՝ տարիներ առաջ հրատարակած «Արարատ» լուսանկարների ալբոմը, ուր, իսկապես, նույն Արարատի բոլոր լուսանկարներն էականորեն միմյանցից տարբեր են: Այդպես էլ Մասիս - Արարատի խորհրդանիշը, որն հիմնականում նշանակում է հայերից խլված Արեւմտյան Հայաստան, յուրաքանչյուր պոեմի, բանաստեղծության, քառյակի մեջ, որպես փոխաբերություն – մետաֆոր կամ համեմատության եզր, ներկայանում է նոր կողմով ու նշանակությամբ: Մի դեպքում նա Հայաստանի ու հայության հավերժության խորհրդանիշն է, մի դեպքում՝ գերված Արեւմտահայաստանի, մի այլ դեպքում՝ վեհության խորհրդանիշ եւ այլն: Համոզվելու համար բերենք ի քանի բնորոշ օրինակներ.

Ինչ **Մասիս՝ խլված մի ողջ հայրենիք...**
Շիրազն ասաց՝ **Մասիսն է այունն Հայաստանի...**
Մասի՛ս, ինչո՞ւ չես փլվում քեզ խլողի սեւ գլխին...
Արքաներդ են ընկել անմահ՝ դարերն ի վեր, ի վեր Մասիս...
Մի՞թե շատ պիտի մնաս Արարա՛տ,
Ինձ այսքան մոտիկ եւ այսքան հեռու...
Տո՛ւն դարձեք, հայե՛ր, որ հողն էլ փուն գա՝
Մասիսն էլ նորեն հայերեն խոսի...
Նոր Հայաստանի կենացն էլ կասեմ,
Օ՛, քանզի **նա է հույսն Արարատի...**
Ինձ **Մասիսից զրկող ձեռը**՝ նեռ է, ուրիշ նեռ չկա...
Մասիսն այսքան բարձր է կանգնել, որ ամենքին երեւա,
Մասիսն ասաց՝ Արագածի բախտը ինձ էլ կբացվի...
Հույսս հազար ձի է թամբում՝
Շատ չի մնա Մասիսն ամպում...

Այս օրինակները որքան էլ շատացնենք, միեւնույն է, արդարամիտ ընթերցողը կնկատի, որ Արարատ եւ Մասիս խորհրդանիշներն իրոք տարբեր են բոլոր կիրառություններում, այդպես էլ տարբեր են Արեւմտյան Հայաստանը խորդանշող մյուս անունները: Բայց աչառու միտումնավորությունը հասել էր այնտեղ, որ ոմն Հր. Գրիգորյան՝ որպես ՀԿԿ Կենտկոմի պատասխանատուներից մեկը, «Սիամանթո եւ Խաջեզարե» պոեմի լայն ժողովրդականությունը պաշտոնապես վերագրեց ոչ թե պոեմի գեղարվեստական արժանավորություններին, այլ հաջող ռադիոբեմականացմանը: Հիմնազուրկ մեղադրանքների հանձնակատար հեղինակները պարզապես չեն ունեցել եւ չէին կարող ունենալ հայրենիքի ու նրա սրբությունների այնպիսի գիտակցություն, մեր ժողովրդի մեծ ողբերգության այնպիսի խոր ճանաչողություն ու զգացողություն, ինչպիսին ուներ Հ. Շիրազը:

Արժե վերհիշել, որ թուրք բանաստեղծ Նազիմ Հիքմեթն ավելի լավ էր հասկանում Հովհ. Շիրազին, քան նրա հայ քննադատները: Երբ 1954 թ. Մոսկվայում ռուս բանաստեղծուհիներով շրջապատված Ն. Հիքմեթը բարեւելու համար ձեռքը մեկնում է Հ. Շիրազին, վերջինս նրա ձեռքը օդի մեջ է թողնում եւ արժանանում անքաղաքավարության համար կշտամբան-

քին, Ն. Հիքմեթն ինքն է միջամտում. «Ես նրան լավ եմ ճանաչում, նա իրավացի է»[4] : Հենց նա էլ պիտի իր պարաբնույթ գործերում հեպեւողականորեն հնչեցներ հայոց ողբերգության ու կորուստների թեման՝ ժողովրդից պետականորեն թաքցվող Եղեռնի իրողությունը խորհրդային հանրությանը ճանաչելի դարձնելու եւ նույն այդ պետության ու աշխարհի առջեւ հայոց դատը բարձրացնելու՝ պահանջատիրոջ իրավունքով: Եւ դա անում էր երբեմն այլաբանությամբ, երբեմն՝ ուղղակի, երբեմն՝ շշուկով, երբեմն՝ մռունչով: Ահա օրինակ՝ Հ. Հայնեի բանաստեղծության՝ *Հանդարտ է Գանգեսն իմ հեռավոր* տողը բնաբան դարձնելով՝ նա առաջինն է հայ իրականության մեջ 50-ական թթ. տպագիր խոսքով արտահայտվել դեռ դիակներ տրանող հայոց մայր գետերի եւ շիրմաթմբերի ու գանգալեռների, լուռ ու ամայի մեծ Հայաստանի մասին.

Հանգիստ չէ Գանգեսն հեռավոր, հեծում է իր մռայլ ափերին,
Իր երկրի հերարձակ մոր պես՝ գլուխն է քարեքար զարկում.
Ա~խ, նորից հողմերը նրա հառաչյունն իմ հոգուն բերին, -
Հանգիստ չէ Գանգեսն հեռավոր, աշխարհով մեկ է հեկեկում...
Հեծում են ծառս են լինում ջրերը նրա արտասվող,
Հողմակոծ անապատն անցնող առյուծի բաշերի նման
Եւ սիրտ է կտրատում ողբը՝ ինձ հեռու ափերից հասնող,
Հանգիստ չէ Գանգեսն ահավոր. նա բողոք ունի անսահման,
Նա քեզ է երազում, Վո՛լգա, նա մռունչ ունի խելահեղ,
Հանգիստ չէ Գանգեսն աղեկեզ, հանգիստ չեն գետերն հեռավոր՝
Ա՛խ, նրանք դիերն են տանում սովատանջ որդոց վիրավոր
Ու ճամփին դեռ ծառս են լինում՝ որդոցը փնտրում գերեզման, -
Հանգիստ չէ Գանգեսն հեռավոր, հանգիստ չէ իմ սիրտն այստեղ,
Որ անտուն դիեր են տանում այսօր էլ սուրբ գետերն այնտեղ...[5]

Ընդգծված տողերի հայ ընթերցողն անմիջապես կնկատի, որ Գանգեսն ու Վոլգան այլաբանական խորհրդանիշներ են, փոխանունություն - համընմբռնումներ եւ, ինչպես Դ. Վարուժանի «Ջարդը» բանաստեղծության մեջ Հռենոսը, Թեյմզը, Սենը եւ Վոլգան համապատասխանաբար մատնանշում են Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը, այստեղ էլ Գանգեսը Եփրատ, Արաքս ու Հայաստան պետք է հասկանալ (որովհետեւ 50 -ական թթ այդպես ուղղակի գրել կարելի էր բայց տպագրելն էր անկարելի), իսկ նրա բողոքն ու մռունչը Վոլգա-Ռուսաստանին են ուղղված:

Ինչո՞ւ գործվեց մեծ ոճիրը, ո՞վ է միլիոնավոր անմեղ հայերի թափված արյան պատասխանատուն, Դ. Վարուժանի արտահայտությամբ՝ «Վրեժն ո՞վ պիտ կշռե»: Հ. Թումանյանը թշնամու էությունը բնորոշելիս «մարդակեր - գազան մարդուց» հազար դարի զարգացմամբ հասել էր «բերանն արնոտ մարդակեր» բնութագրին: Հ. Շիրազի համոզմամբ՝ պատճառը մարդու մեջ ապրող գազանն է, որը, նրան աստվածային բարության բարձունքներից իջեցնելով, դարձնում է անգութ սպանա, **խղճի բացակայությունն** է եւ **ագահության ու իշխանապետնչության** համաշխարհային չարիքը, որոնց դեմ պետք է ծավալվի համամարդկային համախումբ պայքար՝ բռնելու չարագործի ձեռքը: **Մարդ-բարձունքից** ընկած

---

4 Տե՛ս այս մասին Ս. Աղաբաբյանի՝ Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պեմի մասին կարծիքում, որ տպագրվել է պոեմի առաջին հրատարակության վերջին էջերում:

5 **Հովհաննես Շիրազ**, Քնար Հայաստանի, Եր., 1958, էջ 347:

մարդն է ընդունակ մեծագույն չարագործությունների: Իսկ բանաստեղծի սիրտը խղճի սափոր է՝ լցված արցունքով, որ նա լացել է աշխարհի համար, մի ծաղկի համար, մի մեղքի համար, «Հայ կոտորածի արցունքի համար».

…Ո՛վ խիղճ, աշխարհը մեղրածով լինի՝
Առանց քեզ, ո՛վ խիղճ, կփոխվի թույնի…
Որտե՛ղ էիր դու, ո՛վ խիղճ, որ ելան
Շիրմաբլուրներն այս եղբայրական,
Որոնք վերքերն են թե՛ դեռ իմ սրտի,
Թե՛ դեռ արնաքամ մայր հողագնդի:

Հայոց կոտորածները Հ. Շիրազը համարում էր «մեղքերի մեղքն հողագնդի»: Ուրեմն՝ եղեռնագործի հետ միասին ամբողջ մարդկությունն է պատասխանատու հայոց մեծ ողբերգության համար, որ լռությամբ մեղսակցել է ցեղասպանին ու չի դատապարել նրան: Ահա թե ինչու մարդկության փակ աչքերը բանալն ու հայոց Մեծ եղեռնի համաշխարհային ճանաչումը Հ. Շիրազը համարում էր առաջնահերթ խնդիր: Միայն այդ դեպքում է հնարավոր խելքի եկած աշխարհի խղճի հաղթանակն ու «խաղաղության կլոր սեղանի» շուրջ ցեղասպանի համաշխարհային դատապարտումն ու հատուցման պահանջ – պարտադրումը: Իսկ բանաստեղծի ողջության ժամանակ, բացի աշխարհի մի քանի մեծ մարդասերներից, ոչ մի պերություն դեռեւս պետականորեն չէր ճանաչել հայոց ցեղասպանությունը: Իսկ սա նշանակում է՝ այսօր արդեն պետականորեն գործադրվող եւ հաջող ընթացքի մեջ գտնվող ցեղասպանության միջազգայնացման գործընթացը Հովհ. Շիրազն սկսել էր փասնամյակներ առաջ՝ խորհրդային անկարելի ժամանակներում:

Հովհ. Թումանյանի խորին համոզմամբ՝ բանաստեղծների պարբերությունը մեծ չափով պայմանավորված է ոչ այնքան նրանց տաղանդի ուժով, որքան ժամանակներով ու հանգամանքներով եւ գեղարվեստական մտածողության զարգացման ընթացքով: Գամառ-Քաթիպան տաղանդի պակասություն չուներ, նրա թերությունները իրենը չէին, այլ ժամանակներինն ու հանգամանքներինը, որոնց էլ Թումանյանը վերագրում էր իր առավելությունները: Այդպես էլ, ահա, խորհրդային ժամանակներն ու հանգամանքները բացահայտեցին Հովհ. Շիրազի բնական ձիրքերը եւ թելադրեցին նրա տաղանդի ուղղությունը: Թումանյանի՝ երանության արժանի նախորդների թարմ երգերում կար մի հայրենիք՝ «վեհապանծ, խրոխտ, թեկուզեւ գերի», Թումանյանի աչքի առջեւ հոշոտվեց այդ հայրենիքը, եւ միրաժի նման ցնդեցին նրա փրկության հույսերը: Բայց Թումանյանն այնքան հույսի պաշար ուներ, որ ամենաողբերգական 1915-ին էլ կարծում էր, թե իր «բնական ռուսասիրությունը կհաղթանակի», եւ հայ ժողովրդին ավելի հեշտ կլինի Մայր աթոռ Սուրբ Էջմիածնից հանել, քան Եփրատի ու Ալաշկերտի հայոց սրբազան հովիտներից: Մինչդեռ Շիրազը զրկված էր … հայոց սրբազան հովիտներից ու աստվածանիստ լեռներից:

Մեծ հույսերը չիրականանալու դեպքում վերածվում են նույնքան մեծ ողբերգության: 1902 թ. գրված «Տրտունջք» բանաստեղծության քնարական հերոս հեղինակը «ունայն տրտունջով» գնում էր «իր սիրած մարդկանց, իր լավ հույսերի գերեզմանների շարքերի միջով»: Մեծ եղեռնի օրերին նույն Հովհ. Թումանյանը «հազար-հազարով փռված ու ցրված» անմեղ զոհերին մխիթարում էր հոգեհանգստյան պատարագով.

Հանգե~ք, ի՛մ որբեր, իզո~ւր են արցունք, իզուր եւ անշահ.
Մարդակեր գազան՝ մարդը դեռ էսպես երկար կըմնա…

Եւ նույն օրերին գրած «Հայրենիքիս հետ» բանաստեղծության մեջ փայփայում էր «նոր ու հզոր հայրենիքի հույսը»:

Այդ հույսն էր փոխանցվել նաեւ ֆաշիզմի դեմ մղված Հայրենական պատերազմում հաղթանակած երկրի քաղաքացուն՝ Հովհ. Շիրազին, որը նախ հավատում, ապա հայությանը հավատացնում էր գալիքում Արեւմտահայաստանի ազատագրումը: **Նա արդարության ու ճշմարտության զինվոր էր եւ հույսի ազնիվ** քարոզիչ: Բայց չիրականացող մեծ հույսը բանաստեղծի համար դառնում էր մեծ ողբերգություն. արդեն 1960 -ական թթ. նա զրկված էր հույսի բոլոր հենարաններից: Սփյուռքի հայությունը ոսկե վրաններով ձուլվում էր օտար կապույտ ծովերին ու օվկիանոսներին, հայրենիքում վրանգի մեջ հայոց լեզուն[6], Նախիջեւանը վերջնականապես հայաթափվում էր, Ջավախքն ու Արցախը ենթակա էին նոր փերերի կամայականություններին, իսկ «լուռ ու ամայի մեծ Հայաստանի» մասին խորհրդային ղեկավարները պաշտոնապես հայտարարում էին, թե իրենք Թուրքիայից պրաբածքային որեւէ պահանջ չունեն: Վ. Մոլոտովի, ապա եւ Վ. Պողգորնու այդ հայտարարությունները ծանր հարվածներ էին հայության համար. նրանք առանձնապես դառնացրել ու հուսալքել էին գերզգայուն Հովհ. Շիրազին, մղել հայության ճակատագրի մասին մռայլ խորհրդածությունների.

Թե որ անցնի հազար տարի՝
Հայ կմնա՞ աշխարհում.
Միտք է անում սիրտս բարի,
Միտք է անում ու տխրում: -
Մի խոլ ծով էր առաջ, հիմա
Նա դարձել է մի խուլ գետ…
Միտք եմ անում, կտրում քունըս
Ու չգիտեմ, ո՛վ աշխարհ,
Իմաստո՞ւն է տխրությունս,
Թե քեզ նման խելագար…

Այս շրջանի իր բանաստեղծություններով Հովհ. Շիրազը շատ էր հիշեցնում անտիկ Հունաստանի Սոլոն բանաստեղծին, որը պարսիկներից կրած ծանր պարտությունից հետո իր «Սալամինյան տաղեր» բանաստեղծություններով այնպես քաջալերեց իր հայրենակիցներին, որ նրանք բուռն ոգեւորությամբ անձնվիրաբար կռվեցին եւ պարսիկներից հետ խլեցին նրանց զիջած Սալամին կղզին:

Նորագույն ժամանակների ամենաժողովրդական բանաստեղծը, մեծ երազող ու ռոմանտիկ լինելով, բարեբախտաբար նույնքան ողջամիտ էր եւ իրատես: Գիտեր, որ իր մի հատիկ խոսքով խանդավառ անգեն ժողովուրդը պատրաստ է ու կարող է դիմել վճռական քայլերի: Բայց դա կլիներ, մեղմ ասած, անխոհեմություն եւ կարող էր նոր ողբերգության

6 Այս մասին հանգամանորեն տե՛ս մեր «Մեսրոպ Մաշտոցը Հովհաննես Շիրազի եւ Պարույր Սեւակի հայացքով» ուսումնասիրությունը. «Գրական հանգրվաններ», գիրք Ա, Եր., 2003:

պատճառ դառնալ: Լարված մթնոլորտի վտանգալի բարդությունը խորապես գիտակցող բանաստեղծը իր զգաստացնող խոսքով փորձում էր կանխել ամեն անխոհեմ արարք.

Ազգ իմ, անսա՛ եւ օղ արա պատգամներս ականջիդ.
Խեւ ամպի տակ մի՛ թող Մասիսն ու Վանա ծովն իմ վճիտ.
Բայց ոչ արյամբ, քանզի, ազգ, իմ, արյուն շատ ես տեսել դու,
Հազիվ ես մութ ամպրոպներից ծիածանիդ հասել դու:
Հիշի՛ր անթիվ կոտորածներն՝ իմաստնացիր առավել,
Մի ձեռքիդ՝ սուր, մեկիդ՝ գութան՝ դարձրու կյանքդ հորովել…
.....
Լսի՛ր, անսա՛ եւ օղ արա իմ պատգամներն ականջիդ.
Էլ արյունով չկարմրի թող Վանա ծովցն իմ վճիտ,
Ոչ էլ արյան մի սեւ կակաչ ընկնի ձյունին այն լեռան,
Որ հին սառած քո արցունքն է՝ ծաղկածիծաղ քո դռան,
Արյուն պետք չէ. անեծք արնոտ յաթաղանին ու խանին,
Թուրդ կախիր եւ հույսդ դի՛ր, ա՛զգ իմ, կլոր սեղանին…

Մեծ տերությունների աշխարհաքաղաքական շահերի, միջպետական շահախնդիր հարաբերությունների պայմաններում Հովհ. Շիրազի փայփայած Հույսի իրականացումը, ցավոք, միայն հայության կամքից չէր կախված. բանաստեղծը դա լավ էր գիտակցում: Ուրեմն՝ պետք է ապավինել բարեպատեհ ժամանակների, երբ աշխարհի քնած խիղճը կարթնանա, եւ կգա հատուցման պահը.

Խելքի կգա աշխարհի խիղճն, այսպես քնած չի՛ մնա,
Ինչպես մոր կուրծքն ուզող մանկիկ՝ նա՛էլ մի օր կարթնանա,
Իսկ թե բան է՝ քնած մնա, ոհ, թե խիղճը չզարթնի՝
Ոհ, թե խիղճը խելքի չգա, բ այց չէ՛, կգա՛, -

հավատում ու հավատացնում էր նա: Հավատարիմ իր եւ մեր ժողովրդի բնական խաղաղասիրությանը՝ նա շարունակում է հույս կապել ազգերի եղբայրության, խորհրդային երկրի հզորության եւ մարդկային քնած խղճի արթնացման հետ:

Եղբայրության գործն է վսեմ՝
Մասիսն հանել բանտից,
Թեկուզ ինչ-որ ցեղ մի նսեմ
Յաթաղանվի խանդից, -

գրել է Հովհ. Շիրազը «Երեւանը հրաշակերտողներին» բանաստեղծության մեջ: Եթե ճիշտ է, թե ռոմանտիկները մեծ երազողներ են ու հույսի քարոզիչներ, ապա նա դրանցից մեկն էր՝ հայտնված կոպիտ ու դաժան իրականության եւ այն վերափոխելու, հայանպաստ դարձնելու բուռն երազանքների հակասության ոլորտում: Հույսի փոքրիկ նշույլից անգամ նախ ինքն էր քաջալերվում, հավատում, թե փոքրիկ կաթիլը պիտի ծովանա: Այդ հավատով էլ նա երազում էր Անին վերաշինել իր «հույսի բերդ Երեւանով» եւ զուգել Սեւանի լույսերով:

Իրեն ապավինած ժողովրդին իրատեսական պատասխանի որոնումներում Հովհ. Շիրազը նախ Չարենցի «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» ծածկագիր պատգամախոսությունը կրկնեց իր մի քանի բանաստեղծություններում, միա-

ժամանակ, նույնպես գաղտնագիր - աքրոսպիքոսով, առաջադրեց իր՝ «Մռնչա՛, Շիրա՛զ, ազատությո~ւն Մասիսին» եւ «Մռնչա՛, Շիրա՛զ, պահպանությո~ւն հայոց լեզվին» պատգամ-կարգախոսները, գրեց «Սփյուռքի հիմնը» (Երբ պիտի դառնամ իմ գլխի փերը), «Հայոց հույսը», «Մասիսի հույսով» բանաստեղծությունները, որոնց մեջ արդեն հույսի մեծ երգիչը Հույսի մասին արտահայտվում էր վախվորած ու երկբայորեն: Բանաստեղծի Հույսն ազգահավաքն է, Սփյուռքի հայության վերադարձը, հայ հողերի վրա հայության համախմբվելը:

Հույսս փուն գալն է ցրված աստղերիս,
Նրանք էլ՝ անհող՝ ինչպե՞ս գան իրար,
Էլ ինչո՞վ հայոց աստղն արեւանար,
Էլ ինչո՞վ բալգամ բերեր վերքերիս...

...Եւ հույսս՝ մազ էլ դառնա՝ չի կտրի,
Գերի լեռներիս քաշով մեկ է նա, -
Կազապրվի գերված հողս բյուրակնյա,
Ես չեմ հավատում չար ճակատագրի...

Բայց խորհրդային եղբայրությունը, բարեկամությունը նրա համար էին, որ կարողանային պահպանել հողագնդի մեկ վեցերորդ մասում ստեղծված անծայրածիր կայսրությունը եւ հայրենազուրկ հայությանն էլ պարտադրեին լռել ու համակերպվել արդեն կատարվածին, Թուրքիայից չպահանջել միլիոնավոր զոհերի դիմաց հատուցում եւ բռնազավթած կամ նրան նվիրաբերած պատմական հայրենիքի վերադարձ:

Բարեկամը որ քեզ խլեց, էլ թշնամին բան կտա՞ եփ, -

անպատասխան մորմոքում էր բանաստեղծը, բայց դա ամբողջ հայության մորմոքն էր՝ շիրազյան հանդգնությամբ արտահայտված: Ուրիշ ելք չէր մնում. պետք էր համախմբել հայության ու բռունցքել բոլոր ուժերը.

Բռունցքվե՛լն է հավերժությունն Հայաստանի...

Դեռեւս 1959 թ. գրած «Ղարաբաղի ողբը» բանաստեղծության մեջ նա, կատարված ողբերգության պատմական ակունքների բացահայտումով, կանխատեսում էր Արցախի ազատագրումն ու հայության նոր սերունդներին հիշեցնում իրենց անելիքը.

Դո՛ւ չես զարթվել, քեզ խլել են, որ մոռանաս երգերն հայոց,
Ձորերիդ պես խորացել են անդնդախոր վերքերն հայոց,
Ա~խ, երբ պիտի լեռներիդ պես վե՛ր բռունցքվեն ձեռքերն հայոց,
Որ չթողնեն հայոց արծիվն օտար ծովին ճայ, Ղարաբաղ:

Մեծ եղեռնի հիսունամյակի նախօրեին պատմական մեծ անարդարությունը դատապարտելու, միլիոնավոր անմեղ նահատակներին ոգեկոչելու եւ նոր սերնդին ինքնաճանաչման բերելու նոր խոսքը ծնվեց քիչ հետո: Որպես լրացում կամ շարունակություն Թումանյանի «Հոգեհանգիստ» բանաստեղծության՝ նոր իրավիճակի թելադրանքով Հովի. Շիրազը հանդգնեց գրել «Իմ հոգեհանգիստը» բանաստեղծությունը:

Ն. Շիրազը դարձյալ աշխարհի ու մարդկության քնած խղճին էր դիմում անզոր հուսահատությամբ: Երեկ՝ Թումանյանի ժամանակներում, «անգիր օրենքով մեր ասպվածային» գոնե քրիստոնյա մարդկությունը ննջեցյալների հոգեհանգստյան համար գերեզմաններին պարտաճանաչորեն խունկ էր ծխում, իսկ այսօր… Այսօր փոխվել են ժամանակներն ու բարքերը, լեռներ բանտող, ծով շղթայող մարդ սպրանան աշխարհը խառնել է այնպես, որ

Ավա~ղ, ոչ խունկի, ոչ աղոթքի են այժմ հավատում.
Մարդն է սպրանան, որ նմանին է Աստծուց զատում,
Լեռներ է բանտում, ծով է շղթայում այս մարդ - սպրանան,
Եւ դեռ ասում են՝ ավելի վարթար պիտի վարանան:
Եւ հոգու համար էլ չեն աղոթում եւ առանց խունկի՝
Քամում են միայն լուռ ողորմաթասն իր քառասունքի:

Կարո՞ղ էր արդյոք Եղեռն տեսած եւ խլված հայրենիքի դիմաց ոչ մի հպրուցում չսպացած հայ մարդն առհասարակ հանգիսպ ունենալ կյանքում կամ հեպմահու. ահա հարցադրում, որը «մեր հայրենի օրենքովը հին» դեռեւս ընդունելի էր Ն.ովի. Թումանյանի համար, իսկ Ն.ովի. Շիրազի համար՝ ոչ: Ուրիշ ժամանակների եւ հանգամանքների բանասպեղծ էր նա, որը, սնվելով նույն թումանյանական ավանդներից, չէր կարող շրջանցել հայության առջեւ ծառացած պրագնապահարույց նոր խնդիրները: Նրա համոզմամբ՝ հայոց մեծ ողբերգությունն իր ահռելիությամբ ընդունել է փիեզերական չափեր, բայց մարդկության կողմից չդապապարպվելով՝ կրկնվում, աղեպ է դառնում նաեւ ուրիշ ժողովուրդների համար:

Քանի յաթաղանի մեղքը չի դապապարպվել, անհոգի աշխարհի առաջ մորթված հայոց անհամար զոհերի՝ «մեր ասպեղնաթիվ ծերի ու մանկանց» հոգեհանգիսպն աշխարհեաշխարհ չեն կարդացել, քանի հայոց գերի լեռները չեն վերադարձվել՝ հայ հանգուցյալը չի կարող հանգիսպ ունենալ, թեկուզ նրա գերեզմանը «գինեծով կղզի դարձնեն»:

- Ազգե՛ր, խնկում եմ աղի արցունքս ձեր աղուհացին,
Գիպեմ՝ կհեծնի արդարությունը մի օր իր սուրբ ձին,
Մասիսի վրա կույր բախպի աչքը պիպի քաղցրանա,
Որ հայն էլ, ձեզ հեպ ծիածանվելով, Մասիս բարձրանա,
Որ ճերմակ Մասիսն հսկա եւ հավերժ մոմի պես լռին՝
Վառենք իմ հայոց կոպրաճների շիրմադաշպերին,
Վառենք ապրիլյան ահեղ եղեռնի աճյունի վրա,
Որ անապատն է գիշերավեղար պապանքը նրա:

Մայր Հայասպանը քանի դեռ այսպես կիսված կմնա՝
Հանգիսպ չի ննջի հայ շիրիմն անգամ, եթե հայ է նա…

Խորհրդային ժամանակներում ամենուր հնչող, ձեռքից ձեռք անցնող շիրազյան բանասպեղծությունները վիթխարի ներգործության ունեցան սերունդների վրա, դասպիարակեցին հիսուն-վաթսունականների զարթոնքի հայ սերնդին, ազդեցին նա ժամանակի գրական մպածողության վրա եւ Պ. Սեւակի, Խ. Դաշպենցի սպեղծագործությունների հեպ միասին գաղափարապես նախապապրաստեցին արցախյան ազապամարպի հերոսական սերնդին: Այս իմասպով «Հայոց դանթեականը» պոեմից բացի առանձնահապուկ կարեւորություն ունեցան «Ղարաբաղի ողբը», «Վերջին իղձս», «Իմ հոգեհանգիսպը», «Հայոց ճակա-

պագիրը», «Մեծ եղեռնը», «Հանճարեղ խելագարը» բանաստեղծությունները, «Կպրակ»-ները, «Հուշարձան մայրիկիս», «Հուշարձան հայրիկիս», «Գիրք Արարատին», «Քնար համազգային», «Քնար համամարդկային», «Քառյակներ մասիսապատումի», «Քառյակներ հայոց լեզվապատումի», «Քառյակներ հայրենապատումի» շարքերը:

Իր ազգային մեծ երազանքները մարմնավորելիս Հովհ. Շիրազը գործադրել է իր գեղարվեստական մտածողության շրջանակներում եղած բոլոր հնարավոր միջոցները եւ վերջին շրջանում ստեղծել առավել տարողունակ ու խորունկ, ներգործության վիթխարի ուժով առանձնացող երկու բանաստեղծություն, որոնք հիշեցնում են նրա ստեղծագործական վերելքի տարիների լավագույն գործերը: «Հայոց դանթեականը» պոեմում Անդրանիկ զորավարի մոնումենտալ կերպարը կերտելուց հետո՝ 1967 թ. հունիսին 4-ին, Ուջանում, հակառակ պետական արգելքների, Անդրանիկի արձանի բացման առթիվ նա գրել էր.

Արձանացար, բայց դարն է լուռ, Անդրանիկ,
Ինչպես պատյան մտած մի թուր, Անդրանիկ,
Բանաստեղծը սարերն ինչպե՞ս տուն բերի, -
Գոնե դո՛ ե՛լ, Մասիսն ինձ տուր, Անդրանիկ:

Տարիներ հետո, հավանաբար չգոհանալով իր այդ գործից, նա գրեց «Սպիտակ ձիավորը Փարիզում» ծավալուն բանաստեղծությունը, որն աչքի է ընկնում թե՛ հարցադրումների սուր արդիականությամբ. թե ընդհանրացման մեծ ուժով եւ թե՛ կատարման դասական վարպետությամբ: Ութավանկ կարճ տողերով բանաստեղծության չորս մասերն ունեն միեւնույն սկիզբը, սակայն տարբեր շարունակություն, եւ միավորվում են նպատակի միասնականությամբ: Երազով Փարիզ մտած բանաստեղծը գտնում է Պերլաշեզի գրանիտե հեծյալին՝ հայոց Եղեռնից քարացած Անդրանիկին, որը «Հազար հողից մեկս փրկել, Այժմ օտար հող էր ընկել»: Նրա խոսքով է բանաստեղծն արտահայտում հայոց պահանջատիրությունը: Ոչ թե Պերլաշեզն է Անդրանիկի տեղը, այլ գերված հայրենի հողը՝ Կարսը, Մասիսը, Սասունը, Վանը: Իր մարմարե հին ձին հեծած, իր փրկարար թուրը հանած՝ նա արշավում է դեպի Հայաստան, բայց չար ազգերը կախ են ընկել նրա՝ մեր էպոսի՝ ժայռի մեջ փակված նորօրյա Փոքր Միհրի ձիու սմբակներից ու չեն թողնում, որ տեղ հասնի: Եւ իր քարե սլացքի մեջ

Թռցնում է նժույգը վեհ,
Թե՛ արեւի, թե՛ լուսնի պակ
Թռցնում է ձին սպիտակ
Ձիավորը գրանիտե,-
Ե՞րբ կհասնի՝ աստված գիտե...

Գեղարվեստական մյուս մեծ խտացումը «Ուխտ Արարատին» բանաստեղծությունն է, որը մի երազային պեսիլում ամփոփում է Եղեռնի եւ խլված հայրենիքի մասին գալիքնատես բանաստեղծի խոհերի գրեթե ողջ համակարգը: Սա, կարելի է ասել, իր բովանդակային խորությամբ, հարցադրումների արդիականությամբ մեր գրականության մեջ պեսիլի վերջին լավագույն դրսեւորումներից է Չարենցի պեսիլներից հետո: Իրո՛ք հետաքրքիր է՝ ինչպե՞ս կընդուներ «մասիսասեւ բանաստեղծ» Հովհ. Շիրազն ինքը Մասիսի հնարավոր ազատագրումը, եթե կայանար.

Երազիս տեսա՝ Մասիսն ազատվեց,
Ծովացավ հայ ազգն , այնպես ձայն փվեց,
Անզուսպ կարոտած՝
Այնպես որոտաց,
Որ աստղերն անգամ իրար բախվեցին՝
Որպես երկնքի լուսամուտները,
Իրար բախվեցին ու փշրվեցին,
Ինչպես երկրում էլ ապակիները, -
Խլացան Աստծուականջներն անգամ,
Երբ Մասիս ելանք երգով խոլական,
Մեր ծով-ծափերով աշխարհադղորդ,
Վերջին ուխտը մեր Մասիսի վրա
Վերածնեցինք մեր թագն հնօրյա,
Այնպես որոտաց
Երգս, որ հանհկարծ
Բռնվեց ահից ալլահի լեզուն,
Նա, որ հայ լեզվի մահն էլ էր ուզում…
……
Այս փոքրիկ դարում, ո՛վ մեծ մարգարե,
Քո հավատն հազար Մասիս կբերե…

Ժողովրդի բանաստեղծն էր Հով. Շիրազը. նրա գեղարվեստական խոսքը ոչ միայն չի հնանում, այլեւ ավելի ընկալելի է դառնում մեր ժամանակներում, երբ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գլխավոր առաջնահերթություններից է Հայոց ցեղասպանության համաշխարհային ճանաչումը: Այդ խնդրի իրագործման ճանապարհին իր վիթխարի դերը կատարել է Հովի. Շիրազը, եւ դեռ կատարելու է նրա ստեղծագործությունը: Հով. Շիրազի ամեն երկ, նույնիսկ ամեն մի առանձին գեղարվեստական պատկեր, որ շոշափում է Եղեռնի թեման, վավերագրի արժեք ունի եւ ցեղասպանությունը դատապարտող բանաձեւ է, ինչպես այս մեկը.

Քրիստոսին խաչող Հուդան վերածնվի՝ կխաչեմ,
Մեղք կա՝ դարեր էլ հնանա՝ չի փրկվի, կխաչեմ.
Իմ սուրբ ցեղին եղեռնողի մեղացն ամ ու ժամ չկա,
Հազար տարվա իր սեւ մեղքն էլ ով չքավի՝ կխաչեմ:

Սա հենց այն զենքն է, որից զուրկ է իր նախնիների մեղքն ուրացող, ցեղասպանությունը հերքելու անպտուղ ճիգեր անող, բայց դեռեւս ժամանակավոր նախընտրելի վիճակում գտնվող մեր հակառակորդը: Նրա դեմ գաղափարական պայքարում հարկավոր է խելացի օգտագործել վավերագրի ու բանաձեւի արժեք ունեցող այդ զենքը՝ Հովի. Շիրազի՝ Մեծ եղեռնին վերաբերող գործերը տարբեր լեզուներով ու հենց թուրքերենով թարգմանելով եւ աշխարհի առջեւ դնելով:

ՎԱՐԴՈՒՀԻ Շ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

«ՀԱՅՈՑ ԴԱՆԹԵԱԿԱՆԸ» ՔԵՐԹՎԱԾԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇՈՒՐՋ

Սերունդների հիշողության մեջ արդեն ինը տասնամյակից ավելի մխում է Մեծ եղեռնի ցավն ու վիրավորանքը: Հոգեկան ու բարոյական ցնցում ապրած միջավայրում իր որբ մանկությունն անցկացրած բանաստեղծի փոթորկուն հուզաշխարհի ալեբախումներն արտահայտվեցին հայրենիքին նվիրված շատ գործերում: Սակայն դրանք ավելի ընդգրկուն, Շիրազին հատուկ վիպաքնարական գծերով, խոհափիլիսոփայական ընդհանրացումներով եւ հուզապրումի՝ նրան հատուկ պաթոսով դրսեւորվեցին հատկապես «Հայոց դանթեականի» մեջ: Գրքի խմբագիր Հ. Ֆելեքյանի վկայությամբ՝ Շիրազը «Ութ հազար տողից բաղկացած պոեմը անգիր գիտեր.... Ամեն մի տողը սրտեղձագործական տառապանքի արդյունք է... Եւ մշտապես մշակել է, հղկել, փնտրել ու գտել ի՛ր ուզածը»[1]:

Ծանրագույն ողբերգություն ապրող բանական էակի համար, երբ վերքը չափազանց թարմ է, դժվար է խոսել, պատմել դրա մասին, առաջին իսկ վայրկյանից գիտակցել ողբերգության չափը, ինչպես հարկն է իմաստավորել: Երբ հայ ժողովուրդը եղեռնի հարվածներից սկսեց փոքր-ինչ ուշքի գալ, արնածոր վերքի ցավից տնքալու, ողբալու, սպեղանի հայցելու իրավունքն իսկ արգելվեց: Նա տասնամյակներ շարունակ ապտակները սեղմած իր ցավը մենակ տարավ, լուռ: «Հայոց դանթեականը» տասնամյակներով համազգային վիշտը ողբալու իրավունքից զրկված ժողովրդի հոգու ճիչն ու մռունչն է:

Բանաստեղծը, հետեւելով նախորդների սրտեղձագործական ավանդույթներին, ժամանակի հեռավորությունից նոր հայացքով, նորահայտ փաստերով ու վկայություններով, միանգամայն նոր նպատակամղումներով եւ կյանքի իրական փաստերը գեղարվեստականացնելու ուրույն սկզբունքներով, անհատական զգացողությամբ դիտարկեց եւ ներկայացրեց ժամանակն ու դեպքերը:

Շիրազը «Հայոց դանթեականն» սկսեց գրել Հայրենական մեծ պատերազմի սկզբին (չորս տասնամյակից ավելի այն եղել է բանաստեղծի մտասեւեռումը՝ 1941-ից մինչեւ մահը): Շիրազի վկայությամբ՝ Դանթեականի մտահղացման շարժառիթը եղել է հատկապես «1941 թ. Բաբի Յար կոչվող քարաժայռից խորհրդային հազարավոր խաղաղ մարդկանց՝ ֆաշիստների ձեռքով անդունդը գլորելու դեպքը: Դա բանաստեղծին հիշեցրել է հայոց կոտորածները...»[2]:

Երկի կառուցվածքային կենտրոնը համազգային, համամարդկային նշանակություն ունեցող մի իրադարձության նկարագրությունն է, որ մեր ժողովրդի համար ճակատագրական նշանակություն պիտի ունենար. Թուրքիայի ծրագրած եւ իրականացրած եղեռնի արդյունքում ամբողջ Արեւմտյան Հայաստանի եւ Արեւելյան Հայաստանի մի մասի բռնազավթու-

---

1 **Հ. Շիրազ,** Հայոց դանթեականը, Երեւան, 1990, էջ 380: Այս հրատարակությունից կատարվող հղումները այսուհետեւ կնշվեն շարադրանքի մեջ, փակագծերում՝ ՀԴ եւ էջը:

2 **Մ. Մուրադյան**, Գրական հանգրվաններ, Գիրք Բ, Ե., 2007, էջ 160:

մը, այդ երկրի բնիկ ազգաբնակչության՝ երեք միլիոն հայերի փեղահանումը, ունեզրկումը եւ բնաջնջումը, ինչպես նաեւ այդ ամենի հետեւանքով աշխահասփյուռ հայության արդար պահանջատիրությունը, պայքարը հանուն պատմական արդարության վերականգնման:

«Հայոց դանթեականի» սյուժեի հիմքում դարաշրջանի քաղաքական-հասարակական հակասություններն են: Օսմանյան Թուրքիայի ազգայնամոլական ծրագրերի՝ «Մեծ Թուրանի» սպեղծման ճանապարհին Հայաստանը խոչընդոտ էր: Սակայն հակադրությունը դիտարկվում է ոչ միայն Հայաստան-Թուրքիա հայեցակետով, այլեւ «Հայաստան-աշխարհի եւ հայություն-աշխարհի ժողովուրդներ»[3] առնչությամբ: Այն պատերազմների եւ համամարդկային փոքր ու մեծ ողբերգությունների դատապարտամատյանն է: Չնայած 25 տարվա վաղեմությանը, այդ «անզույգ մեղքը» համաշխարհային հանրության կողմից դեռեւս չէր սպացել համապատասխան գնահատական եւ հատուցում: Ճիշտ է, արդեն կար Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը (1933 թ.), Անատոլ Ֆրանսի «Հայերի դարը մարդկության դարն է» միտքը, բայց դեռեւս միջազգային հանրությունը եւ որեւէ պետություն պաշտոնապես չէին ճանաչել Հայոց եղեռնը:

Թե՛ ձեւի, թե՛ բովանդակության տեսակետից այս երկն ունի մի շարք յուրահատկություններ. համադրված են չափածոն ու արձակը, վիպականն ու էպիկականը, պատմականն ու արդիականը, իրականն ու երեւակայականը, ողբերգականն ու հերոսականը..

Սպեղծագործությունը բաղկացած է նախերգանքից, քսաներկու գլուխներից եւ վերջերգանքից: Նախերգանքում շնչավորվում են հայոց լեռները, հողն ու ջուրը, որոնք խորհրդանշում են հայ ժողովրդի ուժն ու մեծությունը: «Հայոց վշտով» պոգորված լեռնաշխարհը լցված է հավատով, ապրելու, պայքարելու, հաղթելու, «հրաբխվելու» վճռականությամբ.

Հայաստանի ամեն մի լեռ՝
Վաղն հրաբուխ է մի անմեռ... (ՀԴ-6):

Բանաստեղծը պատրաստվում է կերտել ոչ միայն հայ ժողովրդի համար ողբերգական այդ ժամանակաշրջանի իրական նկարագիրը, այլեւ պատկերային բազմապիսի հայտնություններով ցայտուն, ակնառու կերպով շեշտում է ողբերգականորեն հերոսական հայ ոգու կորովը, ապրելու վճռականությունը, լավատեսությունը: Ինչպես նախերգանքում, նույնպես եւ ամբողջ պոեմում ակնառու է բանաստեղծի հավատը. «Ո՛չ, մարդը աշխարհ կգա.. » (ՀԴ-17):

Նախերգանքի երկրորդ մասը «հայոց անբույժ վերք ու վշտին» ուղղված արթնացման կոչ է: Շիրազն ինքնակեղեքման հաճույքից չէ, որ սպիացած վերքը նորենոր պեղում է: Նա՝ որպես մեծ հումանիստ, տագնապում է աշխարհի համար: Զգալով դեռեւս բավականին թարմ այդ ողբերգության ցավն ու կսկիծը՝ բանաստեղծն իրեն պարտավորված է զգում ահազանգելու մարդկությանը պատմության ամոթալի դասերի մասին: Իսկ պատմությունը կրկնվելու միտում ունի, մանավանդ երբ ոճիրը չի դատապարտվել, ոճրագործը չի պատժվել ըստ արժանվույն: Այդ գիտակցությամբ էլ բանաստեղծը գրում է.

---

3 **Ս. Մուրադյան**, Գրական հանգրվաններ, Գիրք Բ, Ե., 2007, էջ148:

Եւ թող այս գիրքս դասագիրք դառնա
Մանուկ մարդկության սեղանի վրա (ՀԴ-7):

Շիրազյան քնարին բնորոշ արեւային ջերմ գույներն ու ծաղկահանդեսն այստեղ բացակայում են, փոխարենը բոլոր քսաներկու գլուխների վշտաշառաչ հուշերը պարուրված են գիշերների ու խավարի, լուսնի ու աստղերի պաղ, մահահոտ սառնությամբ, խավարի եւ լույսի, սեւի ու սպիտակի հակադրությամբ: Բոլոր գլուխները, որոնց վերնագրերը կապված են գիշերվա խորհրդանիշի հետ, ունեն արձակ նախասկիզբ, մուտք: Մեր գրականության պատմությանը, իհարկե, հայտնի են արձակի եւ չափածոյի համադրությամբ ստեղծված գործեր, բայց սա թերեւս առաջին քերթվածն է, որ ներառում է արձակի տարրեր:

Այդ առաջաբան-դիմումներում բանաստեղծը դիմառնությամբ, կոչերով, ուղերձներով ոգեկոչում է Դանթեին, դիմում է աշխարհի բազմալեզու ժողովուրդներին (նեգր, հնդիկ, ամերիկացի, թուրք, ֆրանսիացի, գերմանացի..), նրանց «մեծ ու փոքր որդիներին», մտածող մարդուն, իր մայր ժողովրդին՝ համաշխարհային հանրության ուշադրությունը հրավիրելով հայության ցավի վրա, որը նաեւ աշխարհինն է, բայց, չգիտես ինչու, աշխարհն անտարբեր է այդ ցավի հանդեպ: Բանաստեղծն ամոթի խարան է դրոշմում մարդկության ճակատին, հորդորում է ճանաչել եւ դատապարտել ցեղասպանությունը, հանդիմանում է հանցավորության համար:

Հատկանշական է, որ Շիրազը գանգատվում էր, թե դժվարանում է արձակ խոսք գրել. «Ինչ էլ գրում եմ, սպացվում է բանաստեղծություն»[4]: Այդ արձակ սկսվածքները, որոնք խիստ բանաստեղծական են, առանձնահատուկ տեղ են գրավում Շիրազի ժառանգության մեջ թե՛ որպես շիրազյան արձակի հազվագյուտ նմուշներ, թե՛ իրենց բովանդակության հագեցվածությամբ ու նպատակայնությամբ, թե՛ պատկերային ուրույն մտածողությամբ: Նշենք հատկապես «Առաջին գիշերերգ», «Գիշեր վշտահուշի», «Խարանքի գիշեր» գլուխների առաջաբանները:

«Հայոց դանթեականը» պոեմի ամենացայտուն գծերից մեկը,- նշում է Ս. Աղաբաբյանը պոեմի առաջաբանում,- գաղափարի եւ դրա արտահայտման ձեւերի հազվագյուտ ներդաշնակությունն է» (ՀԴ-374): Շիրազն իր ազգի խեղդված հառաչանքն էր նկարագրում՝ իր պատկերավոր մտածողությամբ, ինքնահնար բառակազմությամբ, գեղարվեստական պատկերի նորանոր գյուտերով: Պատահական չէ, որ Շիրազը չի կարեւորում այդ երկի ո՛չ ժանրը, ո՛չ չափն ու ձեւը. «Ես չեմ կաղապարում իմ ողբերգափղձողների՝ թաղման փխրաթափորի նմանվող արցունքների զորախմբերը: Ես երգ չեմ հեկեկում, ոչ էլ պոեմ է կշռույթավոր, վեպի առասպելագլուխներ էլ չեն սոքա, որոնցով բացվում է ամեն մի հայի սիրտը մեր առջեւ, ես չգիտեմ ի՛նչ են այս իմ հառաչանքների մթնալույս, հուշախորհրդախոր, զարհուրապեսիլ անպառները..» (ՀԴ-289):

Այստեղ համադրված են քնարականն ու վիպականը: Վիպական շունչն ու կարողությունները մինչ այդ ի հայտ էին եկել Շիրազի «Սիամանթո եւ Խջեզարե», «Սիրանամե», «Շղթայված մեղեդիներ», «Տիգրան Մեծի վիշտը եւ հավերժությունը» եւ այլ գործերում: Բայց «Հայոց դանթեականը» աչքի է ընկնում կառուցվածքային ձեւերի, միջոցների բազ-

4 **Հ. Շիրազ,** Մի փեփուր իմ արծիվ կյանքից, Ե.,1984, էջ 5:

մազանությամբ՝ էպիկական հանդարտ պատում, ականապեսների անունից վկայություններ, հերոսների երկխոսություններ եւ մենախոսություններ, պատմական փաստաթղթերի, վավերագրերի հրապարակում, խոսակցություն հեղինակի եւ հերոսների միջեւ, քնարական շեղումներ ու գնահատականներ եւ այլն: Երկխոսությունների ու մենախոսությունների միջոցով առաջ է մղվում գործողությունը: Ներկայացվող իրադարձությունները բնորոշվում են թե՛ հեղինակի գնահատականներով, թե՛ մեր ազգային կամ համաշխարհային մեծությունների խոսքի կամ վերաբերմունքի միջոցով:

Բանաստեղծը տարբեր ժողովուրդների մեծերին հավաքում է մի ոգեխմբի մեջ, որը շրջում է պատմական Հայաստանով եւ ականատես դառնում մարդու ձեռքով սրեղծված իրական դժոխքին: Շիրազը գեղարվեստական պայմանականությամբ համակցում է պատմականն ու արդիականը, անցած ու ներկա դարերը, դիմում է հողագնդի ամբողջ մարդկությանը՝ ձգտելով Մեծ եղեռնի դատապարտման անհրաժեշտությունը դիտարկել ժամանակից դուրս՝ որպես բոլոր պետությունների, յուրաքանչյուր երկրաբնակի անձնական հարց: Գիշերերգից գիշերերգ բանաստեղծը սփռում է եղերական պատկերներ, որ ներկայացնում են հայ ժողովրդի մի մեծ հատվածի ողբերգականորեն խեղված ճակատագիրը՝ գրված մարդ-գազանի ձեռքով: Այդ ընթացքում ամբողջանում են զոհի եւ դահճի կերպարները:

Առանձնանում է կերպարների երեք խումբ. մի կողմում հայ ժողովրդի մեծություններն են, մյուս կողմում՝ համաշխարհային անմահ անուններ, երրորդ կողմում ուրվագծվում է դահճի կերպարը, որի հրեշավոր ոճրագործությունը հնարավոր եղավ աշխարհի թողտվությամբ ու լուռ համաձայնությամբ: Այստեղից սկիզբ է առնում բանաստեղծի ընդվզումն աշխարհի մեղսագործ լռության դեմ եւ ճշմարտության առջեւ չմեղանչելու հորդորը՝ թեկուզ հանուն իր իսկ ապահովության:

Քերթվածում միահյուսված են իրականն ու երեւակայականը: Անտեսելով տարածա-ժամանակային բոլոր սահմանափակումները՝ բանաստեղծը կողք կողքի է դնում տարբեր դարաշրջանների հայ եւ համաշխարհային մեծերի անմահ կերպարները, որոնց ընտրությունը կատարված է խիստ նպատակային կերպով. դրանք ընդհանրացված, խորհրդանշական բնույթ ունեն: Նրանք եղել են ժողովուրդների միտքը, ոգին, խիղճը. Մաշտոցը, Խորենացին, Նարեկացին, Անդրանիկը, Կոմիտասն ու Մեծ Հովհաննեսը՝ Այվազովսկին, եւ միաժամանակ Ա. Դանթեն, որը ոչ միայն իտալական ժողովրդի, այլեւ ամբողջ Եւրոպայի խորհրդանիշն է, ճակատագրի բազում հարվածները կրած հույն ժողովրդի՝ տրոյական ասքապատումի երգիչ՝ Հոմերոսը, ողբերգությունների անմրցելի հեղինակ եւ դեռեւս XVI դ. թուրքի էությունը հրաշալի գիտակցած Վ. Շեքսպիրը, հայ եւ թուրք ժողովուրդների տվածին ու խլածին քաջատեղյակ Ջ. Բայրոնը, մեծ հումանիստներ Գյոթեն, Հայնեն, եւ իհարկե ինքը՝ բանաստեղծը՝ Փոքր Հովհաննեսը, հանդես են գալիս՝ սրեղծելով հեղաբրքիր կերպարային համակարգ: Յուրաքանչյուր ազգի ցույց տալով հենց իր պաշտած մեծությունների դիրքորոշումը՝ Շիրազը նրանց իսկ ըմբռնումներով ընդգծում է գեղեցիկի, բարու, ճշմարիտի մարդկության իդեալը: Օրինակ՝ դիմելով գերման ժողովրդին՝ բանաստեղծը գրում է. «Թող հավիտյան հնչեն գյոթեական վարդի երգերդ, թող փոքրիկ փղան մեծերիդ ձեռքով ուրիշի ոչ մի վարդ չքաղե այլեւս» (ՀԴ-149):

«Հայոց դանթեականում» դեպքերն ու կերպարները ներկայանում են Շիրազին բնորոշ

քնարական հախուռն բնութագրումներով: Կերպարների շարքում քնարական բուռն պաթերքով առանձնանում է հեղինակը՝ Փոքր Հովհաննեսը, որն առաջնորդում է ոգեխմբին: Յուրաքանչյուր իրադարձություն արտացոլվում է նրա հոգեւոր աշխարհում, ներկայացվում հեղինակի ընկալմամբ ու գնահատականներով՝ առիթ տալով քնարական զեղումների: Այսպիսով՝ Փոքր Հովհաննեսի կերպարը հանդես է գալիս թե՛ որպես առարկայական կերպար, թե՛ որպես քնարական հերոս: Այսպեղ քնարական շեղումները հիմնականում հեղինակային են: Քնարական շեղումների հնարանքը գերակշռող է, բայց միակը չէ: Բանաստեղծն օգտագործում է նաեւ հերոսների անունից խոսելու, վերհուշի միջոցով պատմությունն ընդմիջարկելու, այդպիսով՝ հերոսների հոգեբանության ինքնաբացահայտման միջոցները: Բնության նկարագրությունները եւս կարեւոր դեր են խաղում բուն գործողությունների պատկերման մեջ: Քնարական եւ վիպական տարրերի համադրման հարցում Շիրազը ելնում է թեմայի յուրահատկությունից: Ըստ էության զուտ էպիկական գործեր Շիրազը չունի:

Քնարական հերոսի կերպարը (այն շատ հաճախ համընկնում է բանաստեղծի անձնավորության հետ) ավելի ամբողջական տեսք է ստանում հեղինակի ստեղծագործության միասնական համապատկերում[5]: Այդ տեսակետից Շիրազի քնարական հերոսը ժամանակային հսկայական ծավալումներ իր մեջ թանձրացնող խորհրդանիշ-մարդն է եւ նրա մեջ խտացված մարդկայնությունը: Առաքինության հարցը սերտորեն առնչվում է մարդկային խղճին եւ գթասրտությանը: «Արշալույսների ծիրանին» ուսերին, «ողջ գարունները թագավորած» շիրազյան մարդը, ասպվածորոնման ճանապարհին հաղթահարելով ցավն ու փառապանքը, հայտնաբերում է, որ Աստված նիրհում է իր հոգում: Այսինքն՝ կատարյալը մարդու մեջ է. «Ով իրեն հաղթի՝ նա կաստվածանա»[6]: Անկատար եւ կատարյալ մարդու միջեւ եղած անջրպետը հաղթահարելու ձգտումը, հզոր մի ուժով ինքն իրենից անջատվելու մղումը վեհացնում է քնարական հերոսին: Սակայն ոգու ներդաշնակության հաստատումը՝ որպես մարդկության մեծագույն երազանքի իրականացում, անհասանելի է:

Շիրազի հերոսը թշնամու համար ներում է հայցում Աստծուց, իսկ ինքը «հառաչում է», ուրեմն՝ ցավ է ապրում, փառապում է, ներողի հոգին խաղաղված, հանդարտված է լինում.

Թշնամիներիս դու ներիր, Աստված,
Ես քո չափ մեծ չեմ,
Որ չհառաչեմ,
Թե ներես՝ իցիվ զղջան՝ մաքրված,
Իցիվ քեզ նման
Իրավ սրբանան (I, 187):

Ունենալով հոգու լիակատար ներդաշնակության հասնելու անհնարինության գիտակցումը՝ մարդն ապրում է այդ գեղեցիկ ու վեհ երազանքի իրականացման անհնարինության ողբերգությունը: «Գոյապայքարի ճակատագրական անխուսափելիությունը մարդուն մի դեպքում զրկում է անհատականությունից, փրորում, ձուլում է օրերի գորշ զանգվածին, մի այլ դեպքում դառնում է անվերջանալի փվայպանքների աղբյուր, քանի որ զրկում է անհատին ժամանակների ծանր բեռն առողջ հավատով կրելու հնարավորությունից, ոչ էլ թույլ է

5 **Է. Ջրբաշյան**, Գրականության տեսություն, Ե., 1972, էջ 348-349:
6 **Վ. Շիրազ**, Երկեր հինգ հատորով, Երեւան, 1981-1986, հ. I, էջ 248:

փալիս պապմական պահի փրամաբանության մեջ համապատասխանություն որոնել սեփական էության մղումներին»[7],- գրում է Վ. Կիրակոսյանը: Գոյության պայքարի անողոք օրենքները հեպ են շրջում առաջընթացի անիվը: Հասարակական անխուսափելի կապերի եւ դրանց օպարացած անհատի՝ այդ իսկ հասարակության մեջ ապրելու անհրաժեշտությունից ծնվում է ազատության ձգտող մարդու հակասական հոգեբանությունը, որ անհատի ողբերգությունն է: «...Իմ ցավերն ուրիշ են,- կարդում ենք Շիրազի՝ քրոջն ուղղված նամակներից մեկում,- սկսած անձնականից հասած մեծ ազգայինս եւ վերջացրած համամարդկային անդնդամթին մտածմունքներով ու մանավանդ ցավերով.. բայց չգիտեմ, թե ո՛րն է ավելի ուժգին գրոհ տալիս բազմավիրավոր սրտիս վրա՝ անձնակա՞ն, թե՞ անանձնական մշտամըրմուռ փվայտանքներս,- ես երազում էի՝ մարդը մարդուն օգնության հասներ այնպես՝ ինչպես շտապ օգնության են հասնում կամ ինչպես հրշեջի կայծակնաճիչ ավտոն է սլանում իմաստուն խելացնորությամբ»[8]: Ծնվում է համաշխարհային վիշտը.

Ցածում անմեղին մեղավորն հաղթում,
Ամից պաշտվում է սատանան ափված,
Ցածում ծաղկունքն էլ իրար են խեղդում
Եթերից նայում՝ ողբում է Աստված (I, 247):

Հեղինակի, երբեմն նաեւ ազգային մեծերի քնարական միջամտությունները «Հայոց դանթեականը» չեն զրկում վիպական ամուր հիմքից: Այդպիսի դրվագներ կան երկի գրեթե բոլոր գլուխներում: Երբեմն պասներկուվանկանի խաղաղ պատում ապահովող երկար տողերով, երբեմն կարճ, հապու տողերով, օգտագործելով նաեւ անշաղկապության գեղարվեստական հնարանքը՝ Շիրազն սրեղծում է սրընթաց վիպական պատկերներ.

Բայց ես իսկույն կրակ դառա,
Կրակ դառա, մի քար առա,
Ջախջախեցի
Գլուխն օձի,
Գլուխն օձի
Ջախջախեցի,-
Սիրտս հովացավ հույսի մի վայրկյան,
Հույսս ծովացավ, ինչպես Նազուկան... (ՀԴ-115-116):

Էպիկականությունն առանձին թափով արտահայտված է «Մեծ մռունչի գիշեր» գլխում (ՀԴ-303-324), որտեղ պատկերված են Անդրանիկի, Սմբատի, Թորգոմի, Քեռու, Աղբյուր Սերոբի եւ մյուս հայորդիների մղած կռիվները: Ութվանկանի կարճ տողերով հեղինակը տեսանելի է դարձնում հայ ֆիդայիների գործողությունները.

Վրա փվել.. Վրա փվին,
Գետը վրա փվեց ծովին.
Ջարկեց մթնում, շանթի նման,
Ջարկեց ոխով մեր անսահման,
Գաղտնազինված մի գունդ խուժով՝
Ջարկեց անզուսպ հայ վրեժով (ՀԴ-304):

---

7 **Վ. Կիրակոսյան**, Արեւմտահայ բանաստեղծությունը 1890-1907 թթ., Երեւան, 1985, էջ 130-131:
8 **Խ. Բարսեղյան**, Շիրազ, Ե., 1990, էջ 204-205:

Տեսնելով այս ժողովրդի մի սփվար մասի բնաջնջումը, որին նախապես զրկել էին ինքնապաշպանության հնարավորությունից անգամ՝ իրական դժոխքի պարունակներում շրջող ոգեխումբը համախմբվում է ընդդեմ չարիքի: Իսկ «բռունցքված» ողջախոհության ու դատապարտումի առաջ անզոր է թուրք «գամփռը»: Տասնամյակների թմբիրից արթնացած աշխարհի խիղճն ու բանականությունն ի զորու են փշրելու «շնագայլի ժանիքները»: Ժանտ հրեշին մնում է իր իսկ չարությամբ կործանվել. «Վերջին ժանիքը իր կողը խրեց եւ շնահանգավ...» (ՀԴ-137):

Ապրած ողբերգությունը չի ընկճում բանաստեղծին. համապարած մահերի անլույս գիշերներում էլ հուսացող է հայը՝ լցված ապրելու եւ իր լեզուն ու մշակույթը սերունդներին փոխանցելու վճռականությամբ: Դա ընդգծվում է հատկապես «Վերջին գիշեր» գլխում, որտեղ անապատային քամու դեմ քաջաբար պայքարող հայ մայրը որդուն է ավանդում հայոց գիրը: Փոխաբերական այս պատկերը հրաշալի կերպով ընդհանրացնում է հայ մարդու հերոսականությունը, նրա մաքառման ոգին:

Գեղարվեստավավերական այս սրեղծագործության մեջ առկա են ազգային էպոսի ավանդույթները: Արդեն նախերգանքում հանդիպում ենք էպոսի խորհրդանիշները՝ Թուր Կեծակին, Փոքր Միերը: Համաշխարհային «անզույգ ոճրի» սպասվելիք նկարագրությունն անգամ չի խամրեցնում Շիրազի՝ հայ ժողովրդին բնորոշ լավատեսական ոգին.

Ելնեն ժեռ բանտից իմ Միերն ու ձին,
Որ գեթ աղ բերեն իմ հույսի հացին (ՀԴ-9):

Ընդհանրապես Շիրազը շատ հաճախ անդրադառնում է հենց Փոքր Միերի կերպարին: Հավանաբար պատճառը մեր ժողովրդի անմահ հույսն ու սպասումն է, որ մարմնավորված է Փոքր Միերի կերպարում: Անվերջ հուսալ, հավատալ եւ սպասել սուտ աշխարհի կործանմանը եւ ճշմարտության, արդարության կենարար լույսին.

Ախ, ե՛րբ պիտի ժայռը փշրես՝
Բերես Վանա արեւն էլ մեզ.. (II, 215):

Շիրազը Քերթվածի գործողությունները հաճախ զարգանում են՝ էպոսի առանցքային գործողությունների հետ զուգահեռներ տանելով: Օրինակ՝ եթե խոսվում է թշնամական «յոթ ազգերի» դարավոր լծի մասին, ապա հետեւում է.

Ինչպես Միերին՝ ժայռի մեջ առան՝ սեղմեցին նրան,
Բայց ամենամեծ սեղմողը դարեր
Մելջուկի զարմն է, որ սեղմում է դեռ.. (ՀԴ-10):

Եթե խոսքը սին խոստումներին հավատացած ու անպաշտպան մնացած ժողովրդի մասին է, ապա կարդում ենք.

...Մնացին քույրերն այն Դավիթների,
Որ թակարդն ընկան, մնացին գերի... (ՀԴ-11):

Շիրազն այնքան է տարվել էպոսով, որ փորձել է մշակել այն: Նա իր ընկերոջը՝ Վար-

դան Շահխաթունուն գրում է. «Իմ մեջ ոլորվում է «Սասունցի Դավիթիս» ուրվականը, եւ լցվում եմ նրանով: Իմ գրական մեծ գործը դա է լինելու: Ապրում եմ դրանով ու շնչում եմ Դավթի հետ»[9]:

Եթե Սասնա հերոսները մարմնավորում են հայ ժողովրդին, նրա իդեալները, առաքինությունները՝ հայրենասիրությունը, քաջությունը, խաղաղասիրությունը, մեծահոգությունը, մարդասիրությունը, անշահախնդրությունը, պարզահոգությունը եւ այլն, ապա Չենով Օհանն այդ ժողովրդի արթնացնողն է, որը որոտաձայն ոգեշնչում է Դավթին եւ Միերին: Այդ իմաստով թերեւս Շիրազի պոեզիան եւս Չենով Օհանի որոտաձայն կանչի ուժն ունի. քնած չթողնելու, սթափեցնելու, ոգեշնչելու վիպական ուժ: Հարազատ մնալով էպոսի ոճաբանությանը, ինչպես նաեւ Հովանի մտածողությանը՝ Շիրազը «Հայոց դանթեականում» պալիս է Դեր-Զորում մեռնող մի ծերունու հազիվ լսելի ճիչը.

...Վերջին շնչի մեջ ծերունի մի խեղճ դեռ նոր էր մեռնում,
Որ ուզեց գոռալ հավատի ձենով, ձենով Օհանի,
Բայց հազիվ հեգեց վերջին մի շնչով վերքն Հայաստանի.

...Հազար հազար հայ՝ Խլաթում մորթված, հազար հազար հայ,
Հազար հազար հայ՝ Կարսում անճիտված, հազար հազար հայ,
Հազար հազար հայ՝ Բաղեշից քշված, հազար հազար հայ,
Հազար հազար հայ՝ Մուշում էլ մշված, հազար հազար հայ,
Ավա՛ղ Տարոնս, Սասունս հեյ վա՛խ,
Փլվեցավ հազար տան սյունս, ավա՛ղ... (ՀԴ-274):

Հազար թվի ժողովրդական ըմբռնումը եւ էպոսի յուրաքանչյուր ճյուղի նախերգական հատվածների «Հազար օղորմի»-ների նմանությունը կա այս եւ հետեւյալ հատվածում: Թեեւ Շիրազը չի գործածում «օղորմի» բառը, բայց թվում է՝ տողի բնականոն եւ տրամաբանական ավարտը հենց էպոսում հնչող «Հազար օղորմին» է.

Իսկ դուք ինչպե՞ս եք մայրեր թրատում
Հազար ու հազար, հազար ու հազար,
Հազար ու հազար մանուկներ մորթում,
Հազար ու հազար, հազար ու հազար (ՀԴ-111):

Մեռնող ծերունու արդար մռունչը հովնանյան ձայնի թափ ու որոտին հասցնելու առաքելությամբ Շիրազը գրեց «Հայոց դանթեականը», որն էպոսի նման լի է մեր ժողովրդի թշնամիների նկատմամբ անհուն ատելությամբ, նեմեսիսյան ցասումով, վրեժխնդրությամբ.

-Մի՞թե սրտով է հայոց Ասծու,
Որ հայ չթողին հայարմատ երկրում,
Եւ դեռ անպատիժ ոսոխն է բերկրում,
Էլ հայ չմնաց երկրում հայահոծ,
Էլ հայ չմնաց հայահոծ Խութում,
Էլ հայ չմնաց Ակնում հայահոծ,
Որ հայ չմնաց հայահոծ Վանում,
Էլ հայ չթողին Սասնում հայահոծ,
...Այժմ էլ ինչպե՞ս մեղքի կոկորդից հայը չբռնի.. (ՀԴ-164):

---

9 **Հ. Շիրազ**, Նորահայտ ստեղծագործություններ, Եր., 2002, էջ 19-20:

Սակայն ժողովրդական բանաստեղծության շնչով գրված այս հառաչանքը չի կուրացնում արդարապես բանաստեղծին: Վրեժի զգացումը, չարագործին ի վերջո արժանին հատուցելու պահանջը երբեք չի վերածվում ատելության հասարակ ժողովրդի հանդեպ, որն ունակ է նայելու արդարության աչքերին, եւ բանաստեղծը սրբացնում է այն խեղճ թրքուհուն, որ աչք չէր փակում արդարության առջեւ եւ հառաչում էր.

-Ախր, էրմանին դուշման չէր մեզի,
...Վնեծքը թոկ է վզին մեր որդոց,
Ցեղ են մորթում, ցե՛ղ, այն էլ գարունով,
Ելդզ, խեղդըվե՛ս էս ծով արյունով... (ՀԴ-61):

Հատկապես նկատելի է էպոսի արվեստի ազդեցությունը, լեզվաոճական ձեւերի, մտածողության կերպի ընդհանրությունը: Էպոսի նման «Հայոց դանթեականն» էլ հյուսված է ազատ փաղաչափությամբ՝ մերթ նեղ ու սրընթաց, մերթ լայն, ծավալվող ու մեղմասահ՝ ստեղծելով վիպականի ու քնարականի հետաքրքիր համադրություն: Արտահայտչական միջոցների ընտրության, պատկերակառուցման մեջ եւս հաճախ զգացվում է էպոսի պատկերավորման համակարգի շունչը: Ահա Դավթի եւ Մելիքի մենամարտի ավարտը հիշեցնող մի չափազանցություն.

Երբ հայ թուրը գլխին իջավ,
Գլխի կեսը՝ ինչ-որ ճիչով՝
Չիու աջ կողմն ընկավ կանչով,
Մյուս կեսը ձախ կողմն ընկավ,
Չին էլ փիրոջ մեղքից հանգավ (ՀԴ-307):

Հայոց սուրը նույնքան անողոք է ժողովրդի թշնամիների հանդեպ, որքան Դավթի սուրը: Էպոսի մտածողության դրոշմը զգալի է գրեթե ամեն մի տողում: Մեջբերենք թեկուզ վերոհիշյալ հատվածին նախորդող տողերը, որտեղ գծագրվում է մեր ժողովրդի այլասիրական ոգին, նրա հանդուրժողականությունն անգամ թշնամական ժողովրդի հանդեպ, որը հիշեցնում է մենամարտից հետո Դավթի կոչը՝ ուղղված արաբ ժողովրդին.

-Քե՛զ մահ կտամ, ո՛չ քո խալխին,
Խաբված խալխդ խելքի կգա՝
Եր կքաշվի՝ գանգդ վկա..
Հայոց թուրը ցեղ չի ջնջի՝
Ցեղ ջնջելը գյուտն է դահճի,-
Ճչաց հայոց ցավով լիքը՝
Ինքը՝ հայ թուր Ավդրանիկը (ՀԴ-306-307):

Ինչպես էպոսն է ավարտվում մեր հույսի դյուցազնի վերադարձի ակնկալիքով, այնպես էլ «Հայոց դանթեականն» է ավարտվում մեր հույսերի եւ ժողովրդի հավերժության անխախտ հավատով:

Հիշենք սակայն, որ «Հայոց դանթեականը» դիցաբանական պատում չէ, այլ հայ ժողովրդի ոչ հեռու անցյալի պատմությունն է, որտեղ իրական փաստերն այնքան են վարար ու հոգեցունց, որ մտացածին պատկերների անհրաժեշտություն չկա, առկա նմանությու-

ները միփված են ապահովելու երկի գեղարվեստականությունը: Հեղինակին մնում է Սիամանթոյի նման «հայելին ըլլալ հայ արիւնին», դավաճան մարդկութեան գարհուրանքներն արտահայտող հայելին բանալ՝ բազմազան եղանակներով ու միջոցներով հնչեցնելով իր ցասումն ու ընդվզումը: Հարազատ մնալով էպոսի արվեստին, լեզվաոճական ձեւերին եւ մտածողության կերպին՝ ողբերգականի ընկալման ազգային ավանդույթների, ինչպես նաեւ համաշխարհային գրականության եւ մեծերի զուգահեռներով Շիրազն ընդգծում է մարդու եւ մարդկայինի, ողբերգականի ու հերոսականի իր բանաստեղծական պատկերացումները:

Շիրազը Մեծ եղեռնի հարցը միջազգայնացնելու առաջին քայլերն էր անում: Եւ այդ քայլերը համակողմանի ուսումնասիրված (մանավանդ եթե նկատի ունենանք ժամանակի խոչընդոտները) եւ գեղարվեստական մատուցման առումով մանրակրկիտ մտածված էին: Եւ առհասարակ ժամանակին քաջություն եւ համարձակություն էր անհրաժեշտ արծարծելու համար մի նյութ, որը պետական մակարդակով ամեն կերպ կոծկվում էր, թաղվում մոռացության խորշերում:

Իհարկե, «Հայոց դանթեականը» գեղարվեստականության տեսակետից անթերի չէ: Նկատվում է որոշակի ձգձգվածություն, որը դժվարընթեռնելի է դարձնում այն: Կրկնվող ու վերակրկնվող միանգամայն իրական ու պատմական հոգեցունց պատկերները հոգեպես ջլատում են: Մեկ շնչով անհնարին է կարդալ քերթվածը. անհրաժեշտ են դադարներ՝ ուշքի գալու, փոքր-ինչ հոգեկան հավասարակշռություն գտնելու համար: Սովորաբար ոչ բոլոր իրադարձություններն են նկարագրվում, շատ հաճախ դրանց մասին ակնարկվում է մեկ-երկու բառով: Պատկերման այս եղանակի շնորհիվ սահմանափակ ծավալի մեջ տրվում է հարուստ բովանդակություն: Շիրազը ձգտում է ասել ամեն ինչ՝ ողբերգության պատճառները, իրագործման մեխանիզմները, ընթացքը, հետեւանքները, փորձում է արթնացնել աշխարհի խիղճը, կոտրել անտարբերությունը, դատապարտում է, հորդորում: Այս ամենը, իհարկե, հոգեբանորեն հասկանալի է, բայց ծանրացնում է պոեմը, ծավալվում չափից ավելի: Սա անկասկած թերություն է: Խնդիրն այստեղ պատանդի մեծության ու փոքրության մեջ չէ: Սա ողբերգություն վերապրածի բնականոն ինքնաժայթքում է. արնածոր վերքի մասին խոսել, պատմել, գնահատականներ տալ անհնարին էր: Տարիներով կուտակված հակասական զգացմունքների առաջին ինքնաժայթքմանը բնորոշ ամեն ինչ պատմելու, ոչինչ բաց չթողնելու, խուլ ու մունջ աշխարհի խիղճը, ինչպես նաեւ ժողովրդի ինքնապաշտպանական բնազդն զարթնեցնելու փորձ է սա: Իսկ համաշխարհային գործեր այդ թեմայով հավանաբար դեռ պիտի գրվեն, քանի որ նոր է գալու այն վերահմաստավորելու ժամանակը: Ապրած ողբերգությունը պետք է որ օգնի բացահայտելու մարդկային հոգու, վշտի նորանոր խորխորատներ. մեկ եզակի իրողության մեջ աշխարհը տեսնելու, ոգու, ուժի, արիության, վեհացումի ու վերհառնումի գեղարվեստական մարմնացումներ դեռ կլինեն: Քանի որ ժամանակ է պետք ողբերգականի չափից ավելի հորդացումից հանդարտվելու եւ գեղարվեստական թանձրացումների համար, իսկ Շիրազի ժամանակն աշխարհին վիշտը պատմելու, տեղեկացնելու, քնից զարթնեցնելու ժամանակն էր, եւ նա հորդեց, ինքն իր շուրջը լճացավ, ծովացավ՝ փորձելով ներկայացնել իրական գեհենն իր ամբողջ սարսափներով:

«Հայոց դանթեականի» նյութը քաղելով ոչ հեռու անցյալի ազգային ողբերգությունից՝ Շիրազը բարձրացնում է խիստ արդիական եւ համամարդկային հարցեր: Համենայնդեպս

այն արդիական կինչի այնքան ժամանակ, քանի դեռ աշխարհում փոթորկվում են պատերազմն ու ցեղասպանությունը, քանի դեռ մարդու ապրելու իրավունքն սպորադասվում է հզոր տերությունների քաղաքական եւ տնտեսական շահերին: Պատմական արդարության հաստատումը բանաստեղծի համար առաջին հերթին խղճի, ազնվության, բարոյականության չափանիշ է, հետո միայն՝ կորուսյալ հայրենիքը վերագտնելու գաղափար: Այն միտված է ապահովելու մարդկային հիշողության շարունակականությունը, ազգային ողբերգությունը ճանաչել տալու ազգին եւ աշխարհին, նահատակների ճիչերը լսելի դարձնելու կազմակերպիչներին, իրագործողներին, դատապարտելու ոճրածին լռությունը, թողտվությունը: Բանաստեղծը մարգարեաբար ահազանգում է մարդկանց՝ դաս քաղելու պատմությունից:

Ողբերգականի շիրազյան ըմբռնումներում գերակայում են բարոյական արժեքների անկման, աստվածային բարության, արարումի, մարդկային խղճի, նվիրումի, գեղեցիկի, վեհի բնականոն ընթացքի խեղման գաղափարները: Այս առումով շիրազյան աշխարհընկալումը մոտ է Արեւելքի փիլիսոփայությանը, ի տարբերություն Արեւմուտքի, որտեղ առաջ է մղվում մարդու միայնությունը, անհատի ողբերգությունը:

Պատմականորեն ձեւավորված աշխարհընկալման հոգեբանական եւ գաղափարական հենքը, ինչպես նաեւ հայրենիքի նկատմամբ պաշտամունքի հասնող սերը՝ տոգորված հայրենի հեռուների կարոտի կանչով, տառապանքի եւ կորուստների դժոխային ուրվաշղուկներով ու արնածովերով, ուրվագծում են ողբերգականի շիրազյան ըմբռնումները:

ՄԱՐԻԱՄ ԴԱՎԹՅԱՆ

ԽՈՐԵՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Բազում հայազգի արվեստագետներ ճակատագրի բերմամբ ապրեցին եւ սրեղծագործեցին հայրենիքից հեռու, իրենց արվեստով հարստացրին ինչպես հայ, այնպես եւ օտար մշակույթը՝ հիմքում ունենալով ազգային մտածողություն եւ հոգեկերտվածք: Այդ մեծատաղանդ երախտավորներից է նաեւ Խորեն Տեր-Հարությանը (1909-1991):

Արեւմտյան Հայաստանում (Խարբերդ նահանգի Աշոտավան (Աղսպավան) գյուղում) ծնված Խորեն Տեր-Հարությանի հայրը՝ Տեր Հարություն քահանան (Քեհյայան), Կ. Պոլսի Միացյալ ընկերության կողմից ուղարկվել էր Աշոտավան՝ լուսավորություն տարածելու նպատակով: Իր նախաձեռնությամբ նա Աշոտավանում դպրոց բացեց, ուր միաժամանակ հանդես եկավ որպես ուսուցիչ եւ տնօրեն:

Երբ սկսվեց հայ ժողովրդի համար ամենադաժան արհավիրքը՝ Մեծ Եղեռնը, խաղաղ կյանքն ավարտվեց, հայրը ձերբակալվեց եւ այնուհետեւ սպանվեց: Դա ինը երեխա ունեցող ընտանիքին ծանր հարված էր, որն անկասկած խոր հետք թողեց մանկան ներաշխարհում:

Գաղթի ճանապարհը բռնած այս մասնատված ընտանիքը երկար դեգերումներից հետո վերջապես 1921-ին հաստատվեց ԱՄՆ-ում, Մասաչուսեթս նահանգի Վուսթր քաղաքում: Այստեղ Խորենն ընդունվում է միջնակարգ դպրոց, զուգահեռաբար հաճախում Վուսթրի արվեստի թանգարանին կից գեղարվեստի դպրոցը: Միջնակարգ դպրոցը Տեր-Հարությանին կրթաթոշակ է հատկացնում, եւ այդ միջոցներով 1928 ու 1929 թվականների ամառային ամիսները նա անցկացնում է Փրովինսթաուն եւ Գլուսեսթր քաղաքներում: Փրովինսթաունում 1928-ին տեղի ունեցավ Խորեն Տեր-Հարությանի ջրաներկ աշխատանքների անհատական առաջին ցուցահանդեսը: Հաջորդ տարի նա սրանում է Վուլշթայնի անվան կրթաթոշակ եւ տեղափոխվում է Նյու Յորք:

Հաղթահարելով դժվարությունները՝ Տեր-Հարությանը մեծ եռանդով աշխատում էր գեղանկարչության ասպարեզում եւ սովորում Նյու Յորքի ազգային ակադեմիայում:[1] Գույնի ու գծի սուր զգացողությամբ օժտված Խորեն Տեր-Հարությանն իր սրեղծագործ կյանքը սկսում է որպես գրաֆիկ, այնուհետեւ՝ գեղանկարիչ:

Նյու Յորքում մի քանի պատկերասրահների տեր Քազ-Դելբոսը, ծանոթանալով երիտասարդ նկարչի աշխատանքներին, մեծ հետաքրքրություն ցուցաբերեց դրանց նկատմամբ եւ 1929-ին կազմակերպեց Տեր-Հարությանի անհատական ցուցահանդեսը, որը լայն արձագանք գտավ մամուլում, արժանացավ խրախուսական գրախոսությունների:

1930 թ. ընկերոջ հրավերով երիտասարդ արվեստագետը մեկնեց Ջամայկա: Այստեղ էր, որ նա գտավ իր ներշնչանքի անսպառ աղբյուրը. արեւադարձային բնության պերճաշուք գունագեղությունն ու արտասովոր կեցվածքով ու կենցաղով մարդիկ առանձնակի հմայք հաղորդեցին նրա կտավներին, վառ գույներով հարստացրին նկարչի ներկապնակը: Սկսվեց սրեղծագործական նոր, բեղուն շրջան. նա սրեղծում է գեղանկար ու գծան-

---

1 **Ellen Simonian**,The art of Koren Der Harootian // The Armenian Mirror-Spectator, sept.1948.

կար աշխապանքների մի հրաշալի շարք՝ «Ջամայկայի կանայք», «Մանգո հավաքողները»: Դրանք աչքի են ընկնում կոմպոզիցիոն լուծումների պարզությամբ, երփնագրի գունեղությամբ ու հյութեղությամբ: 1931 թ. Ջամայկայի ազգային ինսպիտուտում կայացած Խորեն Տեր-Հարության նկարների եւ Էդնա Մանլիի քանդակների համապեղ ցուցահանդեսն իր արձագանքը գտավ վեսպ - հնդկական մամուլում:

Արվեսպագեսը կրկին Նյու Յորքում անհապական ցուցահանդես կազմակերպելու առաջարկություն սպացավ (1931): Ցուցահանդեսի առիթով "New York Times" պարբերականում արվեսպի քննադապ Ալդեն Ջուելը գրում է.

«Սա Քազ-Դելբոսի վարպահության արդարացումն է, ինչն անմիջապես ակնհայդ է բոլոր նրանց համար, ովքեր դեսել են այս նկարները: Դրանք կենսական են, պայծառ, ճոխ, ինչպես գծանկարները, նույնպես եւ գեղանկարները, արժանի համեմադվելու այնպիսի գործերի հեդ, ինչպիսիք են Վինսլոու Հոմերի կամ Սարջենդի հեղինակած գործերը: Դա չի նշանակում, որ երիդասարդ պարոն Տեր-Հարությանն արդեն լիովին պայդրասդ վարպեդ է, բայց իր աշխադանքները զարմանալիորեն լավն են եւ արժանի են գնահադված լինելու»[2]:

Նույն 1931-ին Ֆրենսիս Հենրի Թեյլորը՝ Վուսթրի արվեսպի թանգարանի, հեդագայում նաեւ Մեդրոպոլիդեն արվեսպի թանգարանի դնօրենը, գնում է Խորեն Տեր-Հարության «Համբերություն» աշխադանքը եւ առաջարկում է անհապական ցուցահանդես կազմակերպել ու ներկայացնել Ջամայկայում արված ստեղծագործությունները Վուսթրի արվեսպի թանգարանում: Տարիներ անց՝ 1949 թվականին, Ֆրենսիս Հենրի Թեյլորը "Feature Parad"-ում դված հարցազրույցում նրա մասին ասել է. *«Կարծում եմ՝ նա այսօր ԱՄՆ-ում աշխադող, կադարելության հասած լավագույն քանդակագործներից մեկն է»*[3]:

Այս ցուցահանդեսից հեդո նա նորից մեկնեց Ջամայկա, ուր ապրեց 1930-1938 թթ., հազվադեպ միայն այցելելով Նյու Յորք՝ ցուցադրվելու նպադակով: Անկաշկանդ ձեռքով, ռեալիսդական թարմ ու ներազդու ձեւերով արված այս շրջանի գործերի հաջողությունն այնքան մեծ էր, որ դրանք, մամուլից բացի, հադուկ դրվադանքի արժանացան այնպիսի ճանաչված արվեսպագեսների կողմից, ինչպիսիք էին անգլիացի նկարիչ Օգասդես Ջոնը, անգլիացի գրող Հյու Վոլփոլը: Վերջինս գնել է մի քանի գործ եւ հիանալի կերպով նկարագրել «Երկրպագություն ջրաշուշանին» ջրաներկ աշխադանքն իր «Ինկվիզիդոր» վեպում (գլուխ 3-րդ): Կարեւոր փասդ է, որ հեդագայում Հյու Վալփոլի հորդորներով է նաեւ, որ նկարիչը սկսեց զբաղվել քանդակով:

Տակավին չբացահայդված քանդակագործն արդեն նկադվում էր այս շրջանի գործերում. ռիթմիկ ձեւերի քանդակային բնույթը, կառուցվածքը եւ հյութեղ գույները ավելի արդահայդիչ են դարձնում գեղանկարը: Ավելի առանձնահադուկ եւ ուրույն ձեռագիր ստեղծելու նպադակով նա օգդագործում է որոշ դեխնիկական հնարներ՝ քարափոշի խառնելով ներկանյութերին:

Ջամայկայում նա գդավ հնորակ, չոր փայդի դեսակների առապություն՝ մահոգան, էվկալիպդ, այդ թվում նաեւ հեդագայում բազմիցս օգդագործվող, դժվար ենթարկվող,

---

2 ՀԱՊ հուշաձեռագրային բաժին, Խորեն Տեր- Հարության չմշակված անձնական արխիվ:

3 **Frederick L. Rushton**, Genius in happy misery // Worcester Sunday Telegram, July 10, 1949.

կամակոր գուայակում ծառափեսակը (lignum vitae, կենաց ծառ): Գեղանկարից քանդակին աստիճանաբար անցումը տրամաբանական եւ բնական էր, եւ առաջին իսկ հինգ քանդակները մահոգանի փայտից կատարված են մեծ վարպետությամբ, կատարյալ տեխնիկայով, ինչը ներհատուկ է Խորեն Տեր-Հարությանի հետագա ստեղծագործությանը:

1938-ին վերցնելով իր գունանկարները եւ առաջին հինգ քանդակները՝ արվեստագետը մեկնում է Լոնդոն եւ մասնակցում է 1938-39 թվականների ամենամյա «Սբ. Ծննդյան ցուցահանդես»-ին, Զվեմեր պատկերասրահում, որին մասնակցում էին գլխավորապես ժամանակակից եւրոպական վարպետները՝ Արիստիդ Մայոլ, Պաբլո Պիկասո, Ժորժ Բրաք, Հենրի Մուր եւ այլք:

Տեր-Հարությանը Նյու Յորք է վերադառնում 1944-ին, իսկ 1945-ի նոյեմբերին «Քրաուշաար» պատկերասրահում տեղի է ունենում իր քանդակների եւ գծանկարների անհատական ցուցահանդեսը, որը մեծ ճանաչում է բերում նրան:

Լինելով Նյու Յորքի Քանդակագործների միության անդամ՝ 1948-ի գարնանը Խորեն Տեր-Հարությանը մասնակցեց Վաշինգթոնի հրապարակում (Նյու Յորք) կազմակերպված միության անդամների բացօթյա ցուցահանդեսին, իսկ տարեվերջին այդտեղ քանդակագործը կազմակերպեց իր անհատական ցուցահանդեսը: Այն մեծ հետաքրքրություն առաջացրեց ու բարձր գնահատանքի արժանացավ մամուլում: Նյույորքյան գործարար եւ բարեգործ Հայկ Գավուքջյանը Մետրոպոլիտեն արվեստի թանգարանին ներկայացրեց Խորեն Տեր-Հարությանի «Պրոմեթեւսն ու անգղը» (1948) ստեղծագործությունը, որը թանգարանը գնեց մշտական ցուցադրության համար:

Նույն թվականին Ֆիլադելֆիայի արվեստի թանգարանում տեղի ունեցավ «Ֆեյրմաունթ Փարք» ասոցիացիայի քանդակի երրորդ միջազգային ցուցահանդեսը: Մասնակցում էր նաեւ Խորեն Տեր-Հարությանն իր «Ըմբոստ սրտուկը»* աշխատանքով[4]: Այս ցուցահանդեսից հետո ընտրվեցին վեց ժամանակակից քանդակագործ, այդ թվում նաեւ անվանի վարպետներ Ժակ Լիփշիցը, Ջեյքոբ Էփսթայնը, Խոսե դե Կրեֆտը եւ Խորեն Տեր-Հարությանը: Յուրաքանչյուրը պետք է ստեղծեր խորհրդանշական քանդակներ՝ նվիրված Ամերիկայի պատմությանը՝ Էլեն Ֆիլիպ Սեմյուելի հուշարձանի համար (Ֆեյրմաունթ Փարք, Ֆիլադելֆիա): Տեր-Հարությանի համար որոշված էր «Գյուտարարի» արձանը, արվեստագետին տրված էր ստեղծագործելու լիակատար ազատություն: Քանդակագործը Կյուսիսային Կառոլինայի մարմարից կերտեց 9 ոտնաչափ բարձրությամբ, խիստ արեւելյան դիմագծերով տղամարդու կանգնած ֆիգուր, դասական քանդակագործությանը հարող, մոնումենտալ բնույթի ստեղծագործություն:

Խորեն Տեր-Հարությանի ստեղծագործական կյանքի առավել նշանակալից շրջանն ընդգրկում է 1950-1970 թթ. ժամանակահատվածը. ավելի հստակ է դառնում քանդակագործի աշխարհընկալումը: Նրա կերտած կերպարները հանդես են գալիս որպես յուրօրինակ բողոք պատերազմի, ցեղասպանության, բռնության դեմ: Գեղարվեստական հոյակապ մարմնավորումներով նա իր ծանրակշիռ եւ իմաստալից խոսքն է ասել ֆաշիզմի դեմ մղվող պատերազմի, աշխարհում տիրող անհավասարության, ինչպես նաեւ ատոմային արհավիրքի դեմ («Ատոմային դար», «Պատերազմի արհավիրքը» նկարաշարքերը):

---

4 Աստղանիշով նշված են թվագրության չունեցող ստեղծագործությունները:

Հեպաքրքիր նկապառում կա այդ առթիվ գրված հոդվածներից մեկում,[5] ուր համեմապվում են Խորեն Տեր-Հարությանի «Տառապող մարդկություն» սպեղծագործությունը (1942) եւ «փարիզյան դպրոցի» հայպնի քանդակագործ Օսիպ Ցադկինի «Ավերված քաղաքը» հուշարձանը (1953), որոնց կոմպոզիցիոն լուծումն ու ներքին իմաստը համարյա թե նույնն են:

1954 թ. մայիսի 26-ին պեղի ունեցավ Արվեստի եւ գրականության ազգային ակադեմիայի ամենամյա մրցանակաբաշխությունը, որին մասնակցում էին անդամ չհանդիսացող արվեստագետներ, կոմպոզիպորներ, գրողներ, ինչպիսիք էին Ռոբերպ Շերվուդը, Պուլիպցերյան մրցանակի դափնեկիր, դրամապուրգ Ուիլիամ Ֆոլքբայթը, Էռնեսպ Հեմինգուեյը, Մաքսվել Անդերսոնը: Խորեն Տեր-Հարությանը մասնակցեց իր «Խաչից իջեցումը» (1952, փայպ եւ մարմար) աշխապանքով, որը սպացավ Ջորջ Դ. Վայդենների անվան մրցանակը: Ինսպիպուպի նախագահ Մարկ Քոնելին այս իրադարձությունը բնութագրում է որպես կապարելության հասած պաղանդների ճանաչում[6]: Ներկայացնելով քանդակագործին՝ նա ասել է. *«Սա ականավոր արվեստագեպի ճանաչում է, նրա քանդակը քարից եւ փայպից բացահայպում է խիսպ հոգեւոր եւ զգացական խորություն»*[7]:

1962-63 թթ. քանդակագործն աշխապում է Իպալիայում, ուր փորձում է պիրապեպել մեպաղի, մասնավորապես բրոնզի ձուլման գործին: Նրան հեպաքրքրել էր այն, որ Իպալիայում, հնագույն բաղադրապոմսերի հիման վրա, ոչ թե էլեկպրականությամբ, այլ փայպածուխով ձուլված այդ մեպաղը առանձնահապուկ որակ ունի: Ըսպ քանդակագործի՝ մեպաղը թույլ է պալիս ձեւի զարգացումը պարածության մեջ, իսկ քարը պահանջում է պարփակվածություն, քանի որ ենթակա է կոպրման: Այսպեղ նա մասնակցում է "Գրուպո Դոնաթելլո" քանդակագործների խմբակցության ցուցահանդեսին (1962) եւ սպանում արծաթե մեդալ:

Սկսած 1960-ական թվականներից՝ Տեր-Հարությանը մեծ մասամբ հայկական թեմաներով գործեր է սպեղծում («Սասունցի Դավիթ», «Փոքր Միեր», «Ծովինար», «Արարապի արծիվներ», «Քաջ Վարդանը կառքի վրա», «Մեսրոպ Մաշպոց», «Սահակ Պարթեւ», «Մուսա լեռան քառասուն օրը», «Արարապի գագաթը» եւ այլն): Այս սպեղծագործությունները կերպվածքով, մակերեսի մշակվածությամբ, շեշպված պարզեցումներով աղերսվում են հայկական քանդակագործության հեպ, ուսպի եւ արձանագործի ազգային խառնվածքի եւ ժողովրդական մպածողության հեպեւանք էին:

1971 թ. Փարիզի «Բերնհայմ Ժյոն» պապկերասրահում ցուցադրվեցին Խորեն Տեր-Հարությանի քանդակներն ու որոշ գեղանկարչական գործեր: Ֆրանսիական մամուլը նրա «Վարդան Զորավար», «Մուսա լեռան քառասուն օրը», «Անի», «Ծովինար իշխանուհի», «Արարապի արծիվները» եւ մյուս աշխապանքները բնութագրեց որպես *«դարի մեծ պապանդի գործեր»*:[8]

Արվեստագետն առաջին անգամ Հայաստան եկավ 1970 թվականին, Արպասահմանյան երկրների հեպ բարեկամության եւ մշակութային կապերի հայկական ընկերության հրավերով: Դա մեծ իրադարձություն էր վարպեպի համար, քանի որ պարիներ շարունակ

---

5 **Harold Anthony Gregory**, Der Harootian Feeted on Departure// The Armenian Mirror-Spectator, June 23, 1962.

6 **Walter E. Baum**, Stone Figure of Christ Wins Sculpture // The Sunday Bulletin, January 31, 1954.

7 Անդ:

8 «Քանդակագործի երկրորդ հանդիպումը». «Սովեպական Հայաստան» ամսագիր, 1971, թ.12:

նա փափագում էր լինել իր պատմական հայրենիքում: Տեր-Հարությանը Երեւանի արվեստասեր հասարակայնությանը ներկայացավ անհատական ցուցահանդեսով, որը տեղի ունեցավ Երեւանի Նկարչի տանը: Նա սիրելի դարձավ երեւանյան հանրությանը ազգային ոգով եւ հայրենաշունչ կերտվածքով:

1983 թ. արվեստագետն իր գործերը տեղափոխեց Հայաստան. թվով 88 քանդակ եւ 100-ից ավելի գծանկար, գեղանկար: Նրա անհատական ցուցահանդեսը բացվեց Հայաստանի պետական պատկերասրահի Էջմիածնի մասնաճյուղում: Այդ առիթով վարպետը խոստովանեց. *«Այսօր կյանքիս ամենաեն երջանիկ օրերեն մեկն է, ես անկեղծորեն ուրախ եմ, որ իմ ցուցահանդեսը կբացվի Էջմիածնին մեջ, որն ունի հինեն եկող մշակույթի հիանալի ավանդույթներ»*[9]: Այս բոլոր գործերը նա մեծ սիրով նվիրեց Հայաստանի պետական պատկերասրահին, իսկ 1994-ին Էջմիածնի մասնաճյուղում բացվեց Խորեն Տեր-Հարությանի սրեղծագործությունների մշտական ցուցադրությունը:

Տեր-Հարությանի անհատականությունը գեղարվեստական արտահայտությունների առումով շատ բազմադեմ ու բազմակերպ է: Նրա ստեղծագործության ողջ հյուսվածքի միջով անցնող առանցքային թեմաներ կան. ընտանիք, մայրություն, ոճրագործություն, եղեռն, պատերազմ: Չնայած ողբերգական հնչողությանն ու դրամատիկ շեշտադրմանը՝ նրա քանդակներում իշխողը լավատեսությունն ու բանականությունն է, լույսի, հույսի, հավատի հաղթանակը:

Գեղարվեստական մտածելակերպով Խորեն Տեր-Հարությանը բացառապես ժամանակակից քանդակագործ է: Սկզբնական շրջանում (ստեղծագործության առաջին տասնամյակ) նրա արվեստը ավանդական էր, հիմնականում դա վերաբերում է փայտյա աշխատանքներին («Ընտանիք»,1939, «Գենեզիս»*, «Պայքար կյանքի համար»*, «Ողբերգություն», 1940): Զարգանալով եւ հասունանալով՝ քանդակագործն իր ձեւավորված պլաստիկ համակարգով մոտեցավ մոդեռնիզմին հատուկ ձեւաստեղծմանը: Միեւնույն ժամանակ արվեստագետը պահպանեց կենդանի կապը դասական արվեստի հետ շնորհիվ այն բանի, որ իր աշխարհզգացողությունը միշտ մնաց ռեալիստական, դա ձեւավորեց, կարեւորեց նրա խնդիրը, այն է՝ իր ասելիքը հասցնել դիտողին ընկալելի ձեւերով:

Ամեն մի նկարչի ստեղծագործության մեջ կարելի է տեսնել ազդեցությունների հետքեր: Ինչպես շատ արվեստագետների, որոնք օրգանական կապի մեջ էին ժամանակի եւ միջավայրի հետ, Խորեն Տեր-Հարությանի արվեստում եւս առկա են հեռու եւ մոտ աղերսներ մեզ ծանոթ գեղարվեստական շերտերի հետ՝ սկսած նախնադարյան պրիմիտիվից մինչեւ 20-րդ դարի բազմազան ոճային ուղղությունները. «Ըմբոստ սրրուկը», «Ընտանիք», «Արթնացող մարդը», «Երիտասարդ սեւամորթը» ստեղծագործությունները՝ աֆրիկյան արվեստի, «Աղեւյունը», «Արձագանքը»՝ հնդկական քանդակագործության, իսկ «Չարի վերջը», «Ըմբոստ սրրուկը»՝ եւրոպական դասական քանդակի նմանությամբ: Կուբիստական տարրեր կան որոշ քարե գործերում («Պտղաբերություն», «Օրփեոսի ձայնը», «Արձագանքը»): Մայրության թեմայով կատարված մի քանի գործեր («Լեռների մայրը», «Պտղաբերություն») կարելի է զուգահեռել անգլիացի քանդակագործ Հենրի Մուրի հանրահայտ մարմնեղ կանանց ֆիգուրների հետ:

---

9 «Քանդակագործի երկրորդ հանդիպումը». «Սովետական Հայաստան» ամսագիր, 1971, թ.12:

Չնայած արտաքին զուգահեռներին՝ շատ են այն սրեղծագործությունները, որոնք զերծ են կողմնակի որեւէ ազդեցությունից, («Սասունցի Դավիթը մենամարտում է Մըսրա Մելիքի դեմ», «Արարատի որդին», «Աքլորամարտ»), դրանց քանդակաձեւերը արձանագործի ուրույն ոճի եւ ինքնատիպ անհատականության վկայությունն են:

Տեր-Հարությանի արվեստին հատուկ է վերլուծությունը, որոշ տեսակետից նրան բնորոշ է նաեւ սինթեզը, որ հիմնականում վերաբերում է շարժմանը, որը նրա գործերում հանդես է գալիս որպես դինամիկայի եւ սրատիկայի միասնություն: Երբեմն շարժումը արտահայտվում է կասեցված վիճակում («Ծովային թռչունը եւ ձուկը», «Պրոմեթեւսն ու անգղը») կամ անշարժության մեջ զսպված, որպես ձգտում, մղում, ներքին լարվածություն («Արարատի որդին», «Ռիթմիկ պար», «Գյուտարար»):

Տեր-Հարությանի գաղափարա-գեղարվեստական ընկալումների, սրեղծագործական ձեւերի համակարգում շարժումը (արտաքին թե ներքին) մտքերի, զգացմունքների, հոգեբանական վիճակների արտահայտությունն է:

Նրա սրեղծագործություններում ցանկացած պլաստիկ կերպար պատկերացվում է շարժման մեջ. շարժումն իր ռիթմին է ենթարկում պլաստիկ զանգվածները եւ հաճախ զարգանում է ուղղահայաց առանցքի շուրջ: Տեր-Հարությանի որոշ քանդակներում կոմպոզիցիան եւ շարժումը ծավալվում են հորիզոնական առանցքի շուրջ, օրինակ՝ «Ընկած մարդը» (1962, բրոնզ) աշխատանքը՝ կատարված Հերոսիմայի ռմբակոծության թեմայով: Այս սրեղծագործության մեջ հուզական ծանրաբեռնվածությունը հասցրած է առավելագույնի: Տեր-Հարությանի ընկնող հերոսը ճակատագրին հնազանդ չի տարածվում գետնին, նա բողոքում, ընդվզում է՝ ձեռքը վեր բարձրացրած, ասես ձգտում է կյանքից կառչելու, բողոքում է ճակատագրի դեմ: Ազդու տպավորություն է թողնում մյուս ձեռքում փոքրիկ թռչնի ձագը, որը նոր կյանքի սկիզբն է խորհրդանշում, եւ այս դեպքում ողբերգությունը դառնում է «լավատեսական ողբերգություն»:

Մարդկային ֆիգուրի դիրքը, գլխի շարժումն ու շրջվածքը իմաստային նշանակություն ունեն Խորեն Տեր-Հարությանի քանդակներում («Արարատի որդին», «Հովնան մարգարեն»), նրանք դառնում են գաղափարի, հոգեվիճակի յուրահատուկ պլաստիկ համարժեքներ: Նման համարժեքների համակարգը հեղինակի խորհրդանշական մեթոդի հիմքն է: Հորինվածքային եղանակը վերածվում է գեղարվեստական ձեւի ծրագրային, գիտակցված, բովանդակալից գործի. օրինակ հայացքը ուղղած դեպի վեր՝ հաճախ նկատվող հնար նրա սրեղծագործություններում, ինչը, հավանաբար, հույսի գաղափարն է խորհրդանշում: Տեր-Հարությանն իր սրեղծագործություններում խուսափում է չոր վերարտադրումից: Միտումնավոր կերպով, որպես ձեւաստեղծման հնարներից մեկը, օգտագործում է ձվաձեւ գլուխներ, դիմագծերը հազիվ նշմարելի, սխեմատիկ, ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում է մարմնաձեւերի ռիթմին ու շարժմանը:

Հրաժարվելով սոսկ նմանակումից՝ որոշ դեպքերում դիմում է վերացական ձեւերի, օրինակ՝ «Լեդան եւ կարապը» (մարմար), «Օրփեոսի ձայնը» (մարմար), «Վերացական կոմպոզիցիա» (բրոնզ) սրեղծագործություններում: Հաճախ ընդհանրացնում, սխեմատիզմի է հասցնում կամ խախտում ձեւերը, համաչափությունները: Հոգեբանական սրության հասնելու նպատակով քանդակագործը դիմում է ձեւախեղումների, խախտում ֆիգուրների հա-

մամասնությունները, հաղորդում դրանց վերձիգություն՝ պահպանելով ուրվապատկերների արտահայտչականությունը: Այդպիսի վերացական մեկնաբանման օրինակ է «Մանկական հիշողություններ» (1955, գրանիտ) սրեղծագործությունը. Այն կիսապառկած կնոջ ձեւախեղված ֆիգուր է՝ մարմնի անբնական շրջվածքով, գլխի հորիզոնական դիրքով, շրջապատված դժվար ճանաչելի մարդկային մարմինների հատվածամասերով: Այս բարդ, չափազանց ազդեցիկ եւ էքսպրեսիվ հորինվածքը, որի հիմքում հեղինակի անցյալի հիշողություններն են, ակնհայտորեն աղերսվում է ցեղասպանության թեմային:

Զանգվածների խտությունն ու ծավալը տարածության մեջ ընդհանրապես քանդակային հորինվածքի կառուցման առանձնահատկություններից են: Համաշխարհային քանդակագործության պատմությունը ցույց է տալիս, որ ծավալների եւ տարածության փոխհարաբերությունները անսպառ են: Դա հատկապես կարեւոր է մոնումենտալ քանդակագործության, բնության եւ ճարտարապետության համադրությամբ փոխադարձ կապ սրեղծելու համար: Դրանք ակնհայտ են եւ Տեր-Հարությանի մոնումենտալ գործերում՝ կուռ, միաձույլ եւ զանգվածեղ. նրանց մեջ անպրոհելի միասնություն են կազմում ռիթմը, ձեւը, շարժումը: Հավաք, միաձույլ հորինվածքներում ընդգծելով պատկերվածների ծանրակշիռ մարմնաձեւերը՝ քանդակագործը միեւնույն ժամանակ պահպանում է քարաբեկորի ամբողջականությունը՝ ֆիգուրների հզորությունը շեշտելու նպատակով («Զոհաբերություն», «Լեռների մայրը»):

Տարածության ներգրավումը կոմպոզիցիայի մեջ բազմազան է, եթե այն ենթարկվում է գեղարվեստական կերպարի սրեղծմանը: Որպես կոմպոզիցիոն հնար քանդակագործը երբեմն օգտագործում է միջանցիկ կառուցում. տարածությունը, մի կողմից՝ ազատ սահելով արտաքին ուրվագծերում, մյուս կողմից՝ ազատորեն մտնելով բոլոր փորվածքների մեջ, սրեղծում է լուսանցումներ զանգվածների մեջ եւ դրանով ընդգծում ներքին ուրվագիծը: Դա ուժեղացնում է քանդակում ներդրված շարժումը եւ ավելի էքսպրեսիվ դարձնում կոմպոզիցիան («Օրփեոսի ձայնը». քար, «Անի». բրոնզ): Այդ հնարը, հատկապես բրոնզե քանդակներում, տալիս է լրացուցիչ տպավորություն, լուսաստվերի ինքնատիպ խաղ, որից քանդակային մակերեսը ձեռք է բերում կենդանություն եւ արտահայտչականություն:

Որոշ քանդակներ ունեն դիտանկյունների սահմանափակ ընդգրկում, ինչն սրիպում է ընկալել դրանք ոչ թե որպես կլոր քանդակ, այլ յուրօրինակ բարձրաքանդակ:

«Օրփեոսի ձայնը» (1967. գրանիտ) արտասովոր հորինվածքը որոշ նմանություն ունի դարասկզբի մոդեռնիստական քանդակի նմուշներին: Առասպելական հերոս Օրփեոսի ձայնի շարժող ուժի գաղափարն է ներդրված այս ոչ մեծ չափսերի վերացական հորինվածքում: Քանդակային կառուցումն իր վերացական ձեւերի մեջ կարծես թե հեռավոր նմանություն ունի օդում տարածվող երաժշտական ալիքներին: Ձեւի շարժումը, կարծես թե ենթարկվելով մեղեդուն, մեկ սահուն է եւ դանդաղեցված, մեկ՝ ընդհատվող եւ արագացող: Ձեւերի փոփոխական կշռույթը շեշտում է լույսի տեղաբաշխումը միջանցիկ փորվածքներում: Որոշակի հաստությամբ քարե շերտի վրա լուծված հորինվածքը դիտվում է ոչ թե որպես կլոր քանդակ, այլ երկկողմանի հարթաքանդակ:


Երբեմն էլ հեղինակն այնպես է կառուցում հորինվածքը, որ բացի մի քանի դիտանկյուններից ընկալելու հնարավորություններից, յուրաքանչյուր դեպքում տարբեր հուզական ազդեցություն է ունենում («Ծովային թռչունը եւ ձուկը», մարմար, օնիքս, «Անգղը եւ կմախքը» /«Ցեղասպանություն»/, բրոնզ, «Սասունցի Դավիթը», կանաչ մարմար):



Ամի, 1962



Սասունցի Դավիթը մենամարտում է
Մըսրա Մելիքի դեմ, 1952



Լեռների մայրը, 1966




Կ. Պոլսի գրավումը, 1946




Մարտից հետո, Ցեղասպանություն



Մարտ, Տրապիզոնի ջարդը



Ցեղասպանություն, 1970



Ոեռ-Ջոր. երեխա, 1970

Արվեստագետի ստեղծագործական մեթոդի առանձնահատկություններից է նաեւ այն, որ կանանց պատկերներ, աստվածաշնչյան կերպարներ կերտելիս սովորաբար պալիս է հզոր, ծանրակշիռ մարմնաձեւեր, իսկ պայքարող հերոսներին այլ մոտեցում է ցուցաբերում. վեհ, մաքառող կերպարներ ստեղծելիս անտեսելով հերոսների արտաքին նկարագիրը՝ կարեւորում է հոգեւոր ուժը, կամային հատկությունները:

Նման պլաստիկ ծայրահեղության օրինակ է «Քաջ Վարդանը կառքի վրա» (1963, բրոնզ) քանդակախումբը, ուր պատկերված է հայոց պատմության մեծագույն հերոսներից մեկը՝ Վարդան Մամիկոնյանը: Զորավարի փոքրամարմին ֆիգուրը կանգնած է մարտակառքի վրա՝ հանգիստ, առանց ավելորդ հուզականության: Սակայն այդ թվացյալ հանգստության հետ մեկտեղ պիրկ ձեռքի, ամուր սեղմված բռունցքի մեջ է արտահայտվել Վարդան Մամիկոնյանի խստաշունչ մեկնաբանված կերպարում թաքնված հոգու կենտրոնացումը, հզոր կամքի ուժը: Կերպարի բնութագիրը լրացնում է դեպի առաջ մեկնած մյուս ձեռքը՝ խաչը՝ հայ ազգի հույսի ու հավատի խորհրդանիշը բռնած:

Նյութի հետ աշխատելը յուրաքանչյուր քանդակագործի մասնագիտության լուրջ խնդիրներից է: Քանդակային կերպարի որոնումները եւ ձեւավորումը որոշվում է ոչ միայն ձեւակերտման ունակություններով. կերպարի ստեղծման ընթացքում առաջանում են զանգվածների եւ տարածության հարաբերությունների, մակերեսի տարբեր մշակվածքների փոխազդեցության հարցեր, որոնք հատկապես ի հայտ են գալիս քարակերտ ստեղծագործություններում:

Քանդակագործի քարակերտ աշխատանքներում պլաստիկ զգացողությունների հարստությունը կախված է նաեւ մշակվածքից, քանի որ նա մեկ կտրտում, մեկ հղկում եւ կամ կերտում է մակերեսներ՝ ստեղծելով լույսի ու ստվերի բախումներ: Քարը Տեր-Հարությանի ամենասիրած նյութն էր, որը նրան հնարավորություն էր ընձեռում վերհանելու խոշոր զանգվածները պարզ ռիթմի ենթարկելու ունակությունը:

Խորեն Տեր-Հարությանն ասում էր. «Մտքերս քար են սիրում»[10], եւ այդ սերն այնքան օրգանական էր ու խորարմատ, որ կերպարները նրա մտքում ու հոգում արդեն վերջնական ձեւակերպում ու պատկերներ էին ստանում: Դիմում էր քարի տարբեր տեսակներին, օգտագործում իտալական գրանիտ, մարմար, Վերմոնթի, Ջորջիայի մարմար, օնիքս, անգլիական ալեբաստր, Ջամայկայի պորփյուր (ծիրանաքար) եւ այլն:

Տարբեր հոգեբանական վիճակների արտահայտումը քանդակում ձեռք է բերվում նյութի զանազան հնարավորությունների օգտագործումով՝ մի դեպքում բրոնզի թրթռուն, անհանգիստ մակերես, որը հաղորդում է վարպետի ձեռքի ցանկացած շարժումը, մյուս դեպքում՝ մեղմ, հավասար լույսով լի մարմարի լայն մակերեսներ: Քանդակագործը, երբեք նախօրինակ չօգտագործելով, աշխատում էր անմիջապես քարի հետ. «Երբ ես սկզբից եմ անում եմ որեւէ ճեպանկար, էսքիզ կամ կավե մոդել, կարծես թե իմ ամբողջ էությունը անցնում է նրանց մեջ», - ասում է նա [11]:

Խորեն Տեր-Հարությանը բրոնզով երկու եղանակով է աշխատում. առաջինը՝ հստակ, դասական հղկվածություն, երկրորդը՝ խոշոր անհարթություններով մակերեսների ծեփակերտում:

---

10 Վահան Հարությունյան, Քարը հայերեն է խոսում. «Սովետական արվեստ» ամսագիր, 1965, թ. 3, էջ 46:

11 „Current Biography", New York, 1955, p. 23.

Բրոնզաձույլ «Անի» (1962) քանդակը կնոջ խիստ ոճավորված, նսպած ֆիգուր է՝ ձեռքերը գլխավերեւը պարզած, ոտնաթաթերը կտրված, գլխին փշեպսակ՝ հեղինակի կանացի ֆիգուրներում հաճախ կիրառվող հատկանշական տարր: Տարբեր մասերում միջանցիկ հանվածքները, որովայնի խոռոչում ակնհայտորեն երեւացող մանկան գլուխը, բեկբեկուն անկյունավոր- գծային ռիթմը, խոշոր ծեփվածքներով մշակված անհարթ մակերեսը ազդեցիկ եւ արտահայտիչ են դարձնում կերպարը:

Խորեն Տեր-Հարությանի գործերում շատ վաղ ի հայտ եկավ նրա ամբողջ հետագա ստեղծագործությանը բնորոշ հատկությունը՝ իր զգացմունքներն ու մտքերը արտահայտելու միջոցներից մեկը դարձնել այլաբանությունը: Արվեստագետն այլաբանորեն է ընկալում կյանքը, փորձ է տալիս իր նախասիրած ձգտմանը՝ մարդկային գոյության եւ կեցության վերացարկմանը: Ժամանակին չենթարկվող հարցերում, ինչպիսիք են կյանքն ու մահը, պատռապանքն ու սերը, բարին ու չարը, հուսահատությունն ու լավատեսությունը, նրա միտքը հաճախ ավելի շատ ուղղված է դեպի ընդհանրացում ու պայմանականացում, քան դեպի սահմանափակ ու անհատականացված ռեալիզմը: Նրա ստեղծագործական մտքին բնորոշ է հատուկ պարագաների եւ հերոսների փոխակերպումը, որոնք նրա քանդակներում նյութականացվում են ոչ թե պատմողական հորինվածքային, այլ հենց կերտման միջոցներով:

Տեր-Հարությանի ամենաազդեցիկ եւ տպավորիչ ստեղծագործություններից է «Անգղն ու կմախքը» (կամ «Ցեղասպանություն», 1975, բրոնզ) աշխատանքը: Հեղինակն այս մեծածավալ, խորհրդանշական, գրոտեսկային հորինվածքով ուղղակիորեն զուգահեռ է ստեղծում «Ցեղասպանություն» գաղափարի հետ: Կառուցվածքային եւ քանդակային լուծումներով այս ստեղծագործությունը սարսռեցնում է, ակամայից դիտողի աչքի առջեւով է անցնում արհավիրքը. հսկայական անգղը՝ թեւերը լայնակի փարածած, նսպած է մարդու ուսերին եւ իր դաշունանման սուր ճանկերը մխրճել է նրանց մեջ, խոշտանգում է մարդկային խեղանդամված մարմինը, գլուխը: Գիշատիչն իր գլուխը բարձրացրել, ասես նոր զոհ է փնտրում, իսկ վիզը գալարվող օձ է հիշեցնում, աչքերն ու կտուցն ավելի նողկալի են դարձնում թռչուն – ցեղասպանի կերպարը: Այս աշխատանքում արտացոլված է իրականությունը, հեղինակն իր խոսքն է ասում՝ դահճի կերպարում ցույց տալով քստմնելի, չար ուժը:

Քանդակագործն իր անիմալիստական ստեղծագործություններում նույնպես ներդնում է այլաբանական իմաստ: Այդ տեսակի առավել աչքի ընկնող գործերից է «Ծովային թռչունը եւ ձուկը» (1949. օնիքս, մարմար) քանդակախումբը: Ներկայացված է գիշատիչ - զոհ փոխհարաբերությունը՝ իրողություն, որն առօրեական է բնության եւ առհասարակ կեցության մեջ: Պատկերված է սրընթաց արագությամբ վար սուրացող թռչուն՝ ձկանը բռնելու պահին: Հեղինակը մեծ վարպետությամբ է ցույց տվել կասեցված շարժման պահը, թռչնի կլոր աչքերում, սառած, անիմաստ հայացքում ժամանակը կարծես մի պահ կանգ է առել: Առջեւից դիտելիս թվում է, թե թռչնի զոհն են երկու ձուկ, սակայն դիտման արդյունքում հակառակ կողմից նկատվում է եւս մեկը. քանդակագործի գաղափարն է՝ ցույց տալ գիշատչի կողմից ընտանիքի կործանումը: Նյութի մշակման, կտրտյալ հղկվածության շնորհիվ երեւում են քարի բնական երակները: Թռչնի արտահայտիչ, հարձակողական ճիրաններն ամփոփում են ողջ հորինվածքը:

Բազմաթիվ են կրոնական թեմաներով կատարված Խորեն Տեր-Հարությանի աշխա-

պանքները՝ «Աբրահամի զոհաբերությունը», «Խաչից իջեցում», «Հոբ», «Հովնան մարգարեն», «Դավիթ եւ Գողիաթ», «Կայեն», «Ադամ եւ Եվա»:

«Կրոնի մեջ մենք կենսում ենք ամենացայտուն եւ առաքինի թեմաները, որոնք շարժում են երեւակայությունը եւ կրում են համամարդկային գաղափարներ», -ասում է արվեստագետը[12]:

Ոչ ավանդական, արտասովոր լուծում է տրված բազմից մեկնաբանված թեմային՝ «Խաչից իջեցումը» (1952. մարմար, փայտ) աշխատանքին: Սա Խորեն Տեր-Հարությանի լավագույն գործերից մեկն է եւ արժանացել է բարձր գնահատանքի: Հեղինակը միավորել է փայտը եւ շքեղ մարմարը: Քրիստոսի իրանը ոճավորված, անբնական երկարաձիգ է եւ նեղ, մարմնի մասերը ոչ համաչափ. կրծքին խաչված ձեռքերը եւ ոտքերը մարմնին ոչ համապատասխան մեծ են: Կերպարը առավել հուզական են դարձնում ձեռքերին եւ ոտքերին առկա արտահայտիչ, խոշոր վերքերը: Գլխին փշե պսակ է, խոշոր դիմագծերով դեմքը բավական ասկետիկ է՝ իր խաղաղ արտահայտությամբ: Չնայած աշխատանքը կոչվում է «Խաչից իջեցում», այնուամենայնիվ Քրիստոսը պատկերված է պառկած նեղ փայտե խաչի վրա, ինչը տեսողականորեն ավելի է երկարաձգում իրանը: Այս տպավորիչ քանդակում եւս ակնհայտ է այն դրական ավյունը, ուժը, որ հատուկ է վարպետի բոլոր գործերին:

Մարմարում Խորեն Տեր-Հարությանն օգտագործում է նյութի մաքրության, գունային խորության եւ լուսաստվերային անցումների վերհանման եղանակը՝ կիրառելով այդ տեխնիկայում անցյալի վարպետների կուտակած հարուստ փորձը: Նրա մարմարյա ֆիգուրները առանձնանում են պարզությամբ եւ, միեւնույն ժամանակ, մոնումենտալությամբ: Մարմարե քանդակներում նա փնտրում է ծանրակշիռ կոպիտ զանգվածներ՝ քարի միաձույլ բնույթը շեշտելու համար: Դրանցում պարզորոշ երեւում է հեղինակի պլաստիկ մտածողության արտասովոր ուժը, մոնումենտալ ձեւերում ներքին լարվածություն ստեղծելու ունակությունը:

Անդրադառնալով Հին Հունաստանի դիցաբանությանը՝ Տեր-Հարությանը ստեղծում է մի շարք գործեր, որոնք աչքի են ընկնում թեմայի մեկնաբանման յուրօրինակությամբ:

Քանդակագործը կարեւորում էր նյութի համապատասխանումը ստեղծագործության մտահղացմանը: Կերտելով նման թեմայով աշխատանքներ, բայց տարբեր նյութերից, նա միշտ փոխում էր դրանց հորինվածքները՝ համաձայն հիմքում դրված գաղափարի: Օրինակ կարող են ծառայել երեք աշխատանքներ, ուր ներկայացված է Լեդային եւ Զեւսին մարմնավորող կարապի մասին հունական դիցաբանական թեման. «Լեդան եւ կարապը» (մարմար. 1946), «Լեդան կարապին սպասելիս» (1963. բրոնզ), «Լեդան եւ կարապը» (1980. բրոնզ):

Տեր-Հարությանի արվեստում մեծ տեղ է զբաղեցնում կնոջ, հատկապես մոր կերպարը: Մայրություն, մայրը մանկան հետ թեման հնարավորություն է ընձեռում մարդկային զգացմունքի մեջ խորը թափանցել, զգալ տառապանքի եւ ցավի խտացումը: Այդ թեմայի ռեալիստական ճշգրտության հետ մեկտեղ հեղինակը մայրության զգացմունքներն արտահայտում է գեղարվեստական ընդհանրացումներով:

«Լեռների մայրը» (1966, քար) քանդակը հորինվածքով մոտ է մայրություն պատկերող դասական կառուցվածքներին, սակայն կերտման տեսակետից մանկանը ձեռքերի մեջ առած կնոջ պառկած ֆիգուրը լուծված է բավականաչափ ընդհանրացված եւ ուրվագծային՝

12 **Ralph Pearson**, Modern Renaissance in American Art, Harper Bros.,1954.

պայմանական ծեփակերպած մարմնի մասերով, առանց դիմագծերի, ձվաձեւ գլխով: Կնոջ կորաձեւ, ուռուցիկ ուրվագծերը հիշեցնում են հայոց լեռների գոգավորությունները: Այսպես ընկրկած քարափեսակը, գույնը, մակերեսի չհղկված հափիկավոր մշակումը շատ բնական են դարձնում քանդակը: Այն նման է մեր լեռներում հանդիպող, բնության կողմից արարված սպեղծագործության: Ամբողջ հորինվածքն արտահայտում է գորովանք, հոգատարություն, սեր ոչ միայն մանկան, այլ նաեւ հայրենիքի հանդեպ:

«Պտղաբերություն» (1960, մարմար) արձանախումբը պատկերում է նստած կնոջ ֆիգուր, թիկունքին՝ երեխա, որը կարծես թե ամուր կառչել է իր միակ պաշտպանից: Կինը ասես ներփակված է իր խոհերի մեջ, միեւնույն ժամանակ անպարբեր եւ օտարացած է շրջապատից: Կարելի է ենթադրել, որ նա հեղինակի՝ գաղթի ճանապարհին տեսած մայրերի հավաքական կերպարն է, որն իր ուսերին է կրում հարազատ ժողովրդի ծանր հոգսը: Հորինվածքի պլաստիկ մեկնաբանումը սխեմատիկ եւ պայմանական է, գլուխները՝ ձվաձեւ, առանց դիմագծերի, մարմնաձեւերը՝ ծայրահեղ ընդհանրացված, երկրաչափական հարթությունների վերածված: Չնայած չոր երկրաչափական կառուցվածքին՝ կերպարն ավելի քան զգացական է, օժտված է խոր հուզականությամբ: Դա հատուկ է նաեւ քանդակագործի մյուս սպեղծագործություններին: Ձեւամտածողությամբ, ծանրակշիռ, հզոր եւ զանգվածեղ ֆորմաներով այն համահունչ է իր ժամանակի քանդակագործությանը:

Արվեստագետը բազմիցս անդրադարձել է հայկական դյուցազնավեպին («Փոքր Միհր», «Ծովինար թագուհին», «Դավթի ծնունդը») եւ մեծ հպարտությամբ է այն ներկայացրել օտարազգի հանդիսատեսին. *«Ոմանք ինձ հարցրին, իսկ ով պետք է իմանա, թե ովքեր են Վարդանը, Միհրը, Դավիթը... պիտի սովորեն, պիտի սովորեցնեմ, թե ովքեր ենք մենք...», - այս է իր ողջ սպեղծագործության պատգամը:*

«Սասունցի Դավիթը մենամարտում է Մըսրա Մելիքի դեմ» (1952. կանաչ մարմար) աշխատանքում հեղինակը փվել է այուժեի արտասովոր մեկնաբանում: Սա զանգվածեղ, ծանրակշիռ ձեւերով, սուր պրոֆիլներով, համաչափությունների խախտումներով եւ ծայրասրիճան ընդհանրացված ֆորմաներից բաղկացած քանդակախումբ է: Քուռկիկ Ջալալիի սմբակների տակ գետնահարված Մըսրա Մելիքի աժդահա մարմինն է՝ ի զարմանս դիպողի երկգլխանի, մի գլուխը առջեւից, մյուսը՝ ձիու ետեւի ոտքերի տակ: Դավիթը եւս երկգլխանի է. այս հնարը, հավանաբար, թելադրված է քանդակը բոլոր կողմերից ընկալելու համար: Օգտագործված է հակադրություն՝ պարտված թշնամին տրված է արտաքնապես խոշոր չափսերով, իսկ հաղթանակած պատանի Դավիթը փոքրամարմին է: Այսպիսով՝ հեղինակը ցանկանում է ընդգծել այն միտքը, որ հակամարտության մեջ հաղթանակի համար ավելի կարեւորվում են մարդկային ներուժը եւ կամքի դրսեւորումը:

Ողջ կյանքի ընթացքում Խորեն Տեր -Հարությանին հուզել է Հայոց եղեռնը, եւ չնայած մի քանի անգամ նա անդրադարձել էր եղերական թեմաներին, երազում էր հուշակոթող սպեղծել. *«Ամբողջ կեանքիս ընթացքին զիս յուզած է եղեռնը, եւ հակառակ անոր, որ քանի անգամներ անդրադարձած եմ եղերական անցքերուն, սակայն ուզած եմ արժանի յուշարձան մը կանգնեցնել»*[13]: Եւ հանկարծ 1974 թվականին Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշարձանի պատվեր է ստանում Ֆիլադելֆիայից: Երկու տա-

13 **Մ. Հերկելյան**, Արարատի որդիները. «Սովետական գրականություն» ամսագիր, ապրիլ, 1979, էջ 136:

րի փքնաջան աշխատանքից հետո արձանագործը ավարտում է հուշակոթողը, որի գլխավոր կերպարը բրոնզից ձուլված Փոքր Միերն է: Հանդիսավոր բացումը տեղի է ունենում է 1976 թ. ապրիլի 24-ին Ֆիլադելֆիայի նշանավոր արվեստի թանգարանին կից «Ֆեյրմաունթ» զբոսայգու կենտրոնական մասում՝ բոլոր կողմերից դիտվելու հիանալի հնարավորությամբ:

«Փոքր Միեր» հուշարձանը, հայկական թեման արտացոլող Տեր-Հարությանի աշխատանքներից ամենանշանավորը կարելի է համարել, որն ընկալվում է իբրեւ խորհրդանիշ: Հայկական դյուցազուններից վերջինին՝ Փոքր Միերին, հեղինակը ներկայացնում է որպես հայ ազգի պաշտպան, ազատության խորհրդանիշ:

Քանդակագործը մեծ ոգեւորություն է ապրել այս հուշարձանը կերտելիս. *«Կարծես արբազան ատարողութեան մէջ էի եւ ոչ թէ ես էի քանդակողը, այլ նահապետականներու ոգիներն էին, որ կեանք կ'արձրէին ձեռքերս: Երբ երկար տարիներ աշխատելէն ետք, արձանն աւարտեցի, զգացի որ վրէժս լուծած եմ...»*[14]:

Հուշակոթողի գլխավոր կերպարը Փոքր Միերի բրոնզաձույլ ֆիգուրն է՝ տեղադրված մոտ 2,5 մ բարձրություն ունեցող, խորանարդաձեւ քարե պատվանդանի վրա: Փոքր Միերը պատկերված է կանգնած, երկու ձեռքերը վեր բարձրացրած, հայկական խաչանման թուրը շեղբից բռնած, հայացքը դեպի երկինք սեւեռած: Արձանագործը այսպես է բացատրում արձանի գաղափարը. *«Մեր սուրը եղած է բարի, գործածած ենք զայն միայն մեր հայրենիքը, մեր կեանքը, ունեցուածքը պաշտպանելու համար»:*[15] Պատվանդանի ճակատային մասի բարձրաքանդակը կրում է «Հայ ազգի ապագան» վերնագիրը: Այն պատկերում է մորը՝ մանկանը գրկած: Հույսն աչքերում՝ նա նայում է ազգի վերածնունդը խորհրդանշող Ծիծեռնակաբերդի հուշարձանին, որը կանգնած է Արարատի դիմաց:

Կողամասերի բարձրաքանդակների պատկերները վարպետորեն են խմբավորված, իսկ կերպարները Փոքր Միերի հետ կազմում են մի կուռ ու ավարտուն ամբողջություն: Կշռույթով, քանդակաձեւերով, արտահայտած գաղափարներով ու բովանդակությամբ դրանք սերտ կապի մեջ են միմյանց հետ: Քանդակագործը պատմական տեսարանները կարողացել է ներկայացնել կրքոտ, պրկված ու ծայրահեղ լարվածությամբ:

Հայ արվեստագետի ազգանվեր գործերից վերջինը «Վերածնված Հայաստան» հուշակոթողն էր, որի հանդիսավոր բացումը մի քանի տարի տեւած աշխատանքից հետո տեղի ունեցավ 1985 թ. դեկտեմբերի 13-ին Երեւանի Օղակաձեւ զբոսայգում: Արթիկի կարմրավարդագույն տուֆից կերտված այս կոմպոզիցիան բաղկացած է երեք ֆիգուրներից՝ մայրը իր որդու եւ դստեր հետ, ինչը հայ ժողովրդի հավերժությունն է խորհրդանշում:

Խորեն Տեր-Հարությանի արվեստը պետք է ներկայացվեր նաեւ Մոսկվայում. 1985 թվականին նա պատվեր սպացավ կատարելու «Խաղաղություն» հուշակոթողը: Պատրաստվեց միայն մանրակերտը՝ երկրագնդի վրա կանգնած դեռատի մի աղջնակ՝ ձեռքին աղավնի, իսկ կողքին ընկած է մարդկային կմախք: Վարպետը չհասցրեց ավարտել իր աշխատանքը. 1991 թվականին Նյու Յորքում ավտովթարի հետեւանքով մահացավ մեծանուն հայ արվեստագետ Խորեն Տեր- Հարությանը:

Տեր-Հարությանի արվեստում համակերպվում էին տարբեր մղումներ, ձգտումներ, որոնումներ, որոնց միավորում է արվեստագետի աշխարհայացքի գլխավոր տարրը՝ հումանիզմը:

---

14 **Մ. Հերկելյան**, Արարատի որդիները. «Սովետական գրականություն» ամսագիր, ապրիլ, 1979, էջ 136:

15 Անդ:

Քանդակագործի ստեղծագործությունը շատ ինքնատիպ է եւ անհատական: Այդ անհատականությունը բխում է նրա արվեստի ազգային էությունից, որ, սակայն, չի խանգարում նրա արվեստը բնորոշել որպես համամարդկային նշանակություն ունեցող արվեստ: Իր շատ ձեռնարկումներում նա ուղղորդվում էր համաշխարհային ժառանգության ավանդույթներով, եւ նրա լավագույն աշխատանքները այդ ժառանգությունը ժամանակակից հայացքով ընկալելու արդյունք են: Տեր-Հարությանը ստեղծագործել է գեղանկարչության եւ գրաֆիկայի ասպարեզներում, բայց նրա առավել արդյունավետ եւ բեղմնավոր ոլորտն էր քանդակագործությունը, որտեղ նա կարողացավ դրսեւորել իր՝ արձանագործի հզոր ներուժը եւ անհատականությունը: Ընբռնելով հայ քանդակագործության ընդհանուր ոճը՝ փորձել է այն մարմնավորել նոր ժամանակների գաղափարական շարակարգում:

Արվեստագետի ստեղծագործության բնութագրումը կարելի է ամփոփել Ֆրանսիացի արվեստաբան Անրի Ժերարի խոսքերով.

«Եթե ձեր աչքերն ընդունակ են ընկալելու անկեղծ արվեստը, ապա դուք երբեք չեք մոռանա այդ վարպետին: Նույնիսկ արագընթաց, եռուզեռով լի մեր դարը ի վիճակի չէ պղպորելու նրա գործերը, նվազեցնելու դրանց հերոսականությունը: Մենք բախտավոր ենք՝ լինելով ժամանակակիցը եւ ականատեսն այս հանճարի ստեղծագործության: Խորեն Տեր-Հարությանը արվեստին նվիրեց իր կյանքը՝ փոխարենը ստանալով հավերժություն».[16]

16 Т. Соловьева, Ода миру, "Голос Родины", 1988, N 21.


ՀԱՂՈՒՐԴՈՒԻՍՈՆԵՐ

Տ. ՄԱՄԲՐԵ ԱԲԵՂԱ ՏԱՇՉՅԱՆ

ՕԼԱՎԵՐԴ ԳՅՈՒՂԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Այն, ինչի մասին ուզում եմ փեղյակ պահել ընթերցողին, մի փոքրիկ, բայց շատ հայեցի գյուղ է՝ իր պաշտամունքով, ամբողջությամբ քրիստոնյա հավատքով, օրինապաշտ մարդկանցով, որոնք, ինչպես ամեն մի հայ, ունեցել են իրենց դառն ճակատագիրը, բայց մնացել են անկոտրում եւ ասպվածապաշտ: Դրա վկայությունն են գյուղում պահպանվող հին Ավետարանները, որոնք բերվել են Էրզրումից (Կարին) գաղթելիս: Դրանցից մեկը գտնվում է իմ հայրենի տանը, եւ գյուղացիները այն դարձրել են ուխտատեղի՝ տալով «Մարկոսենց Ավեռան» անունը:

Օլավերդ. բնակչությունը ներգաղթել է այս գյուղը, որ փռված է Աբուլ լեռան փեշին Ս. Խաչափուրի հովանու ներքո, Կարինի գավառի Երկան Մասուր գյուղից 1830 թ. Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու առաջնորդությամբ: Ժամանակի ընթացքում գյուղը համալրվում է նոր գաղթականներով, բնակչության ավելացմամբ պայմանավորված անհրաժեշտություն է դառնում հայ մարդուն բնորոշ գոյատեւման հոգեւոր խորհուրդներից ամենակարեւորի՝ եկեղեցու կառուցումը: Անշուշտ այդ հարցում իր ամենահաս գորակցությունն է ցուցաբերում իր հազարավոր հոտը Էրզրումի նահանգից առաջնորդած Կարապետ Բագրատունի սրբազանը, որ վայելում էր ժողովրդի խոր հարգանքը: Եկեղեցու կառուցման նախաձեռնողը եղել է Տերտերանց տերտերը՝ Եղիշե Տեր-Գրիգորյանը: Սկզբից կառուցվել է մատուռ, որտեղ գյուղացիները վառել են մոմեր եւ մատաղ կտրել: Թե մատուռը ո՛ր թվականին է կառուցվել, ստույգ հայտնի չէ: Հետագայում մատուռի տեղում կառուցվել է եկեղեցի, որի դիմահայաց պատի սրբատաշ քարի վրա արված հայատառ արձանագրությունից իմանում ենք վերանորոգման տարեթիվը՝ 1899: Մատուռը կառուցվել է Օլավերդում գաղթականների հիմնավորվելուց անմիջապես հետո: Մատուռի փոխարեն հետագայում վեր խոյացած այսօրվա Ս. Աստվածածին եկեղեցին ունի իր զանգակատունը: Եկեղեցին երկար տարիներ ծառայում է իր ժողովրդին, խորհրդային կարգերի հաստատումից հետո գործում է մինչեւ չարաբաստիկ 1937 թ.: Ինչպես հայկական եկեղեցիների մեծ մասը, սա նույնպես վերածվում է պահեստի, որտեղ պահվում է Աստծո տված ամենամեծ սրբություններից մեկը՝ հացահատիկը:



Չնայած այս ամենին՝ հավապացյալ ժողովուրդն իր մոմն ու խունկը վառում էր դռնփակ եկեղեցու պատերի տակ: Պետք է հիշեցնեմ, որ եկեղեցու կառուցման ժամանակ հիմքերը փորելիս գտնվել էր քանդակած խաչքար եւ խոյի արձան, որոնք այժմ եկեղեցու պատի հետ կանգնած են եւ այն տարիներին փոխարինել են եկեղեցուն: Մոմերը վառվել են այդ սրբությունների մոտ: Փակ վիճակում շուրջ կես հարյուրամյակ Ս. Աստվածածին եկեղեցին ծառայում էր թաղման ւրարողություններ կատարելիս. գյուղի երիտասարդներից մեկը բարձրանում էր վեր եւ զանգակատնից երեք անգամ հնչեցնում լռած զանգը: Յոթանասուն տարվա համբերատար լռությունից հետո վերջապես բացվեցին Ս. Աստվածածին եկեղեցու կաղնեփայտից պատրաստված նախշազարդ դռները: Խցերում դեռեւս մնում էին ցորենի եւ գարու մգլած մնացորդները եւ, ա՛յ քեզ հրաշք, ցորենի եւ գարու մնացորդների տակից դուրս են գալիս երկու սրբապատկերներ (իկոնա)՝ Պողոս եւ Պետրոս առաքյալների լուսապսակ պատկերներով: Սրբապատկերները բավական լավ պահպանված էին եւ այսօր զարդարում են Ս. Աստվածածնի խորանները: Եկեղեցին հարուստ է եղել եկեղեցական գրքերով եւ սրբապատկերներով, որոնք ոչնչացվել, վառվել են վայ կոմունիստների ձեռքով: Աստծո Տունը նորից բացվում է հավապացյալների առաջ: Այն մարդաշատ է դառնում հատկապես կրոնական-եկեղեցական տոների օրերին:

Հարուստ է Ջավախք աշխարհը եկեղեցիներով եւ մատուռներով, որոնք սպասում են իրենց ուսումնասիրողներին: Որոշ գյուղերում եկեղեցիները յուրացնելու փորձեր են արվել, սակայն դրանք հանդիպել են գյուղացիների դիմադրությանը եւ պահպանում են իրենց հայեցի կերպարը առ այսօր: Թող Աստված զորավիգ լինի՝ պաշտպանելու մեր սրբություն սրբոց ուխտապեղինները:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՂՈՒՄՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՄՅԱԿԸ ՀՆԴԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹՈՒՄ

Ապրիլի 24-ը պատմության բերումով հայ մարդու համար դարձել է նվիրական մի օր, երբ, անկախ մեր կարգավիճակից, դարիքից, հասարակության մեջ ունեցած դիրքից, կուսակցական եւ կրոնական պատկանելությունից, ոգեկոչում ենք Մեծ եղեռնի բյուրավոր նահատակների խնկելի հիշատակը, աղոթում նրանց հոգիների հանգստության համար, եւս մեկ անգամ յուրովի ապրում այդ ողբերգությունն ու ցավը եւ փորձում գտնել մեր բազում եթենների եւ ինչուների պատասխանը: Այդ օրը Ս. Պատարագներ են մատուցվում աշխարհասփյուռ Հայ Առաքելական բոլոր եկեղեցիներում, որոնցից հետո կատարվում է նաեւ Հոգեհանգստյան կարգ: Սովորաբար նմանատիպ արարողությունները մայր Հայրենիքում եւ ված հուշակոթողների կամ խաչքարերի մոտ: Այս առումով բացառություն չէ նաեւ երբեմնի ծաղկող եւ բարգավաճ, իսկ այժմ փոքրաթիվ հնդկահայ համայնքը: Տարիների ընթացքում ձեւավորված ավանդույթի համաձայն՝ հնդկահայերն այդ օրը հավաքվում են Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու հյուսիսային պատի տակ, Հայոց ցեղասպանության հիսնամյակի առիթով կանգնեցված հուշարձանի մոտ, որտեղ եւ կատարվում է հոգեհանգստյան արարողությունը: Այս հուշարձանի եւ Մեծ եղեռնի հիսնամյակին նվիրված պոետական պարությունների պատմության մանրամասները պահպանվել են ժամանակի Հնդկաստանի եւ Ծայրագույն Արեւելքի Հայրապետական պատվիրակ Տ. Հայկազուն արք. Աբրահամյանի երկհատոր օրագրում, որը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ձեռագրատան 631 թվահամարի ձեռագիրն է (էջ 448-453, 564-567)[1]: Սրբազան Հայրն ամեն օր բարեխղճորեն գրառումներ է կատարել իր այցերի, գործերի, հնդկահայ համայնքում եւ Հայոց Մարդասիրական ճեմարանում կատարված դեպքերի եւ միջոցառումների մասին:

Մինչեւ Կալկաթայում Հայոց ցեղասպանության հիսնամյակին եւ հուշարձանի պեղադրմանն անդրադառնալը, ցանկանում ենք մի քանի խոսք ասել նաեւ հնդկահայ համայնքում այդ մեծ ողբերգության ընկալման մասին, որը, անշուշտ, ինչ-որ ձեւով տարբերվում է մեր մյուս գաղթօջախների ընկալումից:

Ֆիզիկապես հեռու լինելով պատմական մեր հայրենիքից եւ հիմնականում ձեւավորված լինելով ցեղասպանությունը չապրած ջուղայեցիներից՝ Հնդկաստանում գուցե այնքան էլ սրությամբ չէր ընկալվում Մեծ եղեռնի ամբողջ ողբերգությունը: Հայկական ջարդերի սեւ

---

1 Ձեռագրի նկարագրությունը տե՛ս «Էջմիածին», 1986, Է-Ը, էջ 92-97: Հայկազուն Սրբազանի այս օրագրությունը շատ կարեւոր եւ երբեմն հազվագյուտ տեղեկություններ է հաղորդում հնդկահայ գաղութի մասին, ուստի դրա տպագրությունը մեծապես օգտակար կլինի գաղթօջախի ուսումնասիրության համար: Հատկապես կարեւորում ենք օրագրի այն հատվածները, որտեղ Սրբազանն անդրադառնում է այսօր կորսված, բայց ժամանակին գոյություն ունեցող գաղութի ավանդույթներին, Հայոց Մարդասիրական ճեմարանի առօրյային, մեջբերում շատ արժեքավոր տպանաքարերի արձանագրություններ եւ այլն. այս մասին տե՛ս *Տիգրան սարկավագ Բաղումյան*, Արեւմտյան Բենգալիայում թաղված հայ հոգեւորականները, Երեւան-Կալկաթա, 2007, էջ 8, 12, 15-16, 29: Ցեղասպանության հուշակոթողի մասին տե՛ս նաեւ «Էջմիածին», 1966, Ը, էջ 16-17:

օրերին Հնդկաստանում բարեզարդվում էին մեր եկեղեցիները, եւ համայնքի կյանքն ընթանում էր բնականոն հունով: Բայց սա չի նշանակում, որ հնդկահայերն անփարբեր են եղել մեր ժողովրդի պատմության մեծ ողբերգության նկատմամբ:

Այսպես՝ Մեծ եղեռնից հետո Գեւորգ Ե Սուրենյանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի փնօրինությամբ Տ. Թորգոմ արք. Գուշակյանը նշանակվում է Հնդկաստանի եւ Ծայրագույն Արեւելքի հայրապետական նվիրակ: Վերջինս Վեհափառ Հայրապետի հորդորով մեկնում է Հնդկաստան եւ Ծայրագույն Արեւելքի հայկական համայնքները՝ Արեւելյան Հայաստանում թուրքական յաթաղանից մազապուրծ եղած, կարիքի եւ դժբախտության մեջ գտնվող բազում հայորդիների համար գումար հանգանակելու նպատակով: Թորգոմ Պատրիարքն իր «Հնդկահայք» հուշագրության մեջ պատմում է, թե ինչպես էին հնդկահայերն իրենց առատաձեռնությամբ գումարներ նվիրաբերում աղետից տուժած իրենց հայրենակիցների համար[2]:


Երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառը Մեծ եղեռնի հիսնամյակի առիթով 1964 թ. օգոստոսի 17-ին գրած Սրբատառ Կոնդակում հորդորում է ապրիլի 24-ին Հայ Առաքելական Եկեղեցու աշխարհասփյուռ բոլոր եկեղեցիներում կրոնական հատուկ արարողություններ, Հոգեհանգստյան պաշտոններ, հուշ-երեկոներ եւ հավաքույթներ կազմակերպել՝ նվիրված Հայոց եղեռնի ոգեկոչմանը[3]: Անշուշտ, այս ամենին անտարբեր չէր կարող մնալ նաեւ հնդկահայ համայնքը: Հնդկաստանի եւ Ծայրագույն Արեւելքի հայրապետական պատվիրակ Տ. Հայկազուն արք. Աբրահամյանը, նկատի ունենալով Վեհափառ Հայրապետի վերոհիշյալ կոնդակը, 1965 թ. փետրվարի 10-ին ժողովի հրավեր է ուղարկում Կալկաթայում գործող հայկական կազմերպություններին եւ միություններին: Ժողովը տեղի է ունենում փետրվարի 23-ին Հայոց Մարդասիրական ճեմարանում, որին մասնակցում է 16 մարդ: Տերունական աղոթքից հետո Սրբազան Հայրն աղոթում է բյուրավոր հայ նահատակների հոգիների հանգստության համար, ներկաներին բացատրում իրենց հավաքի նպատակն ու շարժառիթները՝ ընթերցելով նաեւ Նորին Սրբության կոնդակը: Կարծիքների փոխանակումից հետո Մեծ եղեռնի հիսնամյակին նվիրված միջոցառումները հավուր պատշաճի կազմակերպելու համար որոշվում է Հայկազուն Սրբազանի գլխավորությամբ 7 հոգուց բաղկացած հատուկ հանձնախումբ սպեղծել, որի անդամներից էին Կալկաթայի վիճակավոր քահանա Տ. Գեղամ աբղ. Զաքարյանը, եկեղեցական վարչության անդամներից մի քանիսը, ինչպես նաեւ Մարդասիրական ճեմարանի պեսուչ Վահան Փոլադյանը: Ժողովում որոշվում է ամենքին հասկանալի լինելու համար անգլերեն թարգմանել Վեհափառի կոնդակը, ամեն տարի ապրիլի 24-ին Ս. Պատարագ մատուցել եկեղեցում: Հայկազուն Սրբազանի առաջարկությամբ որոշվում է նաեւ Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու բակում Ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող մի հուշակոթող պեղադրել:

Ժողովից հետո Հայկազուն Սրբազանը եւ նորընծայ Տ. Վազգեն քհն. Սրեփանյանը ձեռնամուխ են լինում նոր հուշակոթողի գծագրի պատրաստմանը: Փետրվարի 23-ին Մարդասիրական ճեմարանում գումարված ժողովում Ցեղասպանության հիսնամյակին նվիրված հանձնախումբը հավանություն է տալիս հուշակոթողի գծագրությանը: Որոշվում է դրա

---

2 Տե՛ս «Ամբողջ երկեր Տ. Թորգոմ Պատրիարք Գուշակեանի», Զ, Հնդկահայք. Տպաւորութիւններ եւ տեղեկութիւններ (պատկերազարդ), Երուսաղէմ, 1941, Դուրեան մատենադարան, թիւ 21, էջ 107, 113-117, 121:

3 Հայրապետական Սրբատառ Կոնդակը տե՛ս «Էջմիածին», 1965 (ներփակ):



Կալկաթայի հուշակոթողը

պատրաստությունը հանձնարարել Ջայփուրի մարմարագործներին: Ժողովականները որոշում են նաեւ ապրիլի 24-25-ին ծրագրվող միջոցառուներին հրավիրել Անգլիկան Եկեղեցու միտրոպոլիտ Լակտասա դը Մել եպիսկոպոսին եւ ասորի քահանա Չափրջիին:

Այդ օրերին հուշարձանի պատրաստության համար դրամական հանգանակություն կազմակերպելու նպատակով Հայկազուն Սրբազանը կոչ է ուղղում հնդկահայությանը, որտեղ տեղեկացնում է Վեհափառ Հայրապետի Սրբատառ Կոնդակի, նախատեսվող միջոցառումների եւ հուշարձանի մասին:

«Ազնի՛վ հայորդի: Յուզմունքով յիշէ մեր աւելի քան մէկ ու կէս միլիոն նահապետները, եւ առատաբուխ սրտովդ փուր քո լուման այս սուրբ ձեռնարկի յաջողութեանը համար՝ կապարելով խղճիդ պարտքը հանդէպ նահապետ եղբայրներիդ եւ քոյրերիդ»,- ասվում է Հայկազուն Սրբազանի կոչում:

1965 թ. ապրիլի 24-ին առավոտյան ժամը 9-ին Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցում Տ. Գեղամ վրդ. Ջաքարյանը մատուցում է Ս. Պատարագ: Էմի Աբգարի կողմից դաշնավորած Ջուղայական պատարագն է կատարում ճեմարանի արական երգչախումբը: Նույն օրը՝ երեկոյան, սգահանդես է տեղի ունենում Մարդասիրական ճեմարանում, որի ժամանակ օրվա խորհրդի մասին բանախոսություններով հանդես են գալիս Գեղամ վարդապետն ու Վահան Փոլադյանը:

Ապրիլի 25-ին՝ կիրակի օրը, կրկին Ս. Պատարագ է մատուցվում Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցում: Օրվա պատարագիչն էր Տ. Հայկազուն արք. Աբրահամյանը: Ականատեսների վկայությամբ՝ եկեղեցին լի էր հայությամբ եւ զանազան հյուրերով, ասես Ավագ ուրբաթ էր, ամեն ինչ սեւ էր՝ վարագույրները, դպիրների շապիկները, փխուր էին նաեւ մարդկանց դեմքերը: Ճաշու ընթերցվածից առաջ «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո Գեղամ վարդապետը հանդիսավորապես Ս. Սեղան է բարձրացնում Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Մեծ եղեռնի հիսնամյակին նվիրված Սրբատառ Կոնդակը, որն ընթերցում է պատարագիչ Սրբազան Հայրը: Այնուհետեւ Հայկազուն Սրբազանը, Հովհաննեսի Ավետարանից վերցնելով «Եթէ ոչ հատն ցորենոյ□» հատվածը, հավուր պատշաճի քարոզ է խոսում:

Հայոց ցեղասպանության ոգեկոչման արարողությանը ներկա էին նաեւ Անգլիկան Եկեղեցու միտրոպոլիտը եւ ասորի քահանան: Անգլիկան Լակտասա դը Մել եպիսկոպոսը բարձրանում է Ս. Խորան եւ դիմում ներկաներին: Նա անդրադառնում է Մեծ Եղեռնին, հայ ժողովրդի աննկուն եւ աներեր հավատին: Այնուհետեւ թափորով եկեղեցականներն ու հավատացյալ ժողովուրդը դուրս են գալիս եկեղեցու բակ, որտեղ Հայկազուն Սրբազանի հանդիսապետությամբ կատարվում է հոգեհանգիստ, ապա պաշտոնապես բացվում է Ցեղասպանությանը նվիրված հուշարձանը:

Այն Ս. Սեղանի նման եռասրիճան սեղան է, որի վերեւում խաչը գրկած սգավոր մի հրեշտակի քանդակ է: Ներքեւում պատկերված են խարիսխ, խոցված սիրտ, որոնք, ըստ Հայկազուն Սրբազանի գրառումների, հավատի, հույսի եւ սիրուց խոցված սրտի խորհրդանիշներն են: Խոցված սրտի ներքեւում պատկերված են նաեւ 7 խաչեր, որոնց հաջորդում է հուշարձանի հայերեն եւ անգլերեն հետեւյալ արձանագրությունը.

Ի ՅԻՇԱՏԱԿ ՅԻՄՆԱՄԵԿԻ
ԲԻՒՐԱՒՈՐ ՆԱՀԱՏԱԿԱՑՆ ՄԵՐՈՑ
ՅԸՆԹԱՑՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ Ա
ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ
ԱՊՐԻԼ-1914-1918
ԿԱՆԳՆԵԱՑ ՋԱՅՍ ՅՈՒՇԱՐՁԱՆՆ ԵՐԱԽՏԱԳԷՏ
ՄԵՐՈՒՆԴ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ ՀԱՅՈՑ ԿԱԼԿԱԹԱՅԻ
24-4-1965

OUR GLORIOUS MARTYRS
IN GRATEFUL TRIBUTE TO OVER ONE MILION MARTYRS
OF THE ARMENIAN NATION WHO LOST THEIR LIVES
UNDER MOST TRAGIC CONDITIOND DURING THE GREAT WORLD WAR 1914-1918
THIS MONUMENT IS ERECTED BY THEIR COMPATRIOTS IN
CALCUTTA ON 24TH APRIL 1965 IN COMMEMORATION OF THE
FIFTIETH ANNIVERSARY OF THE GREAT NATIONAL TRAGEDY

Պատմական փաստերը վկայում են, որ 20-րդ դարի 60-ական թթ. ազգային-եկեղեցական բուռն կյանքով էր ապրում հնդկահայ գաղութը, հատկապես դեռեւս հայաշունչ կալկաթահայությունը՝ սերտորեն կապված լինելով Սուրբ Էջմիածնի եւ Մայր Հայրենիքի հետ: Այն նաեւ ցույց է տալիս հնդկահայության կյանքում եկեղեցականի ունեցած մեծ դերակատարությունը:

Ուրախալի է, որ վերջին տարիներին մի տեսակ վերազարթոնք է նկատվում Հնդկաստանում, եւ փոքրաթիվ կալկաթահայությունն անցյալի նման շարունակում է ընթանալ բնականոն հունով՝ հարգանքի տուրք մատուցելով մեր բյուրավոր նահատակներին եւ նշելով այս կամ այն ազգային-եկեղեցական տոնը: Անշուշտ, այս ամենին նպաստում է նաեւ Դելիում գտնվող ՀՀ դեսպանությունը:

Տ. Հայկազուն արք. Աբրահամյանի օրագրում պահպանվել է նաեւ օրվա առիթով գրված նրա սրտորեւ բերվող բանաստեղծությունը (էջ 458ա-458գ):

ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ԻՐԵՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ 24 ԱՊՐԻԼ 1915-1965

«Իբրեւ զգաուն անմեղ վարեալ ի սպանդ»

(Երեմ. ԺԱ 19)

1915 թուի Ապրիլ 24-ին,
Արեւը իջավ Ոսփորի ափին
Իր մայրամուտին:

Ու մեռելային փըխուր լըռութիւն,
Համակեց քաղաք, եւ իսկ բնութիւն
Ու սիրտը մարդուն:

Տեղահանութեան սարսափ-հրաման,
Վիճակն էր ինկած ամբողջ Հայու-
թեան,
Առանց յապաղման:

Կայծակի նըման լուրը բօթաբեր,
Տունէ տուն մըտաւ խիստ աղիտաբեր
Վաղուան անհամբեր:

Ու արցունք եւ կոծ, լաց ու աղաղակ,
Մընացին անզօր գթութեան դուռ փակ
Քար սըրտերու դակ:

Հասած էր ժամը դառն բաժանումի,
Հայրական տանը, ու սուրբ օճախի
Եւ ընտանիքի:

Ու Բարձր Հայքէն, Ուր Հայասպանէն,
Կիլիկեան Դըռնէն, Մուշէն, Տարօնէն
Նոյն ճակատագրէն:

Ճամբաներ քարոտ, ուղիներ փըշոտ,
Այր, կին, երեխայ, զերթ ոչխարի հօտ
Գերեզմանի մօտ:

Հովիւ հոգեւոր, քերթող ու բանւոր,
Կողք կողքի կերթան սըրտով վիրաւոր
Որպէս սգաւոր:

Ու Հայ դպրութեան ռահվիրան ձեր
սուրբ,
Մեսրոպեան մըտքի ճառագայթով
բորբ
Մնացին միշտ որբ:

Ծունկի են բոլոր: Ու մի վարդապետ,
Ձայնով երերուն, երգի մէջ վարպետ,
Աչք երկինք յառած, ու կը վերանայ
Ո՛վ Տէր, ողորմեա:

Ու գրիչ ձեռքին, մատներուն մէջ վարժ,
Դառն պանջանքի ցաւերուն անվարժ
Ինկած են անշարժ:

Եւ կարաւաններ մութին մէջ մոլար,
Ողոգող ձայնով, կանչով անդադար
Կերթան շարէ-շար:

«Դեպի ո՞ւր կերթանք» կըսեն իրարու,
Յոյսի խօսք լըսող, աչքերն խուզարկու
Խեղճ մանուկներու:

Ու վըշտով լըցուած սիրտը մայրական,
Անզօր իր զաւկին տալու պատասխան
Կերթայ իր ճամբան:

Պայթում մը ահա, կը լըսուի հեռուն,
Ու կը յաջորդեն ձայներ վայնասուն
Դիակ մը մարդուն:

«Քալէ, շուտ քալէ, դուն դէպի
Դէր-Զօր»
Կ՛ոռնայ գայլի պէս գազանը հզօր

Ժողովուրդ անզօր:

Արեւու այրող բոցերուն ներքեւ,
Կորացած, հիւծած, հասակներ պար
թեւ
Կերթան հեւ ի հեւ:

Քաղց ու ծարաւի դարձած են ընկեր,
Որպէս հաշտուած հին բարեկամներ
Բախտին անտարբեր:

Ջուր, Ջուր, կաղերսեն ծարաւ բերան-
ներ,
Փախչող Եփրատի տաք ափերն ի վեր
Տանջուող հոգիներ:

Ու յոյսը կըտրած կեանքի արեւէն,
Խումբ-խումբ մանուկներ ջուրերու մէջ
են
Կը բաժնուին կեանքէն:

Անցած են կէսը տաք անապատին,
Դաժան ձեռքերու մէջ վայրավատին
Կիսով կը պակսին:

Գանկեր, դիակներ, ճամբու եզերքին,
Քարացած աչքեր յառած երկնքին
Միշտ պաղատագին:

Եւ գազաններու ոհմակն ահագին,
Գիշատող թըռչնոց երամ խըմբովին
Շուրջն են բոլորին:

Եւ կոյր մթութեան մէջ աղերսալի,
Վերջին կաթիլը ցամքած աչքերի
Առանց արցունքի.....:

Հաւատքով լեցուն եւ միշտ սրբութիւն,
Ապրելու յոյսը իր մէջ աննկուն
Ա՛յս մըներց Հայուն...:

Անմահ հովիւ հայ ժողովուրդին,
Իր նայուածքն ուղղեց, հեռու կաթոգին
ՍՈՒՐԲ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ:

Ու ծագեց արեւ սուրբ Ազատութեան,
Մըթագնող ամպեր լոյսի փոխուեցան,
Քով-քովի եկան ոսկերք անկենդան,
Նոր մարմին առաւ փեսիլք Եզեկեան:

Եւ ալեգագաթ Մասիսի ներքեւ,
Շողաց իմ ցեղի կեանքի նոր արեւ,
Բազուկները պիրկ, ու ջիղերն պոկուն,
Նորից կեանք պուին շինարար Հայուն:

Ուրախ, երջանիկ, կեանքի վայելքով,
Կը նըներջեն անուշ քուն մը անվըրթով,
Ու մոխիր դարձած հայ աճիւններէն,
Գեղուղէշ ծիլեր արձակուեց նորէն:

Ծաղկիր Դուն յաւէտ, երկիր Հայաս
պան,
Առաջին մարդուն, առաջին օրրան,
Քու ժողովուրդիդ ոսկի ապագան,
Շէնշող թող փայլի, այժմ եւ յաւիտեան:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

ԿԱԼԿԱԹԱ
5 մարտի, 1965 թ.

ԳՐԱԽՕԱՍՈՒԹԻՒՆ, ԱՂԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՎԵՏԻՍ ՔԱԼԱԾՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ՊԱՏՄԱԲԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ, Երկեր հինգ հատորով, հ. Ա, պատմագիտական ուսումնասիրություններ /հրատարակության պատրաստեց Պ. Հ. Հովհաննիսյանը, Երեւան, ԵՊՀ հրատ., 2006, 652 էջ + 1 էջ ներդիր:

2006-2008 թթ. հայագիտության համար չափազանց կարեւոր ձեռքբերումների շրջան է: «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հովանավորությամբ Երեւանի պետական համալսարանի հրատարակությունը լույս ընծայեց ականավոր հայագետ-բյուզանդագետ Նիկողայոս Ադոնցի երկերի հինգահատորյակի առաջին երեք հատորները: Գիտափեսական մեծարժեք նյութերն ըստ հատորների բովանդակում են պատմագիտության, պատմական կրոնագիտության, պատմաբանասիրության եւ հայերենագիտության բազմաճյուղ ոլորտներին վերաբերող արժեքավոր նյութեր:

Առաջին՝ պատմագիտական ուսումնասիրություններ հատորը բովանդակում է Հայաստանի, հայ նախարարական դասի պատմական դերի եւ պատմակրոնագիտական հիմնահարցերին նվիրված 18 աշխատանք:

Համոզված լինելով, որ «բոլոր սխալներից ամենավատը այն սխալն է, որ վերցրած է ուրիշից», Ն. Ադոնցը «**Միհրդատ Եւպատոր** եւ **Տիգրան Մեծ**» ուշագրավ աշխատության մեջ հանգամանորեն վերլուծում է դարաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակը, հայ-պոնտական պայմանագիրը, ինչպես նաեւ՝ հայ-պարթեւական հարաբերությունները: Նա հիմնավորում է, որ այդ շրջանում պարթեւները գտնվում էին հզորության բարձունքին, եւ որ հայ-պարթեւական հակամարտության ակունքները աքեմենյանների «Արքայից արքա» փիփղոսը վիճարկելն էր: Պատմաբանը գերիշխանության համար Տիգրան Մեծի մղած պայքարը եւ հաղթանակը համարում է Արեւելքի պատմության ամենափառավոր էջերից մեկը: Այդ շարակարգում է քննարկում նաեւ հայ-հռոմեական հարաբերությունները, ցույց տալիս, որ «հին պատմիչներն ավելի էին սիրում իրենց Պլատոնին, քան ճշմարտությունը, զարմանալի հնարամտություն են ցուցաբերել պատմական իրողությունը աղավաղելու եւ Տիգրանի աչքի ընկնող կերպարը աղճատելու համար»: Քայլ առ քայլ բացահայտելով եւ մերժելով պատմական այդ աղավաղումները, փեսաբանը վեր է հանում Տիգրան Մեծի հասարակական, քաղաքական, ռազմասպրատեգիական ու մշակութային գործունեության դերը եւ հաստատում, որ քաղաքականության մեջ նա եղել է «Արեւելքի մեծագույն դեմքը»: Ընդհանրացնելով այդ ամենը՝ Ն. Ադոնցը հանգում է հանրագումարային այն համոզմանը,

որ «Տիգրան Մեծն իր արժանավայել տեղը պետք է գբաղեցնի Արեւելքում երբեւէ իշխած փիրակալների շարքում: Նա արժանացել է «Մեծ» փիփղոսին՝ պատվավոր մի կոչման, որը պատմությունը հազվադեպ է շնորհում իր ընտրյալ դերակատարներին»:

Հատորում ուրույն տեղ են գրավում նաեւ «**Հայ հին շինականությունը**», «**Հայաստանի ոսկեհանքը**», «**Մարզպան Վասակը պատմաբանների դատաստանի առաջ**», «**Քաղաքական հոսանքները հին Հայաստանում**» եւ «**Բագրատունյաց փառքը**» ուշագրավ աշխատանքները:

Վաղ միջնադարյան Հայաստանում գոյություն ունեցող «համայնական հողափիրություն» մասին Հ. Մանանդյանի հայեցակարգի փաստարկված մերժմանն է նվիրված «Հայ հին շինականությունը» աշխատությունը: Պատմական վավերագրերի համեմատական վերլուծության հիման վրա Ն. Ադոնցը ցույց է տալիս, որ քննարկվող ժամանակահատվածում Հայաստանում փիրապետել է **արեւելյան ավատափիրությանը բնորոշ տոհմային հողափիրություն**, որի հիմքը եղել է մասնավոր սեփականությունը: Այդ տեսակետը հիմնավորելու միտումով վերլուծաբանն անդրադառնում է երկրում գոյություն ունեցած հողաբաժանման, ոստան եւ ոստանիկ կարգավիճակի, հող երդոյ եւ վիճակ, ռամիկ եւ շինական, ծառայություն, սպրկություն, ճորտություն եւ ղեկավար փնտրեսություններ հարաբերությունների հանգամանալից վերլուծությանը եւ հիմնավորում, որ «հողատերերի եւ պետության շահերը համերաշխաբար պահանջում էին չթողնել, որ հեռանան մի անգամ ձեռք բերած աշխատող ուժերը, ուրեմն գյուղացուն մեխել հողին եւ զրկել նրան տեղաշարժի եւ անձնական ազատության իրավունքից»:

Պատմաճանաչողական աշխատանքների թվին պետք է դասել Ա. Խաչատրյանի «Հույն պատմիչների վկայությունը հին Հայաստանի ոսկեհանքերի եւ նրանց տեղի մասին. տեղագրական ուսումնասիրություն» հոդվածում արծարծվող հիմնահարցերի ճշգրտմանը միտված Ն. Ադոնցի «Հայաստանի ոսկեհանքը» հակիրճ, բայց բովանդակալից ուսումնասիրությունը: Նրանում պատմաբանը միանգամայն համոզիչ կերպով մերժում է իր հասցեին հոդվածագրի ոչնչով չհիմնավորված մեղադրանքներն ու վարկածային պնդումները եւ «տեղագրական պայմաններին» վերաբերող փաստական նյութի ընդհանրացված վերլուծությամբ ապացուցում է Սպեր գավառի հայապատկան լինելը:

«Մարզպան Վասակը պատմաբանների դատաստանի առաջ» հոդվածում գիտնականը փաստական հարուստ նյութի համեմատական վերլուծության հիման վրա քննաբար վերանայում եւ նորովի է լուսաբանում V դարակեսի ազգային-ազատագրական շարժման նկատմամբ ավանդական որոշ մոտեցումներ: «Քաղաքական հոսանքները հին Հայաստանում» վերլուծական աշխատանքում հեղինակը մեծ տեղ է հատկացնում անհիմն այն տեսակետի համակողմանի փաստարկված մերժմանը, որը ձգտել է «վատաբանել հայ ազգությունն, որպես թե հակահասարակական հատկության համար»: Հանգամանորեն վերլուծելով V-VIII դարերի քաղաքական կողմնորոշումների խորքային պատճառները՝ գիտնականը Հայաստանում առանձնացնում է երկու քաղաքական հոսանք, որոնք, նրա համոզմամբ, «ակոսում են մեր անցյալի չորս դարը» եւ հենված են պատմական կյանքի զարգացման տարբեր պայմանների (ավանդական նախարարական կարգի եւ նորածին քաղքենիության) վրա:

«Բագրատունյաց փառքը» քննախոսությամբ անդրադառնալով «պատմության մեջ

հազվագյուտ» գնահատված Բագրատունիների քաղաքական գործունեությանը, Ն. Ադոնցը քայլ առ քայլ բացահայտում է 775 թ. հակաարաբական ապստամբությունից հետո ընկած շրջանի նրանց գործունեությանը եւ փաստում. «Աշոտ Մսակերն էր այն մեծ անձը, որ իր եղբոր Շապուհի հետ հանեց երկիրը վհատ եւ լքված վիճակից եւ մեծագործ հիմնադիրն եղավ նոր եւ լուսավոր շրջանի»: Պատմաբանը ցույց է տալիս նաեւ, որ Բագրատունիների «խոհական այդ քաղաքականությունը» առավել արդյունավետ դարձավ 855 թ. հետո, երբ Աշոտ Բագրատունին, հմտորեն օգտագործելով արաբա-բյուզանդական յոթնամյա (856-863 թթ.) պատերազմի ընձեռած հնարավորությունները, վերականգնեց հայոց թագավորությունը: Ն. Ադոնցը հանգամանորեն քննարկում է նաեւ Բագրատունիների գործունեությունը Վիրքում, Աղվանքում, Արցախում ու հարակից այլ տարածքներում, եւ եզրակացնում, որ «Բագրատունիների տոհմային ծառը, վերընձյուղելով հինավուրց արմատից, ծաղկեց եւ զարգացավ ամբողջ IX դարու ընթացքում, եւ փարթամ ոստերով փռվեց երեք երկրների վրա, Հայք, Վիրք եւ Աղվանք»:

Հայոց պատմության շարադրում ճանաչողական մեծ հետաքրքրություն ունի նաեւ «**Դավիթ Բեկ** եւ **Տեր Ավետիքի սերունդը**» աշխատանքը: Նրանում հետազոտողը նախ անդրադառնում է Դավիթ Բեկի տոհմական ծագման եւ ընտանեկան պայմանների հիմնահարցին: Հանգամանորեն քննարկելով վերջինիս վերաբերող թեր եւ դեմ մոտեցումները՝ Ն. Ադոնցը եզրակացնում է, որ հիմնահարցին վերաբերող միակ սկզբնաղբյուրը՝ «Վկայագիր Ուռպէլեանց» վավերագիրը, «ոչ նպաստավոր» է, եւ պնդում է, որ հայ ազատագրական շարժման ականավոր ներկայացուցիչներից մեկի իշխանական ծագման, հավասարապես նաեւ նրա սերունդների հարցը «խնդրական է»: Անդրադառնալով **Տեր Ավետիքի** տոհմական ծագման հիմնահարցին՝ պատմաբանն արձանագրում է, որ նա հավանաբար եղել է հալիձորցի: Ինչ վերաբերում է նրա սերունդներին, հետազոտողը փաստում է, որ «հաստատ տեղեկություններ չունենք, բայց կա ավելի քան հավանական ենթադրություն» եւ «կողմնակի նշաններ», որ Տեր Ավետիք երեցի սերունդներն են Բռնակոթ գյուղի Տեր-Ավետիքյանները (Ադոնց տոհմը), որի ժառանգներից մեկն էլ ինքն է:

Պատմագիտական ուշագրավ աշխատանքների շարքում հարկ է անդրադառնալ նաեւ «**Արտավան Արշակունի**», «**Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա**», «**Վարդ Մամիկոնյան (856-866)**», «**Վասիլ Հայկազն (Մեծագործ կայսր. 867-886)**» ուսումնասիրություններին: Դրանցում Ն. Ադոնցը գիտականորեն հիմնավոր անդրադարձ է կատարում Բյուզանդիայում վերջին Արշակունիների գործունեությանը եւ պնդում, որ վերջինս «եղավ պատվանդան Հայոց մեծ եւ հոյակապ վերելքի Բյուզանդիայում»: Նա այդ գործի շարունակողներ է համարում Մամիկոնյաններին, որոնք VIII դարավերջին նպաստեցին «հայության ամեհի ալիքի» բարձրացմանը, «որպեսզի հաջորդ դարում ողողեր բյուզանդական արքունիքը եւ հիմն ձգեր հայկական պերճ հարստության եւ Բյուզանդիոնի իսկական մեծության: Շարժման դրոշակակիրները Մամիկոնյան զավակներն էին: Սակայն, այստեղ եւս, ինչպես Հայաստանում, նրանք կարողացան ցանել միայն մեծագործություններ, իսկ հունձքը քաղեցին ուրիշները»,- եզրակացնում է գիտնականը: Այդ ամենի պրամաբանական ավարտը նա համարում է Վասիլ Հայկազն Մեծագործ կայսեր իշխանության շրջանը: Անդրադառնալով Բյուզանդական «պետության պատասխանատու դիրքերում արտասովոր եւ

անօրինակ կորովով փայլող հայ գործիչների» ընդհանրական գնահատականին՝ պատմաբանը գրում է, որ դրանք «հայ շինարար ոգու կրողներն էին, գիտակից աշխատավորներ, որ ջանք չէին խնայում պետական նոր շենքի կառուցման համար եւ իրավամբ հանդիսանում են նրա իսկական ճարտարապետները»:

«**Հայ-ծաթերի ծագման մասին**» ուսումնասիրությունը նվիրված է հայ եւ օտար պատմիչների երկերում հիշատակված «ծաթ (ծադ)» ժողովրդի ծագումնաբանության հարցին, որը, գիտնականի համոզմամբ, «հետաքրքրական է նաեւ այն տեսակետից, որ ծաթերը որոշ առնչություն ունին հայ եկեղեցու պատմական կյանքի դավանաբանական հոսանքներից մեկի հետ»: Նա հիմնավորված չի համարում Ն. Մառի այն տեսակետը, թե «ծաթ կոչվել են հայ քաղկեդոնականները»: Համադրելով հայրենական (Ուխտանես պատմիչ, Պողոս Տարոնացի, Մխիթար Այրիվանեցի, Մխիթար Ապարանեցի) եւ օտար (Նիկոն Սեւավլեռնցի) աղբյուրներում ծաթերի մասին պահպանված տեղեկությունները՝ Ն. Ադոնցը ցույց է տալիս, որ ծաթերը չեն նույնանում ոչ հայ քաղկեդոնականների եւ ոչ էլ Հայաստանի սահմանակից ծոդեացիների հետ: Ծաթն այն ազգությունն է, որը արաբական պատմագրության մեջ հայտնի է **զոտպ** (զուտպ), իսկ Հնդկաստանում՝ jat (ջատ) անվամբ՝ աղերսվելով **sindi** ցեղանվանը: Պատմաբանը եզրակացնում է, որ ծաթերը Հայաստանում հաստատվել են իրենց մկրտությունից (X դար) շատ ավելի վաղ եւ որ Հայաստանում քաղկեդոնականության վերջնական պարտությունից հետո նրանք տեղափոխվել են քաղկեդոնական երկրներ:

Արժեքավոր են նաեւ Ն. Ադոնցի **պատմակրոնագիտական** բնույթի աշխատությունները:

«**Հին հայոց աշխարհայացքը**» բավականին ընդարձակ ուսումնասիրությունը գրված է համեմատական կրոնագիտության հիմնարար սկզբունքների խոր իմացությամբ: Սա մեկ անգամ եւս վկայում է հեղինակի գիտական հետաքրքրությունների մասին: Թեեւ բազմաթիվ հարցերի լուսաբանման գործում Ն. Ադոնցն օգտագործում է XIX դարավերջի եւ XX դարասկզբի համեմատական լեզվաբանության (դիցաբանության) մեթոդիկան եւ պրպտում է տալիս հայ ժողովրդի ծագման արդեն հնացած միգրացիոն տեսությանը, սակայն անուրանալի է այն մեծ ավանդը, որը նա ներդրել է մինչ օրս վիճաբանական համարվող կրոնագիտական բազմաթիվ հիմնահարցերի ամբողջացման եւ նորովի մեկնաբանության գործում:

Տեսաբանի համար հայոց դիցաբանական աշխարհայացքին անդրադառնալն ինքնանպատակ չէ: Նա համարձակ փորձ է կատարում վեր հանելու հայ ժողովրդի քաղաքակրթական զարգացման ընթացքը, լուսաբանելու այդ գործընթացի փուլերին բնորոշ օրինաչափությունները: «Կարելի է համարձակ ասել, որ ազգերի հասունության աստիճանը, նրանց տեսության հորիզոնները շատ անգամ նախորոշում եւ նախագծում են նրանց պատմության շրջանակը, - այդ կապակցությամբ գրում է Ն. Ադոնցը, - **Քաջերի սահմանը զենքը չէ միայն, ինչպես ասված է, այլ** եւ **այն հոգեկան մղումը, որ պանում է դեպի զենք**»: Տեսաբանը Հին հայոց աշխարհայացքի վերլուծությունը կարեւորվում է նաեւ ազգամշակութային ժառանգորդության տեսանկյունից, հանուն մեր «ներքին աշխարհի», որի «քայքայումը նվազ աղետալի չէ, քան նյութական փլատակները»: Ն. Ադոնցի համար այդ ուսումնասիրությունն իմաստավորվում է նաեւ հոգեւոր տեսանկյունից, քանի որ նա համոզված է՝ «Աստվածությունը եւ նրա թելադրանքը երկրի համար գաղափարական երկնաճեմ գոլորշի-

ներ են, որ բարի անձրեւներով բեղմնավորում են պապմական հողը»: Վերջապես, գիտնականն այդ ամենը կարեւորում է եւ այն պատճառով, որ «հին կրոնի ծիսական ժառանգությունը հարուստ էր ճիշտ այն երկրներում, որոնք նոր քարոզի անդրանիկ բեմ դարձան եւ նոր ուսմունքի մարտիրոսարան»: Եւ այդ երկրներից է համարում նաեւ Հայաստանը:

Հմտորեն օգտագործելով համեմատական դիցաբանության մեթոդները՝ Ն. Ադոնցը ժամանակի կրոնագիտության ոգուն համապատասխան ձգտում է վեր հանել եւ ամբողջական տեսքով ներկայացնել «հայ հիշողության հնավանդ փշուրները հարեւան երկրներում տարածված պաշտամունքների լույսի տակ»: Երկվորյակների պաշտամունքը համարելով «հին կրոնական պանթեոնի կենտրոնը»՝ Ն. Ադոնցը նկատում է, որ այդ «պաշտամունքը տեսակ-տեսակ արտահայտությամբ ծանոթ էր հին քաղաքակրթության ...Տեղի եւ ժամանակի համեմատ փոխվում էր անունը, բայց էությունը մնում էր նույնը»: Այդ շարակարգում է ներկայացվում հին հայերին ծանոթ Միհրի «ժայռապաշտամունքը», հայկական հողի «ընդաբույս ծաղիկներ» համարվող հնագույն Արա-Շամիրամ դիցաբանական պատումը, որը հիմնավորվում է Պլատոնի (Հայկազն Էրի), Բեռլինի պապիրուսների ժողովածուի եւ այլ վկայություններով, Մայր աստվածուհու պաշտամունքը՝ Իշտար-Անահիտ-Նանե անցումների տեսքով, Արա- (Սպանդ) **Արա**-մեծ (Սանդարամեծ) աղերսները եւ այլն: Գրիգոր Լուսավորչի, Տրդատ Մեծի, Նինո (Նունե)-Նանեի, Շուշանիկի եւ քրիստոնեական վարքաբանական այլ օրինակներով անդրադարձել է նաեւ կրոնական կերպարանափոխության եւ ծիսական անցումների հիմնահարցին:

Որոշակի սահմաններում նախանշված հետազոտական մոտեցման արձագանք կարելի է համարել նաեւ «Տորք աստված հին հայոց» եւ «Տարկուն հին հայերի մոտ» ամփոփ հոդվածները, որոնցում Ն. Ադոնցն անդրադառնում է հայոց «տեղական նախնի» մշակութային հերոս Տորքի, ինչպես նաեւ՝ խեթական Տարկույի պաշտամունքին, ցույց տալիս դրանց ընդհանրական հնդեվրոպական հիմքերը, ինչպես նաեւ հայկական ցեղերի (արմեն, հայ) համար տեղական պաշտամունք լինելը:

«**Գրիգոր Լուսավորիչ** եւ **Անակ Պարթեւ**» հակիրճ հոդվածում Ն. Ադոնցն անդրադառնում է Հայոց առաջին Հայրապետի կենսագործունեության վերաբերյալ աղբյուրների «պատմական կորիզի եւ վկայաբանական կեղեւի» համեմատական վերլուծությանը: Նա համարում է, որ «բանավոր հիմք չկա կարծելու, որ Լուսավորչի առաքելությունը կարող էր գրված լինել օտար լեզվով նախքան հայ գրականության ծնունդը» եւ այդ հիման վրա պնդում է, թե «առավելապես հայ անդրանիկ մտավորականությունն է, որ արժանավորել է նրա հոչակը եւ սրեղծել ազգային մի մեծ սրբություն՝ առաքելական լուսապսակը գլխին»: Կասկածից վեր համարելով Լուսավորչի պատմական առաքելությունը, նրան համարելով «հայ երկրի մեծապանծ լուսավորիչ»՝ պատմաբանը՝ այնուամենայնիվ, հավատ չի ընծայում ինչպես Ագաթանգեղոսի, նույնպես եւ այլ մատենագիրների կողմից Գրիգոր Լուսավորչի տոհմական ծագմանը եւ կենսագործունեությանը վերաբերող մոտեցումներին՝ նկատելով, թե այդ մասին «նախնական գրությունները մնում են հնության գաղտնիք եւ մեզ անմատչելի»: Սկզբնաղբյուրների համեմատական վերլուծությունը պատմաբանին հանգեցնում է այն եզրակացության, որ «Ագաթանգեղոսի պատմությունը Գրիգորի եւ Տրդատի փոխհարաբերության եւ թերեւս ծագման մասին վիպական գունավորում ունի հայտնի

չափով: Ավելի հեռուն գնալու դժվար թե հիմք կա»: Օբյեկտիվության դիրքերից Ն. Ադոնցը «անխոհեմություն» է համարում VIII դ. ասորի գրիչ Գեւորգ եպիսկոպոսի հաղորդած տեղեկությունն այն մասին, թե, իբր, «հայ երկրի Լուսավորիչը ազգով հռոմայեցի էր»: Այդ առնչությամբ նա գրում է, որ ասորի եպիսկոպոսը եւ կամ իր աղբյուրը «շփոթել են Գրիգորին Ագաթանգեղոսի հետ» եւ ընդհանրացնում է. «Մեր քննությունից հետեւում է մի բան, որ Գրիգորի կյանքը Ագաթանգեղոսի գրչի տակ, որպես պատմական գործ, կրած է իրանական վիպախոսության ազդեցությունը ի վնաս պատմական իսկության»:

Արեւելքում հին հայոց քաղաքակրթական դերն արժեւորելու ամփոփ փորձերից է Ն. Ադոնցի «**Հայոց առաքելությունը Հոնաց աշխարհում (Զ դար)**» ուսումնասիրությունը: 1870 թ. Բրիտանական թանգարանի հրատարակած VI դարի ասորի Անանուն հեղինակի պատմական աշխատության համակողմանի վերլուծության հիման վրա հեղինակը համոզիչ կերպով ցույց է տալիս Հայ Եկեղեցու քարոզչական գործունեության դերը հյուսիսկովկասյան ժողովուրդների շրջանում քրիստոնեությունն ու քրիստոնեական քաղաքակարթությունն արմատավորելու ուղղությամբ:

Ուշագրավ մի ուսումնասիրություն է «**Պատկերների խնդիրը**» աշխատությունը, որ քննական անդրադարձ է կատարվում եկեղեցու պատմության ամենաեռեփաքրքրական դրվագներից մեկի՝ 762-842 թթ. ընթացքում պատկերամարտության եւ պատկերապաշտության միջեւ ծավալված դրամատիկ եւ անհաշտ պայքարի արժեւորմանը:

Անդրադառնալով եկեղեցուց ներս Խաչի եւ պատկերի խնդրում ձեւավորված երկու մոտեցումների՝ պատկերահարգության եւ պատկերապաշտության ձեւավորման ու ծավալման ընթացքին՝ Ն. Ադոնցը պնդում է, որ վիճաբանական այդ հիմնահարցի անկյունաքարն աստվածաբանական տեսանկյունն է: Գիտնականի ամենատես աչքից չի վրիպել եւ այն, որ պատկերների խնդիրն ուներ ինչպես ներքին (եկեղեցական հայրերի անհամերաշխություն եւ հակամարտ կարծիքներ), այնպես էլ արտաքին (հրեական եւ մահմեդական կրոնների ազդեցություն) խթաններ: Բայց պատկերների նկատմամբ եկեղեցական տարբեր հոսանքների գոյավորման ադոնցյան օբյեկտիվ արժեւորմանն ուղղակի հակադիր է հեղինակի այն պնդումը, թե իբր «պատկերամարտությունը տեսական հողի վրա կապվում է միաբնակության (հակաքաղկեդոնական եկեղեցու՝ Ա. Ք.) հետ»: Տեղին է հիշատակել, որ պատկերամարտության գոյավորման ու ծավալման հարցում համահունչ է քաղկեդոնական մատենագրության մոտեցումը, որը հենվում է այն սնանկ տեսակետի վրա, թե իբր «միաբնակ եկեղեցին նսեմացնում է Քրիստոսի մարդկային բնությունը», ինչն էլ հանգեցնում է պատկերամարտության:

Պատմականության եւ գիտական սկզբունքայնության դիրքերից Ն. Ադոնցն անդրադառնում է 753 (754) թ. «պատկերամարտական փիեզերաժողովի» որոշումների, ինչպես նաեւ դրանց դեմ Հովհան Դամասկացու առարկությունների վերլուծությանը: Գիտնականի ուշադրության կենտրոնում է գտնվել նաեւ պատկերամարտական բանավեճերի մյուս բեւեռի՝ Նիկիայի 787 թ. «պատկերապաշտպանական փիեզերաժողովի» որոշումների արժեւորումը: Ն. Ադոնցը փաստարկված ցույց է տալիս, որ դավանաբանականից զատ այդ պայքարն ունեցել է նաեւ քաղաքական-գաղափարական կողմ: Այդ դիրքերից էլ անդրադարձ է կատարվում պետական իշխանության կրոնական քաղաքականությանը, որից հեղինակը

եզրակացնում է, որ պատկերների խնդիրն իշխանության համար մղվող պայքարում հաճախ զենք է եղել Բյուզանդական կայսերական վերնախավի (Լեւոն III Իսավրացի, Կոստանդին V Կոպրոնիմոս, Լեւոն IV Խազար, Նիկեփոր, Միքայել I Ռանգե), ինչպես նաեւ ռազմաքաղաքական այլեւայլ խմբավորումների ձեռքին:

Քննական անդրադարձ կատարելով VIII դարավերջի եւ IX դարասկզբի պատկերամարտության եւ պատկերապաշտության արժեքավորմանը՝ Ն. Ադոնցն ամենից առաջ անդրադառնում է Լեւոն V Հայկազնի եւ Կ. Պոլսի Նիկեփոր պատրիարքի ու համախոհ հոգեւորականների միջեւ ծավալված պայքարին: Վերջինիս հանգուցալուծում է համարվում 815 թ. ժողովը, որն ուղղադավան համարեց 753 (754) թ. պատկերամարտական ժողովի որոշումները: Անդրադառնալով Միքայել II Կակազ կայսեր կրոնական քաղաքականությանը՝ գիտնականը ցույց է տալիս, որ այն թելադրված էր եկեղեցական միություն հաստատելու հրամայականով: Այդ առումով առանձին հետաքրքրություն ունի խնդրի շուրջ բյուզանդական Միքայել II եւ ֆրանսիական Լյուդովիկոս Բարեպաշտ կայսրերի հարաբերությունների քննական վերլուծությունը, ինչպես նաեւ խնդրի վերաբերյալ Արեւմտյան եկեղեցու դիրքորոշումն արտահայտող Ֆրանկֆուրտի (794 թ.) եւ Փարիզի (825 թ.) ժողովների որոշումների լուսաբանումը, որոնք թեեւ դատապարտեցին 787 թ. ժողովը, սակայն օրինավոր չհամարեցին «պատկերամարտների ցանկությունը՝ վանել պատկերները եկեղեցուց»:

Ն. Ադոնցը պատկերամարտական բանավեճերի հանգուցալուծում է համարում 843 թ. եկեղեցական ժողովը, որի դավանաբանական որոշումներով, գիտնականի համոզմամբ, իրական դարձավ «պատմության առեղծվածային էջերից մեկը», եւ Բյուզանդական կայսրության փարածքում կրկին սկսեց գերիշխել պատկերապաշտությունը: «Պատկերամարտության հիմնական կառույցները վերացան, իսկ նրա մնացորդները դատապարտվեցին Կ. Պոլսի 869 թ. ժողովում»:

Կրոնաքաղաքական ներհակ հոսանքների անհաշտ պայքարի ադոնցյան վերլուծության եւ արժեւորման համակարգում հետաքրքրական է հատկապես հակադիր ուժերի ազգային կազմի վերլուծությունը: Փաստական նյութի վերլուծությունը գիտնականին հանգեցնում է այն հետեւության, որ «Պատկերապաշտները գլխավորապես **հույն** վանականներն էին: Պատկերամարտությունը՝ վերսկսված Լեւոն V Հայկազնի ձեռքով, ավելի համակիրներ ուներ **հայերի** մեջ:» Հիշարժան է եւ այն, որ վեր հանելով ընդդիմադիր երկու ճամբարներում գործող հայ քաղաքական գործիչների դերը՝ Ն. Ադոնցը հանգում է այն հետեւությանը, որ վերջինս վճռական եւ որոշիչ դեր է ունեցել:

Պատկերամարտներ էին Բյուզանդիայի հայազգի կայսրեր Վարդան Փիլիպպիկոսը, Լեւոն V Հայկազնը, կայսր հռչակված բռնապիրոներ Վարդանը, Թովմա Գազիարացին, Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես Քերականը, նշանավոր գիտնական Լեւոն Մաթեմատիկոսը, ականավոր քաղաքական գործիչ Արշավիր Պապրիկը եւ շատ ուրիշներ: Քիչ չէր նաեւ այն հայերի թիվը, որոնք սատարում էին պատկերամարտների խմբավորմանը: Այդ շարքում գիտնականը թվարկում է կայսրուհի Թեոդորա Մամիկոնյանին, կայսր Վարդ Մարմիկոնյանին, սպարապետ Մանուել Մամիկոնյանին եւ ուրիշների: Ի մի բերելով այդ ամենը՝ Ն. Ադոնցը եզրակացնում է, որ հայ տարրը Բյուզանդիայում հետապնդել է քաղաքական եւ կրոնական իշխանություններն իր ձեռքում կենտրոնացնելու նպատակ: Արդյունքը եղել է հայկական հարստության գահակալումը՝ հանձին Վասիլ (Բարսեղ) I Հայկազնի (867 թ.) եւ

եկեղեցական գերագույն աթոռի գրավումը՝ հանձին Կ. Պոլսի հայազգի Հովհաննես Քերական եւ Փոտ պապրիարքների:

Բյուզանդիայում ի վերջո հաղթանակեց պապկերապաշտությունը, սակայն, ինչպես իրավամբ նշում է Ն. Ադոնցը, այդ «հաղթությունը բացարձակ չէր: Պապկերամարտությունը թողեց իր հետքերը: Նրա ազդեցությամբ էր, որ եկեղեցուց վերացան քանդակված պատկերները: Լուսամիտ եւ կիրթ հասարակությունը դեմ էր պատկերների պաշտպամունքին, բայց ընդունում էր նրանց գործածությունը եկեղեցիներում, սակայն առանց պաշտամունք մատուցանելու»:

Գիտնականի համար այդ եզրահանգումը տրամաբանական էր եւ օրինաչափ: Այդ իսկ պատճառով նա համոզված պնդում է, թե «Քրիստոնեական եկեղեցին, որպես արեւելյան հաստատություն, պիտի խորշեր աստվածային մարմնավոր արտահայտությունից: Սակայն Արեւմուտքի համար, որ սովոր էր հելլեն արձանագործության հրաշակերտ հիշատակարաններին, որ ներկայացնում է հեթանոսական աստվածներ, հասկանալի է, խորթ չէր պատկերագրությունը: Ճշմարտությունը միջին ուղու վրա էր՝ պատկերահարգություն եւ ոչ պատկերապաշտություն»՝ այսպիսին է Ն. Ադոնցի ընդհանրացնող հետեւությունը, որ խնդրո առարկա հարցում նաեւ Հայ Եկեղեցու դավանաբանական **պաշտոնական** դիրքորոշումն է:

Որպես ամփոփում ցանկանում ենք հավելել, որ Ն. Ադոնցի գրախոսվող հատորն ունի գիտաճանաչողական մեծ դեր եւ տեսական նշանակություն: Երկասիրության տեսական արժեքն առավել եւս ամբողջական է դարձել ճանաչված պատմաբան, հատորի կազմող Պ. Հ. Հովհաննիսյանի կողմից բազմաթիվ հիմնահարցերի լուսաբանման եւ ծանոթագրությունների արդյունքում, որոնցում գիտական հակիրճությամբ եւ մեծ ճշգրտությամբ տրված են տեսական-պատմական, ժամանակագրական, պատմամշակութային եւ պատմակրոնագիտական բազմաթիվ հիմնահարցերի պարզաբանումները:

Անուրանալի է նաեւ Պետրոս Հովհաննիսյանի մեծ ներդրումը ադոնցագիտության մեջ: Նրա ջանքերով են աշխարհով մեկ սփռված դիվանատներից հավաքվել, ամբողջացվել ու հրապարակվել Ն. Ադոնցի տեսական հարուստ ժառանգության բազմաթիվ անտիպ էջեր: Նրա գիտական պրպտումների տրամաբանական արդյունքն է նաեւ անգուգական այս հրատարակության նախապատրաստությունը, որն այսօր իր արժանի տեղն է գրավել հայ տեսական մտքի գանձարանում:

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՈՒՄԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ԵՂՎԱՐԴԻ ԿԱՐՄԻՐ ԱՒԵՏԱՐԱՆԻ

Եղվարդ քաղաքի բնակիչ Հարությունյանների տանը պահվում է ընտանեկան մի սուրբ մասունք՝ մի հրաշագեղ Ավետարան: Ձեռագրի ներկայիս «պահապան» Եղիազար Մարգարյանը սիրով մեզ տրամադրեց այն լուսանկարելու եւ ուսումնասիրելու, ինչի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:[1]

Ձեռագիրը 24,7 16,8 6 սմ մեծության է, ունի 259 թերթ, նյութը՝ թուղթ, եզրերը՝ նկարազարդ,գրությունը՝ երկսյուն, գիրը՝ բոլորգիր, տողերի քանակը՝ 23, պատառիկ-պահպանակ՝մագաղաթ,վրացերեն երկու երես,կազմը՝ դրոշմազարդ շականակագույն կաշի, միջուկը՝ փայտ, ասպառը՝ պսպարանային պատկերազարդ թուղթ՝«S.Gregorio Luminattor della Nazion Armena. 1692, ...որիչդ Գրիգորիէ Մաղթեա վասն պառապելոցս եւ մանաւանդ վաճառականացն Հայոց որք ու...եղբայր գոլով եպոն պպել զպիպ Հրաշալի չարչարանաց քոց ընդ հովն...» գրությամբ: Սպորին լուսանցքներում՝ ցրվացանկեր:

Բովանդակում է հետեւյալ նյութերը.

ա. Թուղթ Եւսեբեայ առ Կարպիանոս,
բ. Աւետարան ըստ Մատթէոսի,
գ. Աւետարան ըստ Մարկոսի,
դ. Աւետարան ըստ Ղուկասու,
ե. Աւետարան ըստ Յովհաննու,
զ. Խաւսք եւ պատ[ո]ւէր սբ. Աւետարանիս առ այնոսիկ, որ ժառանգեն զսա
յապայս ժամանակաց վասն զգուշութեան-Յանեղական Բանէն եւ յանմատոյց
լուսոյն կազմեալ են ճանապարհք իմ ...:

Գրչի, սպացողի, նորոգողի բուն եւ հետագայի հիշատակարաններն ու հիշատակագրությունները զետեղված են ձեռագրի վերջում:

Ձեռագիրն ունի բարձրարվեստ մանրանկարչություն: Մատյանում առկա են հետեւյալ պատկերները.

1.Աւետումն
2. Ծնունդ
3. Ընծայումն ի տաճար (կամ Քառասնօրեայ գալուստ)
4. Մկրտութիւն
5. Պայծառակերպութիւն
6. Յարութիւն Ղազարու
7. Մուտք Երուսաղէմ

---

1 Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Մատենադարանի գիտաշխատող, պ.գ.թ. Արմեն Մալխասյանին՝ ձեռագրի նկարագրությանն ու հիշատակարանների վերծանությանը օժանդակելու համար:

8. Ոտնլուայ
9. Խաչելութիւն
10. Թաղումն
11. Յարութիւն
12. Համբարձումն
13. Աւերումն դժոխոց
14. Հոգեգալուստ
15. Խաչն յարեւելից
16. Քառակերպեան աթոռ
17. Մատթէոս
18. Մարկոս
19. Ղուկաս
20. Յովհաննէս եւ Պրոխորոն

Կան նաեւ բազմաթիվ լուսանցային նկարներ, խորան՝ 10, կիսախորան՝ 4, լուսանցազարդ:

Դատելով հեղնագույն հիշատակարաններից, ձեռագիրը, առնվազն, XIXդարի 30-ական թվականներից գտնվել է Եղվարդի եկեղեցում: 1839 թ. մարտի 1-ի հիշատակարանում ձեռագրի փեր Բարսեղ Հովսեփյանը նշում է. մատյանը «ընծայեցաք ... Սբ Նշանին Եղվարդու»: Ձեռագիրը ծանոթ է եղել Ն. Ներսես Ակինյանին: Անդրադառնալով մորեխների արշավանքների մասին միջնադարյան մատենագրական վկայություններին, նա համապատասխան մեջբերում է կատարում մեր ձեռագրի 1618թ. հիշատակարանից (պապվիրապու Հասանի) եւ փողափակում ծանոթագրում է. «Աւերեալ Եղիւարդի եկեղեցւոյն»[2]: Այսինքն Ն. Ակինյանը ձեռագիրը տեսել եւ հիշատակարանն ընդօրինակել է 1936 թվականից առաջ: Հավանաբար, Հարությունյան ընտանիքին ձեռագիրն անցել է դրանից հետո՝ սպալինյան հալածանքների ժամանակ, փրկելով այն ՝ դրանով իսկ աքսորվելու վտանգի ենթարկելով իրենց եւ հարազատներին: Կարծում ենք, որ պատահական չէր ձեռագրի «ապաստանումը» այդ ընտանիքում: 1890 թ. դեկտեմբերի 7-ի երկու հիշատակագրություններում թվարկված են Աբրահամյան, հետագայում՝ Հարությունյան տոհմի բազմաթիվ ներկայացուցիչներ, որոնք համարվում են «Հասանի ցեղիցը», որը, թերեւս, XVII դարի ձեռագրի սրացող-պապվիրապու Հասանն է: Այսինքն ձեռագիրը հանգրվանել է իր պատմական տերերի մոտ:

1920-30-ական թվականներին ձեռագրի մի քանի այրված թերթերը նորոգելու նպատակով Սմբատ Հարությունյանն այն տանում է Էջմիածնի մատենադարան, որտեղ վնասված թերթերը խնամքով նորոգվում են, նույնիսկ որոշ վերականգնված տեղերում լրացնում են շարադրանքը:

Ձեռագիրը եւ նրա հիշատակարանները հայագիտությանը անծանոթ չեն: ԺԵ դարի յիշատակարանների ժողովածուի երկրորդ հատորում զետեղված է գրչի հիշատակարանի մի փոքր հատված. «...Գրեցաւ սա ի քաղաքն Արծկէ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Ստեփաննոսի նախավկայի *III* ի կաթողիկոսութեան Վաղարշապատու տեառն Ըղըսրակիսի եւ յաշխարհակալութիւն Ջահանշահի, որ գնաց ի վերայ Բաղդա-

2 **Ն. Ներսէս Ակինեան**, Մովսէս Գ. Տաթեւացի, Վիեննա, 1936, էջ 78:

պայ եւ մռնչաց իբրեւ զառիւծ...»[3]: Հրապարակիչ Լ. Խաչիկյանը փողապակում ծանոթագրում է. «Ձեռագիրը, որ կոչվում է Կարմիր ավետարան, պահվում է Եղվարդ գյուղի բնակիչ Սմբատ Հարությունյանի տանը: Հիշատակարանից մեջ բերված հատվածը... ընդօրինակել է ազգագրագետ Վ. Բդոյանը»[4]:

Ձեռագրի հեղագայի տեր Հասանի հիշատակարանի մի կարճ հատված տեղ է գտել ԺԷ դարի հիշատակարանների Ա հատորում. «Ես՝ Հասանս... գնեցի զսա... երեք թուման փռի առայ այնմ ժամանակին, որ մորեխն բազում երկիր աւերեաց. թիւն ՌԿԷ (1618) էր. բազում սղութիւն եղաւ»:[5] Կազմողների վկայությամբ խնդրո առարկա հատվածը վերցված է Հայր Ներսես Ակինյանի «Մովսէս Գ. Տաթեւացի» աշխատությունից:

Ձեռագիր մատյանի առաջին սպացող-պատվիրատուն է «բարեմիտ եւ մեծահաւատ տանուտէրն Յակոբ եւ կաւղակիցն իւր Ջամալխաթունն», որոնք այդ աստվածահաճո գործն իրականացրել են «յիշատակ իւրն եւ բարի ծնաւղաց իւրոց Յովանիսին եւ եղբարցն Կարապետին, Մելքեսեթին եւ Բաղդասարին եւ զաւակաց նոցին՝ Աւետիս դեռաբոյս սարկաւագին եւ Խլղաթին, Ալամշին եւ Գուլփաշին եւ Գուլանփաշին»: Հիշատակարանի վերջում Հակոբ տանուտիրոջ եղբորորդիներ են հիշվում նաեւ Սրեփանոսը եւ Սադաղը: Յավոք, պարզ չէ, թե նրանցից ով, ո՛ր եղբոր զավակն է:

Արծկեի նույն վանքում 1476թ. ընդօրինակված մեկ այլ Ավետարանի հիշատակարանում որպես ձեռագրի սպացող են հիշատակված «զպարոն Սրեփանոս եւ զկենակիցն իւր Գուլփաշա»[6]: Հնարավոր ենք համարում պարոն Սրեփանոսին նույնացնել Հակոբ տանուտերի եղբորորդիներից Սրեփանոսի հետ՝ նկատի առնելով գործելավայրի եւ ժամանակաշրջանի համապատասխանությունը: Այս պարագայում մեր հիշատակարանում նշված Գուլփաշան կարող էր լինել ոչ թե եղբորորդիներից մեկի զավակը, այլ, փվյալ դեպքում, Սրեփանոսի կողակիցը:

Հիշատակարանի հեղագա շարադրանքից պարզվում է, որ ձեռագիրը գրվել է. «ի քաղաքն Արծկէ, ընդ հովանեաւ սբ Աստուածածնի մարն լուսոյ եւ սբ Սրեփանոսի Նախավկայն եւ Պատերազմի սբ Նշանի...»: Այնուհետեւ ութ տող եղել է այրված հատվածում: Հաջորդ թերթի շարունակությունն սկսվում է «շայպատու» պառակապակցությամբ, որը, դարձելով հիշատակարանի հրապարակված հատվածից, վերականգնվում է «ի կաթողիկոսութեան Վաղարշայպատու» եւ հաջորդիվ. «փեառն Ըղըսպակգիսի: Եւ յաշխարհակալութի Ջրհանշայի...:», որն այդ ժամանակ գրավել էր Բաղդադ-Բաբելոնը: Այստեղ գրիչը փաստում է եւս մի կարեւոր հանգամանք, այն է. «Յորում ամի եւ մարախ յարեւելից ի վերայ երկրի եւ թանձրախիտ ծածկեաց զդաշտ եւ զլերինս, զսար...»:

Ձեռագրի հիշատակարանում բացակայում է գրչության թվականը, սակայն փեքսրում նշված են ժամանակի Արիսպակես կաթողիկոսի, կարա-կոյունլու փադիշահ Ջհանշահի անունները եւ մորեխների արշավանքը, որոնք մեծապես նպաստում են ընդօրինակման ժամանակը որոշելուն:

---

3 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երեւան, 1958, էջ 217(այսուհետեւ՝ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Բ մաս, էջ...):

4 Անդ:

5 «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա, կազմեցին՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովահաննիսյան, Երեւան, 1974, էջ 674:

6 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Բ մաս, էջ 402:

ԺԵ դարի հիշապակարանների երկրորդ հատորի անձնանունների ցանկում հրատարակիչը գրում է. «Արիսպակէս (Ըռըսպակէս, Ռսպակէս) - Կաթողիկոս Հայոց, ըստ Օրմանյանի՝ աթոռակալել է 1465-1469թթ., 1448թ. սկսած աթոռակից լինելով Գրիգոր Մակվեցուն: Հիշապակարանների փվյալներն այլ են. 1457թ. Արիսպակեսը հիշված է որպես Արարատյան գաւառի արքեպս. 1460թ.՝ որպես «եպսկ Բջնոյ» (սա նույնն է, քանի որ Արարատյան գավառի կամ թեմի կենտրոնը Բջնին էր եւ առաջնորդները երկու ձեւով էլ հիշվում էին - Գ.Ս., Հ.Մ.), իսկ 1469-1474թթ. հիշապակարաններում, բազմիցս, որպես կթղկս «ընդհանուր Հայոց» (1465)[7]: Հիշապակարանային փվյալներով Արիսպակեսը Վաղարշապատի կաթողիկոս է հիշվում 1464 թ.[8]: Արիսպակեսի կապակցությամբ մեկ այլ՝ 1465թ. հիշապակարանում գրված է. «յայսմ ամի նսրաւ յաթոռ հայրապետութեան»[9] (Օրմանյանն այս թվականն է համարում Արիսպակեսի աթոռակալության սկիզբը):

Եթե կարա-կոյունլու Ջհանշահի փադիշահության տարիները հայտնի են (1437-1467 թթ.), ապա նրա կողմից իր դեմ ապստամբած Փիր-Բուդաղ որդու ճնշելուն միտված արշավանքը եւ վերջինիս նսրոց Բաղդադը պաշարելու եւ գրավելու թվականը մեր աղբյուրներում որոշակի չէ:

Լ. Խաչիկյանը քննարկում է հարցին առնչվող հիշապակարանային վկայությունները: Տուրուբերանի Արգելան մենաստանում Ղազար գրչի 1464թ. ընդօրինակած Շարակնոցի հիշապակարանում կարդում ենք. «ի թագաւորութեանն Ջհանշային, որ բազում զաւրաւք պաշարեաց զքաղաքն Բաբելոն»[10] (իմա՝ Բաղդադ): 1465թ. մեկ այլ հիշապակարանում գրված է. «ի թագաւորութեանն Ջհանշային, որ այս Բ (2) ամ է, որ նսրեր է ի վերայ Բաղդապ քաղաքին եւ խսարեր է զորդին իւր զՓիր-Պուրախն...»[11]: Այս առիթով կարեւոր է նույն թվին Արճեշում ընդօրինակված Ավետարանի հիշապակարանը. «Յայսմ ամի (1465թ. - Գ.Ս., Հ.Մ.) սպան չարաչար Ջհանշահ փսրշահն զորդին իւր զՓիր-Պուրախ խանն ի Բաղդապ, եւ եկն ի Թավրէզ ի թաղթն»[12]: Լ. Խաչիկյանն այստեղ ծանոթագրում է. «Ոմն Մկրտիչ քահանա տարեգիր ՋԺԵ (1466) թվականի տակ նույնպես հայտնում է, որ «Ջհանշայն զԲաղդապն էառ. սա զորդին սպան (Փիրղ. Նոտ., էջ 223)»[13]: Հովսեփի գրիչը Քաջբերունիքի Ականց գյուղաքաղաքում ընդօրինակում է մի Ավետարան «ի հայրապետութան Հայոց տէր Ըռսպակէսի, ի թուին Հայոց ՋԺԵ (1466) ամին, եւ ի խանութեան Ջհանշային, որ այս երկու ամ է զԲաբելոն ի յոտի արար ի վերայ խանին, եւ նմա ոչինչ կարացան առնել»[14]:

Բերված վկայությունները փաստում են, որ մեր հիշապակարանի Ջհանշահին վերաբերող իրադարձությունները տեղի են ունեցել 1463-1465թթ.:

Հարկ է սակայն մատնանշել եւս մի փաստ, որը, կարծում ենք, առավել կորոշակիացնի մեր ձեռագրի ընդօրինակման թվականը: Դա մորեխների արշավանքի մասին վկայությունն է, որը կատարվել է ընդօրինակման տարում «յորում ամի»:

---

7 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշապակարաններ», Բ մաս, էջ 467:

8 Լ. Խաչիկյանը ձեռագրի գրչության ժամանակը նշել է այդ թվականի տակ, հավանաբար, հիշված անձանց եւ դեպքերի ժամանակագրության հաշվառմամբ:

9 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշապակարաններ», Բ մաս, էջ 232:

10 Անդ, էջ 218:

11 Անդ, էջ 234:

12 Անդ, էջ 236:

13 Անդ:

14 Անդ, էջ 246:

Ընկարկն Նիկետասը, Դատեցոյն Նիկետասի ասիաքերքը



Համաբարբառ Սիոնյան

1463թ. Տարոնի Եղրդոփ մենաստանում Սրեփանոս գրչի ընդօրինակած Ավետարանի հիշատակարանի վերջում գրված է. «Յայսմ ամի մորեխն երեկ եւ զաշխարհս ապականեաց»:[15] Չնայած աշխարհագրական բավական հեռավորության, հնարավոր ենք համարում, որ այստեղ խոսքը մորեխների նույն արշավանքի մասին, որն, ըստ երեւույթին, բավական մեծ տարածքներ է ընդգրկել, եւ զուր չէ, որ մորեխների հարձակումը «զաշխարհս ապականեաց»:

Վերը նշված տեղեկությունների հիման վրա, կարծում ենք, Եղվարդի ձեռագրի ընդօրինակումը կատարվել է 1463-1464 թթ.ընթացքում:

Գրչության հիշատակարանի կրակի ճարակ դարձած հատվածին հաջորդում են գրչի եւ նրա հարազատների վկայաբերումները. «զգծող սբ աւետարանիս զԴանիէլ սուրբանուն քահանայս, զծնաւղսն իմ զՄովսէս քիյ եւ զՆասրիմելիք եւ զհարազատ եղբարսն իմ զԿիրակոս սրբասնեալ կշռաւնաւոր եւ զԾերուն եւ զՍիմէոն»: Դանիելը Արծկեի նշված վանքի հմուտ գրիչներից է եղել: Պահպանվել է նրա ընդօրինակած եւս մի ձեռագիր Ավետարան, որի հիշատակարանում կարդում ենք, որ մատյանը գրվել է «ձեռամբ յոգնամեղ եւ անիմաստ գրչի Դանիէլ պիտակ անուն քահանայի, որ վեց գրիւ անունս կոչի՝ Դա առաջին եւ Լուն վերջի: Յամի Ջ. եւ Թ. (1460) թշուական[ի] ...: Ջմեղապարտ Դանիէլ գծողս յիշեցէք ի Քրիստոս եւ զորդի իմ զՄովսէս դպիր»[16]: Չափազանց հետաքրքիր է Դանիել անվան պառակազմության ներկայացման ձեւը՝ վեց գրից բաղկացած անուն, որ սկսվում է Դան պառով եւ ավարտվում Լուն (լյուն)-ով:

Հայտնի է, որ միջնադարում, շատ հաճախ, գրչության գործը եղել է ժառանգական: Այստեղ էլ գրիչ հոր՝ Դանիելի գործը շարունակել է որդին՝ դպիր Մովսեսը: Վերջինիս ընդօրինակմամբ պահպանվել է մի ձեռագիր Գանձարան, բավական ընդարձակ, ժամանակի պատմության չափածո հիշատակարանով: Ուշագրավ է, որ Մովսեսը, շարունակելով հոր ավանդույթը, սկզբում ներկայացնում է իր անվան պառերի թվարժեքը եւ պառակազմությունը.

...Արդ, ես նըւասպս յամենեսին,
Որ զվեց պառիւ անունս կոչին՝
Մենն առաջին եւ Սէն յետին,
Որ համարով վերաբերին
Ութն հարիւր ընդ եօթնեկին
Ի եօթըն հազար բոլորովին[17]:
Այնուհետեւ շարունակում է.
Արդ, ես՝ Մովսէս հոգիս մըթին
Յինըն հարիւր Հայոց թըւին
Ի՛ի քսան մէկն յաւելածին (1472)
Գրեցի զգանձս ասպուածային

---

15 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Բ մաս, էջ 194:

16 Անդ, էջ 139:

17 Անդ, էջ 331: Լ. Խաչիկյանը ծանոթագրում է. «Մովսէս անվան պառանիշերի թվական արժեքների գումարը, իրոք հավասար է 7807 (Մ=200+Ո=600+Վ=3000+Ս=2000+Է=7+Ս=2000=7807):

Ի յԱրծկէ լաւ քաղաքին,
Ընդ հովանեաւ Աստուածածնին,
Պատերազմի սուրբ Նշանին...[18]:

Մովսեսը ցավալի մանրամասներ է ներկայացնում կապված իր հոգեւոր մոր (այդպես է կարծում Լ. Խաչիկյանը[19]) հետ.

Մեծ սուգ եղեւ իմ ծնողին՝
Խաւնծայ փիկնոջ հոգեկանին,

քանի որ մահացել էին նաեւ Մովսեսի քեռի Միրանշայը եւ իր չորս մանուկ որբ ազգականները՝ Կարապետը, Մկրտիչը, Հովհաննեսը եւ Ղարիպշահը (ըստ Լ. Խաչիկյանի)[20]:

Հիշատակարանում Մովսեսը շարունակում է.

Ասել զամէնն եւ զողորմին
Ինձ՝ Մովսէսիս ծոյլ ի բարին,
Գըրչի այսըմ Գանձարանին...
Մովսեսը ցանկանում է, որ հիշեն.
Ինձ եւ ծնողացն իմ մարմնային՝
Դանիէլի քահանային,
Եւ մօրն իմոյ Խայ-Խաթունին,
Քըւերըն խոջայ Միրանշին,
Եւ հօրեղբարցն իմ ի կարգին՝
Կիրակոսի կրօնաւորին,
Ծերունին, ընդ Սիմէոնի...
Եւ կենդանեաց որ կան ի ժմին՝
Տէր Աւագին կեանըս պացցին,
Իմ դեռաբոյս պապանեկին,
Որ Միքայէլ անուն ասին:

Լ. Խաչիկյանը Ավագին, ի թիվս Կիրակոսի, Ծերունի եւ Սիմեոնի, նույնպես համարում է Մովսեսի հորեղբայրը, իսկ Միքայելին՝ որդին:

Մովսեսը, որ առավել հայտնի էր Մովսես Արծկեցի հորջորջմամբ, բուռն գրչագրական գործունեություն է ծավալում դարիս 80-90-ական թվականներին:

1480թ. Արծկեի վանքում Հակոբ գրիչը սկսում է մի «Յայսմաւուրք»-ի ընդօրինակումը. «...զգծող առաջին հատորի սորա զտէր Յակոբին», իսկ շարունակում է Մովսեսը. «այլ եւ աստուած ողորմիւ եւ զիս՝ զանարժան Մովսէս յիշել՝ զգծող վերջին հատորիս, եւ զծնօղսն իմ զԴանիէլ քահանայ եւ զՀայխաթունն եւ զհօրեղբարսն իմ զԿիրակոս կրօնաւորն, որ աշխատեցաւ ի կոկել թղթին, եւ զծերունի եւ զՍիմէոն...[21]: Լ. Խաչիկյանը կարծում է, որ նույն Մովսեսի գործն են 1482թ. ընդօրինակված «Շարակնոց»-ը (վայրը հայտնի չէ). «Գրեցաւ եղանակաւոր փառս ձեռամբ իմաստուն եւ պատուական քահանայի, քաջ քարտուղա-

18 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Բ մաս, էջ 331:
19 Հիշատակարանի հետագա շարադրանքում նշված է Մովսեսի «մարմնային» մայրը:
20 Անդ, էջ 332: Նույն էջում են նաեւ հաջորդ մեջբերումները:
21 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մաս Գ (1481-1500թթ.), կազմեց՝ Լ.Ս. Խաչիկյան, Երեւան, 1967, էջ 10:

րի Մովսէսի...»[22], 1485թ. ընդօրինակված «Տօնացոյց եւ Աղթարք»-ը. «...Գրեցաւ ... ձեռամբ Մովսէս աբեղին...»[23] եւ 1486թ. ընդօրինակված «Ճառընտիր»-ը. «...ես Մովսէս գրիչս, զգրքիս օրինակն սկսայ...»[24]:

Մովսես Արծկեցին եւ գրչակից ընկեր Հակոբը «ի խնդրոյ աստուածասէր պանուպրոջն պարոն Խալիֆին» 1491թ. ընդօրինակում են Երեւանի Մատենադարանում պահվող «Ճառընտիր»-ը (ձեռ. 4822): Հիշատակարանի վերջում Մովսեսն աղաչում է, որ աղոթքներում հիշեն Հակոբին եւ իրեն. «Մովսէս գրչիս, եւ ծնօղացն իմոց՝ Դանիէլ քահանային եւ Հայ-Խաթունին, եւ հօրեղբարցն իմոց Կիրակոս կրօնաւորին, Սիմէոնին եւ Ծերունին, եւ որդւոյ նորա փէր Աւագին, որ յայսմ ամի կտրճամսի եղեւ ի փիս մանկութեան եւ կսկիծ դառնութեան հասոյց մեզ...: Այլ եւ յիշել բարի կամօք զնորահաս մանկունս իմ զՄիքայէլ եւ զԱնանիա, որ աշխատեցան ի նշայել եւ ի կոկել թղթիս...»[25]:

Այս հիշատակարանի վկայությամբ Դանիել քահանայի արդեն չորրորդ սերունդը շարունակում էր գրչության ժառանգական ավանդույթը:

Արծկեից ոչ հեռու գտնվող Խլաթի «աթոռակալ» Վարդան եպիսկոպոսի պատվերով 1494թ. Մովսեսն ընդօրինակում է «Մեկնութիւն Կաթողիկեայց թղթոց Սարգսի Շնորհալւոյ» ձեռագիրը, որը Վարդանը «սրացաւ յիշատակ բարի զաստուածաշունչ կրկաս եւ ընծայեաց ի դուռս մօրս լուսոյ Մատենավանից սուրբ Աստուածածնիս՝ ի սեպհական աթոռս իւր...»[26]:

«...Ձեռամբ Մովսէս երիցու Արծկեցոյ ի քաղաքս Ամիթ, ընդ հովանեաւ կաթուղիկէ սուրբ Թեադորոսին, ի ՋԼԴ (1485) ամին, ի վայելումն համշիրաք եղբօր մերում փէր Յովհաննիսին...»[27] ընդօրինակվում է մի «Տաղարան»: Լ. Խաչիկյանը նրան նույնացնում է Մովսեսի հետ, սակայն մի շարք հարցեր անպատասխան են մնում. ինչպե՞ս է նա հայտնվել Արծկեից բավական հեռու գտնվող Ամիդ-Դիարբեքիրում (ըստ հիշատակարանային փվյալների նա այդ տարիներին գործել է Արծկեում), ինչո՞ւ մյուս ոչ մի հիշատակարանում Մովսեսը «երեց» չի հորջորջվում եւ այլն:

Վերադառնանք Եղվարդի ձեռագրին: Հիշատակարանում Դանիելը խնդրում է նորից ողորմի ասել սրացող-պապվիրապու պանուպեր Հակոբին «եւ կենակցին իւրոյ Թուրանդին»: Ինչպես վերեւում մատնանշել էինք, ներկայացնելով հիշատակարանի սկզբնահատվածը, պանուպեր Հակոբի կինը Ջամալխաթունն էր: Այս թնջուկը դժվարանում ենք մեկնաբանել: Հիշատակարանի այս հատվածում նշված է նաեւ Հակոբի մոր՝ Աննայի, իսկ Հակոբի հորեղբոր զավակների շարքում, ինչպես նախորդիվ անդրադարձանք, ավելացված են Ստեփանոսի եւ Սադաղի անունները: Հիշատակման արժանի անձանց թվում վերջինը հիշված է. «զլի շնորհօք որդին իմ (Դանիելի-Գ.Ս.,Հ.Մ.) զՄովսէս դպիրն, որ աշխատեցաւ ի գլխագրելն...»:

Ձեռագրի հետագա շուրջ 150 տարվա պատմությունը հիշատակագրված չէ: Թե որքան

---

22 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մաս Գ (1481-1500թթ.), կազմեց՝ Լ.Ս. Խաչիկյան, Երեւան, 1967, էջ 34:

23 Անդ, էջ 78:

24 Անդ, էջ 81:

25 Անդ, էջ 174:

26 Անդ, էջ 195:

27 Անդ, էջ 465-466:

է այն պահվել Արծկեում՝ հայտնի չէ, սակայն, դատելով մյուս հիշատակարաններից, այդ տարիներին ձեռագիրը գերեվարվել է:

Մատյանի հեպագա ոդիսականի դիտարկման համար աղբյուրագիտական մեծ արժեք է ներկայացնում ձեռագրի երկրորդ սրացող-նորոգողի հիշատակարանը:

1618թ., երբ « զմորեխն բազում երկիր աւիրեաց», պարոն Հասանը երեք թումանով գնել է ձեռագիրը եւ 1627 թ. «եպ նորոգել» իր, ծնողների, կողակցի եւ մյուս հարազատների հոգու հիշատակի համար: Այնուհետեւ նրանք հիշված են անուն առ անուն. Հասանի ծնողները՝ Խոշը եւ Գոհարսուլթանը, կինը՝ Գոհարը, հորեղբայր Զոհրապը եւ նրա կողակից Հեղինեն, Հասանի Աստուածապով «նորաբողբոջ» որդին, մյուս, արդեն հանգուցյալ որդի Կիրակոսը, երրորդ որդի Շահնազարը, դստերք՝Հռումսիմն ու Եղիսաբեթը, Հասանի քույր Եղիսաբեթը եւ նրա որդի Նաղպին: Վերջում, թերեւս, հիշատակարանի գրիչը կամ նորոգողը «առ ոտս ...անկեալ» աղաչում է, որ ընթերցողները իրենց «մաքրափայլ» աղոթքներում հիշեն իրեն՝ «զանարժան Սիմէոնս զսբ Աւետարանս ի թվ(ա)կ(ա)նին ՌՀՋ (1627), ի գեօղն Վ(ա)րդենիս ի երկիրն Գեղամայ»:

Հասանի հիշատակարանում, մեր կարծիքով, լուսաբանման կարոտ երեք խնդիր. երկու՝ 1618 եւ 1627 թվականների մատնանշումը եւ ինչ կապակցությամբ է հիշված Գեղարքունիքի Վարդենիք գյուղը: Խնդրո առարկայի վերաբերյալ ձեռքի տակ չունենալով այլ սկզբնաղբյուրներ, բավարարվելով մեր հիշատակարանում փաստված իրողություններով, կարծում ենք, որ 1618-ը ձեռագրի փրկագնման, 1627-ը՝ նորոգման տարեթվերն են, իսկ Վարդենիքը՝ թերեւս պարոն Հասանի (տեղական իշխան կամ տանուտեր) հայրենի բնակավայրը, որտեղ ինչ-ինչ ճանապարհով հայտնվել է ձեռագիրը եւ նորոգվել:

Երեւանի Մատենադարանի թիվ 7564 «Մեկնութիւն Սաղմոսաց» ձեռագրի 1627թ. հիշատակարանում խոսվում է մատյանը նորոգողների՝ Հովհաննես քահանայի եւ Սիմէոնի մասին, որոնք գործել են Խոր վիրապում, Հավուց թառում եւ Ուրծապափում, այնուհետ նշվում է, որ «կոչեաց զմեզ Գեղարգունեաց», ինչը, թերեւս, պետք է հասկանալ այդ գավառից սերված: Հաջորդիվ, նորոգողների բուն հիշատակագրությունում նրանք աղաչում են, որ հիշեն «ան[յ]իշելի եւ զառաձեալ սուրանունքս՝ զՅովհաննէս քահանայս... եւ զանարժան Սիմէոնս»[28]: Նկատի ունենալով մեր եւ այս Սիմէոնների ժամանակակցությունը եւ արեւսփակցությունը, ինչպես նաեւ երկուսի էլ գեղարքունիքցի լինելը, հնարավոր ենք համարում նրանց նույնացումը:

117 տարի հետո Ավետարանը եւս մեկ անգամ նորոգման կարիք է զգում: Այդ գործը ձեռնարկում է Աղապաբը, իսկ «ՌՃՂԳ (1744) թվին, ի թ(ա)գ(ա)ւ(ո)րու(թ)ին Նափիր շ(ա)հի» իրականացնում է փիրացու Ովանէսը: Մեկենասն այն նվիրում է իր, ծնողների եւ մյուս հարազատների հոգու հիշատակին: Շարադրանքից չի հասկացվում, թե այդ ժամանակ ձեռագիրը որտեղ էր գտնվում, հնարավոր է՝ դեռ Վարդենիքում:

95 տարի անց Ավետարանը հայտնվում է Եղվարդում: Դատելով հետին հիշատակարաններից՝ այն իրենց հետ բերում են վերը հիշված Հասանի ուշ սերնդակիցները: Նրանք 1839թ. «Ընծայեցաք զսբ Աւետարանս ի սբ...Նշանին Եղվարդու...»: Նվիրատուն է Բարսեղ Հովսեփյանը:

---

28 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԷ դար, հ. Բ, Երեւան, 1978, էջ 257-258:

Ենկարդի Վեքտարան, Յիսուս Քրիստոսի Ընծայուլը տաճարին և Միտտուբյուլը



Ձեռագրի վերջին թերթերում կան ավելի ուշ շրջանի հիշատակագրություններ: Դրանցից է 1890թ. դեկտեմբերի 7-ին արված նշումը, որում փաստված է ձեռագրի վերջին փերերի սերումը XVII դարի «սպացող» Հասանի փոհմից:

Այսօր այս սուրբ մատյանը խնամքով ու ապահով պահվում է Հարությունյան ընտանիքում:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ԵՂՎԱՐԴԻ «ԿԱՐՄԻՐ ԱՒԵՏԱՐԱՆ» ՁԵՌԱԳՐԻ

ա. Հիշատակարան սպացողի եւ գրչի

ՓԱՌՔ..... եւ եղբարցն
..... ***Կապրատեւրին. Մելքեան***
..... ***թին եւ Բաղդասարին***
..... եւ զաւակաց նոցին՝ ***Աւե***
..... ***պիս*** դեռաբոյս սարկաւ
..... ագին եւ ***Խլղաթին, Ալամ***
..... ***շին*** եւ ***Գուլիպաշին*** եւ
..... ***Գուլանիպաշին*** Ամէն:
..... Եւ արդ՝ գրեցաւ սա
..... ի քաղաքն ***Արծկէ***
..... ընդ հովանեաւ ***սբ***
..... ***Աստուածածնի*** մաւրն լու
..... սոյ եւ ***սբ Սրեփանոս***
Որոյ ցանկացող է ***սի Նախաւկային***
ղեալ բարեմիտ եւ եւ ***Պատերազմի սբ Նը***
շանի եւ սբ.....
մեծահաւատ գրան .....
ուրէրն ***Յակոբ*** եւ կողակ .....
իցն իւր ***Ջամալխաթունն*** .....
եւ սպացան զսա. ե .....
ռափափագ ըղձիւ .....
զգանձս աստուածային .....
յիշատակ իւրն եւ .....
բարի ծնաւղաց իւ .....
րոց. ***Յովանիսին*** .....

Շայպաւրու գեառն մարդիկք եւ եղեւ սը
Ղրսւրակգիսի: Եւ ղութիւն: Արդ՝ որք
յաշխարհականութիւն հանդիպիք սբ Աւե
Ջրհանշայի որ գնացգարանիս յիշեցէք ի

ի վերայ ***Բաղդասրայ*** մաքրափայլ յաղօթս
եւ մոռնչեաց իբրեւ ձեր. զգծող սբ Աւե
զառեւծ եւ նսպաւ պարանիս. ***զԴանիէլ***
ի վերայ ***Բաբելոնի*** սուպանուն քահանայս.
յաւուրս ամարայնոյ զծնաւղսն իմ ***զՄով***
եւ նրւաճեաց զամենայն ***սէս*** քահանայ եւ ***զնասրի***
Բաբելոն: յորում ***մելիք*** եւ զհարազապ
ամի ել մարախ յար եղբարսն իմ ***զԿիրա***
եւելից ի վերայ երկ ***կոս*** սրբասնեալ կը
րի եւ թանձրախիփ րաւնաւոր եւ ***զծեր***
ծածկեաց զդաշտ ***ուն*** եւ ***զՍիմէոն*** եւ
եւ զլերինս. զսար եւ լի բերանով Ասրուած ողոր
.....ղոյն մի ասացէք եւ Ասրուած ձեզ
..... ողորմեսցի Ամէն:
..... Դարձեալ յերես ան
..... կեալ աղաչեմ զամե
..... նեսեան զքահանայդ
..... եւ զժողովուրդսդ
..... լի բերանով եւ ուղիղ

սրտիւ Ասրուած ողորմի րելն զոր Տր Ած պա
ասացէք սրացողի հեսցէ զնա ընդ եր
սբ Աւեսրանիս կայն աւուրս Ամէն:
ազնիւ եւ պասր[ո]յա Եղիցի, եղիցի: Հայր
կան սրանուսրոջն մեր, որ յերկինսդ ես:
Յակորին եւ կենսակցին իւրոյ
Թուրւանդին
եւ ծնաւղաց նորին
Յովհաննէսին եւ մարն ***Անայի*** եւ իւր եղբ
արցն ***Կարրապետրին. Մելք***
եսեթին եւ ***Բաղդասարրին***
եւ որդւոց նոցին՝ ***Աւետ***
հս սարկաւագին. ***Խլղա***
թին [եւ] ***Սրեփանոսին.***
եւ ***Սադրադին*** եւ ամենայն ար
եան մերձաւորացն կենդա
նեացն եւ հանգուցելոցն.
Դարձեալ երես ան
կեալ աղաչեմ զձեզ
յիշեսջիք ի յերկնաթը

ոիչ յաղօթս ձեր զլի
շնորհօք որդին իմ ըզ
Մովսէս դպիրն որ աշ
խապեցաւ ի գլխագ

բ. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅ ՍՏԱՅՈՂԻ

Ես՝ ***Հասանն***,ցանկա
ցող եղայ զաստուածահր
աշ Աւետարանիս,
գնեցի զսա ի հալալ
արդեանց երեք
թուման փվի
առայ այնմ ժամ
անակին, որ զմորե
խն բազում երկիր աւ
իրեաց. թիվն Ռ-
ԿԷ(1618) էր բազում
սղութիւն եղաւ:
Յիշեցէք Հասանն
եւ որդին իւր ***Աստուածատ***
ուն բարով վայելէ:

Ջսրացօղ եւ հանգուցեալ որդ
հեզահոգի եւ բարէմիտ ին իւր ***Կիրակոսն*** եւ միւս
աստուածասէր եւ ողորմած որդին ***Շահնազարն***
պարոն ***Հասանն,*** որ և եւ դստերքն իւր ***Տ***
ր նորոգել զսբ աւետ ***ումսիմէն Եղիսա***
արանս ի հալալ ընչ ***բեթ*** չինին: Դարձեալ
ից յիշատակ իւր յիշեցէք պարոն
հոգոյն եւ ծնօղացն ***Հասանն*** եւ քոյրն
իւրո[յ] եւ կողակ[ց]ին իւ իւր ***Եղիսաբեթն***
րոյ եւ ամենայն յարեան եւ որդին նորա ***Նա***
մերձաւորացն ամէն ***ղրին*** յիշեցէք
յիշեցէք ***զ Հասանն*** Ած ձեզ ողորմես
եւ հայրն իւր ***Խոշին*** ց[ի] իւր միւս անգա
եւ մայրն իւր ***Գաւ*** մ գալը[ս]կեանն:
հարսօլթանն եւ Ամէն:
կողակիցն ***Գաւհարն*** Առ ոտս ձեր ան
եւ հօրեղբայրն ***Զօհր*** կեալ աղաչեմ,

ապն եւ կողակիցն ***Տէ*** ով սբ ընթերցողք,
դինայն. դարձեալ յիշեցէք ի մաքրա
յիշեցէք ***Հասանն*** եւ փայլ աղօթս ձեր
որդին իւր նորաբող զանարժան ***Սիմ***
բոջ Ասպուածապաւն ***Էոնս*** որ նորոգեցի զսբ Աւետարանս
ի թվականին .Ռ.Ղ. (1627)
ի գեօղն ***Վ/ա/յոդենիս***
ի երկիրն ***Գեղամայ***:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՁԵՌԱԳՐԻ ՀԵՏԱԳԱՅ ՆՈՐՈԳՄԱՆ

Շնորհօք եւ մարդասիրութեամբ Տն մերոյ եւ
փրկին ՅԻ ՔԻ եւ թելադրութեամբ Սբ Հոգոյն
ես՝ ***Աղասպաբս*** վերսպին նորոգեցի սբ
Աւետարանս յիշատակ հոգոյ իմոյ եւ ծնողացն
իմ պէր ***Բսպսեղին, Նազին Խսաննանին, Սան***
ամին. Էրկսպին եւ որդոցն իմ ***Յովագիմին, Էր***
կսպին եւ դսպերն ***Նուրհանին***. եւ կողակցոյն
իմ ***Փսլսքին*** եւ հօրքեա ***Մսլսքին*** եւ հօրեղբ
այր ***Սիմսոնին*** եւ ծնողացն ***Գրիգորին, Այրինին***
եւ ամ արեան մերձա[ւ]որացն ամենց[ո]ւն ամէն: Հայր.
Ես՝ փիրացու ***Ովանէս*** նորագործեցի Ռճ
ՂԳ (1744) թվին ի թագաւորութեան ***Նսպրիր*** Շ[ա]հի արդասուայ-
թոր փիմօք աղաչեմ զձեզ ով ոք որ հանդիպիք
սմայ ընթեռն[ե]լով կ[ա]մ ըսպօսն[ե]լով. յիշեցէք ի
մաքրափայլ աղօթս ձեր եւ դուք յիշեալ լից
իք ի Քրիսդոսէ. Ամէն:

1. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

Ընծայեցաք զսբ Աւետարանս ի սբ Լուսաւ[որչի]
սբ ***Նշշանին Եղվարդու*** եւ ամենայն ջերմեռանդութեամբ
մեր ամենայն ազգայնովք, որ եմք ***Բսպսեղ Յովսէփեան***
եւ որդիք իմ ***Սրեփան Յոուսդամ Յերկսպեան***
եւ որդիքս իմ ***Համբարձում*** եւ ***Յարութիւն*** եւ թոռ
ունքն մեր ***Յովսէփ*** եւ ***Սահակ*** եւ հօրեղբօր
որդիքն իմ ***Յովսէփ*** եւ ***Յարութիւն*** եւ որդիք այլ
Նիկողոս եւ ***Ղեւոնդ*** եւս ***Մարգար. Յովհաննէս.***
եւ ***Գէորգ Փիլոմեան*** նոյնպէս ***Աբրահամ***
եւ ***Աստքել Աղամեան:*** Եւ արդ՝ երես ան

կեալ աղաչեմք քոյով ոք մեր պըղնեալ յիշապտա(կս)
Սբ Աւետարանըն ընթեռնու եւ կամ օրինակէ
յիշէ մեր ամենայն ազգիքն թէ կենդանիքն եւ թէ
նընջեցեալքն ի Քս Յս ի փր մեր
եւ յիշեցողքդ յիշեալ լիցիք առաջի
անմահ գառին Այ ամէն: Եւ արդ՝
ով ոք մեր պըղնեալ յիշապտակն հանել ջան(այ)
թէ ազգայինք եւ թէ օտարականք կրէք հարի[ւր]
յիսուն ու վեց հայրապետացն նզովես(ց)
է Յուդայի եւ խաչհանուացն ...(մեկ բառ անընթեռնելի)
գելէ եւ կապարողքն օրհնէն Այ եւ ամենայն
սրբոց: Ամէն:
1839 ամի եւ մարտի 1ին

2.1890 ամի եօթն դեկտեմբերի
Տասանի գեղիցը ***Աբրահամի***
սերունդիցը ***Գէորգը*** եւ ***Յարութիւն***
Աբրահամեան: ***Գէորգի*** ժառանգը
Մաթէոսը ու ***Մաթէոսի*** ժառանգը
Տամայակը եւ ***Յարութիւն*** ժա
ռանգը ***Խաչատուրը*** եւ ***Յարութիւնը:***

3.Ես ***Տասանի*** գեղիցն մայրեսի ***Յարութիւնի***
ժառանգն Ա. ***Մարքար***, Բ. Ասպուր, Գ. ***Ավէտիս***,
Դ. ***Ադաբաբն***, ***Մարքարի*** որդիքն ***Սումբատ***,
Մելքոն, Եղազար, Եսայի, Սումբատի որդին
Յարութն, Գասպար, Նուշիկ, Մելքոնի որդին
Աբաէն, Նէբաէս, Եղազարի որդիքն ***Գէորգ.***
Սուրեն .....

ՏՈՀՄԱԾԱՌԵՐ

ՄՈՎՍԷՍ քահ. + ՆԱՍՐԻՄԵԼԻՔ

ԴԱՆԻԷԼ քահ. + ԽԱՅԽԱԹՈՒՆ ԿԻՐԱԿՈՍ կրնվ. ԾԵՐՈՒՆ ՍԻՄԷՈՆ փէր ԱՒԱԳ

ՄՈՎՍԷՍ դպիր

ՄԻՔԱՅԷԼ ԱՆԱՆԻԱ

ՀՈՎՀԱՆՆԷՍ + ԱՆԱ

ՅԱԿՈԲ պանուպէր + ՋԱՄԱԼԽԱԹՈՒՆ ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼՔԵՍԷԹ ԲԱՂԴԱՍԱՐ
+ ԹՈՒՐՎԱՆԴ ՍՏԵՓԱՆՈՍ ԳՈՒԼԱՄՓԱՇԱ ՍԱԴԱՂ

ՋՕՀՐԱՊ - ԽՕՇ
+ ՀԵՂԻՆԱ + ԳԱՒՀԱՐՍՕԼԹԱՆ

պրն ՀԱՍԱՆ ԵՂԻՍԱԲԵԹ
+ ԳԱՒՀԱՐ

ԿԻՐԱԿՈՍ(+) ՇԱՀՆԱՋԱՐ ՀՌՈՒՄՍԻՄԷ ԵՂԻՍԱԲԵԹ ՆԱՂՏԻՆ

ԷՏԿԱՐ
+ ՍԱՆԱՄ

փր ԲԱՐՍԵՂ + ՆԱՋԽԱՆՆԱ

ԱՂԱՊԱԲ

ՅՈՎԱԳԻՄ ԷՏԿԱՐ ՆՈՒՐԾՀԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵԱ

Ապրիլի 5-ին, կիրակի. -Ծաղկազարդ: Պահք:

Մայր Տաճարում, Աւագ Ս. Սեղանի վրայ, Ս. Պատարագ մատուցեց Գերաշնորհ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճեանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը յաւուր պատշաճի քարոզ խօսեց (տե՛ս էջ 18):

Ապրիլի 7-ին, Գշ. - Պահք: Յիշատակ տասն կուսանացն: Աւետումն Ս. Աստուածածնի:

Մայր Տաճարում, Աւագ Ս. Սեղանի վրայ, Ս. Պատարագ մատուցեց Հոգեշնորհ Տ. Պարթեւ աբեղայ Բարսեղեանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը յաւուր պատշաճի քարոզ խօսեց:

Ապրիլի 9-ին, Եշ. - Աւագ Եշ.: Պահք: Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Մայր Տաճարում, Աւագ Ս. Սեղանի վրայ, Ս Պատարագ մատուցեց Հոգեշնորհ Տ. Յովակիմ վարդապետ Մանուկեանը: «Հայր մեր»-ից առաջ Գերաշնորհ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճեանն ընթերցեց Ս. Բարսեղ Կեսարացու՝ Ս. Հաղորդութեանը նուիրուած աղօթքը:

Երեկոյեան կատարուեց Ոտնլուայի եւ ապա՝ Խաւարման կարգը, յընթացս որի քարոզ խօսեց Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրեանը:

Ապրիլ 11-ին, Շբ. - Պահք: Ճրագալոյց Զատկի:

Մայր Տաճարում, Աւագ Ս. Սեղանի վրայ, Ս. Պատարագ մատուցեց Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրեանը: «Հայր մեր»-ից առաջ Սրբազան Հայրը յաւուր պատշաճի քարոզ խօսեց (տե՛ս էջ):

Ապրիլ 12-ին, Կիր. - ԶԱՏԻԿ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Մայր Տաճարում, Աւագ Ս. Սեղանի վրայ, Զատկական Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը Ս. Յարութեան փօնի իր պատգամը յղեց հաւատաւոր հայորդիներին (տե՛ս էջ):

Ապրիլ 13-ին, Բշ. - Բ. օր Զատկի:

Մայր Տաճարում, Աւագ Ս. Սեղանի վրայ, Ս. Պատարագ մատուցեց Հոգեշնորհ Տ. Հովնան աբեղայ Յակոբեանը:

Յաւարտ Ս. Պատարագի կատարուեց հոգեհանգստեան արարողութիւն:

Ապրիլ 19-ին, Կիր. - Ը. օր Զատկի: Կրկնազատիկ (Նոր Կիւրակէ):

Մայր Տաճարում, Աւագ Ս. Սեղանի վրայ Ս. Պատարագ մատուցեց Հոգեշնորհ Տ. Մաղաքիա աբեղայ Ամիրեանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը յաւուր պատշաճի քարոզ խօսեց (տե՛ս էջ):

Ապրիլ 24-ին, Ուրբ. - ԺԳ. օր Յինանց:

Մայր Տաճարում, Աւագ Ս.Սեղանի վրայ, Ս. Պատարագ մատուցեց Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրեանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը յաւուր պատշաճի քարոզ խօսեց (տե՛ս էջ):

Յաւարտ Ս. Պատարագի կատարուեց հոգեհանգստեան արարողութիւն Մեծ եղեռնի բիւրաւոր նահատակների հոգիների հանգստութեան համար:

Ապրիլ 26-ին, Կիր. - Գ կիր. Աշխարհամատրան (Կանաչ Կիւրակէ):

Մայր Տաճարում, Աւագ Ս. Սեղանի վրայ, Ս. Պատարագ մատուցեց Հոգեշնորհ Տ. Վարդան աբեղայ Նաւասարդեանը: «Հայր Մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը յաւուր պատշաճի քարոզ խօսեց (տե՛ս էջ)

"ЭЧМИАДЗИН"
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА

(Апрель 2009)

Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю 100-летия погромов армянского населения г. Аданы 3
Наставление Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю праздника Святого Воскресения 6
Поздравительное послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю праздника Благовещания 9

Официальное

Праздник Вербное Воскресенье в Первопрестольном Святом Эчмиадзине 10
Вручение клобука Преподобному отцу Хорену Ованесяну 10
Соболезнование Его Святейшеству Папе Римскому 10
Обряд Омовения ног, проведённый Католикосом всех армян 11
Праздник Святое Воскресение в Первопрестольном Святом Эчмиадзине 12
Католикос всех армян принял министров внутренних дел государств членов ОДКБ 13
Католикос всех армян принял посла Республики Беларусь 13
Паломники Лютеранской и Православной Церквей Финляндии посетили Первопрестольный Святой Эчмиадзин 14
24 Апреля - день помяти жертв Геноцида армян.....15
Католикосу всех армян вручили лампаду мира и любви 16

Проповеди

Проповедь Его Преосвященства епископа Арарата Галтакчяна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина на Литургии в праздник Вербного Воскресенья 17
Проповедь Его Преосвященства епископа Аршака Хачатряна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина на Литургии в сочельник Воскресения 20
Проповедь Преподобного отца Магакии Амиряна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина на Литургии в Новое Воскресение 22

Проповедь Его Преосвященства епископа Аршака Хачатряна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина на Литургии в день памяти Геноцида армян 25
Наставление главы Иракской епархии Армянской Апостольской Церкви Высокопреосвященного архиепископа Авага Асатуряна в день памяти Геноцида армян 27
Проповедь Преподобного отца Вардана Навасардяна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина на Литургии в Зелёное Воскресенье (День прославления единой соборной Церкви) 31

Религиозные исследования

Иеромонах РУБЕН ЗАРГАРЯН - “Крестная речь” апостола Павла 34
Священник ТИРАТУР САРДАРЯН – О каком единении мы говорим? 41

Историко-филологические исследования

САМВЕЛ ПОГОСЯН – Армянский легион в годы первой мировой войны 55
САМВЕЛ МУРАДЯН – Развитие темы Геноцида армян в стихотворениях Ованеса Шираза 68
ВАРДУИ ГАБРИЕЛЯН – Вокруг художественной системы произведения “Дантеана армян” 87
МАРИАМ ДАВТЯН – Произведения Хорена Тер – Арутяна 98

Сообщения

Иеромонах МАМБРЭ ТАШЧЯН – Церковь Св. Богородицы в селе Олаверд.....111
Диакон ТИГРАН БАГУМЯН – Пятидесятилетие Геноцида армян в армянской диаспоре Индии 113

Рецензии. Библиография

АВЕТИС КАЛАШЬЯН – Второе открытие историка 119
ГАГИК САРГИСЯН, УСИК МЕЛКОНЯН – История и памятные записи Красного Евангелия Егварда 127

Краткие церковные новости 141

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN
(April 2009)

Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of 100th year commemoration of the Armenian Massacres in Adana 3
Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the Holy Feast of the Glorious Resurrection of Our Savior 6
Solemn message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the Feast of the Annunciation 9

PONTIFICAL AUDIENCES, COMMUNIQUES AND EVENTS

Feast of Palm Sunday in the Mother See of Holy Etchmiadzin 10
Conferral of Monastic Cowl to Rev. Fr. Khoren Hovhannesyan 10
Letter of condolence of His Holiness, Karekin II, Catholicos of All Armenians, to the Pontiff of the Roman Catholic Church, His Holiness Pope Benedict XVI 10
His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, presiding over the celebration of the Washing of the Feet on Holy Thursday..... 11
Feast of the Holy Resurrection in the Mother See of Holy Etchmiadzin 12
Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the Internal Affairs' Ministers of DCGS Member-countries 13
Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to H. E. S. Sukhorenko, Ambassador of Belarus in Armenia 13
Pilgrims of the Finnish Orthodox and Lutheran Churches in the Mother See of Holy Etchmiadzin 14
April 24th Day of Commemoration of the Armenian Genocide 15
Presentation of the Lamp of Peace and Love to His Holiness Karekin II, Catholicos of All Armenians 16

SERMONS

Sermon delivered by His Grace Bishop Ararat Kaltakjian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the Feast of Palm Sunday 17

Sermon delivered by His Grace Bishop Arshak Khachatryan in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Easter Eve Divine Liturgy 20
Sermon delivered by Rev. Fr. Malachia Amiryan in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the Feast of New Sunday 22
Sermon delivered by His Grace Bishop Arshak Khachatryan in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Requiem Mass dedicated to the memory of the victims of the Armenian Genocide 25
Sermon delivered by His Eminence Archbishop Avak Asadurian, Primate of the Armenian Diocese in Iraq, in the Cathedral of St. Gregory the Illuminator (Baghdad) during the celebration of the Requiem Mass dedicated to the memory of the victims of the Armenian Genocide 27
Sermon delivered by Rev. Fr. Vardan Navasardyan during the celebration of Divine Liturgy on the Feast of Red (Martirion) Sunday 31

RELIGIOUS AND THEOLOGICAL STUDIES

REV. FR. RUBEN ZARGARYAN-St. Paul's "Message of the Cross"..... 34
REV. FR. TIRATUR SARDARYAN- Concerning which union do we speak.....41

HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

SAMVEL POGHOSYAN- The Armenian Legion during the First World War 55
SAMVEL MURADYAN-The Theme of the Armenian Genocide in the Poetry of Hovhannes Shiraz 68
VARDUHI SH. GABRIELYAN- Concerning the Literary System of the poem "Hayoc' Dant'eakanə" 87
MARIAM DAVTYAN- The Œuvre of Khoren Ter-Harutian..... 98

ESSAYS AND NOTES

REV. FR. MAMBRE TASHCHYAN- The Church of the Holy Theotokos in the Village of Olaverd 111
Dn. TIGRAN BAGHUMYAN- The 50th Anniversary Commemoration of the Armenian Genocide in the Armenian Community of India 113

LITERARY REVIEW

AVETIS QALASHYAN- The *Redivivus* of Historian 119
GAGIK SARGSYAN, HUSIK MELQONYAN- The History and Colophons of Eghvard's Red Gospel 127

ECCLESIASTICAL EVENTS 141

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբապատառ Կոնդակը Աղանայի հայոց կոտորածների 100-ամյա տարելիցի առիթով 3
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը Սուրբ Հարութեան տօնի առիթով.....6
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհաւորական ուղերձը Աւետման տօնի առիթով 9

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Ծաղկազարդի պոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 10
Վեղարի տվչություն Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանին 10
Ցավակցագիր Հռոմի Սրբազան Քահանայապետին 10
Ոտնլվայի արարողություն՝ ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի 11
Սուրբ Հարության պոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 12
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀԱՊԿ անդամ պետությունների ՆԳ նախարարներին.....13
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բելառուսի դեսպանին 13
Ֆինլանդիայի Լյութերական եւ Ուղղափառ Եկեղեցիների ուխտավորների այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 14
Ապրիլի 24՝ Հայոց եղեռնի զոհերի հիշատակության օր 15
Խաղաղության եւ սիրո կանթեղ հանձնվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին.....6

ՔԱՐՈԶԽՕՍՈՒԹԻՒՆ

Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ծաղկազարդի Ս. Պատարագին 17
Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Հարության Ճրագալույցի Ս. Պատարագին 20
Տ. Մաղաքիա Ամիրյանի քարոզը՝ խոսված Նոր Կիրակիին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին 22
Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի

Մայր Տաճարում Հայոց ցեղասպանության օրվա կապակցությամբ մատուցված Ս. Պատարագին.....25
Իրաքահայոց առաջնորդ Տ. Աւագ արքեպիսկոպոս Ասպտուրեանի պատգամը՝ Հայոց Ցեղասպանութեան հիշատակի օրուայ առթիւ.....27
Տ. Վարդան աբեղա Նավասարդյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Աշխարհամատրան կիրակիին մատուցված Ս. Պատարագին ...31

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՌՈՒԲԵՆ ԱԲԵՂԱ ՋԱՐԳԱՐՅԱՆ- Պողոս առաքյալի «Խաչի ճառը» 34
ՏԻՐԱՏՈՒՐ ՔՀՆ. ՍԱՐԴԱՐՅԱՆ - Ո՞ր միության մասին ենք խոսում 41

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ - Հայկական լեգեոնը առաջին աշխարհամարտի դարիներին 55
ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ - Մեծ եղեռնի արծարծումները Հովհաննես Շիրազի բանաստեղծություններում 68
ՎԱՐԴՈՒՀԻ Շ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ - «Հայոց դանթեականը» քերթվածի գեղարվեստական համակարգի շուրջ 87
ՄԱՐԻԱՄ ԴԱՎԹՅԱՆ - Խորեն Տեր-Հարությանի սրեղծագործությունը 98

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Տ. ՄԱՄԲՐԵ ԱԲԵՂԱ ՏԱՇՉՅԱՆ - Օլավերդ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին 111
ՏԻԳՐԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՂՈՒՄՅԱՆ - Հայոց ցեղասպանության հիշնամյակը հնդկահայ գաղութում 113

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՎԵՏԻՍ ՔԱԼԱՇՅԱՆ - Պապմաբանի երկրորդ հայտնությունը 119
ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ, ՀՈՒՍԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ - Պապմութիւն եւ յիշատակարանք Եղուարդի Կարմիր Աւետարանի 127

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ 141

ԳԼԽԱՒՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ»

ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин".

Republic of Armenia, Etchmiadzin, Redaction of Review "Etchmiadzin".

էլ. փոսպ՝ amsagir@etchmiadzin.am

ԴԱՍԻՉ՝ 77764

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ